ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА
МУЗЕЙ ЛИТЕРАТУРЫ И ИСКУССТВА ИМ. Е. ЧАРЕНЦА
МИНИСТЕРСТВА КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР

Литературное Наследство

15

ШУШАНИК КУРГИНЯН

Стихотворения
Проза
Пьесы
Письма

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1981

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Ա II
66182

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

15

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

3519-80

Բանաստեղծություններ
Սպիտակ էջեր
Պիեսներ
Գնահատականներ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

Ар 1 ինդեքս ԳԵԴ 84.Հ 1
Կ—991

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Տեքստը կազմեց և ծանոթագրեց Ջ. Մ. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆԸ

Պատասխանատու խմբագիրներ՝ բանասիրական գիտությունների
թեկնածուներ Գ. Ա. ՄԱԴՈՅԱՆ և Վլ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության է նշանակվել գրախոս՝
բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆԸ

Կուրղինյան, Շ.
Կ—991 *Բանաստեղծություններ, արձակ էջեր, պիեսներ, նամակներ /կազմ. Ջ. Մ. Միրզաբեկյան; Պատ. խմբ. Գ. Ա. Մադոյան, Վլ. Ա. Կիրակոսյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981. 233 էջ, 2 թ. նկ.: Գրակ. ժառանգ. (ՀՍՍՀ ԳԱ, Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ. 15)։*

Ժողովածուն ամփոփում է Շ. Կուրղինյանի անտիպ ժառանգության առավել արժեքավոր մասը՝ բանաստեղծություններ, արձակ և դրամատիկական երկեր, նամակներ։ Այդ ստեղծագործություններն ունեն որոշակի գրական-պատմական և գեղարվեստական արժեք, կարող են օգտակար լինել հայ պրոլետարական գրականության և ընդհանրապես դարասկզբի հայ գրականության պատմության ուսումնասիրման համար։

4702080000 Ար 1
Կ ————————29—81 ԳԵԴ 84.Հ 1
703 (02)—81

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981։
Նախարանի և ծանոթագրությունների համար

Շուշանիկ Կուրղինյան (1876—1927)



ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԸ

Շուշանիկ Կուրղինյանը հայ բանաստեղծության ականավոր ներկայացուցիչներից մեկն է: Նա գրական ասպարեզ է մտել Ռուսաստանում բանվոր դասակարգի հեղափոխական զարթոնքի և սոցիալիստական հեղափոխության նախօրյակին և անուրանալի դեր կատարել հայ գրականությունը նոր դարաշրջանի խնդիրների մակարդակին բարձրացնելու գործում:

«Ես տար քո խաչը», «Այնտեղ գնացեք», «Հանգցրեք ջահերը», «Բանվորները» և տասնյակ այլ բանաստեղծություններ, որպես հեղափոխական-բանվորական շարժման գեղարվեստական արտացոլման անկրկնելի հուշարձաններ, պատմական խոշոր դեր են կատարել և մտել հայ բանաստեղծական մշակույթի գանձարանը:

Շ. Կուրղինյանի ստեղծագործությունը լայն հանաչում է գտել, արժանացել բազմաթիվ հրատարակությունների, թարգմանվել ռուսերեն և այլ լեզուներով: Հայց բանաստեղծուհու գրական ժառանգության մի զգալի մասը դեռևս անծանոթ է մնում ընթերցող հասարակությանը: Դրանք բանաստեղծություններ են, արձակ և դրամատիկական գործեր, որոնք մասամբ սեպագիր և անկատար վիճակում պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Շ. Կուրղինյանի ժառանգության անբաժանելի մասը կազմող անտիպ գործերի մասին խոսելիս միշտ պետք է նկատի ունենալ այն միջավայրը, որ սնել է նրան, այն պայմանները, որոնց մեջ զարգացել ու ստեղծագործել է նա:

Կուրղինյանը աշխ է բացել գյումրեցի արհեստավորի ընտանիքում: Մանկությունից ապրել է աշխատանքային կյանքով: Դեռ վաղ հասակից նրան մտահոգել է մարդկանց միջև գոյություն ունեցող սոցիալական անհավասարությունը: Դա իր խոր կնիքն է դրել բանաստեղծուհու հետագա ստեղծագործական աշխատանքի վրա, նրան կանգնեցնելով աշխատավոր մարդու շահերի պաշտպանության դիրքերում:

«Ինքնակենսագրության» մեջ իր պատանեկան օրերի մասին նա գրում է. «Ամառվա արձակուրդների ընթացքում ես աշխատում էի տնայ-

նագոծ ջուլհակի նետ, պրիմիտիվ հաստոցի վրա, ոտքերս կախած սառը փոսի մեջ: Աշխատում էի բրուտի կնոջ մոտ, կավից ծեփելով կնունններ, թանիրներ, գնում էի «դեպի ժողովուրդը», անվարժ ձեռքերով սառանալով դաշտային ծանր աշխատանքներ...»:

Շ. Կուրղինյանն ադամատիկ կրթություն է ստացել. սառանանաշունությունը սովորել է «կույսերի» մոտ, որոնց ազդեցությանն է վերագրում իր երբեմնի կրոնասիրությունը: Տարրական կրթությունն ստացել է Ալեքսանդրապոլի հայկական դպրոցում, ապա մտել ռուսական պրոգիմնազիան: Հետագայում, լինելով ընտանիքով ծանրաբեռնված, ինքնակրթությամբ պարապելու սուղ հնարավորություններ է ունեցել. առաջավոր երիտասարդության հետ ունեցած շփման շնորհիվ ձեռք է բերել կայուն գիտելիքներ: Դեպի հեղափոխությունը կողմնորոշվելու գործում միշ դեր չեն խաղացել այնպիսի անվանի հայ հեղափոխականներ, ինչպիսի են Ալեքսանդր Մյասնիկյանը և Աղասի Շահինյանը:

Շ. Կուրղինյանի անտիպ գործերի մթնոլորտը նույնն է, ինչ հայտնի է նրա հրատարակված ստեղծագործություններից՝ քաղցածի նիշը, բանվորի ու բանվորուհու, գեղջուկի ու գեղջկուհու տաժանելի կյանքն ու ապրումները, ժողովրդի ընդերքում անող ցասումը անարդար կարգերի դեմ, հեղափոխական բռնկումները, խիզախների վճռականությունը, բռնության կողմից զարկված ախտրականի ու մանապարտի տառապանքը, ինչպես նաև անխախտ հավատը հեղափոխության գործի հաղթանակի նկատմամբ.

...Սակայն հզոր է հավատն իմ սրտում,
Սև օրերի սալին կոփված այն հավատ,
Որ թշվառին միշտ դրախտ է խոստանում
Ու դարմանում խոր վերքերն անփարատ...
(«Իմ երգը»)

«Կալանավորները», «Իմ երգը», «Բանվորի երգը», «Շատերից մեկին», «Ինչո՞ւ», «Մեր ձայնը» և այլ բանաստեղծություններ նամանրնշուն են բանաստեղծուհու հայտնի գոհարներին, երբեմն նոր խոսք, նոր երանգ են ավելացնում դրանց վրա: Այդ գործերում ևս առկա են ոգևորության թափը, բանաստեղծական խոսքի ու պատկերի կերտման անուրանալի վարպետությունը, որը հիմք է ծառայել սույն հատորի նյութերի ընտրության համար, բայց ինչ-որ տեղ, ինչ-որ բանում պակաս կա, ժամանակավորապես շարք մտած քառատողեր, պատկերներ. հանգեր, որ հետագայում անդրադառնալու դեպքում հեղինակը անպայման պետք է հղկեր, բյուրեղացներ, սակայն նա այլևայլ պատճառներով դրանց չի անդրադարձել: Բայց և այնպես դրանց ուսումնասիրությունը մեծ նշա-

նակություն ունի հեղինակի ստեղծագործական հնարավորությունները և արվեստանոցը պատկերացնելու համար:

Հատորում տեղ են գտել Շ. Կուրղինյանի հայրենասիրական երգերը: Բանաստեղծուհու աշխարհայացքի նիշտ բնորոշման տեսակետից անշափ կարևոր է նրա «Իմ հայրենիք» արձակ բանաստեղծությունը.

«Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, իսկ դու գեղեցիկների գեղեցիկն ես, իմ հայրենիք.

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ տոհմիկի է, իսկ դու տառապում ես տոհմիկությանդ համար, իմ հայրենիք:

Տառապում եմ, սիրում, ո՞վ է տառապել քեզ նման:
Սիրում եմ տոկալ, ո՞վ է տոկացել քեզ նման անգանգատ:
Սիրում եմ հուսալ. որքա՜ն համառ ես դու քո լավ օրերի հուսով»:

Անշուշտ, նոր գծեր են ավելացնում բանաստեղծուհու ստեղծագործության վրա ժողովրդական մոտիվներով գրված սիրո և պանդխտության երգերը:

Ազնիվ մորից վախվխելով
Ծածուկ սիրել եմ, տանջվել,
Գիշերն անքուն թաց աչքերով
Նրան վաղուց սպասել...
(«Գեղջկուհու բախտավորությունը»)

Կուրղինյանի ստեղծագործության մեջ մեծ տեղ է հատկացված պանդխտության մոտիվին: Նրա քնարական հերոսը «սիրտը լի հույսերով» պանդխտության է դիմել, հույսերը չեն արդարացել, ավելացել են նոր տառապանքներ.

...Բայց վաքանի ցավը խեղդեց
Երազներս, հույսերս,
Ա՜խ, կռունկներ, սիրտս ավրեց
Էլ չչորացան աչերս...
(«Օդում ձգված, շարան, շարան»)

Կնոջ անիրավանավասարության և ազատագրման հարցերը միշտ եղել են Շ. Կուրղինյանի ուշադրության կենտրոնում: Սևագիր վիճակում պահվող բանաստեղծությունների մեջ զգալի տեղ են գրավում այդ թեմայով գրված գործերը («Ներձակումին», «Պատկեր», «Նախվածը», «Ես ձեզ խղճում եմ» և այլն), որոնց մեջ կշտամբանքի դառն խոսքերի հետ հնչում է բաջալերանքի, հուսադրության պատգամը: «Դու-դեռ քնա՞ծ ես» բանաստեղծության մեջ նա կոչ է անում լքվածներին.

Արբնացի՛ր, բշվառ, դո՛ւրս արի շուտով
Գորշ վախկոտության պատյանի միջից,
Որտեղ ապրել ես գերի դարերով՝
Կալած ու կապված դրսի աշխարհից...

Բայց «գորշ վախկոտության պատյանում» ապրողների նկատմամբ գթասիրտ է բանաստեղծությունը, իր «սիրող սրտում» նրանց հանդեպ նա երբեմ չի բացել «զարշանքի անդունդ» և հուսադրում է, որ կանցնի բրոնությունը, նրանք կարթնանան «վերածնության արշալույսի հետ»: Նա համոզված է, որ շուտով գալու է «կինը իմաստուն մի նորոգ կյանքի արբազան ուխտով»:

Շ. Կուրդինյանը խանդավառությամբ դիմավորեց Հոկտեմբերը, գրեց «Ազատություն», «Գարնանամուտ», «Գրոլետարիատին բոլոր երկրների» և այլ բանաստեղծություններ, որոնք տեղ են գտել սույն հատորում, բայց մեծապես զիջում են «Արշալույսի դողանջները» զրոյկը զարդարող գոհարներին:

Ընթերցողը Շ. Կուրդինյանին ճանաչում է որպես բանաստեղծի: Այս հատորում լայնորեն ներկայացված է նաև նրա արձակը: Ինչպես հայտնի է, 1890-ական թվականներից մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը նա ապրել և ստեղծագործել է Պոնտի-Ռուսաստով և Խարկով քաղաքներում: Ապրել է բանվորական միջավայրում, որի ազդեցության շնորհիվ կապվել է հեղափոխական շարժման հետ և վարպետությամբ արտացոլել այդ շարժման վերափոխիչ ուժը: Բանվորների միջավայրի, հասարակության «հատակի» գեղարվեստական հարազատ արտացոլումն է նաև նրա արձակը, որ առաջներում հրատարակության չի արժանացել: Այդ արձակի մեջ կան մի շարք էջեր, որոնք թերևս զբաղեցնեն նաև մերօրյա խստապահանջ ընթերցողին. դրանք մեծ արժեք են ստանում հեղինակի ստեղծագործության ընդհանուր գնահատականը որոշելիս, նրա ստեղծագործական դիմանկարը ամբողջացնելիս: Ավելին, արձակ երկերի զգալի մասի հրապարակումը սույն ժողովածուի գլխավոր արժանիքներից մեկը պետք է համարել:

Ուշագրավ է «Անհաջող ենթադրություն» նովելը: Վստահորեն կարելի է ասել, որ դա Կուրդինյանի նվաճումն է արձակի ասպարեզում: Հերոինակն իր քաղքենի, քմահաճ բարեկամուհու հետ շրջում է մեծ քաղաքի բանվորական արվարձանում՝ վարձու սենյակ գտնելու համար: Վարձում են մի երիտասարդ բանվորի մեծ, առևտուր և հարմարավետ սենյակը: Ամեն ինչ կարգին է, բայց շուտով քաղքենի վարձակալը հետաքրքրվում է բնակարանից, որովհետև չի կարողանում հաշտվել առաջավոր բանվորի գաղափարների հետ, որովհետև նրա հոգուն օտար են արթնացող բանվոր դասակարգի ձգտումները, որովհետև բանվորի համար արդեն «միս

ու արյուն» դարձած նշմարտությունները «խորթ» են բազմենի օրիորդին, որը չի կամենում հարգել «նոր մարդու նոր իրավունքները»:

Ավելի ծավալուն է «Տատ Արինան» պատմվածքը: Այստեղ գտնում ենք արդյունաբերական մեծ քաղաքի բանվորական արվարձանի առօրյայի մանրանկարը: Դժվար կյանք է ապրել բանվորուհի Արինան. կյանքը «տրորել ու ջրջրել է նրա բախտի բոլոր ծաղիկները»: Նրա դուստրը ծանր, հոգնամաշ աշխատանքի զոհ է դարձել երիտասարդ հասակում: Արինան զուրգուրանքով մեծացնում է նրա որբուկին, որը նույնպես գործարան է մտնում աշխատելու: Կյանքը լավ հանաչելով, տատն ամեն կերպ աշխատում է թոռանը հեռու պահել կեղտից, միշտ զգուշացնելով. «Զգույշ, զավակս, զգույշ. սիրուն դեմքով դժվար է շրջել աշխարհի երեսին, երբ ինքդ ես վաստակում քո հացի գինը»: Ցուր չէին տատի երկյուղները: Աղջկան գայթակղեցնում է գործարանի կառավարիչը և դառնում նրա մահվան պատճառ:

Արինայի բերանով հեղինակն իր դատավճիռն է կայացնում տիրող կարգերի նկատմամբ. նա, զգալով բանվոր դասակարգի անխորտակելի ուժը, մոտենում էր բանվորների խմբերին և խրատում. «Դրասաներ եմ, լծկաններ. օդին նզմել է ուղեղներդ, իսկ սրտերիդ մեջ լիքումն է տեր դառել: Քաղաքը ծծում է ձեր քրտնքի գնով ծորող ոսկին, ու հենց այդ ոսկով էլ հրապուրում ձեր աղջիկներին՝ ցուի գիշերների համար: Անմիտ մարդիկ, ինչո՞ւ եք լռում, ո՞ւմ եք սպասում...»:

Հասարակության «հատակի» թշվառությունն է նկարագրված նաև «Ուղիղ ուղին», «Հանդիպում», «Փողոցում», «Շղթաները» պատմվածքներում, մեծ քաղաքի բարեկարգ. շքեղ տներից մեկուսացած, «մեղավորի նման կուչ եկած» նյութեր, որոնք ձմռանը կարծես թաքնվում են ձյան հաստ շերտերի տակ, որ չնկատվի իրենց աղքատությունը: Եվ ապա՝ դրանց բնակիչները՝ հազիվ օրվա հաց հարող բանվորներ, վշտից հարբեցողության դիմող բանվորուհիներ, աղբանոցներում և հանապարհների վրա քրջեր ու ածուխի բեկորներ հավաքող դալուկ պատանիներ...

Մանուկ ընթերցողի համար անակնկալ կլինեն հատորում զետեղված զույգերը՝ «Գորտն ու մրջյունը», «Վարդն ու փուշը», «Ուղտն ու փիղը» և մյուսները, որոնց մի մասը ժամանակին տպագրված է եղել «Ծաղիկ» հանդեսում և հանույթով ընթերցվել կրտսեր դպրոցականների կողմից:

Շ. Կուրղինյանի ժառանգության մեջ զգալի թիվ են կազմում դրամատիկական գործերը՝ «Մարո», «Ոսկե ձկնիկ», «Ջրաղացպան», «Թրոիչք», «Հարևանները» և այլն:

«Մարո» («Այրված սրտեր») դրաման (4 գործողությամբ) վկայում է այն մասին, որ դրամատիկական արվեստը խորթ չէ հեղինակին, ունի փայլուն էջեր, ավարտուն տեսարաններ, ժողովրդական իմաստություն-

ներով հագեցած առամախոսություններ: Բայց ամբողջությամբ վերցրած կատարելության չի հասցված:

Հայտնի է, որ այս պիեսը 1914 թ. սեպտեմբերից ցանկացել է բեմադրել դերասանապետ Հովհաննես Չարիֆյանը՝ Թուրքիա, Պարսկաստան, Եգիպտոս և այլուր կատարելիք հյուրախաղերի ընթացքում, բայց սկսվող Առաջին համաշխարհային պատերազմը խանգարել է այդ նպատակի իրականացմանը:

Սույն ժողովածուի մեջ տեղ են գտել Կուրդինյանի համեմատաբար հաջող դրամատիկական գործերը, որոնք որպես հեղինակի զրական ժառանգության նմուշներ ուշադրության են արժանի:

Դրանցից «Մենակ կինը» շափածո է, գրված է բարեհնչուն ոտանավորով, բայց գաղափարական բովանդակությունը կցկտուր կերպով է բացահայտված. լավ է ընթերցվում, աչքի է ընկնում, որպես հեղինակի՝ հոգեբանական ընդհանրացումներ կատարելու ունակության փաստ, բայց ոչ որպես կատարելություն:

Դրամատիկական գործերի մեջ աչքի ընկնողը «Կարմիր խաչ» պիեսն է՝ հինգ գործողությամբ: Նյութը 1905 թվականի հեղափոխական իրադրությունն է, մեծ քաղաքի բանվորական արվարձանի կյանքը: Հավարի, իրավազրկության, այլանդակող բարքերի դեմ կռվի է պատրաստվում առաջավոր բանվորությունը: Հեղափոխական շարժման կենտրոնում է երիտասարդ բանվոր Անտոնը: «Ամենքս ծնվում ենք մեր բաժին բեռով, որ պիտի ճնշե մեզ գիշեր ցերեկ»,—ասում է նա: Այդ բեռից պետք է ազատվել կապանքները փշրելու միջոցով: Երիտասարդ բանվորության մեջ նրա տարած տակավն աշխատանքն իր դերն է կատարում: Դեպքերը հասունանում են: Բանվորուհի Մարթան, որ հուսահատական վիճակի մեջ է և անվստահությամբ է ունկնդրում իրեն սիրող Անտոնի հորդորները, անմեղ եղբոր և հարազատներին հասած անարդարությունները տեսնելով, սթափվում է, վճռականապես հետևում Անտոնին և հեղափոխության բարիկադների վրա կռվող բանվորների մարտակարգում գրավում իր տեղը՝ հանդես գալով որպես գրության հույր:

Պիեսում տրված է բանվորական միջավայրի հարազատ նկարագրությունը, հերոսների՝ Անտոնի, Մարթայի, բանվորության զարթոնքի պրոցեսը: Գրված է կուռ լեզվով, հագեցված դրամատիկական ուժեղ պատկերներով: Պիեսն ամենայն իրավամբ դասվում է նույն շրջանում Ալեքսանդր Վերմիշևի, Անուշավան Վարդանյանի նույն թեմայով գրված պիեսների շարքում և միանգամայն պատրաստ է եղել լայն բեմականացման համար: Եվ եթե չի բեմականացվել, ապա պատճառը եղել է միայն և միայն հեղինակի հեռու լինելը հայկական միջավայրից:

Սովորաբար գրողների ստեղծագործության և կյանքի վրա մեծ լույս են սփռում նամակները՝ ուղղված իրենց ժամանակի գրողներին և

մշակութային գործիչներին, որտեղ լայն արտացոլում են գտնում նրանց անձնական կյանքի բազմաթիվ հետաքրքիր կողմեր: Տարաբախտաբար քիչ են Ե. Կուրդինյանի գրած նամակները. դրանք մի-երկու տասնյակից չեն անցնում և նոր բան չեն ավելացնում բանաստեղծուհու մասին մեր գիտցածի վրա. դրանցից միայն մի քանիսը կենսագրական նշանակություն ունեն և ընդգրկված են հատորում:

Վստահ ենք, որ բանաստեղծուհու ժառանգության այս շերտի վերհանումը դրական նշանակություն կունենա նրա անցած ուղու գնահատման գործում:

ԳԵՎՈՐԳ ՄԱԳՈՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

Խավարի գրկում ծնված իմ հոգին,
Կյանքս խաղալիք բախտի հաճույքին,
Անզուսպ փափագը կատաղի կռվի՝
Չէ՞... չէ խեղդել հավատս հաղթողի...

Ինձ երկինք երբե՞ք ուզեց փայփայել,
Ճակատագիրն իղձերս է ավերել,
Բայց պիտի կռվե՞մ, կռվեմ կատաղի,
Ու կռվում թափեմ ես թույնը սրտիս։

Արի՛ք, որտե՞ղ եք, խավարի որդիք,
Ես, որ ձերն էի ու ձեկնով սնված՝
Կռվի՞ եմ կանչում... օ՜, առաջ արիք՝
Ձեզ է պատկանում առաջին հարված...

Արի՛ք, որ կռվեմ, վրեժն առնեմ
Իմ ջահել կյանքի՝ ձեզնից հոշոտված...
Արի՛ք, որ ձեր արյունը խմեմ՝
Ինչպես որ սրտիս արյունն եք ծծած...

2. ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐԻՑ

Խաբված հույսերով, ընկճված հոգով,
Վիշտն ու հոգսը սիրտս կաշկանդած,
Ապրում եմ անշահ, ես միշտ տանջվելով,
Տխուր օրերս սահում են կամաց։

Եվ ահա անպետք մի դիակ դարձած,
Հանգչում եմ հավերժ իմ նեղ շիրիմում.
Մաղիկ հասակս մոխիր է հանգած՝
Իմ բաց աչքերից արցունք չի կաթում։

Անցնում են օրեր, տարիք են անցնում՝
Չկա՜ այցելող... մի կաթիլ արցունք...
Երկրից անունս իսպառ մոռացվում,
Գետնին է կպչում շիրիմս անշուք...

Կրում է շղթան ոտերին հուսալով.
Դեռ վերջ չէ տրվել թշվառի լացին,
Կորչում եմ անհետ իմ վեհ իղձերով.
Միայն մի բուռ հող տալով մայր երկրին...

3. * * *

Ես տեսա նրան շատ օրեր անցած,
Ու կրծող ցավը սրտումս թաղած՝
Քննող հայացքով իրար նայեցինք
Աչքերով սառած
Սրտերով մեռած։

Չկար այն վիշտը, որ դիշեր ցերեկ
Կրծում էր սիրտս և արցունքները,
Որ երբեք ցամքեց իմ թաց աչերիս,
Անցան այն օրեր,
Ու կորան անհետ։

Եվ գուցե մի օր մենք բախտի բերմամբ
Պատահենք իրար սառ հողի գրկում,
Ո՜չ կռիվ, կասկած, ո՜չ էլ դարդ սրտում,
Աչքերս սառած,
Սրտերս մեռած։

4. ՅԱՐԻ ԱՉԵՐԸ

Լուռ աստղերը, վառ աստղերը
Ես շա՜տ սաստիկ եմ սիրում,
Իմ դարդերը, սև դարդերը
Նրանց հաճախ եմ պատմում։

Լուռ աստղերը, պարզ աստղերը
Սփոփում են ցավերս,
Նոցա քաղցր ժպիտները
Քուն են բերում աչերս։

Բայց քո սևիկ աչերը,
Իմ երկնքի աստղերը—
Կյանքս մաշեց, սիրտս դերեց,
Շատացուց իմ դարդերը։

Դիշեր ցերեկ տանջվում եմ,
Անճար են իմ վերքերը.
Ինձի հալում, մաշում են՝
Յա՜ր, քո սևիկ աչերը։

1896 թ.

5.

* * *

Ջասեք ափսոս, երբ ես մեռնեմ,
Հեչ էլ վրաս մի խղճաք.
Ձեր արցունքին ես կարոտ չեմ՝
Հոգ չէ թե ինձ մոռանաք։

Ինձ ի՞նչ պետք է դիակ դարձած՝
Հարգանք ու սեր վայելել—
Երբ կյանքի մեջ սերս եք խլած,
Ու մեծ սիրտս ավերել։

Թո՜ղ որ երկնից աստղը ժպտա
Իմ աննշան շիրիմին,
Թո՜ղ որ անուշ հովը սուլե՝
Ու երգե ինձ ողորմի։

6. ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐ

Ո՞վ է փողոցի անդորրը խլում
Եվ կոշտ երկաթի արագ հարումից
Օդում միալար ակկորդ արձակում...

Կալանավորնե՞ր... Որպես ուրվական
Անցնում են սհա։ Հյուծված դեմքերից
Թախիծ է կաթում և շրթունքները
Լայն-լայն բաց արած աղաա օդ ծծում...

Եվ ծեր է մեկը, ալեզարդ գլխով,
Նանր շղթայից կորացած, տրտում
Առաջ է գնում ու նրա հանգած
Պղտոր աչքերից արցունք է կաթում։

Մյուսը ջահել կատաղի դեմքով
Կրակ հայացքով շուրջն է դիտում
Ու կալանների սուր ընդոցի հետ
Կատաղի սրտի վրեժը ժայթքում։

Երրորդը կին է. խունացած շալը
Զգած ուսերին. բաց լայն ճակատին
Լուռ տանջանքների հետքն է երևում,
Ու դղջման գայրույթ խաղում աչերին.

Եվ փլփլում են մթության միջև
Պահապանների սևացած ջահեր,
Սև կյանքի մեղքեր հլու քաղելու
Սիբիր են քշում թե՞ ծեր, թե՞ ջահել...

Ո՞վ է փողոցի անդորրը խլում
Եվ կոշտ երկաթի արագ հարումից
Օդում միալար ակկորդ տարածում—
Կամ զուր տանջվողներ,
Կամ արնոտ ձեռքեր...

7. ԻՄ ԵՐԳԸ

Ես ծնվել եմ մութ խրճիթում մշտախց,
Աղքատ կյանքի խոպանացած հովիտում,
Ուր զրկանքը մանուկ օրից զրկաբաց
Թույլ մարմինս իր կրծքին էր օրորում։

Կյանքի լույսի չկար այնտեղ գեթ նշույլ՝
Միշտ խավար էր... տառապանքի ցուրտ ձմեռ,

Ուր գալարվում, խարխափում էր սիրո թույլ,
Դալուկ կայծեր նույնպես աղբատ կիսամեռ։

Սակայն հզոր է հավատն իմ սրտում,
Սև օրերի սալին կոփված այն հավատ,
Որ թշվառին միշտ դրախտ է խոստանում,
Ու գարմանում խոր վերքերը անիծարատ։

Ահա շողաց... օ՜, շողշողաց իմ մտքին
Վեհ, դիտակից կյանքի լույսից մի ջինջ շող՝
Հոգիս թնդաց, միտքս փարվեց խնդագին
Իդեալների վեհ բարձունքին լուսացող։

Բայց մի ջինջ շող... օ՜, այդ քիչ է, պարոննե՛ր,
Քիչ է, քիչ է ծարավ-ծկակ իմ հոգուն.
Տվեք ծծեմ սրտիս հյութով հույս-լույսեր՝
Մտքով կույր եմ, խեղճ ու մոլոր աշխարհում։

1905 թ.

8. ԱՆՑԱԾ ՕՐԵՐԸ

Մի՞թե արշալույս շողով վարդավառ,
Փափկիկ ամպերը ծիրանի հագած,
Կամ վերջալույսը շքեղ հրավառ՝
Արքայի նման
Սարերին բազմած

Կարող են արդյոք մի օր նմանվեն
Ձե՛զ, անցած օրեր, թռած ծիծառներ,
Հանգիստ գիշերիս անուրջ ու տեսիլ,
Միտքս գուրգուրող
Երազ-ցնորքներ...

Որ այնպես շքեղ հուրհրալ գիտեք
Սև սիրտ գիշերվա մեռնելու ժամին,
Որ այնպես դյութիչ կարմրել գիտեք
Հոգնած ցերեկի
Փախչելու պահին։

Ա՜հ, անցած օրեր, հիշատակների
Անսպառ աղբյուր... հսկա կոթողներ

Անխորտակ կանգնած սիրո, հուշերի
Անմահ զուք մեռած
Լռիկ վկաներ։

Կսիրեմ հաճախ ընկնել ձեր խոր-խոր
Գաղտնի ծերպերում ընկնել թափառել,
Մենակ, ինքնիշխան ձեր խորհրդավոր
Բանալին կրծքիս
Թախծով անասել։

Կսիրեմ հաճախ ըմբոստ լողորդի
Ազատ թռիչքով ընկնել ձեր գրկում,
Լողալ... ու սուզվել... մոռանալ վշտի
Աշնան ոռնոցը
Կյանքիս անխնդում։

1905 թ.

9. ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԲԱԽՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ձիուն նստած, բեղն ոլորած,
Գտակը ծուռ մի կողքի,
Կուրծքը բացած-քամուն տված՝
Յարս սարից վայր կիջնի։

Բլբուլ, գիտե՞ս այդ երգերից,
Թե չգիտես, սովորիր.
Դուշման, փախի՛ր սարի լանջից՝
Թե չփախչես, վախեցիր։

Ծաղիկ, փախի՛ր խոսլան դաշտից,
Կարիճ կրծքին շատ կապրես,
Հովիկ, թռի՛ր լեռ ու ժայռից,
Գանգուրները տատանես։

Յարս եկավ, ջանս եկավ,
Սև ձին տակը խաղալով,
Հեռվից եկավ, հոգնած իջավ,
Սիրտը սիրով, համբույրով...

Ծաղիկ, չգաս—քեզ տեղ չեմ տա
Կարիճ կրծքին, որ ապրես—

3519-80

2—358

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հովիկ չգաս, քեզ չեմ թույլ տա
Գանգուրներս տատանես։

Աղիզ մորից վախվխելով
Ծածուկ սիրել եմ, տանջվել,
Գիշերն անքուն, թաց աչքերով
Նրան վաղո՛ւց սպասել...

1905 թ.

10. ԶՄՌԱՆ

Փախի՛ր, ձմեռ, փախի՛ր, պառավ,
Տե՛ս գարունը գեղեցիկ
Հորիզոնից սարին առավ,
Պեծին տալիս է արփիկ։

Նրա ձեռին չկար սուսեր՝
Պառավ կուրծքդ ցցելու,
Նա չպարզեց ծաղկոտ թևեր,
Քո սառ շունչը կտրելու։

Այլ կենսաբեր մի ժպիտով,
Գարուն շնչով քեզ հաղթեց.
Փախի՛ր, պառավ, փախի՛ր շուտով
Լեռ ու դաշտը կանաչեց։

1905 թ.

11.

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք
և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ...»

...Եվ մենք քսան դար, լքված, վաստակած,
Զարանենդ կյանքի բեռն ուսերիս,
Անարդարության ցանցում խճճված,
Հոգեմաշ ցավից արցունք թափելիս,
Անտակ խավարում մերթ սայթաքելով,
Խոնարհ ու հլու՝ բռնության առաջ,
Սրտերումս վրեժ, սակայն սողալով
Ընկանք դեպ հառաջ...

Շրջեցինք աշխարհ անվերջ շարքերով,
Կեղեքված, հիվանդ, գծուծ մուրացկան՝
Տառապանքների բովում հուսալով
Քո կոչին միայն...

Անցանք դառնության մեծ անապատով,
Տվինք շատ զոհեր, պակասն մեր շարքեր,
Ըստրկության մեջ անարժան մահով
Փառքդ երգեցինք, մեռանք անվհեր...
Եկա՞նք վաստակած... հանգած հույսերով,
Զրկանքի թափից անմահ հավատի
Մնացորդներով։

Լքման զայրույթի, բողոքի հուժկու
Տրտունջ ու անեծք տիրեց սմբոխին,
Որ դրաստական բնազդով հլու
Զուներ քաջություն իշխելու ոխին.
Եվ տիրեց վայրագ դերիշխանության
Ստոր հակումը ամեն խորքերում.

Թշնամի դարձան և եղբայրասպան,
Մեղապարտ դործը կյանքեր էր լափում.
Եվ երբ ճար չկար քո ճանապարհով
Անհայտ վայելքի կոչին փրկարար
Առաջ ընթանալ անխախտ հավատով
Ու առնել դաղար՝

Դառնության ծովի մեծ անապատում
Արնաքամ, անուժ քեզ ենք սպասում...
Սակայն դու չկաս... ցավոտ աշխարհից
Համբարձար երկինք. վաստակյալներու
Վաստակած հոդուն այլ վայելքների
Ուղի հարթելու...

Եվ դո՞ւ, որ թշվառ բեռնավորների
Բեռը վայր առնել անդամ դլացար,
Անվիշտ ու անմեռ լոկ հոգիների
Եդեմ խոստացար։

Եվ դո՞ւ, որ իդուր քո աստվածության
Զոհի սեղանը մեղնով տոնեցիր,

Դու կամ այն չէիր, կամ մեր փրկության
Ղեկը լինելու ուժը չունեիր՝
Ինչո՞ւ կանչեցիր։

1906 թ. 3 նոյեմբերի

12.

* * *

Հիվանդ օրերի թշվառ երգիչներ,
Որ մեծ սրտերիդ, որ ծով սրտերիդ
Սնունդ մնացին կակիծ-մրմունջներ,
Թախիծ՝ դեմքերիդ։

Որ աստվածային ոգեշունչ շնչի
Գոռ հեղեղները լափեցին անհագ,
Փարթամ երազի, հույզի ու տենչի
Զմայլիչ փափագ։

Որ ծաղիկ-գարնան, սիրո հուրհուրանք,
Խոր զեղմունքներով երկնատու տաղանդ՝
Վշտի սև ծովում. ցավ ու տառապանք
Մնաց ձեզ ավանդ։

Որ տոչորվելով ամենքի վշտից՝
Հանուր դաշնության թույնը ծծեցիք,
Ու կտոր թղթին, գրչին կենակից
Մենակ մնացիք։

Ես ձեզ եմ երգում, վաղահաս ձմռան
Շնչով դալկացած ըմբոստ հյուսվածքներ՝
Ձե՛զ, որ սև կյանքում դառել եք լալկան
Վեհ լուսատուներ։

Ես ձեզ եմ երգում, եթերի լարեր,
Վշտերի շնչից բթացած բեկ-բեկ,
Ձեր ծով սրտերի ծփանք լուսաբեր
Կյանքի սրտաբեկ...

1906 թ. 16 նոյեմբերի

13.

Լսո՞ւմ ես, ընկեր, հեռու խորքերից
Կատաղի հողմի վայրագ խշխշոց.
Տարերք են լալիս, շանթի որոտից
Խուլ արձագանքով լսվում դղրդոց։

Այնտեղ կռվում են գոյության համար
Երկիրն ու ջուրը դեմ առ դեմ կանգնած՝
Կատաղի հողմը թափով սանձահար
Մահահոտ շնչով նրանց է խառնած։

Այնտեղ լեռները լերկ, կոշտ կրծքերով,
Կախվել են անսաս ձորի եզերքին,
Խեղդել են ուղում անդուսպ տենչանքով
Կուրծքերը քերող հուժկու հոսանքին։

Գոռում է ալին, գայրույթով ըմբոստ,
Ճերմակ փրփուրը դեմքին կատաղած.
Սև հսկաներին որպես չնչին ոստ
Կուզե տապալել, փշրել անկասկած։

Սակայն լեռները անհողդողդ սրտով
Խեղդում են, փշրում հրե բլուրներ,
Ու խրած հողում, հոգով անխռով
Նայում կատաղած ջրին անտարբեր։

Լսո՞ւմ ես, ընկեր, հողմը մերձ ի մահ
Ուժասպառ պարտված...
Հեղեղը իջավ. էլ կռիվ չկա,
Ժայռերի կրծքին արևն է շողում։

Եվ ալիքները թաղման հանդեսի
Տխուր երգելով հոսում են առաջ.
Նրանց չինչ կրծքին բռնակալ ուժի
Դիակն է ընկած՝ կուրծքը պատռված։

1906 թ.

14.

Կյանքի դիշերում, խավարի գրկում
Անվերջ տանջվեցինք, իմ թշվառ եղբայր.
Ու միշտ վշտաբեկ, աչքերով անքուն
Արցունք թափեցինք, արցունք անդարձ։

Ա՜հ, միայն հույսը—մեր հին ծեր դայակ,
Դողդոջ ձեռքերով մեղմիկ փայփայում,
Հսկում մեր մտքին—աղքատ, անկորով
Ու լավ օրերի հեքիաթներ պատմում։

1906 թ.

15. ՂԱՐԻՊ ՄՇԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ

Իմ անուշիկ հոգուս հատոր դավակներ,
Ուղարկում եմ սրտիս խորունկ խորքերից
Թանկագին ու սրտաբուխ բարևներ։
Յոթը տարին ահա անցավ ու գնաց,
Տառապեցի դիշեր ցերեկ ես մենակ.
Մերացել եմ, ուժ, զորություն չմնաց,
Դարձերս շա՜տ, ծով է անծայր ու անտակ։
Դիշեր ցերեկ մորմոքում եմ ու լալիս,
Երազումս ձեզ եմ տեսնում շարունակ,
Սև-սև մտքեր ինձի հանգիստ չեն տալիս,
Անիծում եմ իմ կյանք, իմ բախտ, ժամանակ։

Թե երբ կգամ, աստված վկա՝ չգիտեմ,
Ամեն մի օր, ամեն վայրկյան եռանդով
Ես ինքս ինձ ճարահատյալ ասում եմ.
Էլ չեմ մնա, տուն կգնամ ես շուտով։
Բայց դալիս են ու գնում իմ ամիսներ,
Էլի զարիք թափառում եմ ես տխուր,
Օրըստօրե թուլանում են իմ թևեր,
Քիչ չտեսա ես մարդկանցից թուք ու մուր։
Արևի հետ վեր եմ կենում ես տեղից
Գրաստի պես խոնարհ, հլու աշխատում—
Եվ շատ անգամ դեմքիս հասած բռունցքից
Հացի համար—հոգոց անգամ չեմ հանում։

Էլ ի՞նչ ասեմ, ո՛ր մեկ ցավս ձեզ պատմեմ,
Անտեր մնա օտար երկիր աշխատանք՝
Գլուխս բարին, քարը գլխիս տալիս եմ,
Չկա մի ճար, չկա օգուտ, սփոփանք...

Իմ սիրելի, իմ թանկագին կողակից.
Նայե տանս, բալաներիս սփոփե,
Չլինի թե նոր պարտք առնես աղայից,
Ճերմակ եղս էլ մինչև գալս մի ծախե։
Իմ ուղարկած այս մի քանի մանեթով
Մի կերպ ապրիր դատկին՝ թե տա տեր աստված...
1906 թ.

16. ԸՆԿՃՎԱԾԸ

Լինում են ժամեր—աշխարհն ես ատում,
Ատում ես մարդկանց, բողոքում բախտից՝
Ջանքրույթը հակտիդ, հոգնած ու տրտում՝
Չես գտնում հնար փախչելու վշտից։

Թվում է սիրտդ սրտերից իսպառ
Ջնջվում ես անհետ ու սիրտդ կրծում
Մի խուլ նախանձոտ կսկիծ անբարբառ,
Սրտամաշ կասկած մտքիդ բռնանում։

Ա՜հ, թշվառակա՜ն, մաղձից կուրացած,
Հենց այդ ժամերին սուս կուլ ես դնում
Կյանքի հոսանքին թևերդ ծալած՝
Մոռանում դու քեզ, իդեալի երդում։

Ու սոր ընկճման գործում տխրալի
Տեսնելով ապնվ իղձերիդ մարում—
Փոքրոդի անձեր մատնում տանջանքի՝
Ու դառը ղղջման արտասուք թափում։
1906 թ.

17. *
* *

Դու դեռ քնա՞ծ ես—դեռ խարխափո՞ւմ ես
Ճահճացած կյանքիդ նեխող տիղմի մեջ,
Գիտակիցդ կռվին մինչ այժմ անտես,
Չդդացի՞ր ուժը իղձերի անշեջ։
Դու դեռ պահում ես հոգու ծուլության,
Անշահ ու անշարժ հանգստի գրկում,
Կամ թե չէ անարդ ստոր ճոխության
Տմարդ հաճույքի բույրն ես ծծում։
Դու դեռ ապրում ես խղճալի դերի
Անմիտ կարդերից ձևոք, ոտք շղթայված,
Գործնական կյանքում դու, ողոմելի՛,
Մի անպետք փալաս ձգած, մոռացած։
Դեռ պարբերաբար ծնում ես մարդիկ՝
Ում բացի կաթից բան չունես տալու՝
Ինչպես անասուն, անբան ու անմիտ,
Անկատար զանգված, ստրուկ ու հլու։
Արթնացիր, թշվա՛ռ, դուրս արի շուտով,
Գարշ վախկոտության պատյանի միջից՝
Որտեղ ապրել ես դերի դարերով՝
Կալած ու կապված դրսի աշխարհից։
Արթնացի՛ր, թշվա՛ռ... ձայն տուր ամենքին՝
Ով որ հոգնել է բռնության գրկում,
Ում սրտում դեռ մի կաթիլ մարդկային
Արժանավորության իղձն է փլփլում...
Արթնացի՛ր, թշվա՛ռ, կյանքի հեղեղուն
Գոռ ալիքներին հանձնվիր համարձակ՝
Այնտեղ է կյանքը, այնտեղ է անհուն
Վեհ իդեալների կոիվ—հաղթանակ...

1906 թ.

18. ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Էլ ծաղիկ չկա՞... խամրած մացառներ
Ծաղկոտ օրերը թողին հիշատակ.
Ո՞վ գիտե թե ուր, ինչ սիրուն վայրեր
Թռան դնացին գարուն ու սոխակ։

Սառ ու թուփն այնպես խղճալի դեմքով
Նայում են երկինք անզոր արևին,
Ու տխուր խշշում, սառ քամու թևով
Դեղնած տերևներ թափթփում գետնին։

Լալկան ուռենին իր վիշտը թողած
Կարեկից սրտով զգվում է ափին,
Մերկ ու այլանդակ ճյուղերը կախած
Նայում մտածկոտ գետակի դեմքին։

Էլ ծաղիկ չկա բարքանդ պարտեզում
Անտեր ընկած է մի գորշ նստարան.
Նրա թիկունքին ձեռքերով զզուն
Գրած թողած է մի սիրո նշան։
1906 թ.

19. *

Օդում ձգված, շարան շարան
Կռունկները կուգան կերթան.
Ես ո՞ւր փնտրեմ զարուն վաթան,
Ո՞ր մեկ ցավս լամ ու սգամ։

Ա՜խ, կռունկներ, խապար չունե՞ք
Իմ վաթանեն, իմ քույրերեն.
Ղարիբ սրտիս բարև չունե՞ք
Իմ հարազատ սեգ լեռներին։

Ես էլ մի օր ճամփա ընկա,
Անցա սարեր, դաշտ ու ծով.
Ղարիբ-զուրբաթ երկիր եկա՝
Սիրտս լի ծով հույսերով։

Բայց վաթանի ցավը խեղդեց
Երազներս, հույսերս.
Ա՜խ, կռունկներ, սիրտս ավրեց,
Էլ չչորցան աչերս։

Ա՜խ, կռունկներ, հեռու կերթաք,
Ուր որ գարուն՝ գուք այնտեղ.
Ջան կռունկներ, ես ո՞ւր երթամ,
Իմ ցավը շա՜տ, վերքս անդեղ։
1906 թ.

20.

Գեթ մի վայրկյան մրրիկ լինել
Կուզեի՝
Կյանքի հովտում ըմբոստ թափով
Շրջելու։
Սլանայի՝ կայծակ որոտ
Տեղայի՝
Սրտիս թույնը ամենուրեք
Թափելու։
Գեթ մի վայրկյան գժոխք լինել
Կուզեի՝
Խռովելու անդորրությունը
Երկնի։
Վշտի շնչով այնտեղ անհաս
Իշխեի՝
Ոգիներին տեղի տայի
Զարքերի։
Գեթ մի վայրկյան աստված լինել
Կուզեի՝
Շուրջս ամպեր երկրի արյունով
Ներկըված,
Որ տանջանքի հեծկլտանքը
Լսեի՝
Գիշեր ցերեկ իմ դեմ դիակ
Հոշոտվածը։
1906 թ.

21. ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Մի օր կային... դարուն կյանքիս
Որպես նախշուն ծաղիկներ՝
Նրանց սիրող կրծքին հոգիս
Մոռացվում էր անտարբեր։

Այսօր չկա՞ն... կյանքի բքով
Թափթփվում են նրանք՝
Հիշատակաց հովի սույլով
Սիրտս մաշում հին հուշեր։

1906 թ.

22.

* * *

Վաղ առավոտյան, երբ ես բաց արի
Տխուր աչքերիս միակ պատուհան,
Երբ ներս շողացին կարմիր արևի
Ճաճանչ շողերը նետերի նման—

Իմ ծաղիկները այնպես տենչանքով
Պարզած թերթիկներ ժպտացին նրան,
Ու գով զեփյուռից մեղմ տատանվելով՝
Օրհնե՛ց երգեցին կենսատու գարնան։

Երբ մարիս խավար բացվեցին աչքեր,
Տեսա ես աշխարհ լայն ու ընդարձակ.
Զարթաշ գոյության անվերջ կռիվներ,
Բարբարոսության քայլերն համարձակ։

Ես վարակվեցի վշտով ամենքի,
Կայտառ մարքերիս թախիծը տիրեց,
Անհոգ ծիծաղս փոխվեց սուգ-լացի,
Հուսախաբ սիրտս ոչ սքին սիրեց։

Անվերջ տրտունջը ինձ արհեստ դարձավ.
Երգեր հյուսեցի լալկան մրմունջով,
Ու միտքս մոլոր որպես՝ կորած հավ
Դեռ ու դեն շրջեց՝ հանգիստ փնտրելով։

Գիտակցությունը շուտ վրա հասավ,
Եվ հույսը փարվեց իմ հիվանդ հոգուն,
Սրտիս հոգեվարքը իսպառ վերացավ՝
Իսկ ցնորքները անհուն-երազուն...

Հույս... լոկ դո՛ւ կարապետ կարմիր օրերի,
Կեցի՛ր միշտ ինձ մոտ, շնչի՛ր երեսիս.
Քեզ մոտ չկա տեր, ոչ սարուկ, դերի,
Քեզ հետ առողջ և կանգուն է հոգիս...
1906 թ.

23.

* * *

Ինձ ի՞նչ դատիկ կարմիր-կանաչ
Ու խնդություն մեծ տոնի,
Երբ եղբայրս հիվանդ, քաղցած,
Թափառական, տուն չունի։

Ինձ ի՞նչ բերկրանք, ուրախություն,
Քրիստոսի հարության,
Երբ տարագիր սարկություն,
Կյանքն է մաշում հավիտյան։

Իմ դատիկը թշվառ ազգիս
Բարօրությունն է միայն,
Այնժամ միայն մի ձու ձեռիս
Կասեմ տոն է հարության։

Մի խեղճ ազգի, որ գարերով
Իր մշտահոս ալ արյան
Անմեղ հոսած կաթիլներով
Ներկել է ողջ Հայաստան։
1906 թ.

24. ԵՐԿՐԻ ԵՐԳԵՐԻՑ

Հիվանդ, հոգնած, լի ցավերով,
Երկիրը լուռ, անբարբառ,



Ծ. Կուրդինյանը ամուսնու և երեխաների հետ

Վեր էր նայում թաց աչքերով
Ջինջ երկնքին լուսավառ։

Տանջված օրվա դրկանքներից՝
Չկար հանդիստ աչքերում,
Նրա կարծր, սևցած դեմքին
Վիշտ էր սողում-դալարվում։

Եվ մշտական խարույկ սրտի
Խորքերիցը խոլական,
Անվերջ լացի, հառաչանքի
Ձայն էր դալիս դիվական։

Նախանձում էր հեռու հեռու
Զգված անհուն երերին՝
Որ ցոլում էր մանուկ հոգու
Խաղաղ փայլը շրթերին։

Եվ բնությանն այդ անարդար,
Անգութ գործից վշտացած,
Տրտնջում էր իր անփարատ
Վշտից սիրտը լճացած։

«Չէիր փայլել՝ թե վշտերիս
Լիներիր գեթ ցավակից,
Կամ բարձունքից վայր նայելիս
Սիրտդ բախեր գթալից...

Կապույտ դեմքդ ալ կը հադներ
Անվերջ ծորող արյունից,
Հուսին, աստղեր վայր կը թափվեր
Խեղդված ադի արցունքից...»։
1906 թ.

25. ՆՎԵՐ ԱՂՋԿԱՍ

Նախշուն աչքերիդ ժպտող հայացքում,
Երբեմն տանջված հոգիս փափագով
Սուզվում է լռիկ, մոռացված նիրհում

Գալիք օրերի
Հույսերի ցանցում։

Նախշուն աչքերիդ խոր-խոր ծալքերում
Անվիշտ աշխարհի մանուկ ցոլքերով,
Իմ ապրած սիրտը հաճախ սփոփվում.
Գալիք օրերի
Անվերջ երազում։

Տեսնում եմ այնտեղ իմ անբիծ հոգին,
Դեռ չշղթայված կյանքի կապանքից,
Տեսնում՝ մոռացված կարմիր օրերին
Մանուկ իղձերիս
Պսակը գլխին։

Հրճվում է հոգիս չարքաշ այս կյանքից,
Որ անհետ երբեք կորչելու չեմ ես—
Թեև հաղթահար ընկնեմ ես կռվից,
Բայց իմ գնալուց
Կը թողնեմ մի ես։

Քեզ կտամ օժիտ հոգուս խորքերից
Չար կյանքի խեղդած ազնիվ իդեաներ,
Եվ ուժ՝ որ փշրես սև-սև օրերից
Տգետ պայմանով
Կոփված շղթաներ։

1906 թ.

26. ԲԱՆՎՈՐԻ ԵՐԳԸ

Ես ծնվել եմ մութ խրճիթում մշտաթաց,
Աղքատ կյանքի խոպանացած հովիտում,
Ուր որ քաղցը մանուկ օրից դրկաբաց
Չոր ձեռքերով վատուժ կյանքս էր շփշփում։

Ու տալիս էր նա ինձ այնքան կերակուր,
Որ չմեռնեմ ու չփախչեմ իր դրկից,
Գիշեր-ցերեկ ինձ հսկում էր նա անլուր,
Հյուսում շղթա տանջանքների օղակից։

Թոթով լեզուս նա բաց արեց առաջին
Վիրտուտ կյանքի տառապանքի հետևում,
Վաղ վշտերի սափոր շինեց իմ հոգին
Ու լցրեց կսկիծներից մեծ թափով։

Դիշերները անքուն աչքով լալագին
Մատաղ կյանքիս ցուրտ խորանի մոտ շոքած,
Մոռացվելով փարվում էի ցնորքին՝
Ու քուն մտնում հոգնած մտքով ու քաղցած։

Երբեմն հոգիս թրթռում էր, սլանում
Դեպի եթեր՝ աստղերի մոտ հուսալով,
Ուր որ այնքան ջինջ է, անվիշտ անպատում,
Ուր որ աստված մոտ է այնքան իր զահով։

Զարթնում էի վաղ փայտացած մատներով
Անկուշտ բամու ու կարիքի ոռնոցից,
Որ բախում էր դուռս սուր-սուր ճանկերով,
Կամ ներս մտնում խարխուլ պատի ծերպերից։

1906 թ.

27. ԳԻՇԵՐԸ

Քնած է երկիր... վիշտը մրափում՝
Հոգնած թևերը սև կրծքին խաչած,
Նրա ոռնոցով էլ չի մորմոքում,
Զարքաշ մարդկության ուղեղը հոգնած։

Թմրած է քաղցը... ու չի քրքրում
Օրերով դատարկ վատուժ ստամոքս,
Կուշտն ու քաղցածը մայր հողի գրկում,
Հավասար քնով քնած են անհոգս։

Միայն ծերունի Մորփեն աչալուրջ
Նստած է արթուն աշխարհի վրա.
Երջանիկ երազ, ցնորք ու անուրջ,
Թափում մրափող մարդին անխնա։

Եվ երազում են... երջանիկ ժպիտ
Մեղմ գալարվում է քնած դեմքերից.

Նրա, որ ամբողջ կյանքն է արհավիրք,
Նրա, որ գանգատ չունի իր բախտից։
1906 թ.

28.

* * *

Կուզեի տեսնել երկինքն ամպամած
Վշտի, տանջանքի մռայլ ամպերով՝
Արևն ու լուսին անլույս քարացած,
Աստղերին՝ քողված սգի սև քողով։

Կուզեի տեսնել ամպերին կապույտ,
Երկրում թափված արյունից ներկված,
Որ տառապանքը իր շնչով անգութ
Իշխեր միշտ այնտեղ՝ երկիրը թողած։

Կուզեի երկնից ոգիներն անմահ
Տանջվեին անհույս, արցունք թափեին,
Որ մաշեր նրանց քաղցը սովամահ,
Անեծք կարդալով երկիր իջնեին։

Կուզեի տեղար անձրև արյունից,
Որոտն անխափ զղրդար այնտեղ.
Երկնի ու երկրի ցավագար երգից
Տիրեր միշտ դժոխք հուժկու և ահեղ։

Կուզեի կորչեր հանգիստը Տիրոջ,
Խավարը փարվեր լուսատու գեմքին,
Ու սուլեր վիշտը անգուլ ու անխոնջ,
Տանջանքի ծուխը գալարվեր դահին։

Ու նա միշտ տանջվեր իր գործից սխալ,
Ճնշեր միշտ կուրծքը վճիռն անարդար,
Ու ինքը—ստեղծող անհաս ինքնակալ,
Մենք այստեղ ստրուկ՝ գոյության համար։
1906 թ.

29.

* * *

Լուսին, ինչո՞ւ քո դեմքին
Երբեք կարմիր չես հագնում,
Մի՞թե երկրի արյունին
Ցոլքը քեզի չէ հասնում։

Լուսին, ինչո՞ւ քո հագին
Սև չտեսա ես մի օր,
Մի՞թե սուգը խեղճ երկրի,
Քեզի ոտն է փառավոր։

Լուսին, ինչո՞ւ անտարբեր
Միշտ սահում ես դու խաղաղ.
Մի՞թե երկրի տանջանքներ
Քեզ թվում են չնչին խաղ։
1906 թ.

30. ՀԱՎԱՏ, ՀՈՒՅՍ ԵՎ ՍԵՐ

Հավատի հետ ես վաղուց եմ ծանոթ,
Դեռ վաղ մանկության անհոգ օրերից,
Երբ թոթով լեզուս փափագով խանդոտ
Աղոթք էր կարդում լսած տատիկից։

Հույսն ինձ սնուցեց թևերի վրա,
Որպես զթասիրտ հոգատար դայակ.
Երազով նախշե<ց> օրերս ապագա,
Ու ոսկեզօծև<ց> մտքերս անտակ։

Սերը... զարթնել է իմ սրտի խորքում
Սկզբում բարի, որպես ոգու շունչ,
Եվ ապա կյանքի գրկում անխնդուն
Քրքրել սիրտս, խայտանել անուրջ։

Եվ իմ տարաբախտ կյանքիս օրերին
Ինչո՞ւ չեմ կարող կցորդել նրանց,
Որ սերն ու հույսը գրկած հավատին
Իշխեին միահեծ կյանքիս դառնացած...
1906 թ.

31. ՇԱՏԵՐԻՑ ՄԵԿԻՆ

Դու Բեթհովենի սոնատն ես ածում
Հարուստ զարդարված շքեղ դահլիճում.
Շուրջդ բարեկամ, փափուկ թավիշ, գորգ
Ու ինքդ հպարտ, նաղ դեմքով անհոգ։

Անթիվ մոմերի ցոլքերը փայլուն
Շողում, շողշողում ու քեզ են ժպտում,
Կասես վախեցած կրծքիդ, մատներիդ
Այնպիսի առատ բարձած ակներից,
Ադամանդների շողերից խորշոմ
Ու նրանց փառքին սրտանց նախանձում։

Կասես աշխարհի գոհարը լինես,
Կամ քո կյանքի մեջ երբեք տանջված չես,
Վշտին, արցունքին իբրև անտեղյակ,
Անհոգ ու զվարթ վառ զարանան թռչնակ։

Կեղծում ես, թշվա՛ռ. չես համարձակվում
Այն, ինչ խեղդած է քո ստրուկ սրտում,
Ազատ համարձակ պատմելու մարդկանց,
Բանալ վշտերիդ քողն անթափանց։

Խաբում ես, թշվա՛ռ, խաղում են և քեզ,
Շուրջդ հավաքված այն դեմքերը հեզ,
Ինչքան որ նրանց դու ձանձրացնես
Ժպտալով կասեն, որ դու չքնաղ ես։

Եվ այսպես կեղծված, կեղծիքով սրբած
Եկար ու կերթաս, թշվառ արարած,
Աննշան հետքով, մինչ մահ անգիտակ
Դրսի աշխարհից—արած ոռնատակ։

1907 թ. 7 հունվարի

32. ԵՎ. ԹՈՂ. ԵՍ ԵՐԹԱՄ

Գիտեմ, ես կերթամ, մեծ հաղթանակի
Կծագի արեգ աղատ, հոդեթով...

Լուսավառ ցոլքը գիտակից կյանքի
Ճնշող խավարը կցրեն շուտով։

Դուք՝ քա՜ջ ըմբոստներ, ձեռք ձեռքի տված,
Սարուկ օրերի փշրած կապանքին՝
Անդարձ անդունդի խոր խորքում թաղած,
Երյունոտ անցյալին կերդեք ողորմի։

Դուք՝ նոր հույսերով ազատ ու անվախ,
Բուռն եռանդն արի սրտերիդ՝
Կդիմեք առաջ իդեալի անխախ<տ>
Նոր հիմք դնելու բոզբոջ կյանքերիդ։

Եվ պարարտ հողի բեղմնավոր կրծքին
Կը փայլեն խաղաղ բահ, քլունգ, գութան
Եվ կուշտ գեղջուկի գոհ, զվարթագին
Ըմբոստ երգերն արձագանք կուտան։

Եվ շեն գյուղերից զոհունակ կյանքի
Կը հնչեն աղմուկ, ուրախ աղաղակ,
Գորշագույն ծուխը ամեն առնիքի,
Լի օջախների կուտան օրինակ։

Եվ անտառների խորքից կուսական,
Հոյակապ ու լույս գործարաններից՝
Ժիր բանվորների բախտավորության
Կլսվի հիմնը հուժկու, բերկրալից։

Արթնացած միտքը կը ծնի հանճար,
Եվ ազատ խոսքը՝ վեհության ուղի.
Վաստակը՝ արդար, կյանքը՝ հավասար,
Մարդուն չի ընկճե քենը դառաղի...

Հոդ չէ թե կերթամ, ազատած երկրի
Բեղմնավոր շերտը ուժ կտա մարմնիս.
Սուրբ ազատության վեհ զոզանջների
Շռինդն անսպառ կը գալե հոլ ս...

Ու նորից կապրեմ... հողի շերտերում,
Կերգեմ ձեզ հիմն կյանքի սրբազան.

Բողբոջ մաքերս բույսի արմատում
Կծորեմ անվերջ, որ տան կոկոններ...

Ու նորից կապրեմ—տենչերս խեղդված
Արգավանդ հյութից կծաղկեն շուտով—
Եվ շիրմիս վրա շքեղ բողբոջած՝
Ձեզ այցի կելնեն փարթամ փնջերով։

1907 թ. 27 հունվարի

33. ՈՉ ՈՔ...

Արծիվ եմ ազատ, մրրիկ թևերով,
Հոգիս ձգտում է անհունին անծայր,
Ըմբոստ տենչերիս հասնելու համար՝
Հոգ չէ թե ճնշե կյանքն ինձ անդորով։

Բուիչքն է անհաղթ մաքիս կենդանի,
Հավատս հզոր, վառ սերս՝ անմահ,
Որ էլ<ի> կին եմ՝ ամբողջ պոեմա՝
Հոգ չէ թե մահը ինձ շուտով տանի...

Չկա մի կապանք, որ ընկճե հոգիս,
Մարե երկնային հուրը սրտիս մեջ,
Իղձերս թափի հրդեհն է անշեջ՝
Ոչ որ չի կարող բռնանալ երգիս։

Արծիվ եմ ազա՜տ, բա՜ձր թռիչքով,
Ամենքի համար տեղ կա իմ սրտում,
Ով որ սողում է—սրտանց եմ ատում,
Ըմբոստի համար պատրաստ եմ կյանքով...

1907 թ. 4 մարտի

34. «Կովի մեջ ձեռք կրերես
քո իրավունքը...»

Բող նոա անխափ ծովը դրկանքի,
Կատաղած ալին արնոտ ափերից
Կուլ տա՜ տաղնապով, առանց փրկանքի
Անհամար զոհեր կռվող շարքերից։

Թող ճնշե՛, ընկճե՛ լուծը բռնության,
Լցված բանտերի ճարճատեն պատեր.
Ճոճա կախաղան, զնգզնգա շղթան,
Արնաքամ մեջքին շաչեն մտրակներ։

Թող բաղցը մաշե՛ փոքրին և մեծին
Եվ ագահ ծծե հյութը սրտերի.
Գարշ ատելության շունչը քմածին
Հյուսե անարգել ցանցը դավերի։

Թող պաղանային հակումով դաժան
Եղբայր եղբոր դեմ կանգնեն ստահակ,
Եվ հյուծեն մարդիկ անընկեր, բաժան,
Ամեն սրբություն արած ատնատակ։

Եվ թող ալորտա երկրի երեսին
Հղփացած կյանքի մոլար զեխություն.
Զարը խափանե կենսարար լույսին՝
Սև աղջամուղջի տիրե թանձրություն։

Այնժամ... լոկ ա՛յնժամ, այդ մեծ կռվի մեջ
Մենք ձեռք կբերենք մեր սուրբ իրավունք՝
Երբ քաջ, միացած, հավատով անշեջ՝
Ոչ ոք չտեսնի վախկոտի թիկունք...

1907 թ. 13 մարտի

35. ՍԻՐՈՒՄ ԵՄ...

Սիրում եմ դարնան արևը պայծառ,
Նոր կյանք եմ առնում նրա ջերմի տակ.
Փթթում են որպես ծիլ, ծաղիկ ու ծառ՝
Գարուն մարերիս ծավալն անտակ։

Ախորժ ջերմություն կայտառ հոսանքով
Իմ երակներում խաղում են, հուզվում,
Սիրտս՝ սիրով լի, անհուն զգվանքով
Ամենքին սրտանց համբուրել ուզում։

Ջինջ արևի տակ՝ չեմ ատում մեկին,
Ինչպես սառ ձմռան դիտեմ ես ինձ.

Եվ շուրջս տիրող վիշտն անմեկին
Թափը հույսերի չի կարող վանել։

Արևի նման լույս է իմ ճամփան,
Իսկ ապագայիս բարձունքը՝ շրեղ.
Եվ ինձ են ժպտում շուրջս ամեն բան,
Գոհունակ շշուկ սուլում ամեն տեղ։

Զրկանքից ճնշված իմ թույլ ուսերին
Անհայտ խորքերից թևեր են կպչում,
Մերթ սավառնաթև հպվում բույսերին,
Մերթ ըմբոստացած եթեր եմ թռչում...

Սիրում եմ գարնան՝ մուսայիս փախուստ,
Հատնումը տխուր, տրտում ցավերիս.
Եվ այլափոխման հանդեսն է վերուստ,
Որ լվանում է վերքերը սրտիս...

1907 թ. 2 ապրիլի

36. ԻՆՉՈ՞Ի...

Այնտեղ՝ խրախճանք շեն պալատներում,
Ոսկի և արծաթ,
Սեղաններ առատ,
Զարն է անպատիժ, դավերին՝ ներում,
Վշտերից՝ անտես,
Բախտը ժպտերես։

Այստեղ՝ սև կարիք, ճնշում, մաշող սով,
Որբերի լաց, կոծ,
Քաղցածներ անգործ.
Լքած դերիներ, շնչող լոկ հուսով,
Ստրուկ և անբախտ.
Կործանիչ ժանտախտ։

Այնտեղ՝ շքեղ փառք, անարժան պատիվ,
Ձեռքեր արյունոտ,
Խղճեր մրուրոտ,
Լիրք շվայտության մոլություն անթիվ

Տեր ու տիրական,
Եվ տենչեր վարձկան...

Այստեղ՝ կախաղան, աքսոր, բանտ, մտրակ,
Կյանքի սև դիշեր,
Տրորած լեշեր,
Բողոք, անեծք, ճիչ—բռնի լծի տակ,
Արցունք ամեն օր,
Զրկանք ահավոր...

Այնտեղ՝ փափկասուն, սպիտակ ձեռքեր
Կյանքից հղփացած,
Փորեր լուղ կապած.
Սիրտ, հեշտանքի շռայլ հաճույքներ,
Ինքնիշխան, անկախ,
Ամենքից անվախ...

Այստեղ՝ կոր թիկունք, ձեռքեր կոշտացած
Եվ ծախվածների,
Փոր հացի գերի
Ագահ հայացքներ, խոնավ, անլույս, ցած,
Խարխլած նկուղ՝
Մարդը՝ անպտուղ։

Ինչո՞ւ... ո՛վ ասուված, ինչո՞ւ այս ամեն
Անարդար վիճակ
Եվ նույն երկնի տակ,
Նույն հողի վրա, միևնույն հյութեն
Չկա հավասար
Ոչ մի գործ արդար...

1907 թ. 5 ապրիլի

37. ԻՄ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԽԱՉԸ

Աշխարհ եկա
Մութ խրճիթում՝
Ուր որ ագահ
Քաղցն էր վխտում։
Սև զրկանքի

Ցուրտ գրկի մեջ,
Տառապանքի
Խարույկն անշեջ՝

Տգիտության,
Մրուրակալ
Սմուր շղթան
Ուսուց ինձ լալ...

Շուրջս խավա՜ր... կախված օձորը, ճեղքված թոնիր,
Պապից թողած ավանդական ծեսեր ու պաս,
Եվ բռնության հանդեսները միշտ անխտիր
Ըմբո՜ստ հոգուս, ապատ սրտես միշտ անպակաս

Սակայն մտքիս
Լայն թևերով,
Հպարտ հոգիս
Սիրած տենչով—
Սավառնում էր
Մի այլ աշխարհ՝
Իղձեր ուներ
Վեհ, օդտակար...
Գիշեր ցերեկ
Տանջվելով լուռ
Կյանքի բեկ-բեկ
Ցավից մրմուռ...
Ազատության
Լույսին ծարավ,
Ստոր շղթան
Ջընկճեց բնավ,
Ինձ՝ որ կյանքում
Ջինջ հույսերով
Եվ անլքում
Ցայնպես սիրով
Ընկա ճամփա
Մենակ, անոք,
Ճակտիս վրա
Անեծք, բողոք...

Եվ կեղծիքից, բիրտ գործերից վշտացած,
Իմ թույլ կրծքով մտա կռիվ ուժից վեր՝

Հարվածների զոռ տարափից խոնջացած
Դեռ այնքան վաղ սրտիս իջան կնճիռներ...

Եվ մի ծանր
Սև խաչ ուսիս,
Լռիկ, համբ
Ցավը՝ սրտիս,
Ես՝ ամենքին
Նվիրվեցի,
Եվ իմ երգին
Լար ընտրեցի
Սեր, միություն
Երգել անմար
Ազատություն
Կյանքի համար...

1907 թ. 10 ապրիլի

38.

Վաղ առավոտյան մշուշի միջից
Ես ոգիների խմբեր եմ տեսնում.
Եվ անմահության քաղցր անուրջից
Անհայտ վայրերի մաղթանքը լսում։

Այնպե՜ս դեղեցիկ՝
Ջինջ, անվիշտ, անմեղ.
Այնքան թափանցիկ՝
Թափորով շքեղ։

Կես գիշերային լռիկ խավարում
Մեղմ գալարումով ոգիներ կիջնեն,
Եվ աստվածային շունչը երկրում
Խաղաղ երգերով քուն կը տարածեն։

Այնպե՜ս հոգեթով
Տեսք կա նրանց մեջ.
Այնքան խոհերով
Կանեն ելևէջ։

Եվ եթե մարդիկ լսեին ինձպես
Այն խորհրդավոր խոսքերն անձայն,
Որ երկրին մոտիկ, ոգիներն այն վեհ
Մտքերին մոլոր կյանք, հոգի կուտան՝

Չէր լինի տանջանք,
Վիշտ, արցունք, դերի,
Ոչ էլ անփրկանք
Թախիծ վշտերի...

1907 թ. 12 ապրիլի

39. ԼՍԻ՛Ր

Տնքում են սար, ձոր, ծիլ, ծաղիկ ու խոտ.
Քամին՝ կաղկանձում. բուն վայ է տալիս.
Ծով, գետ ու առվակ՝ պղտոր, արյունոտ
Դիակներ բարձած—գնում են գալիս։

Լսի՛ր.

Վերքն է մրմնջում. սրտերը՝ քաղցած
Ունեն մեծ պայքար, որ խոր թափանցեն,
Ուտեն՝ ապրելու, գիտակի հյուծված
Ներքին աշխարհը, սիրտը շուտ անցնեն։

Լսի՛ր.

Մարմինն է տնքում փոր հացի համար՝
Անառակության մեջ լլկված վաղաժամ.
Եվ ատամների կրճատոցն անդադար
Անեծք է թափում՝ որ ծախվեց էժան։

Լսի՛ր.

Երկունքը մոտ է. ամեն խաղերից
Ոսկորն է շաչում. և մի վայրկյանի
Մի անասնական անհագ մրրկից
Աշխարհ է գալու քաղցած կենդանի։

Լսի՛ր.

Լուռ արածում են մարդ և անասուն.
Անբան կենդանին գոյության համար,

Անխոս զարմանքի ձգած վայնասուն
Մարդուն խոտակեր արավ արնահար։

Լսի՛ր.

Հանքը փուլ եկավ. կամ կաթսան պայթեց.
Մի մեծ փոսի մեջ լեշեր թաղեցին.
Դիակը՝ ճոճայ. լեզուն դուրս կախվեց.
Տրորված գանգեր ծովը նետեցին։

Լսի՛ր.

Շղթան է զնդում, հաստ ամուր շղթան,
Կաղապարը՝ արդար իրավունքների.
Տենչերը ըմբոստ, բողոքը՝ մարդկան
Տանում է հեռու՝ ճարակման գերի։

Լսի՛ր.

Մի՛ սոսկար. քաջ կաց. բռնակալության
Ծաղկոտ, վառ գարնան փառքն է այսօր,
Վերքերը՝ խորունկ. ոճիրն անխափան,
Արյան հեղեղը՝ ալիքներ բոսոր։

Լսի՛ր.

Չփախչես. կանգնիր, հենվիր իմ ուսին.
Շուտով վրեժի կուգա ցուրտ ձմեռ.
Եվ կթառամեն նոր արշալույսին
Նախճիր, բռնություն մինչ այժմ անմեռ։

Լսի՛ր.

Չէ՛, չոքի՛ր, շուտ. սուս, բազկատարած,
Երկունքի մեջ է կյանքը, մարդկություն,
Քիչ էլ, կծնի ազատն աստված՝
Մարերի դարուն—հավասարություն...

1907 թ. 29 ապրիլի

40. ՍԻՐԵՑԵՔ ՄԻՄՅԱՆՑ

Մի տարվեք գերի նախանձոտ տենչին,
Որ ատելության սերմեր է ցանում.

Մարդուն բանավոր իբրև մի չնչին
Խայթող իժ շինում միշտ, ամեն բանում։

Մի ձգտեք իշխել ձեզնից անզորին,
Դավերի ոստայն մի ձգեք կյանքում.
Հյուծվողի հյութը՝ ծծող հզորին
Ուշ թե անագան կը բերի լրում։

Մի առեք արյուն ուրիշի մարմնից՝
Իրավունք ունի ապրել ամեն մարդ.
Կրծող որդերը կաղնու հաստ բնից
Ողջը կքանդեն՝ կրծելով հանդարտ։

Մի ձգեք որոմ դավանանքների,
Կամ թե այլասեռ տգեղ խառնության.
Երկունքը մեկ է. նույն տանջանքների,
Նույն բեռի տակ է մեծ ազգը մարդկան։

Սիրեցե՛ք միմյանց անկեղծ, անարատ,
Ո՛վ էլ որ լինեք, ուր էլ որ ապրեք.
Միայն այդ սիրով կյանքը մեղապարտ
Կարող է հաղթել՝ առանց արհավիրք։

1907 թ. 29 ապրիլի

41. ՊԵՏՔ ԷՐ ԱՆԿԱՍԿԱԾ

Արդար է՝ կյանքը... ոճիրն՝ ուսուցիչ...
Սև շիրիմները—նահատակների,
Հրդեհը լափող, սովը՝ կործանիչ.
Սուգ ու շիվանը՝ անմեղ զոհերի
Պետք էր մարդկային ցեղին անարժան...
Շղթայի, սրի շաչյունն ամեն օր,
Թաղման հանդեսներ և մահ տարաժամ,
Եվ մութ որոգայթ, կախաղան, աքսոր—
Պետք էր անկասկած...

Ձե՛զ, թշվառ ազգեր, հոծ վամպիրների
Ոհմակներ քաղցած և արյունռուշտ.
Նմանի լեշից անզործ դիշերի

Ժամեր սպառող՝ գազաններ անկուշտ—
Պետք էր, արժանի...

Արդար հատուցում...
Ձեզ՝ ով մոլորված ոչխարի հոտեր՝
Որ դիմում էիք դեպի խորխորատ
Անհայտ սարսափից... լույսը ձեզ մոտ էր,
Բայց խիղճերդ սև, դծուծ, մեղապարտ.
Եվ կուրանալով ճնշելու ախտից՝
Ոսկի սրտերի խունկ էիք ծխում,
Դավադիր մտքով անուժի բախտից
Ձալիր գործերի արձաններ ձուլում...

Դուռ, որ թավմամազ, մտքերով տկար
Դարերի շնչից կոկած դուրս եկաք.
Որ գալան էիք անբան, անկատար
Անծայր երկիրը դերևաբ տարաք,
Անվախ ձգտեցիք մոլորակների
Հետքերը քննել, գաղտնիքը բռնալ
Կապույտ անհունի,

Գոյական շնչին անխափ տիրանալ.
Եվ որպես խլուրդ երկրի շերտերում
Օվկիանի ծոցը մտաք անարգել,
Պատուհասներից, տանջանքից մարդուն
Նպաստակների կատարին կանգնել.
Եվ հետք չթողիք նախնական խաղաղ
Կացության անպարտ բյուր վայելքներից,
Սուրբ ճշմարտության լույսից ուշաքաղ
Ձարը տոնեցիք մռայլ խորերից,
Արյան գներով միացաք իրար,
Եվ բաժանվեցիք նույնպես արյունով,
Շքեղ ծիրանի հագնելու համար
Խեղճերի կաշին քերթեցիք սիրով,—
Պետք էր անկասկած...

Ձեզ ցավ, տառապանք...
Դուք որ ծնելով տաղանդ-հանճարին՝
Անխռով թողիք մեռնել սովամահ,
Կամ թե անձնուրաց ըմբոստ հերոսին

Դահճին հանձնելով՝ կոչեցիք անմահ...
Դուք՝ որ պանդան պատահմունքների
Դիմակի տակից գործեցիք ոճիր՝
Հավատը արիք շահերիդ զերի,
Խաչի անունով սարքեցիք նախճիր—
Լցվեց բաժակը... մեղքերիդ համար
Այս կյանքը արդար՝
Լուռ, մեկիկ-մեկիկ վրեժխնդրության
Որոտ պիտ տեղա...
Եվ ի՞նչ եք կարծում,

Շահամոլ, խուժան, այլասեռ մարդկան,
Ձե՞րն է հաղթանակ, դո՞ւք եք այս կյանքում
Վճիռը ավոլ կյանքի և մահվան։
Հա՜, հա՜, հա՜... վաղ է դեռ այդպես մտածելու.
Նույն պատմությունը կյանք, միաք զեզերող,
Պիտ կրկնվի նորից, նորից գոհելու,
Նորից կռվելու՝ մինչև որ կորչեք,
Հին մնացորդներ ոճիրով ծնված,
Մինչ ողջ արմատով անհետ փշրվեք.
Եվ ապատն ատուված

Նորից ստեղծե կատարյալ էակ
Եվ նոր աշխարհի ղեկը վարելու
Դուրս գան այլ մարդիկ կապույտ երկնի տակ
Նոր կյանքի համար...
Եվ ձեզ հաղթություն պիտ մնա միայն,
Պատմության էջը հավերժ հիշվելուն՝
Որ չարիքներին եղաք վերջաբան
Եվ հողը պարարտ նորը շինվելուն...

1907 թ. 12 մայիսի

42. ԴԵՎ ԿԱՄ ՀՐԵՇՏԱԿ

Մրրիկ լինեի, որոտ կամ կայծակ...
Անհուն ոչնչի ապատ բացերով,
Կախված ամպերի բլուրների տակ
Վազեի շանթող, հրե բոցերով՝
Խառնեի իրար ողջը՝ օդային.
Որ նա սասաներ միահեծ դահից,

Լուսին և աստղեր վար թոթափեին.
Տարերքը ցաման մոլեգին ահից։
Եվ լա՜ր երկինքը. լային այն անբան
Ոգիներն ամեն. թույնը՝ տանջանքի
Դառնաբ կերակուր. և անմահության
Երազը փոխվեր ցավոտ երկունքի։
Եվ ողջը՝ քաոս, և ողջը՝ ժխոր.
Մնար անթափանց... մռայլ ու խավար.
Որպես մի գեհեն, դժոխք լուռ ու խոր՝
Առաջվա նման—աննյութ, անկատար...

Երկնքի բոլոր հյութերը ծծած՝
Իջնեի երկիր, այդ տիտան գերուն
Աննվաճ ուժով ոտքիս տակ ձգած՝
Խառնեի իրար—ամեռ ու դարուն,
Թռչուն, անասուն, ջուր, հուր, լեռ ու քար,
Ճիճու, որդ միջատ, մարդ, իժ գալարուն,
Ծառ, ծաղիկ ու տունկ, բույս և ծիլ գալար՝
Ցեծկեի անխատի. ողջում գարևոր
Շրջեի մահով՝ մեռներ ամեն ինչ.
Կործանվեր նրա ջանքերը բոլոր,
Վերը և վարը՝ չմնար ոչինչ...
Եվ ես ինքնիշխան, անկախ և անոք
Շրջեի աղատ՝ անհայտության մեջ.
Որ չլգար մեկը, չտեսներ ոչ ոք՝
Իմ կյանքը, գեմքը, կրծքի ելևէջ...
Աղատ և մենակ—Դև կամ հրեշտակ...

1907 թ. 20 մայիսի

43. ԵՍ ՁԵԶ ԽՂՃՈՒՄ ԵՄ

Խղճում եմ ես ձեզ, բիամիտ կանայք.
Որ արդ ու զարդի հետևից ընկած,
Թրև եք գալիս միշտ աննպատակ,
Լպիրշ վաճառքի գեմքերդ՝ կոկած։

Որ ամեն հնար դուք դարձ եք ածում
Միշտ արուների հաճույքը շոյել.

Եվ գիշեր ցերեկ միայն մտածում
Խանդոտ դավերի որոգայթ լարել։

Որ կողոպտում եք գտոը վաստակի
Վերջին կոպեկը ձեզ սիրող մարդու.
Ջեղած ժամանակ անսիրտ անհոգի
Կեղծ զոհ ձևացած լալիս որպես բու։

Որ ունեք բնազդ նուրբ առուստրի՝
Կարելիին չափ թանկ եք ծախում ձեզ.
Անվերջ պայքարով լոկ հրապույրի
Հաղուստի մրցման շինում եք կրկնս։

Խղճում եմ ես ձեզ՝ շվայտ գերիներ
Միտք<ը> թավիշի ծալքերում կորած.
Որ ուղեղ ունեք, բայց չկան մտքեր,
Որ սրտեր ունեք կեղծիքով ներկած...

1907 թ. 21 մայիսի

44. ԾԱԽՎԱԾԸ

Նա շատ ջահել էր, աշագեղ, քնքուշ,
Մանկական ժպիտ կար անբիծ դեմքին.
Միշտ մորն էր օգնում և ձայնով անուշ
Անվիշտ երգում էր—կայտառ էր հոգին։

Մի օր ծախեցին նրան լավ գնով՝
Հարուստ աղայի կին պիտի դառնար.
Եվ կոպիտ հայրը տուն եկավ դինով,
Վրդովեց կույսի բունն ու դաղար։

Երկու շարք ոսկի, մատանի, մանյակ,
Եվ մարգարտից շքեղ փիրուշան
Հագցրին նրան. դարձավ հրեշտակ,
Մի քնքուշ կոկոն, նորածիլ շուշան։

Եվ իր փեսայի հսկա ձեռքն առած
Անձայն, անշշուկ հետևեց նրան,

Զքնուղ այն դեմքին գունաթափ, շշմած,
Սարսափ տարածվեց, երբ տեսավ սեղան։

Արբած քահանան քծնվող ժպտով.
— Կամքո՞վն է եկել,—կույսին հարցրեց,
Եվ պատասխանը իբր լսելով,
Աղայի նվեր ֆարաջան հիշեց...

Անցյան տարիներ... մի օր ես նրան
Տեսա այլակերպ, հիվանդ, նիհարած...
Նա ուխտ էր եկել հինավուրց մատրան՝
Խնկով ու մոմով, ծոմ ու պաս պահած։

Նա ինձ հետ այնպես կարոտով խոսում՝
Վախկոտ հայացքը շուրջը ձգելով.
Եվ սրտաճմլիկ լալիս ափսոսում
Քաշած օրերը անկեղծ սոսկումով...

Նա շատ էր ծնում... և ուխտ էր եկել
Ջորավոր սրբի<ն> անծին մնալու.
Եվ պաղ քարերը այնպես էր գրկել՝
Կասես գղում էր, որ չէ ծնելու...

1907 թ. 21 մայիսի

45. ԵՍ ԵՎ ԴՈՒ

Ես՝ հովիկ եմ նազանի—
Դու՝ որոտող պաղ քամի,

Ես՝ ձորակ եմ խոր ու մութ,
Դու՝ կարծր ժայռ լերկ անփույթ։

Ես՝ աղբյուր եմ հեզ հանդարտ,
Դու՝ ոլորտող հեղեղատ։

Ես՝ ծաղիկ եմ սիրաբույր,
Դու՝ հաստ նոճի խստաբույր։

Ես՝ կայծիկ եմ հուրհուրող,
Դու՝ վառ հրդեհ կրակող։

4—358

Ես՝ երազ եմ վարդագույն,
Դու՝ իրական մարդ անգույն։

Ես՝ երգիչ եմ խելագար,
Դու՝ մանկիկիդ սիրող հայր։

Ես՝ աստղիկ եմ և լուսին,
Դու՝ իմ ընտրած ամուսին։

1907 թ.

46. ԳԱՐՆԱՆ ՀՈՎԻԿ

Գարո՞ւն է... գարո՞ւն... տափերի ընկեր
Հովիկը մարմանդ, հովիկը՝ հանդարտ
Ճամբա է ընկեր։

Կա՛ց... մի մոռենար... եւ դարձիր դնա...
Կամ անցիր գնա...

Գարո՞ւն է... բողբոջ... ծիլն է ծաղկում...
Ես ծիլեր ունեմ ցավագար սրտիս՝
Մութ ու ցուրտ ծալրում...

Գարո՞ւն է... հրդեհ... երկինքն է վառվում,
Ամպը՝ վառվռում...

Իմ հոգու խորքում թրջված ու ծնծված
Պեծեր են ծխում... թոդ... սուս փսփսան
Ու մարեն հանկարծ...

Ինձ մի մոռենար... եւ դարձիր գնա,
Կամ անցիր գնա...

1907 թ. 27 մայիսի

47. ԴՈՆԻ ՎՐԱ

Նվեր Ն-ին

Խաղա՞ղ է... թովիչ... նավակն է լողում
Ջրի երեսին։

Թիերից փախչող կոհակը դողում
Զեփյուռի ուսին...
Նիրհում է Դոնը... քնած են դալար,
Սիզավետ ափեր.
Բոսյակն է երգում ախուր միալար
Որ՝ «շատ է արբեր»...
Ես վախենում եմ... առաջին անգամ
Նավակ եմ նստել.
Անհայտ երկյուղից սաստիկ կդողամ
Կուզեմ արտաբվել...
Սակայն իմ դիմաց դգվող ժպիտով
Ափն է երևում,
Նրան եմ ձգտում անշտապ փափագով
Եվ սրտապնդվում։
Այլանդակ տիպար... ես ինձ զվվանքով
Ասում եմ լռիկ,
Թիերը խլում և հոխորտանքով
Պատառում ալիք...
Ափ եմ դուրս գալիս... թվում եմ ես ինձ
Ջնչին, փոքրոգի
Դեմքիս է նայում ծեր Դոնը հեռվից
Մաղրում անհոգի...

1907 թ.

48. ՄԵՐ ՁԱՅՆԸ

Ես կերգեմ ձեզ հետ, քմածին բախտի
Ով խորթ զավակներ,
Ընկած, տրորված մահաշունչ ախտի
Անսպառ ակներ.

Որ անհայտության գրկում հուսահատ
Տանջվում եք անձայն,
Բռնակալ ուժին զոհում անընդհատ
Կյանք ու ամեն բան։

Ես կերգեմ ձեզ հետ, զրկանքից մաշված
Մշակ-բանվորներ,
Գոյության սայլին հնազանդ լծված
Թշվառ գրաստներ,

Որ բիրտ օրենքի դատից այլանդակ
Աղտոտ, գ<լխ>ատաց՝
Խավարի մեջ ելք—վշտով անհատակ,
Անտուն ու անհաց։

Ես կերգեմ ձեզ հետ ըմբոստ, անձնուրաց,
Անկեղծ մարտիկներ,
Որ կռիվներում միշտ առաջընթաց
Ընկաք անվեհեր։

Եվ վայելչության մեղկ հրապույրից
Մինչ մահ անկաշառ
Ընկաք կռվի մեջ թշնամու նետից
Սիրով անսպառ։

Ես կերգեմ ձեզ հետ հիմնը հաղթական
Արթնացած կյանքի.
Խորտակվող հնի ոգբերգը մահվան՝
Վերջը գրկանքի։

Եվ թող տարածվի մեր ձայնն աշխարհում
Միշտ անկեղծ, անպարտ՝
Միացած ուժով դիմենք անդադրում
Մեր կյանքի<ն> հպարտ...

1907 թ. 7 հուլիսի

49.

Երգել ուզեցի՝ ասին չգիտես.
Երգեր հյուսեցի՝ լռի՛ր, ազջիկ ես.
Բայց երբ բիրտ կյանքում
Ես ցավերդ դարձա,
Ամենքի կրծքում
Ես տեղ ունեցա...
Ես շատ երգեցի
Ասին՝ շուտ կը հոգնի,
Բարձր երգեցի՝
Հանկարծ կը կտրի.
Անվերջ երգեցի՝
Շողոքորթեցին...

1907 թ.

50. ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Ամեն կես գիշեր սև շիրիմներից
Նոքա լուռ ու մունջ
Աշխարհ են գալիս... քնհատ երթերից
Լուսինն անտրտունջ
Ամպի տրանքից կաթնածոր լույսի
Շողեր է մաղում
Այն հեղ դեմքերից դեռ չհանգած հույսի
Թույլ ժպիտ քաղում։
Եվ շրջում են լուռ, զգույշ երկրում
Լարված տագնապով
Գուցե թե երկրում, կամ թե երթերում,
Մի տեղից շուտով
Գերի համր, անխոս մի չնչին նշան
Տա նրանց սրտին,
Որ կատարվել է... և հանգիստ գնան
Գերեզման մտնին...
Ոչի՞նչ... ո՛չ մի ձայն... բուն է վույվույում
Գլուխը լալիս,
Արնանների գետեր վշտերով կայուն
Գնում են գալիս...
Եվ մի սուր ցավի խեղդված հնձկլոցց
Քամու թևերին,
Շրջում է երկրում։

1907 թ.

51. ՀԱՅ ԿՆՈՋ ԵՐԳԸ

Ինչո՞ւ թախիծը դեմքիդ
Ման ես գալիս դու, հայ կին.
Անլուր վիշտը միշտ կրծքիդ,
Տանջանքի հետ, անմեկին։

Գուցե ջահել օրերից
Սերդ խեղդած ոտնահար,
Որ պահել ես աշխարհից,
Փոթորկո՞ւմ է քո դադար։

Գուցե քո բիրտ ծնողի
Շահին դարձար դու ապրանք,
Եվ բեղ անդութ գնողի
Հե՞տն ես ապրում անփրկանք։

Թե՞ հանդգնար դու մեկին
Սիրել դաղտնի—երազում.
Թշվառ, սարուկ դու, հայ կին,
Մահի դիրկն ես վազում։

Գուցե դատվա՞ծ ե<ս> անպարտ
Հպվել կյանքի հատակում,
Եվ ընկածի մեղապարտ
Խաչն ես տանում աննկուն։

Դեհ, սթափվի՛ր, հարազատ,
Վանիր թախիծը դեմքիդ՝
Կռվի՛ր, բողոքի՛ր ազատ.
Դա է փրկանքը կյանքիդ։

1907 թ. 10 հուլիսի

52. ԻՄ ՄՐՄՈՒՆՋՆԵՐԻՑ

Իմ անտակ
Տանջանքի
Խաչի տակ՝
Սրտիս մեջ
Լռելյայն
Ցավ կսկիծ
Կա միայն։

Մարդկանց մոտ
Իմ դեմքին
Վարանոտ՝
Ժպտալով
Կուզեմ տալ
Երջանիկ
Հինգ և փայլ։

Եվ անզոր
Իմ լացով
Լոկ հզոր՝
Կանացի
Իմ հոգին
Ինձ համար
Ջունի գին...

1907 թ. 26 օգոստոսի

53. ԲԱՑՎԵՑ ԳԱՐՈՒՆ

Սրտիս հովտում կանուչագեղ
Բացվեց գարուն.
Ծաղկեց դալար, նաղ սիրագեղ
Ծաղիկ սիրուն.
Ապբյուրն ունի հոգեզվարթ
Անուշ խոխոջ,
Հովն է սուլում դալարազարդ
Դաշտով անխոնջ.
Ցնորքներիս ջինջ եթերում
Վառ հոգեթով
Երալներիս ասատն է փայլում
Անմար ցոլքով։
Եվ երկնառաք իմ քնարի
Ոսկի լարեր,
Սեր են երգում կարոտ յարի—
Գիշեր աչեր։
Մութն է իջնում սրտիս հովտում...
Արշալույսին՝
Արցունքիս ցող այնտեղ թափում...
Վերջալույսին՝
Ոլորվում է երազներիս,
Երգեր հյուսում,
Վաղ խորշոմած վեհ իղձերիս
Խիստ ափսոսում։

1907 թ.

54. ԵՍ ԵՎ ԱՍՏՎԱԾ

Տիեզերքին
Եվ իմ երգին
Չկա ոչ մի սխոյան.
Ես և աստված
Կյանք ենք տված
Նոցա անմեռ գոյության։

Օվկիանոսին,
Իմ սեր, հույսին
Չկա շղթա, դերիշխող.
Ես և աստված
Ուժ ենք տված
Նոցա տիտան ու իշխող։

Տիեզերքի
Եվ իմ երգի
Ցավն է խորունկ, անհատակ.
Բայց արարիչ
Չի դդա ոչինչ,
Ես եմ անքում ցավի տակ...

1907 թ. 8 հոկտեմբերի

55. ԴՈՒՔ ՀԱՅ ՄՈՒՐԱՑՆԵՔ

Կրկին սովալլուկ, կրկին մուրացկան,
Անհայց ու անտուն ձմեռվա պահին.
Կրկին ձեզ համար վայելքներ չկան,
Ձեռք եք կարկառում անսիրտ աշխարհին։

Ա՜հ, թշվառ սերունդ, ստրուկ հոգիներ,
Ոճրագործ ուժին քծն<ելու> սովոր,
Որ ծանրակշիռ բեռին միշտ ընկեր
Ծծել եք տալիս հյութերդ բոլոր։

Չէ՞որ շատ անգամ պարզած ափի մեջ
Կոշտ քարի կտոր դուք շոշափեցիք,
Չէ՞որ դարերով հրաշք երկնաէջ
Անարգ սողալով իզուր հայցեցիք։

Եվ անտարբերության գարշելի ճահճում
Գեթ կուշտ լինելու չեք արել ոչինչ.
Խղճուկ ու վախկոտ՝ քան տկար ճիճուն,
Բարբարոս կյանքին տվել ամեն ինչ։

Կրկին աղեխարշ լացե՛ք, մուրացե՛ք,
Կուշտի սեղանից չնչին փշրանքներ,
Կրկին վաստակած ձեռքերդ բացեք,
Որ նետեն ձեզ այն, որին դուք եք տեր։

Դեռ ձեզ չի հասել վերածնության
Ահեղ ցնցումի կայծակն ու որոտ.
Դո՛ւք, որ կուրորեն սիրեցիք շղթան՝
Դուք հաց մուրացիք միշտ գծուծ, բոկոտ...

1907 թ. 8 հոկտեմբերի

56, ԵՐԿՈՒ ԴԻԱԿ

Ցուրտ շիրիմներում՝ փորված իրար մոտ,
Պատահան միմյանց երկու չոր դիակ.
Մեկը խիստ հաստ էր, շերտավոր ճարպոտ,
Մյուսը՝ սաստիկ նիհար ու բարակ...
— Լսիր, բարեկամ,— ձայնեց այն տղան
Դիակն իր կողքի մոտիկ պառկողին,—
Երկուսս էլ դիակ, երկուսս էլ մեռած,
Հանձնվեցինք հավերժ այս դաժան հողին։
Սակայն դու պառկել հանգիստ, անվրդով,
Նայում ես լռիկ մարմնիդ փթելուն,
Ես՝ ծանրաբեռնված անհամար որդով
Տանջվում եմ անձայն քանց դերին-հլուն...
Ա՜հ, այս է եղել ունայն աշխարհից
Հեռացողներին մի հանգստավայր...
— Բայց ո՞ւ քեզ համար,—
Երկրորդ շիրիմից
Ասաց խոտոդին դիակն այն բարակ,
— Այն լույս աշխարհում դու, որ բախտավոր,
Միշտ բռնի ուժով շինեցիր ճարակ
Այն աղիքներիդ զոհեր բյուրավոր.
Հյութերը մարդկանց—անվաստակ քրտինք,

Արցունքը աղի, արյունն ալ-կարմիր,
Տենչերը աղատ—զորության կնիք
Բնաղդով նանիր
Կերար-ծծեցիր.
Քո բաժին բեռը՝ անզորի ուսին,
Ուժով ռկարի հայը խլեցիր,
Եվ ճարպոտ մարմնովդ դեմ կանգնար լույսին,
Լույսին ոխերիմ,—
Այստեղ հողի տակ ինձ հետ հավասար
Պիտ լուծվես, փթես, անկուշտ որդերին
Շերտերդ ճարպի որպես ճոխ պաշար,
Պիտ ծծվեն լափվեն...
— Հա՜, հա՜, հա՜... իսկ զո՞ւ, որ քաղցած ծնար,
Քաղցած էլ մեռար,
Որդերն էլ քեզնից օգուտ չստացան...
— Ինձանից օգուտ ես այլ որդերի
Տվի բավական,
Որոնք միշտ սովոր, կուշտ ու դեռ կյանքին
Առան իմ հոգին,
Երբ ես չուզեցի փոքրին հացկատակ
Լինել հպատակ...

1907 թ. 31 հոկտեմբերի

57. ԷՏԱՊ

Փլփլացին սև ջահերը
Փողոցում,
Տիրեց աղմուկ կես գիշերվա
Լուռ ծոցում։

Շղթաների ձայնը տխուր,
Միալար
Հեծկլտանքով երկինք թռավ
Օդապար։

Սերտ շարքերով ծեր ու ջահել,
Այլասեռ,
Գնում են լուռ, իրար կողքի՝
Կիսամեռ...

Շղթա՞ էր պետք, կույր հոգիներ
Ձեզ համար,
Որ սրտերդ մի տենչանքով
Միանար։

Շղթա՞ էր պետք ձեզ, խավարի
Ջավակներ,
Որ լծակից կրեիք ցավ,
Զրկանքներ։

1907 թ. 2 Նոյեմբերի

58. ՇՂԹԱՆ

Սիրում եմ շղթան... որ օղակ-օղակ,
Կուռ սալի վրա մի օր միացավ.
Որ դիվաքրքիջ հանեց աղաղակ,
Մեր ձեռ ու ոտին անխափ տիրացավ։

Որ դարեր, դարեր կնիքով անջինջ
Դարձավ բռնության ձեռքում զենք, խթան.
Աղատ տենչանքին արեց բնաջինջ
Իր ժահրոտ կրծքով... սիրում եմ շղթան։

Մի՞թե մի օղակ կարող է ճնշել
Մարդուն բանական, մարդուն այդ հզոր.
Մի՞թե կդառնար կյանքը մութ դիշեր,
Եվ հույսը՝ լույսի խաբուսիկ, անզոր։

Եթե կուռ սալին չարանեանդ մի օր,
Ժանգոտ օղակներ չմիանային.
Եվ օգտվելով մաքերից մոլոր
Թշվառ մարդկության կապանք դառնային...

Կուզեի, ինձ հետ, դուք էլ սիրեիք
Խորհրդաստ կյանքը ժանգոտ շղթայի.
Եվ կյանքի սալին շղթա կաղմեիք,
Ձեռքիս տեղ հոդիս ես ձեզ կտայի։

1907 թ. 30 Նոյեմբերի
Ռոստով-Դոն

59. ԱՐԾՎԻՆ

Դու աղատ կը թռչես դեպի վեր,
Դու ունես դույգ հզոր, լայն թևեր.
Քո հոգին լեռներում բարձրանիստ
Միշտ անկախ՝ հպարտ է քո հանդիստ։

Անհունի ծալքերի դու ընկեր՝
Բայց դերի բնազդին գիշակեր,
Շատ անգամ ջինջ, հստակ եթերում
Քո ճանկից կաթկաթեց ալ արյուն։

Շատ անգամ զոհերիդ ծվատված
Ճիչերից սարսափեց և սստված.
Վառ արև քո ոճրին լուռ վկա՝
Երկնքում դատ, պատիժ քեզ չկա։

Եվ մի՞թե անպատիր իմ հոգուն՝
Որ այնտեղ կը թռչի միշտ անքուն—
Քեզ նման կգվեն խնդագին,
Արյունոտ ճանկերիդ ունի գին։

1907 թ. 14 դեկտեմբերի

60. ՎԱՂՆ ԷԼ ԿԸ ՄՈՒՐԱՔ

Դուք՝ որ կյանքի մեջ անհաշտ ու դաժան՝
Ուզեցիք հասնել մուրազի ափին—
Մենակ ձեզ համար, ամենքից բաժան՝
Ջլատված ուժով տիրել սարսափին.
Որպես ոչխարի մոլորված հոտեր
Ոսվը թափվեցիք շշմած, առանց զեկ,
Վերածնության լույսը ձեզ մոտ էր,
Նրան չտեսաք, չզգացիք երբեք—
Այսօր՝ տանջանքի մրրկոտ ծովում,
Մոտիկ անդունդին, հոգմերից ծեծկված,
Մենակ, անընկեր մահին եք զոհում
Երբեմն խիզախ տենչերդ պաշտված...
Այսօր՝ ձեր վաստակն արդար քրտինքի՝
Ճարպոտ փորերին առատ կերակուր,

Մինչդեռ դուք անհաց, գրկված անհոգի
Ծծում եք կյանքի թույն, լեղին մրուր։
Այսօր՝ կուշտերս վայելքին գերի
Ապրում ենք հանդիստ, անվիշտ անվաստակ
Ձեր բանուկ ձեռքը խոնարհ է, բարի,
Այսօր մեզ տվեք, վաղն էլ՝ կը մուրաք...

1907 թ. 20 դեկտեմբերի

61. ՄՈԼՈՐՎԱԾՆԵՐԻՆ

Ձեր սև շարքերին երբե՛ք չեմ ատում.
Այսպես է կյանքը, դուք՝ կյանքի ծնունդ.
Մոլոր տենչերիդ իմ սիրող սրտում
Երբեք չբացի գարշանքի անդունդ։

Կանցնի բռնություն. վերածնության
Արշալույսի հետ կզարթնեք և դուք.
Դիտակից միտքը—անգորրի խթան—
Չի թողնի երբեք գերի կամ ստրուկ։

Սև հարյուրներիդ ջինջ լույս կը տեղա,
Մեղքը ձեղանից կընկնի խո՜րթ, հեռո՜ւ.
Մինչ այժմ արյունոտ ձեռքը կը դողա՝
Ջոհելու մարդուն կրքին քինառու։

Եվ սխրահռչակ անցյալը—նախճիր—
Սրտանց կը ձգտեք հավերժ թաղելու.
Նոր, բյուրեղացած կյանքում անոճիր
Աղնիվ գործերի կը դիմեք հլու։

1908 թ. 18 հունվարի

62. ԲԼԲՈՒԼԻՆ

Արի, բլբո՛ւլ, մի երգ երգենք ներգաշնակ.
Հովն օդապար լինի թող մեզ նուրբ դաշնակ.
Դու կերգես լուսնյակ սրտիդ լույս հուշեր,
Ես՝ իմ մթին, վշտոտ ճամբու սև դիշեր։

Թող զիլ հնչվի քո սիրերգը դայլայլիկ.
Արձագանք տա քեզ բույսն, աղբյուր և ալիք.
Իմ ցավատանջ երգն ըմբոստ սավառնե,
Տառապանքի հեծկլտանքով ուժ առնե։

Երբ վիրավոր ընկնես սիրուց դավաճան,
Արյուն ծորե քո աչերից ժրաջան՝
Երգի՛ր կյանքի իմաստալից մեղեդին,
Անհաշտ կռվում մեկի դահը, մյուսի դին...

Մեր ցավերգը հոխորտալից, ներդաշնակ,
Ապրած սրտի սև լարերը մեկ դաշնակ,
Տիեզերքի երգը երգենք լռելյայն՝
Նա է անմահ, սեր, սիրելին մեզի, ունայն...

1908 թ. 19 հունվարի

63. ՍՏՎԵՐԸ

Որպես սրբազան, հմայիչ ստվեր
Հոգուս մատրան մեջ շրջում ես դու միշտ.
Քո գոյությունից ես գոհ, անձնվեր՝
Հսկում եմ թախծով
Աչերիդ՝ ծով-ծով...

Նայում եմ թախծով
Աչերիդ՝ ծով-ծով,
Հե՞ր դու ինձ համար մի լուռ ուրվական,
Ես՝ տեսիլների վշտահար դերի,
Քեզ համար մինչ մահ և՛ կամ, և՛ չկամ...

1908 թ. 29 հունվարի

64. ԹԵ ԿՈՒԶԵՌ ԱՊՐԵԼ

Գեթ հեղաշրջման այս ժամին վսեմ
Ազգային ճաղատ վիսորը թողնեիք.
Եվ անհաշտ օրից դալուկ ու նսեմ,
Ամենի կողքին նոր ուժ առնեիք։

Ի՞նչ շահ դարերով տղչալ անդգա
Նանիր ցնորքից գործած ոստայնում,
Բնական դաճաճ՝ ձևանալ հսկա,
Եվ մուրալ այնտեղ՝ ուր չեն սառանում։

Գոյության կռվում երբ կար ու չկաք՝
Արժան չէ՞ արդյոք ջնջվել երկրից,
Գոնե ուրիշին դուք տեղի կտաք.
Ով ուզե ապրել նոր կյանքով, նորից։

Թե կուզեք ապրել, ապրել ապահով՝
Բռնեք այն ձեռքը, ով էլ որ ձեզ տա,
Նոր ուղին փշոտ՝ հարթվում է մահով,
Որ ծառեր բաչը հանեն Գողգոթա...

1908 թ. 12 փետրվարի

65. ԿԱՆԳՆԵՆՔ ԿՈՂՔ-ԿՈՂՔԻ

Զուլում է<ր>... գիշեր... ընկեր, չե՞ս հիշեր՝
Ինչպես կուրացած, իրար մոռացած
Էն կռվում դաժան ընկանք մենք բաժան...
Զուլում էր, գիշե՜ր, թողինք շա՜տ լեշեր։

Քո գարկը ուժգին կպավ իմ կրծքին,
Արյունես անմիտ հազար քղամի<դ>,
Ես լացի անձայն, մարդիկ քար դարձան,
Երկիրը թնդաց, զուլումը խնդաց...

— Զուլում է<ր>... գիշեր... հինը մի՛ հիշեր.
Կանգնենք կողք-կողքի, մի սիրտ, մի հոգի,
Միացման հույսին թիկնած միասին՝
Հարվածենք ուժգին զուլումի կրծքին...

1908 թ. փետրվարի

66. ՃԻՇՏ ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Գիշեր է... խավար. քամին գիվահար
Չի տալիս դադար...
— Մի՛ քնի՛ր, լսի՛ր, մի՞թե չես հիշեր

Սյունները արնոտ, այն կախված լեշեր...
Ա՜խ, միշտ կը բերեն... նոքա չեն լալիս
Լույսը ծագելիս.

Այն մութ փոսերը իմ առաջ բացին.
Ամեն օրվա պես՝ ճիշտ լուսաբացին...
Մի՛ քնի՛ր, լսի՛ր, մի՞թե չտեսար՝
Ընկան հավասար...

Մի օր խաչն ընկավ վախից զողզոջուն,
Գնդակը կրծքին, երբ ավեց ողջույն...
Մինչ ե՞րբ պիտ բերեն. դաշտում այն հանդարտ
Քուն չունեմ անդարդ...

Միշտ աչքիս առաջ՝ սյուն, բահ ու կացին
Ամեն օրվա պես, ճիշտ լուսաբացին...
Դեհ, լսի՛ր, լսի՛ր, ինչո՞ւ չեն լալիս
Լույսը ծագելիս...

Գիշեր է... խավար... քամին հեծհեծում,
Իմ դուռն է ծեծում...

1908 թ. 18 փետրվարի

67.

Որպես մի մրրիկ խուլ, ահեղամռունչ,
Որ տարերային անհաշտ ցասումով
Փչում է <ռազմի> շեփոր ոսկեշունչ,
Մենավոր ուղին ճնշում սոսկումով.
Որպես շառաչը կատաղած ծովի,
Գոռ ալիքների երգը ապստամբ,
Որպես ճարճատող բոցերն հրդեհի,
Ու շանթեր նետող որոտ թուխպ ու ամպ՝
Տիեզերային դժվար երկունքի
Ցավն է գալարվում տիտան արդանդում.
Եվ զողանջներով դոռ ահազանգի
Սաղմը կաշկանդող կապերը քանդում։
Եվ դաժան, զահիճ սերունդը մարդկան

Ցավի ղողանջից շշմած ու մոլոր՝
Կուզե արգելել ծնունդը մանկան։

1908 թ. 9 մարտի

68. ՄՐՐԿԻՆ

Մրրիկ հոգիս է եռում,
Հոգիս մրրիկն է սիրում.
Մրրկիր, մրրիկ,
Հեղեղ թող վազե,
Թև տուր ինձ, մրրի՛կ,
Որ գառնամ բազե,
Մրրիկ մրրկեմ
Ես էլ մրրիկ եմ.
Մրրիկ ծնված իմ հոգին,
Մրրիկ ծնե իմ հոգին։

1908 թ. 10 մարտի

69.

* * *

Սևաչյա, հրաչյա նայվածքով
Մի նայիր, խնայիր՝ թող գնամ.
Ուխտավոր ուղևոր իմ հոգով
Անկսկիծ անթախիծ հեգ մնամ...

Կը հիշե՞ս մի օր ես ուզեցի
Քիչ խաղալ ու խայտալ քո դիմաց.
Գոռ մրրիկ, փոթորիկ հուզեցի՝
Ուր սիրույս դին անհույս կուլ գնաց...

Չէ՛, կրկին քո գրկին անձնատուր՝
Ես պատանդ ոչ մի խանդ չեմ թողնի.
Սևաչյա՛, հրաչյա՛, ճամփա տուր,
Ես կարոտ ու մոտ եմ այլ հողմի...

1908 թ. 17 մարտի

5—358

70.

Սիրելի՜ս, սիրելի՜ս, սե՞ր ունիս
Այս սև, կույր և անբույր գիշերում.
Խոր վերքեր, ալ երգեր թե՞ ունիս,
Եկ ապրենք ու հարբենք հուշերում։

Թև-թևի, հև-հևի, անբաժան՝
Եկ շրջենք ու շնչենք սեղ դաշտում,
Վաղը տես, գեղ պես սև, գաժան
Օր ունենք, չարաննեզ՝ անկշտում։

Որ մեկ-մեկ մութ ու մեզ մտորմունք
Շարեշար պիտ շարև մեր կրծքից.
Սիրելի՜ս, սիրելի՜ս, սեր, գեղմունք,
Եկ փախչենք ու հանգչենք անեծքից։

1908 թ. 17 մարտի

71. ԴԵՐԶԱԿՈՒՀԻՆ

Նա հրաժարված կյանքից, երազից,
Կարում է անխոնջ գիշեր ու ցերեկ.
Նրա կուրծքը նեղ, թիկում է հազից,
Տոնական հույզով չէ հրճվել երբեք...

Սապատ է բուսել ջահել թիկունքին,
Մարմինն է վտիտ, գեմքը՝ վաղ խամրած.
Անգութ հարվածի սպի կա ունքին,
Կապույտ աչերի նուրբ ցոլքը մարած...

Երկու փոքրիկի նա քուն է գրել,
Երրորդին զգույշ օրորում ոտքով.
Ծախված գիշերից չորրորդն է կերավել,
Որ կրում է գեռ իր վատուժ կրծքով...

Տեսա, թքի մեջ արյան բծեր կան,
Հազն էլ շեշտ ունի գիշերվա կեսին.
Վազը նա, անշուշտ, կիջնի գերեզման,
Պերճ տատապանքի խաչը իր ուսին...

Իսկ քաղցած, բոկոտ որդիքը նրա
Պիտ փտեն հանքում անհաց ապրուստով.
Աղջիկներն անտեր՝ մայթերի վրա
Կը ծախվեն աժան ներկ ու հագուստով...

1908 թ. 9 մայիսի

72. *
* *

Մանյային

Մենք՝ որպես երկու տարբեր մոլորակ
Նոր կյանքի շեմին իրար գրկեցինք.
Ես՝ գաղթականների հարազատ զավակ,
Դու՝ ձյան աշխարհի դուստրը դեղեցիկ։

Օրն է ապստամբ, գարկը՝ քմածին...
Խուժանը՝ վայրագ, վարդավառ հրդեհ...
Դու կանգնած էիր որպես շեկ վրձին,
Ես՝ սև ու խավար, տարագիր նժդեհ։

Ոսկեզեն բոդի լեզուների տակ
Հին ցնորքներիս խարույկը տեսա՞ր...
Մենք՝ որպես երկու տարբեր մոլորակ,
Մի մեծ խաչի տակ լացինք հավատար...

1908 թ. 7 հունիսի

73. ՄԻԱՅՆ ԱՅԴ ՏԱՐԲԵՐ ՆՄԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Տանջանքն եմ օրհնում վարձված բանվորի,
Որ առավոտից մինչև ուշ գիշեր
Ապրելու համար, փոր հացին գերի՝
Ոսկորն է ցավում, թմրում մկաններ։

Սև քաղցն եմ օրհնում, անվերջ գալարում,
Որդերի անկուշտ, ագահ ոհմակի,
Որ սուր ճանկերով մտքեր են լարում,
Գրգռում ջերմը բաց ախորժակի։

Վաստակն եմ օրհնում ես դիշեր ցերեկ
Թե՛ ծեր, թե՛ ջահե՛լ աշխատավորի,
Որ կորաքամակ, չեն հոգնում երբեք
Հասույթ պատրաստել լայնագիր փորի։

Անհաց խուժանի ճիչն ու վայնասուն
Օրհնում եմ սրտանց, ցանկալով ավյուն...
Ճարպի բեռնակիր անհոգ-անասուն
Կուշտերին մաղթում արևշատություն...

Միայն այդ տարբեր նմաններին հետ
Շղթան կյանք չունի, գրկանքը՝ աղբյուր,
Եվ ծագող վեճի պայքարն է հավետ,
Եվ ծագող վեճի պատճառ միշտ բյուր։

1908 թ. 13 հունիսի

74. ԳԻՇԵՐ

Գիշերը ասաղոտ դյութել է հոգիս...
Հիվանդ եմ լուսնի այն քնքուշ թախծով,
Որ միտքս դերած՝ հալվել է կրծքիս,
Շուրջս բաց արել երազանքի ծով։

Ասաղերը այնպես կախարդ են այսօր.
Ճիշտ կնոջ նման ալիքն է ժպտում...
Ջինգանների խարուկը բոսոր
Կամակոր հույզեր ծնեց իմ սրտում։

Նվագն անբարբառ, կես գիշերային
Ջեփյունն է արբած տարածում իր հետ—
Որ անմահ սիրո խորհուրդն է խորին,
Որ կա, կմնա հավերժ ու հավետ...

Հե՛յ, դդույշ այդտեղ... սիրտ կա կրծքիս տակ...
Գիշերն է քնաղ... ես սիրել գիտեմ,
Ասաղոտ գիշերում—դեն է հրեշտակ...
Ասաղոտ գիշերում—դժոխքն է եղեմ։

1908 թ. 18 հունիսի

75. ԿԱՅՏԱՌ ԱՇՆԱՆ ՊԵՍ

Կայտառ աշնան պես ինձ կը հանդիպես...
Կրնկենն անարև սրտիս ծիլ-տերև.
Անհագ հոգուս մեջ կիջնի անմիտ վեհ,
Համառ աշնան պես դու ինձ կը դիտես։

Ստվերի նման տենչերս զարնան
Թոշնած բույսի հետ կցրես անհետ...
Իմ հոգին անբիծ կղգա ցավ, թախիծ,
Որ մահվան նման ցնորքս էր գարնան...

Կը սիրեմ ես քեզ... կյանքս կզուգես
Ցավերի ցավով... սակայն ապահով,
Ես քեզ երգ կերգեմ, որ դու ինձ ընդդեմ
Կայտառ աշնան պես դեթ քանզել դիտես։

1908 թ. 6 հոկտեմբերի

76. ՁԿՆՈՐՍՈՒՀԻՆ

Ահա լուսնկան մտավ առագաստ,
Եվ ծածկվեց ամպն թավիշ վերմակով.
— Մոտեցիր զգույշ, համբուրիր զգաստ
Մի շող երևաց ամպերի տակով։

Լուսնկան սաստիկ սիրում է նայել,
Խորը թափանցել ամեն մի գաղտնիք.
Նա երբեք առատ լույս չէ խնայել
Տեսնելու մարդկանց համբույրը-կնիք։

Մոտեցիր զգույշ, համբուրիր կամաց,
Վայելքիս համար չուզեմ ափսոսալ...
Լուսնկան կանգնեց աստղերի դիմաց,
Սկսեց նրանց ինչ-որ փսփսալ։

Տե՛ս, մի նենգ աստղիկ լողում է լճում,
Ալիքներն անգութ ծաղրող դեմք ունին։
Հույսն է վերևից ափի հետ վիճում
Նայում է դժգոհ լալկան ուռենին։

Գուցե նա այսօր այստեղ դա որսի,
Ալիքն էլ երբեք չի պահել գաղտնիք...
Այստեղ ամեն ինչ ճորտ է ձկնորսի,
Նրան համախոհ՝ ջուր, ասող ու երկինք։

1908 թ. 18 հոկտեմբերի

77. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏԱՊԱՆԱԳԻՐ

Այստեղ է հանդչում մի խեղճ բեռնավոր,
Որ անձուկ կյանքում, որպես ուղևոր
Գնում էր խոնարհ նրա ետևից՝
Հողմերից ծեծկված, այրված արևից,
Քաղցած ու սարուկ, հիվանդ ու մենակ,
Անապատ տենչով, ծանր լծի տակ։
Եվ ոչ ոք նրա բեռը վար չառավ,
Խաբված նրանից՝ հուսախաբ մեռավ։

1908 թ. 4 նոյեմբերի

78. ՄԱՀԻՆ

Եվ կուշտ, հագեցած կիրողնեմ ես այս աշխարհը սիրուն...
Անեղը, անափ մոռացության մեջ, անհայտին մոտիկ,
Կը մոռնամ ես ձեզ, երկինք ու երկիր, ձմեռ ու գարուն։

Անխուսափելին մեկ կպտակն անբաժան կապով.
Մի փոքրիկ անկյուն մեծ տիեզերքից կընկնի ինձ բաժին՝
Ու հողն ու սրտեր ինձ կը տիրանան ազատ տագնապով։

Եվ դու իմ թմբին կը հսկես անտես, տրտում օրորով,
Քամուն կը պատմես իմ վերապրումի երկունքի մասին.
Ու երկնից երկիր միշտ կաղերես աճյունիս գորով...

1909 թ. 24 փետրվարի

79. ՈՒՂԻՍ

Իմ կյանքում
Անվայելք,

Կա կանգուն
Մի վերելք՝
Շավիղով նեղ, անձուկ...

Ուր ես միշտ,
Անվհատ
Գրկած վիշտ՝
Անընդհատ
Քեզ հետ, ո՛վ տառապանք,
Շրջում եմ թեանցուկ...

1909 թ. 11 ապրիլի

80.

* * *

Թե ցավերիս ծեծկող քամին մեղմանար,
Օրս լքում ծաղկի նման չթոշներ.
Թե գեթ մի թույլ մխիթարանք ինձ հասներ,
Եվ մի անպորր իջներ կրծքիս ու մնար...

Թե կարիքը իր ոսկրալի մատներով
Լուծ չդներ հիվանդ, աներգ իմ հոգուն.
Ու չճնշեր ինձ միշտ այրի իրիկուն
Ծորունկ վշտի անարտասուք մորմոքով...

Արև, ասացեք, դուք էլ դեռ կամ հրեշտակ,
Դշխոյ երգիս անհաղթ դահին շուրջ-բոլոր
Կը շոքեիք դուք շարն շար, խեղճ մոլոր,
Ողջ էութեամբ գրասա-գեների ոտքիս տակ...

1910 թ. 6 փետրվարի

81.

* * *

Ճոճաց իմ գեմ երազների կարավան.
Ցարթնեց հոգիս ցնորքների օրրանում.
Հին, մոռացված սավերների շարք-շարան
Ահա սրտիս հուշմունքների տենչ կտան։

Այս ինչ դալուկ, ողորմելի ու խղճուկ
Դուք տեսք ուներ, մոտ անցյալի երազանք.

Ցնորքներն էլ այս եղկելի և անձուկ
Կյանքում սմբած՝ ո՞չ տեսք ունեն, ո՞չ էլ կյանք...

Մահվան պես լուռ, ծանր ու ճնշող վշտի չափ,
Այս օրերում կեցիր ըմբոստ, իմ մուսա՛,
Թող չհյուսվի մի երգ տարտամ ու վհատ՝
Մեղքի նման մեղ անարժան կյանք է սա...

1910. թ. 12 փետրվարի

82. ԳԻՇԵՐ

Ահա սահեց լուսնկան
Երկնքում,
Մորմոքաբեր շշուկ անցավ անտառով.
Սիրտս հուզվեց մի հին ցավի պատճառով.
Չհանգած կայծեր լույս ընկան
Իմ կրծքում։

Հոգիս քեզ է երազում—
Իբր թե՝
Սաղարթներից զողանջում է սիրո վեճ...
Տապ համբույրդ ես զգում եմ օդի մեջ,
Սիրտս ծնեց երազում
Վառ հրդեհ...

Լա՞վ է այսպես—չկա ցավ,
Խանդ, կսկիծ.
Որոնում եմ քո սավերը ես լուին,
Սրտիս բոցը լույս չի տալիս անտառին...
Լուսնկան էլ չքացավ
Երկնքից...

1911 թ. 8 հունվարի

83. ՊԱՏԿԵՐ

Տնակը սաստիկ փոքրիկ է ու հին,
Քամին ծերպերից սաղմոս է ասում,
Ապրում է այնտեղ խեղճ բանվորուհին
Եվ ծվեններից փալասներ հյուսում։

Չէ հնչվում այնտեղ քրքիջ կամ երգ-տաղ,
Չկա կենցաղի պետք ու հարմար իր.
Եվ տեսքից զրկված հատակն, առաստաղ
Խարխուլ պատերին մեծ ճիգով հպված,

Կասես սպասվող արարքից նանիր,
Պահում են գթով մենակ աղջկան՝
Ում բարվոք կյանքի էլ հույսեր չկան,
Վառարանն էլ պաղ, հացը՝ ողջ կերված։

Ում տարիքն արագ գալիս են դնում,
Դեմքին լիառատ գծում ցանց-կնճիռ,
Ով բախտի բերմամբ ուտում է, քնում,
Ում դատը չունի ո՛չ ելք, ո՛չ վճիռ։

Ով կայտառ, անհոգ մտավ գործարան,
Ժպիտը դեմքին, նախշուն երազով.
Ով ընկավ, ելավ. ում ուժով առան
Ու դեն նետեցին՝ կուրծք տաշող հազով։

Դուրսը ցուրտ է, բուք-տխուր երեկո.
Լքումն է դերել թշվառ աղջկան.
Իր անզոր զորքից վհատ ու դժգոհ՝
Դիտում է նրան սուրբը պապական.

Եվ հիշում՝ ինչպես գեղեցիկ մի օր
Իջավ փոթորիկ տնակում ցուրտ, հին,
Հավատը փախավ, թռավ թևավոր,
Մնաց մեն մենակ խեղճ բանվորուհին։

Կանթեղն այն օրից կախված է անձեթ,
Աղոթք, աղերսի նույնիսկ խոսք չկա.
Դաշտային ծաղկի մի փունջ հոտավետ
Նրա վաղանցուկ փառքին է վկա...

Ճոճում է լռիկ կեռը ափի մեջ,
Շարքերն են բացում, սակայն վարձը՝ քիչ.
Մի՞թե այս կյանքում նենգ ու սնամեջ
Մի վարդ չի պոկվի կույր բախտի կրծքից։

Միթե չի դալու կինը իմաստուն
Մի նորոդ կյանքի սրբազան ուխտով...
Ժպտում է քնից ծեր, մռկան կատուն,
Շոյում աղջկան իր բրդոտ թաթով։

Դուրսը ցուրտ է, բուք. տխո՞ւր երեկո.
Ի՞նչ շահ լինել միշտ բախտից լոկ դժգոհ...

1911 թ. 31 հոկտեմբերի

84.

* * *

Երգով
Հեշտալոր,
Իմ վերքով
Բոլոր
Գնացի առաջ.
Քնաց
Քնքշալար,
Հոգս, ցավ, վիշտ,
Ընդմիշտ
Ուսերիս առած...

Փրկանքի
Ակին,
Եվ կյանքի
Գրկին
Հասել եմ արդեն,
Ես ապրել գիտեմ...

1912 թ. 16 ապրիլի

85. ԳԻՇԵՐ

Ահա լուսինը
Ամպի ուսին մենակ տրտում քուն մտավ,
Մի սիրունիկ,
Հուրծիր աստղիկ վազեց՝ հարմար տեղ գտավ։

Արտը հասած
Հեքիաթ ասաց. ուսին լացեց երազում.
Գետն էլ այդպես

Նոր հարսի պես քշքշում է ու նազում։
Դե դուրս արի,
Ես այս սարի ոգին եմ քաջ-խենթ-խելառ
Ու պերճ խոսքի
Ունեմ ոսկի քնար մի նուրբ, ոսկեբար։

Եկ ու անցիր
Որպես անծիր երկնքի վառ լուսատու,
Որ հլու հեզ
Ներբողեմ քեզ երգովս խիզախ ու հատու։

Վաղը նորից
Զարբաշ օրից հոգիս կընկնի լծի տակ,
Գուցե եկար
Ու չգտար ինձ համայքիդ հպատակ։

Դեհ դուրս արի,
Ես այս սարի ոգին եմ ինքնակալ,
Գահս է միշտ
Տառապանք, վիշտ... փառքս՝ տանջվել ու տոկալ։

1912 թ.

86.

* * *

Բախտս ու ես իրար հետ
Խաղում էինք պարտիզում,
Ծաղիկ, խոտից հոտավետ
Փունջ կապելով սար դիզում։

Ղողանջում էր օրն ի բուն
Մեր երգն անուշ, հեշտալուր.
Հոմն էլ՝ թոզած նիրհն ու քուն,
Տարածում այն շուրջ-բոլոր։

Կանցներ օտար մի թռչնորս
Երգ ու ծաղկի սիրահար.
Նա մեզ կարծեց Սերենոս,
Ու մենք ընկանք նետահար։

Այժմ այն շեն պարտեզի
Դուռը ոչ ոք չի բանա,
Ծաղկից էլ սար չենք դիպի՝
Ես վիրավոր, կույր է նա։

1913 թ. 4 մայիսի

87.

* * *

Ցավս ես քեզ մոտ չեմ երգել, չէ՞, չէ՞,
Ինձ գթալ պետք չէ,
Այդ ե՞ս անդանդաղ կարող եմ գթալ,
Լքվածին սիրտ տալ...

Տրտունջս երբեք չի հասնիլ քեզ, չէ՞,
Ինձ խղճալ պետք չէ,
Այդ ե՞ս ցնորված, խղճալուն սովոր,
Զունիմ գութ անդորր...

Քեզնից ես ժպիտ չեմ մուրա, չէ՞, չէ՞,
Ինձ գիջել պետք չէ.
Իմ մոտից ոչ մի տնանկ ու աղքատ
Չի անցել վհատ։

Մնա ինձ համար որպես ջինջ երազ,
Որ չի մոռացվում.
Որպես մի անմյութ բաղձանքի աղբյուր—
Կյանքի գոհացում...

1914 թ. 9 հունիսի

88. ԼՈՒՍԱՑԻՐ

Մո՛ւթ է, մո՛ւթ է... ո՛չ արև կա,
Ո՛չ լուսին.
Սիրտս անզուսպ կարոտ կզգա
Ջինջ լույսի...

Ես դիշերի չեմ դիմանա,
Չեմ կարող՝

Ոչ որ ինձնից չի իմանա
խոսք կարող...

Հոգիս մաշվեց չասված խոսքի
Լծի տակ,
Ու ժանգոտվեց լարս ոսկի
Ու միակ...

Դե՛հ, լուսացիր... չեմ դիմանա,
Չեմ կարող
Քնա՞ծ են ողջ. չեն իմանա
Երգ կարող...

1915 թ. 19 հոկտեմբերի

89.

* * *

Դե՛հ, արի՛, գու արի և կարող,
Իմ անճար ու անծայր ցավի ճար.
Չէ՛, ես էլ քեզ ատել չեմ կարող,
Չեմ հյուսի քեզ ընդդեմ ոչինչ չար։

Սիրաս դեռ մի թիթեռ է ջահել,
Չքաղված ու դաղված մի կոկոն.
Միայն քեզ կուզեմ հեղ ես հայել.
Մինչ հանգի իմ կյանքի երեկոն։

Իսկ թե ի՞նչ բեռ է ինձ—ծանր լուծ,
Միշտ խոկալ ու տոկալ անմեկին.
Մաշվել շուտ իմ անհույս սիրելուց,
Ու չասել—սիրում եմ ես մեկին...

1916 թ. 11 մարտի

90. ԵՐԳ

Մենք այսպես կերթանք
Հառաջ ու հառաջ.
Կյանքը մեզ չէ թանկ,
Եվ խոսքն է մեռած,

Բարին՝ արնահար,
Շղթան՝ պինդ կռած,
Բախտը՝ պատահար...

Ինչ բայլ—նվաճո՞ւմ,
Որ դարկը հաղթական
Կորով է աճում՝
Կասկածներ չկան...
Կյանքը մեզ չէ թանկ,
Եվ խոսքն էլ մեռած.
Այդ մենք պիտ երթանք
Միշտ հառաջ-հառաջ...

1917 թ.

91. ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Թող օրհնվի պայքարն անհաշտ
Մաքերի.
Եվ չզիջող պահանջները
Ալեկոծ.
Ե՛վ տարաժամ հորձանքն անդուսպ
Կրքերի,
Կյանքն՝ անարժեք, ճիշն՝ հուսահատ,
Լացն ու կոծ.—
Երբ երկնում է՝ ցավն է լափում
Ամեն ինչ.
Երկունքի դեմ պենք մեկնելու
Զիք ոչինչ...
Ընկերացած ամբոխն ահա
Անելիյուղ
Ավերում է ապարանքներ,
Շեն ու դյուղ.
Հոր կերտածը որդին կանե
Հիմնատակ,
Եղբոր սրից եղբայրն է հեղ
Նահատակ։
Երբ երկնում է՝ պիտի ծնվի
Անարդելք.
Երկունքով միշտ լուծվում է պարզ

Ամեն ելք...
Հայրենիքներ ընկան, ելան
Եվ կընկնեն.
Աղգերն անփորձ նոր պատրանքներ
Կը գտնեն։
Եվ ոճրագործ հերոսների
Վաշտերով
Մահ կը շրջե դալարավարդ
Դաշտերով։
Երբ երկնում է՝ լինում է ցավ
Եվ արյուն.
Երկունքով է ծնվում կյանքին
Այդ, դարուն...
Ու երբ հանգչի մարդը հզոր,
Գերիմաստ,
Բաղձանքների թափը լինի
Վեհ, զգաստ՝
Ա՜հ, ապրելի դեթ մի վայրկյան,
Ակնթարթ,
Իրավունքիս սրբազան տեր,
Աղա՜տ մարդ՝
Երբ երկնում էր՝ ես խոստացա
Ողջակեզ,
Որ քե՛զ համար մնամ կայուն,
Սիրեմ քեզ...

1918 թ. 17 դեկտեմբերի

92. ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ

Ալ. Մյասնիկյանին

Մո՜ւթ էր, դաժան.
Ու ոճիրը թևատարած
Հսկում էր լուռ երկիրը հին,
Մաշված, հյուծված, արյունլվա...
Միայն չարն էր
Հասանելի,
Ըմբռնելի,
Շոշափելի։

Միայն չարն էր
Հարախառով ու հետամուտ
Մտքին, հոգուն,
Երազին մոտ,
Բաղձանքի հետ,
Ճամփուն ընկեր։
Մ՛իայն չա՜ը,
Որ մարդը կույր
Գ-երի մնա,
Մարդը հզոր՝
Թև շարժելու ձիրքն ուրանա,
Սողա, խայթեն իժի նման,
Սահման դնե իր երկրի մեջ,
Ոսկորի պես բախտ չբաժնե
Ծանոթներին,
Որ մթի մեջ
Կիրքն ու կրոնը,
Միշտ հնավանդ
Խաչն ու լուսին,
Սուտ մեկնումը հավատամքի
Շշմեցնեն միտքը պայծառ,
Որ կորցնե ուղիղ ուղին
Ատե, ատվի։

Ու եռում էր
Աշխատանքը սրբազնագույն,
Աշխատանքը՝ ձեռք մրոտող,
Սիրտը սրբող,
Միտքն ու ձեռքը՝
Հրաշք կերտում
Երկրի վրա,
Օվկիանի տակ.
Լեռների մոտ,
Բաց օդի մեջ...
Ու ծորում էր պաղ քրտինքը.
Կոր մեջքերից.
Տաք արյունը։
Արդյունքն աղի՝
Բյուր վանքերի,
Պալատների

Բարձր պատին,
Ուղիներում,
Կամուրջներին,
Մութ հանքերում...
Ով ջանք վատնում՝ զրկված էր միշտ.
Ով վայելում՝ իրավատեր,
Կուշտ, զոհ, ազահ...
Թե
Քայլ հառաջ՝
Ցից, կախաղան,
Գաղտնի պատիժ...
Թե
Սուրբ տենչանք՝
Բանտը մռայլ
Ու հալածանք...
Ով հանդգնեց տրտունջ ցանել
Հոգիներում,
Ով իր սրտից ջահ էր վառել,
Որ լույս լինի,
Տևնեն իրար՝
Տանջանքները չգրեցին,
Որ գիրք լիներ.
Շղթաները լեզու չառան,
Որ քարը լար...

Ահագանգն անցավ արագ
Ղողանջելով եղբայրության
Աղոթքը նոր։
Գեղեցիկս, դու ճշմարիտ.
Առաքինի, արդարադատ,
Նեղյալին տեր,
Լուսաճառանչ,
Դու լուսածին,
Մի՛շտ լուսավառ
Ու լուսեղեն՝
Գեղեցիկս,
Լո՛ւր ամենքին՝ հոգնել են շա՛տ.
Տո՛ւր, ամենքին՝ տվել են միշտ.
Գեղեցի՛կս, գեղեցի՛կս։

6—358

Որքան անմեղ մեղավորներ...
Մեղավորներ,
Մեղքը ծածկած
Ոսկու դեղով...
Որքան ձեռքեր
Արյունլվա՝
Լայնածավալ երկրին տեր...
Որքան ազատ
Ոճրագործներ,
Որ գրել էն օրենքները
Բազմավաստակ ու բազմազան
Ազգերի դեմ...
Արծաթասեր մարդարեներ,
Խաչափայտից մտրակ սրած.
Եվ այնպիսին,
Որ խլածը մինչ մահ բավ էր,
Բայց խլում էր մինչև այսօր...

Գեղեցիկս...
Գեղեցի՜կս,
Դարձյա՞լ դիշեր,
Որ լինի մութ,
Խավար դաժան...
Գեղեցի՜կս,
Նորի՞ց հուսալ
Ու համբերել.
Նորի՞ց, նորի՞ց.
Հետ դառնալ...
Երազե՜լ քեզ,
Սողալ մթում.
Որոնել քեզ,
Քեզնով ապրել,
Քե՜զ սպասել.
Սպասել քեզ,
Գեղեցի՜կս...

1919 թ. 19 փետրվարի

93. ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Նորից գարուն,
Կարմիր արև,
Թռչունի երգ,
Առվի խոխոջ...
Նորից հույսը մարդուն ընկեր
Ու պահապան։
Նորից երգը միշտ սրտահույզ
Ու խնդալից։
Նորից լուծը
Թեթև, անցավ
Թոթափելու մոտ ու խախուտ։
Մորմոքները մթնշաղի թևերի պես
Շուտ նոսրացող։
Կապանքները
Անցողական,
Ձրկանքների թիվը հաշված...
Որքան ծաղիկ
Պիտի բացվի...
Որքան ճաճանչ
Պիտի շոյն բաց դեմքերը...
Որքան ցնծերգ
Պիտ սլորտա կրծքերի տակ...
Որքան համբույր պիտի պոկվի
Շրթունքներից
Փորագրվի
Հուշերի մեջ...
Արևները սրտերի մեջ
Պիտի վառեն
Բախտի թագին,
Որ խնկարկվի կյանքն ու ապրում...
Գիշերների մթության մեջ
Պիտի երկնեն կոկոնները
Հազարերանգ,
Բողբոջները
Ցողով սնած.
Ծնվող խոտով
Պիտի լցվեն
Դաշտերն անծայր,

Թևավորող
Թռչուններով՝
Օդը հստակ
Ու բուրալի...
Որքան թիկունք
Պիտի ծռվի
Խոնավ հողին,
Կոշտ հանքերին,
Հնոցի դեմ,
Սալի առաջ,
Ծանրության տակ՝
Որ ապրելու իլե հնար...
Ժիր աղմուկը բահի, մուրճի
Եվ քլունգի,
Որքան քրտինք պիտի բամե
Ճակատներից
Արևակեզ,
Ու ողողե ողջ արդյունքը
Աշխատանքի...
Տրտում մտքերը գերել են ինձ,
Տխրած չէի ոչ մի զարնան։
Ու լալիս է
Անմխիթար
Սիրտս հիվանդ...
Որքան կսկիծ ծլեց ծաղկեց
Եվ ինձ համար...
Ու թույլ եմ ես.
Կընկնեմ խամրած՝
Երբ ծլում է խոտը, կանաչ,
Երբ ծաղկում են
Ծաղիկները հավարերանգ...

1920 թ. 3 ապրիլի

94. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ

Զեզ կը մնա
Կյա՛նքն էլ, բա՛խան էլ.
Աշխատանքի արդյունքն արդար
Ու հավասար...

Դուք կը դառնաք
Տերը երկրի,
Որ չլինեն իշխող ու ճորտ,
Կամ վաճառքը մարդավայել
Տենչանքների, մարմնի, խղճի,
Մտքի, խոսքի...

Թող ավերվի,
Քանդվի հինը գեհենական
Իր դավերով...
Սովը, քաղցը, ցավը, ցուրտը,
Ախտն ու մահը լափե մարդկանց
Բյուր շարքերից անբավ զոհեր...
Թող գալարվի
Հառաչանքը երկրի մեջ,
Սիրտ չմնա թող անկսկիծ...
Ատելության խարույկ վառվի
Հոգիներում։
Թշնամանան մարդիկ իրար,
Եվ ուրանան
Անմեռ սուտը կրոնների...
Թող հեծկլտան գիշերների
Մթության մեջ,
Ոչ մի ելքի հույս չշողա
Կարոտ սրտում...
Կորուստներից
Թող բթանան ու մոլորվեն
Տեղ չհասած
Նրա՞նք, նրա՞նք,
Որ դարերով ջանք են թափել
Խանդարել ձեզ,
Խլել ձեզնից,
Որ կույր, անզեն՝
Միշտ խեղճ մնաք.
Որ կույր, անզեն՝
Տրտունջ չհանեք,
Չցանկանաք լինել կուշտ, գոհ,
Մարդու նման...

Ձեզ կը մնա
Կյա՞նքն էլ, բա՞խտն էլ...
Դո՞ւք կնրատեցիք
Տաճարները գեղեցկության, վայելքների՝
Արհամարհած բիրտ ուժերը
Տարերային
Ու տեր դարձած հաղթ բնության։
Դո՞ւք ջնջեցիք սահմանները
Արգելքների,
Ու չմնաց ոչինչ հեռու,
Ոչինչ անհաս,
Ոչինչ անտես...
Որքան արագ,
Որքան ուժգին
Հնչեցրիք զողանջները ձեր շինարար
Աշխատանքի,
Վեհ աղոթքը մարմինների,
Որքան անդուլ
Ու անտրտունջ
Հոգնեցրիք մկաններդ մարերիդ հետ,
Այնքան անհայտ,
Արհամարհված
Մնաց կյանքում
Պահանջները ձեր միշտ արդար
Բողոքների...
Ձեզ կը մնա
Կյա՞նքն էլ, բա՞խտն էլ...
Ով աշխատեց՝
Նա պիտի ուտե.
Ով նվաճեց՝
Պիտ վայելե...
Այլ կերպ ապրել չեք կամենա
Ու չեք կարող...
Աշխատանքով դուք կխլեք
Կյա՞նքն էլ, բա՞խտն էլ՝
Հանուն սիրո՞,
Եղբայրությա՞ն,
Ազատությա՞ն...

1920 թ. 1 մայիսի

95. ԼՈՒՍԱՑԱՎ

Խեչոն խելոք
Ծառա էր լոկ.

Իր գենքն էր հին ցախավելը.
Ամո՞թ բան է ցախ ավելը։

Ամեն մարդ էլ,
Թեկուզ զարդով
Կամ անզարդ էլ

Դե՛հ, այս կյանքում իր գործն ունի,

Որ հաց ուտի՝
Անբան չհոտի...

Հա՛... մեր Խեչոն ժիր ու արի
Աշխատում էր օրը-տարի.
Զարթնում էր միշտ արևից շուտ,
Ու քուն մտնում լուսնից հետո.
Սակայն դարձյալ իր խոսքն էր սուտ,
Անունը՝ «խենթ, լակոտ ու տո՛...
Էշ գյուղացի, անբան, անկիրթ,

Ավարտ շուն...»։
Ու չէր հիշում,

Որ իր կերած փշրանքի հետ,
Որ իր թափած գուր ջանքի հետ
Ե՞րբ չէ դիպել վշակոթին
Ցախավելը կամ ցնիոտ թին...

Մի օր կանո՞ւխ... Տե՛ր, մեղա՛ քեզ,
Մնաց շշմած Խեչոն մեր հեղ։
Զայն էր տալիս աղան վերից.
— Խաչատուր ջան... ընկեր Խեչո,

Մի ջուր բեր ինձ...։—
Դեմքն էլ ճերմակ,
Թանի նման,
Խոսածներն էլ

Միաք շփոթող բանի նման...

— Վա՜յ, աղա ջան, էդ ի՞նչ էլավ,
Որ դու էդպես շուտ տեղիցդ ելար.
Թե երեկ շատ կերար փլավ...
Թե՞.....
— Ջուր տուր... եկան... կոմունիստներ...
Ես ո՞ւր փախչեմ,
Քանի՞ ոսկով
Ցավս ո՞ւմ պատմեմ
Երկու խոսքով,
Որ ես սովոր լողալուն,
Չեմ դիմանա դողալուն...
Խեղճն իսկույն
Գլխի ընկավ ու ծիծաղից թուլացավ.
Դե՛հ, քեզ մատաղ, գիշե՞ր է, ինչ.
Ի՞նչ դող,
Ի՞նչ փող,
Լուսացա՜վ...

1921 թ. 24 հունիսի

96.

* * *

Խաղաղությո՜ւն հյուղերիդ մութ
Ու գետնափոր .
Մկաններիդ՝ հանգիստ շառած.
Պարզ սրտերիդ,
Վայելքների<ն> միշտ անհաղորդ։

Խաղաղությո՜ւն երաշներիդ
Ցավով վիժված.
Բաղձանքներիդ միշտ անկատար
Ու շնչահեղձ,
Կսկիծներից սահմանն անցած։

Խաղաղությո՜ւն թալանների,
Ոճիրների
Երկրիդ չքնաղ, դեղատեսիլ.
Խաղաղությո՜ւն
Մեծիդ, փոքրիդ հավի՜տ, հավի՜տ...
1921 թ.

97.

* * *

Առավոտ էր, լուսացավ,
Մութը կորավ լույսի մեջ.
Իմ սրտով էլ լույս անցավ,
Անհետ կորավ՝ մութն էր մեծ...

1922 թ. 8 հունվարի

98. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Բաճկոնդ կապույտ,
Յուղոտ է՝ ի՞նչ փույթ.
Էլ լուծ չես կրի՝
Դու տերն ես երկրի...

Շինում ես, շտկում...
Քո աղնիվ մտքում,
Հոգսը նմանի
Տրտունջ չի հանի։

Հինն ես խարխլել,
Ոչինչ չես խլել.
Անհոգ թռչնի պես
Կուշտ օրդ է հանդես։

Դու հինն ես քանդել
Ու կապված անթել,
Հոգուս, սրտիս հետ՝
Կապրես, իմ աստիճ։

Ու արթուն մտքով
Ինձ էլ քո հետքով
Կանչում ես հառաջ,
Դատս ձեռքդ առած։

Բաճկոնդ կապույտ
Մրոտ է՝ ի՞նչ փույթ.
Ես լուծ չեմ կրի՝
Դու ես տերն երկրի...

1922 թ. 20 հունվարի

99. ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Նվեր Ալ. Ն. Մյասնիկյանին

Առանց ասածո,
Առանց ծեսի,
Եկեղեցու.
Բուրժուական այդ կրոնին,
Որ դարերով բնանավորին, վաստակյալին
Քարշ է տվել իր հետևից
Հանկարծահոս
Բարիքների խոստումներով՝
Հանդերձյալում,
Ու մթագնել միտքն անկարող
Իրավազուրկ տարրի միայն
Իր ննդահյուս
Հին-նոր ուխտով,—
Ստեղծեցինք առաջապելը ամբոխային,
Դիտակցորեն
Եվ իրական պարզությունով
Վեհ ու վսեմ
Տոնը կարմիր,
Տոնն անդորրի.
Հոգնողների բանակի մեջ,
Աշխատանքի սահմաններում՝
Խորտակելով մեզ բաժանող
Կրոնական
Եվ ազգային պատնեշները,
Օղակելով երկրագնդի
Բանվորության սրտերն արի,
Շահն ու պայքար...
Այսօր շոգի, դարի ուժը—էլեկտրիկ,
Մեքենաներ, բահ, մուրճ, քլունդ՝
Ատելությամբ
Մատնված են անշարժության.
Արդյունաբեր աշխատանքի
Որջերի մեջ՝ ֆաբրիկներում
Դեհենային ժխոր չկա՝
Լուռ է այսօր,
Տոն է այսօր,

Մեծ, քինառու, սասանական
Տոնը կարմիր,
Թափորը այն,
Որ ապրածը գալիք բախտին
Կցորդելով
Հարյուրավոր միլիոն բերան
Պիտ ցանկանա
Աշխարհակալ նվաճումը
Նմանների,
Հարյուրավոր միլիոն բառնցք
Պիտ սպառնա
Մա՛հ տերերին, մա՛հ բռնության,
Շահագործման
Ու իր նեցուկ կապիտալին։

Ահա արփին հուր է մաղում
Մեր վրեժի անմար բոցից,
Բռնությունը արթնացել է
Մեր մտքի պես.
Կարկաչահոս գետը, կասես,
Իր քաղցրալուր լողունգներով
Կուզե մրցել մեր ճառի հետ,
Իշխողների երկիրը նենգ
Իր դեմքը սև, ամոթապարտ
Քողարկել է կանաչներով,
Շուշանները գաշտի միջին
Զարդարել են
Մեր քրտինքի, թափած արյան
Կաթիլների շիրիմները
Հողի վրա,
Հովիկն անուշ խունկ է ծխում
Անհայտ ընկած
Ընկերների ոսկորներին...
Փողոցներում ալեծածան
Ծով է հուզվում, մարդկային ծով...
Փողփողում են
Դրոշները կարմիր, ալ-վառ.
Մրրկաշունչ
Երգերն այսօր

Նո՞ր շեշտ ունեն,
Որ նմանը դեռ չի լսել
Ժամանակը
Փոշեկալած իր ծալքերում...
Մրրկաշունչ
Երգերն այսօր
Նո՞ր թափ ունեն՝
Երկրագնդի դրկվածներին
Թևավորեց կարմիր Մոսկվան...

1922 թ. 24 ապրիլի

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

1. ԹԻԹԵՌՆ ՈՒ ԵԶԸ

Թիթեռն ու եզը պատահեցին իրար հանդում։

— Ի՜նչ անմիտ արարած ես,— ասաց արհամարհանքով եզը,— ոչ ուժ ունես, ոչ հաստ վիզ և ոչ էլ ամուր ոտքեր։

— Ծաղիկների սրտից փոշի ծծելու համար թեթև թևերն էլ բավական են, եզ եղբայր,— ասաց նախշուն թիթեռնիկը։

— Թո՜ւ,— զայրացած թրեց եզը,— հանդերի հյութոտ խոտը թողած փոշով է կերակրվում... Այ քեզ անպետք արարած. ուրեմն իզուր չէ, որ կյանքդ էլ անհանգիստ ու կարճ է տնօրինված...

1903 թ.

2. ՓՈՒՇՆ ՈՒ ՃԱՄՓՈՐԴԸ

Փուշը մտել էր ճամփորդի ոտքը. ո՜չ դուրս էր գալիս, ո՜չ էլ թողնում, որ մարդը անցավ դնար իր ճամփով։

— Անիծված փուշ,— ասաց ոտքը,— ավելի լավ չէ՞ր լինի տեղդ մնայիր ու ազատ ապրեիր հիմար մացառիդ վրա։

— Բայց չէ՞որ դու խանդարեցիր ինձ ազատ ապրելու։

— Ինչպե՞ս,— զարմացավ ոտքը։

— Շատ հասարակ կերպով։ Դու կոխեցիր ինձ, տրորեցիր. միևնույն չէ՞ ինձ համար այժմ ուր և ինչպես մեռնելը։

1903 թ.

3. ԳՈՐՏԸ

Խենեշ գորտը մի օր բարձրացավ ծառի վրա և ուզեց բարձրից նայել իր տաք ու անվրդով ճահճին, սակայն գլուխն սկսեց սաստիկ պըտույտ գալ և քիչ էր մնացել վայր ընկներ։

— Հա՜,— ասաց նա, անվնաս նստելով գետնի վրա,— հիմա ես հասկացա թե ինչու թռչունները այդպես ոգևորված երգում են նստելով ծառի ճյուղերին։ Հասկացա. բանից դուրս է գալիս, որ երբ նրանք բարձրից վայր են նայում, գլուխները պտույտ է գալիս, խելքները կորցնում են ու արբածի նման զոռ տալիս կոկորդներին, հասկացա,— ծիծաղեց գորտը և տլը՛փ ընկավ տաք ճահիճը։

1903 թ.

4. ՄԱՅՐԵՐԸ

Քոթոն իր աչքով տեսավ, թե ինչպես ծանոթներին բաժանեցին իր թխլիկ ձագուկները. ի՞նչ արած. մարդկանց օրենքն այդպես է և ամեն մի օրենք գրված է մարդու շահերը պաշտպանելու համար... Քոթոն տեսել է ամեն ինչ և սիրում է հիշել բոլոր կենդանի փաստերը։ Օրինակի համար, անցյալ ամառ ծախեցին հորթը՝ կովին թողնելով անմխիթար վիճակի մեջ։ Աշնանը ճտերը սրի քաշեցին ու կերան։ Խաչի տոնին չարաճճի ուլին գլխիվայր կախեցին վառած թոնրի մեջ ու ողջ տեղը ականջը թողին։ Ո՞ր մեկը հիշել։ Նույնիսկ գետի ձուկը չի ազատվում նրանց ձեռքից. սուր դանակով քերում են խեղճի ցոլուն փլերը, քոթոն աչքով է տեսել, փորի միջի եղածը կտավին են տալիս ու տապակում՝ մի այնպիսի դարշելի հոտ ձգելով տան մեջ, որ Քոթոյի ազիքները շարվում են կոկորդին։

Ի՞նչ կարող ես անել, աշխարհի տերը որ կա, մարդն է, պրծավ գնաց...

Շատ է մտածել Քոթոն, խելքին շատ զոռ տվել, նույնիսկ թաքուն հաշել, օգուտ չի եղել. ո՞ր մեկի վրա հաշել։

Այսպես մեկը մյուսից այլասնդակ արարքները շարվում էին Քոթոյի գլխում և նա սրտի դառը կսկիծով էր նայում իր կրծքի տակ կուչ եկած ու անուշ քնած բոթոթին. ի՞նչ է սպասում նրան կյանքում...

Մինչ շունը տարված էր իր ժառանգի ապագան գուշակելու հոգսով, ուրախ ու ազմկալի գրույցով տանից դուրս եկան տանտիկինն իր փոքրիկ, լավ կերակրած ու խնամած թոռը գրկին, հարսը և աղջիկները։ Աղայի այդ անդրանիկ թոռը Քոթոյի ձագերին շատ էր սիրում. դա մեծ նշանակություն ուներ խելոք շան աչքում և տեղն եկած դեպքում սիրում էր պարծենալ իր հարևան ցեղակիցների մոտ։

— Բերեք քոթիկին, բերեք, թոռս խաղա,— ասաց բախտավոր տատը, նստելով շվաքում դրած հնամաշ բազմոցի վրա։ Աղջիկներից ամենափոքրը իսկույն վազեց դեպի Քոթոյի բունը և նրա ցասկոտ հայացքից ազատված մի պահ կանգ առավ։

— Մայրիկ, քոթիկը քնած է։

— Արթնացրո՛ւ, արթնացրո՛ւ,— ծաղրեցին միամիտ աղջկան բոլորը միաձայն։

Քոթոն ինչ-որ մոմռաց քթի տակ և պատրաստ էր մի անհեռատես, հանդուգն քայլի, երբ խոհանոցի լուսամուտից դուրս նետվող տաք ոսկորները գայթակղեցին նրան, և նա իր սխալը հասկացավ միայն այն ժամանակ, երբ իր ձագն արդեն բազմոցի վրա էր։

Փոքրիկ աղան ու շունը խաղում էին այնպես սիրով, կասես հարազատներ լինեին։

Ես դրա դեմ ոչինչ չունեմ,— մտածեց հանդստացած շունը և ոսկորները բնի մի անկյունում հավաքելուց հետո նորից հեռու և երջանիկ ժպիտով սկսեց հետևել իր միակ զավակի խաղերին։

Փոքրիկ քոթոթը ուրախությունից ինքն իրեն կորցրեց ու առաջին թաթերը դնելով մանկան կրծքին, համարձակ լիզեց նրա դունչը։ Մանուկը վախից ճչաց, մեծերը սաստիկ վրդովվեցին և մի քանի քնքույշ ձեռքեր արագորեն ցույց տվին քոթոթին իր սխալի մեծությունը...

Քոթոն հեռվից դիտում էր կատարվածը ու կսկծից շվարած չէր իմանում ինչ դիրք բռնել, որ հետևանքը կորստաբեր չլինի իր վերջին զավակի համար...

— Ծեծի՛ր, ծեծի՛ր, զավակս, անպիտանին,— ասաց հարսը որբելով ու համբուրելով որդու դունչը,— մի լավ ծեծիր, այ այսպես, այսպես։

Մանկիկը ծիծաղելով հետևում էր մոր օրինակին ու թաթիկներով ու տոպիկներով հարվածում շանը։ Մոլորված քոթոթը լիզում էր իրեն հարվածող բռունցքները, կամ անվարժ կերպով բողոքում։ Ընդհանուր ծիծաղից ու իրարանցումից ջահել հարսն այնպես ոգևորվեց, որ բռնելով քոթոթի ականջից՝ վեր բարձրացրեց և շուռ տալով օդի մեջ՝ նետեց բնի մոտ... Ամենքն էլ մնացին զոհ։

Քոթոն լիզում էր, փաղաքշում իր ծեծված ձագին և արտասուքը կուլ տալով մտածում, թե որքան տարբեր են լինում մայրերը կյանքում։

1903 թ.

5. ՎԱՐԴԵՆԻՆ ՈՒ ՊԱՐՏԻԶՊԱՆԸ

Մի քնքույշ ծիլ էր տնկել պարտիզպանը. ամբողջ ձմեռը պահել էր նրան հատակ ձյան տակ, հետո դուրս բերել, փաթաթել, որ չմրսի, իսկ այժմ, գարնանամուտին ամեն օր շոքում էր առաջը, ուղղում ոտքերի տակի հողը, թումբը, խնամում հա խնամում։ Ծառ ու ծաղիկ նայում էին նրա վրա ու ծիծաղում.— խենթացել է ծերունին։

— Պապ, այ պապ, ո՞վ է այդ ծիլը,— մի օր անհամբեր հարցրեց վարդենին։

— Վարդենի է, աղջիկս,— պատասխանեց ծերուկը,— հեռու տեղի, տաք երկրի վարդենի...

— Մի՞թե... Է՜հ, պապիկ, կեղծավորի մեկն ես եղել դու. հեռու տեղից եկածի համար որ խելքդ կորցնես, վայ կգա քո պարտեզի գլխին։

— Մի մեղանչիր, վարդենիս, եթե նրան ես հոգ չտանեմ, կթառամի, քեզ ի՞նչ շահ, թող ծլի, ծաղկի, ապրի,— ասաց պարտիզպանը։

— Կթառամի. հա՜, հա՜, հա՜. ինչո՞ւ ես չթառամեցի։

— Դու քո հայրենի հողումն ես, կարոտը չի մաշում քեզ, կարոտը չի կրծում սիրտդ,— ասաց պարտիզպանն ու հեռացավ։

— Կարոտը...,— զարմացավ վարդենին ու բերանը բաց մնաց։

— Ո՞ւր ես նայում զարմացած,— շշնջաց խանդոտ սոխակը և սկսեց շուրջը դիտել։

— Այ այն փոքրիկ ծիլին, որ չթոշնի կարոտից,— ծիծաղեց վարդենին,— դու կյանքումդ լսե՞լ էիր մի այսպիսի դատարկ բան։

— Ես լսած չեմ, զգացել եմ, սիրելիս,— դայլայլեց սիրահար թռչունը և կուրծքը դեմ տվեց վարդենու սուր և անսիրտ փշերին։

1903 թ.

6. ԾՆԾՂՈՒԿԸ

Սիրուն հարսը հաց էր փռում մաքուր բակում փռած փսիաթների ու տնագործ ջեջիմների վրա։

— Երթանք, կտցենք,— ասաց մի ճնճղուկ իր բարեկամներին, որոնք թառած բարդու ճյուղերին նայում էին «թաժա» հացերին ու թքերը կուլ տալիս։

— Ես շատ եմ սիրում վարդագույն բշտիկները կտցել,— ասաց մի ջահել ճնճղուկ,— այնքան բարակ են լինում այդ բշտիկները, որ իսկույն հալչում են բերանումդ։

— Իսկ ես հաստլիկ եղնիրն եմ սիրում,— պատասխանեց մյուսը։

— Դե՜հ, լավ, լավ,— սաստեց ամենահասակավորը. դատարկ խոսքերի ժամանակ չէ, հարձակվենք խմբով, առանց վայրկյան կորցնելու և մի լավ կշտանանք, ամեն օր «գետը դերան չի բերի»։ Եթե հարսը մեզանից մեկն ու մեկին հալածե, մյուսներդ օգտվեցեք հանգամանքից կըշտանալու. իրար մոտ կանգնեցեք ու խելքներդ գլուխներդ պահեցեք։

— Հե՜լ, հե՜լ, հե՜լ,— ճոճվում էր օդում սիրուն հարսի ճերմակ ձեռքը։

— Մի տեսեք անպիտանին, կարծես մեր լեզուն հասկանում է,— զայրացավ մի ճնճղուկ։

— Ինչ սիրունն է. մի դրա վզի մարգարիտներին նայեցեք,— զարմացավ մի պատանի։

— Ձա՛յնդ. բաց բերան,— սաստեց ամենամեծը,— կշտանալ է հարկավոր. «սիրուն երեսին փլավ չեն ուտի»։ Դե՛հ շարվեցեք կարգին և նըշան տալու պես հարձակվեցեք։

Ճնճղուկները սրտատրոփ սպասում էին իրենց մեծի հրամանին, երբ կամաց բացվեց պարտեզի դուռը. ու մի երիտասարդ թաք կացավ ծառերի ու թփերի կանաչ պատնեշի հետևը.

— Հե՛լ, հե՛լ, հե՛լ,— գոռաց Հարսի ձայնը և նա մոռանալով իր փռած հացերը. հուշիկ քայլերն ուղղեց դեպի ծառերն ու թփերը։ Մեր ճնճղուկը վիզը երկարացրած նայում էր սիրուն Հարսի հետևից ու ժըպտում ինքնագոհ։

— Դեհ, թռե՛ք, աղջիկներ,— գոռաց նա,— մի լավ կշտացեք։

— Իսկ եթե Հարսը քար քաշե,— մորմոքաց մի անհար ճնճղուկ։

— Հարսը կուշանա,— ծիծաղեց ծերունին,— դե՛հ, ձեզ տեսնեմ, չվախենաք։

Երբ Հարսը երևաց, բշտած հացերից մի մի ցանց էր մնացել։

— Հե՛լ, հե՛լ, հե՛լ,— կանչեց նա և իրը ուզում էր քար քաշել անհերես ճնճղուկների վրա, նրան մոտեցավ ծեր ճնճղուկն ու ծլվլաց կամացուկ.

— Մի բարկանար, սիրուն Հարս, արգելված պտուղը համով է լինում...

1903 թ.

7. ԾԱՌՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Ծառը լալիս էր ու անիծում սանձարձակ քամուն։

— Ոտքդ կոտրեր, տեղ չհասնեիր, անտակ քամի, ինչպես որ դու իմ կանաչ ճյուղը կոտրեցիր, այնպես էլ սատված սիրուդ կոտրե...

Քամին ձայն չհանեց, գրկեց ծառը, համբուրեց բոլոր ճյուղերն ու տերևները և թռավ գնաց։

Այնուհետև թռչունները կախվեցին երկնքից, արևը մնաց սարերի հետևը, և սկսեց մաղել պաղ ու ձանձրալի անձրևը։

Ծառերը խշխշում էին ցրտահար. ջերմի ու լույսի կարոտ, երազում պայծառ օրերի երգն ու մեղեդին։

— Աղջի՛,— ձայնեց դարավոր կաղնին իր մոտի ծառին,— ձայն տուր ամենքին, թող չոքեն աղոթք անեն, որ քամին գա, ցրև ամպերը, արևի երես տեսնենք։

Ա՜խ,— հառաչեց ճղակոտոր ծառը,— ես անիծել եմ քամուն, որ ոտքը կոտրի, տեղ չհասնի... Նա իմ կանաչ ճյուղն էր կոտրել...

— Որ այդպես է, ընկիր ճամփես, գնա, չոքիր քամու առաջ. ներողություն խնդրիր, ասա թող գա, պող անձրևը մեզ մաշեց,— հրամայեց կաղնին։

Ճղակոտոր ծառն ընկավ ճամփա, գնաց, գնաց, մի ընդարձակ դաշտ դուրս եկավ։ Նա մոլորվեց. չգիտեր աջ գնա, թե ձախ. ուստի չոքեց մեծ ճամփու վրա, աղաչեց քամուն ներել իր սխալը, դուրս գալ, ցրել մռայլ թուխպերն ու դուրս բերել արևին սարերի հետևից...

Քամին իրեն սպասել չտվեց. արևը դուրս լողաց իր թաքստոցից, թուխպերը կորան-կորսվեցին ու խնդության երգ հյուսեց սաղարթախիտ անտառը։

Միայն թե ծառը մնաց մեծ ճամփու վրա, չոքած, գծուծ, խեղճ ու մոլոր։

Այս բանն ինձ պատմում են մենակ բազկատարած ծառերը մեծ ճամփու վրա չոքած։

1903 թ.

8. ՄԱՀԻՆ

Երբ աշխարհը կերտվեց՝ դու ոչինչ էիր։ Եվ որովհետև դու ոչ մի կերտվածքի նյութ չես ունեցել տալու, աստղերին՝ փայլ, ծաղիկներին՝ բույր, քամուն՝ ուժ, մնացիր ոչինչ, անելություն, անբովանդակ։

Տիեզերքում ամեն ինչ, ամեն շնչավոր թե անշունչ իր տեղը, իր կյանքը, ամբողջությունն ունի. իսկ դու ոչինչ չունես։ Ուզում ես, որ խլես տանես, լինես ոչինչ և մնաս ոչինչ...

Եվ խեղճ ու գետնաքարշ շրջում ես ինձ հետ. սպասում ընկնելուս, որ երկես տանես... Երբ հանդիպենք անկարող կլինեմ կռվելու քեզ հետ և հենց իմ այդ անկարողության մեջ է քո ոչնչության մեծ գաղտնիքը...

Դու եկար, երբ ես ծնվեցի. կգաս և մեռնելիս։ Ես ապրելով եմ հերքել ոչնչությանդ գոյությունը...

Սակայն դու ինձ կտանես լոկ այն ժամանակ, երբ ես ցանկանամ։

Երբ ցանկանամ ժայռի գագաթից խորխորատը թռչելու ակնթարթը վայելել։

Երբ ցանկանամ ընկնել ալիքների գիրկը, ծածկվել հորձանքների մեջ։

Երբ ցանկանամ կտրել կյանքիս թելը ոսկե։

Երբ անցած ճամփիս փոշին իջնի մազերիս վրա։

Երբ կորցնեմ օրերիս հաշիվը, հոգուս թևերը, աչքերիս աստղերը։

Երբ չմնա ինձ համար էլ ոչ մի երդ աշխարհի հետ սիրտս պսակող։
Երբ էլ չցանկամ ապրելու համար ապրել՝ հասիր։
Երբ երկնչեմ տառապանքի մրրիկներից՝ հասիր։
Երբ փախչեմ կյանքի ահագանգից՝ հասիր։
Երբ տաեմ նմանիս՝ վազիր։
Իսկ մինչ այդ սոդա ոտքերիս տակ, գալարվիր, սպասիր, ո՞վ դու մահ, իմ պաղ ոսկորների բեռնակիր...
1904 թ.

9. ԱՆՀԱՋՈՂ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տանից դուրս գալով՝ մենք վճռեցինք մի լուսավոր, լավ կահավորված սենյակ վարձել քաղաքի կենտրոնում, տրամվայի գծի մոտ։

Ուրախ տրամադրություն տակ անկապ, անհյուծ գրույցներով մենք շտապ տներ նեցս ու դուրս արինք, շատերից լսեցինք, որ իրենք լավ մարդիկ են, շատերին էլ մենք հայտնեցինք նույնը մեր մասին և մեր ծրագրած սենյակի վարձի սղությունից հալածված՝ ընկանք քաղաքի ծայրը։

— Քաղաքի ծայրում օդն ավելի մաքուր է լինում,— մխիթարվեց բարեկամուհիս։

— Քաղաքի ծայրերն անաղմուկ են լինում. ահա քեզ հանգիստ պարապելու անհրաժեշտ հարմարություն,— տրամաբանորեն ավելացրի ես՝ քաջ ծանոթ լինելով նրա քմահաճ ու պահանջկոտ բնավորությանը, որ միշտ թյուրիմացորեն թշնամի էր նրա շափավոր միջոցներին։

— Երևի այստեղ սենյակներ են տալիս արհնստավոր, բանվոր մարդիկ,— մտածկոտ նկատեց իմ բարեկամուհին, որ կյանքում ցանկանում էր ճանաչել միայն մի դասակարգ, որն ամեն ինչ ունի և կարող է ունենալ։

— Ոչինչ, այժմ էլ նրանց ճանաչիր, որ հարստանա միակողմանի պաշարդ։

— Ես գիտեմ նրանց,— ժպտած նա,— նրանք տգետ են ու բարի, գիտեն ծառայել մեզ ու հարգում են բնազդաբար դասակարգային տարբերությունը մեր մեջ։

Ես պատրաստվեցի տարակելու, բայց իսկույն զսպեցի ինձ, հարմար համարելով լռելը. շատ էինք թափառել. հոգնած էի սաստիկ և փողոցներում մեր խմած կվասներից փրփրել էր բերանս, որ զզվելի էր իր թոդած քաղցրությունով։

— Թատրոնից վերադառնալիս այստեղ չե՞ն թալանում։

— Չգիտեմ...

— Գործարանների սուլոց<ներ>ն էլ լույսը բացվելուն պես պիտի զարթնեցնե՞ն ինձ։

Ես չեմ պատասխանում, որ կռիվ չսկսվի։

Մտնում ենք մի նոր կառուցած ու ներկած սիրուն տան. նման տներ, հասարակ ու հաճելի, շինում են միայն Ուկրաինայում. գեղարվեստի մասին խոսք չի կարող լինել, սակայն այնքա՞ն ցանկալի է թվում մեծ, քարե տոպրակի նմանվող բնակարաններում ապրողին, ապրել մի այդպիսի լույս, կանաչների մեջ խրված, ինչպես ասում են ռուսները, «խատայի» մեջ։

Մենք կարդում ենք նախշուն զարպասին կպցրած թուղթը և քաշում պրիմիտիվ կերպով շինած զանգակի թելը։ Դուռը բաց է անում մի կապուտաչյա, ոսկեհեր աղջիկ, գրկին մի առողջ բկուն երեխա։ Ներս ենք մտնում. օրինակելի մաքրություն և արևի հոտն ամեն տեղ։ Խիստ հասարակ կահավորված սենյակի գլխավոր անկյունում ըստ պատշաճի կախված է սրբի պատկերը՝ ոսկեզօծ շրջանակի մեջ, կանթեղն առաջին և զարդարված արհեստական վարդերով։ Մի պատի տակ հասարակ սեղան, գրքեր, Շևչենկոյի, Տոլստոյի և Գորկու նկարները պատի վրա։ Անցնում ենք մյուս սենյակը. առաջինից փոքր է և մի լայն լուսամուտով նայում է փողոց։ Դրած է մի հասարակ մահճակալ, կոմոդ, թիթեղյա լվացարան, սեղան և աթոռներ։ Ես հավանում եմ սենյակն ու հայտնում կարծիքս։

Գալիս է ջահել տանտիրուհին, բարևում և շփոթվելով հարցնում.

— Դուք հրեուհիներ՞ եք։

Ինչ, սենյակ չե՞ք տալիս հրեուհիներին,— տաքանում է բարեկամուհիս. ես հանգստացնում եմ երկուսին էլ։

— Ամուսնուս համար միևնույն է,— միամտորեն պարզում է տանտիրուհին։

Չարը խափանելու համար քայլերով չափում եմ սենյակի լայնությունն ու երկարությունը։

— Երեխաներ շա՞տ ունեք,— հարց է տալիս բարեկամուհիս։

— Միայն մի փոքրիկ,— մայրական հպարտությամբ հայտնում է կինը։

— Իսկ մեզ դուռը բացող աղջի՞կը։

— Նա քույրս է, նա կհավաքի ձեր սենյակը, ձեզ համար խանութ կգնա։

Հարցնում ենք գնի մասին։ Տանտիրուհին գնում է առաջին սենյակը և կանչում.

— Միշինկա, է՛կ, խոսիր գնի մասին։

Մենք ևս գալիս ենք մեծ սենյակը։ Հարևան սենյակից լսվում է թղթի

խշխշոց։ Երևի Միշինկան թերթ էր կարդում, անցնում է իմ մտքով և չգիտեմ ինչու բավարար տպավորություն թողնում ինձ վրա։

Ծանր քայլերով ներս է մտնում իսկապես որ մի «միշինկա»՝ տանտերը, բարձրահասակ, թիկնեղ, խոշոր և պայծառ աչքերով. մեզ նկատելով՝ կոճկում է շապկի կոճակները, մատներով հարթում մազերը ու մտերմաբար ժպտալով ողջունում է մեզ որպես հին ու վաղուց չտեսած ծանոթների։

Պատշաճ պայմանները թվելուց հետո սենյակը վարձվեց։ Նկատելի է մի փոխադարձ համակրանք, որ համակեց արտաքինով հաճելի իմ բարեկամուհուն և երիտասարդ տանտիրոջը։ Մեր պաշտոնական խոսակցությունն իսկույն բարեկամական զրույցի փոխվեց, իսկ բարեկամուհուս ուրախ քրքիջը աղմկեց մինչև այդ խաղաղ սենյակը և քանդեց երիտասարդի անվստահության բոլոր կապերը։

— Այս տունն անհրաժեշտ նվիրն է, այս ամառ կարգի է բերվել վերջնականորեն, և ես շատ ուրախ եմ, որ իմ սենյակը վարձում է մի ինտելիգենտ օրիորդ,— հաճոյախոսեց նա, ատամի կարմրից և դրկելով շեմրից շորեքթաց ներս սողացող իր մանկիկին՝ համբույրներով ծածկեց նրա դեմքը և լայն ափի վրա բարձրացնելով մինչև առաստաղ, սկսեց շրջել սենյակում։

Ինձ թվաց, թե նա իր կյանքում առաջին անգամ էր, որ խոսեց մի օրիորդի հետ այդ լեզվով, դուցե կարդացածի տպավորության տակ կամ լավ տպավորություն թողնելու միտումով, չգիտեմ, սակայն նկատելի էր, որ նա ղջաց իսկույն, մոտեցավ մինչև այդ լուռ կանգնած կնոջը, նրա տեղերից աթոռին և երեխան դրված ինքն էլ նստեց նրա մոտ։

Ուրեմն ձեր բույրը կմարի սենյակը,— դիմեց բարեկամուհիս տանտիրուհուն։

— Քո՞ւյրը, երբեք, նա դեռ երեխա է, ինչպե՞ս կարելի է...

— Միշենկա՛, ես ասացի որ...

— Սպասիր,—բաժանվեց տան տերը ու դարձավ մեզ։—Ձեր սենյակի վերաբերյալ բոլոր աշխատանքը կկատարի իմ բակում ապրող մի խեղճ կին, վարձատրել նրան որևէ կերպով ձեր ազատ կամքն է։ Իմ ընտանիքի անդամներից որևէ պարտականություն պահանջելը միանգամայն դուրս է իմ ցանկությունից։ Մենք թեև չունևոր մարդիկ ենք, բայց մինչև օրս ծառայած չենք մեկին,— հայտնեց տան տերը և երեխան կնոջը հանձնելով, ազատ թափահարեց երկար մազերը ու սկսեց շրջել սենյակում, նորից մեծ հաճույք պատճառելով ինձ։

Մենք հրաժեշտ տվինք ու դուրս եկանք։

Մեծ եղավ մեր ուրախությունը, երբ նկատեցինք այնքան մոտ կանգնած տրամվայը։

— Ուրեմն շարշարանքներս պսակվեցին հաջողությամբ, տրամվայն էլ մոտ է,— ուրախ ասացի ես ներս մտնելով վագոն։

— Կարո՞ղ ես ասել ում նման է իմ տանտերը,— հարցրեց բարեկամուհիս՝ վիճելով կոնդուկտորի հետ նրա սխալ տված մանր փողի առթիվ։

— Սովորական մալոռուսի։

— Ո՛չ, կաթոլիկների Հիսուսին, միայն թե պետք է բավականին նիհարացնել ու ավելի երկարացնել մորուքը։

— Ու քերել ձեռքի կոշտերը և մուրճի տեղ խաչ տալ ձեռքը։

Ես հորանջեցի։

Մի շաբաթից հետո բարեկամուհիս ինձ այցի եկավ։

— Երևակայիր, հասարակ բանվոր է, իսկ խոսքը հետը՝ ինտելիգենտ մարդու տպավորություն է թողնում։

— Ո՞վ։

— Իմ տանտերը։

— Հա՞... իսկ դո՞ւ. նա հայտնած չի՞ իր կարծիքը քո մասին։

— Դեռ ոչ. երեկ մի քիչ նեղացավ, հետո հաշտվեցինք։

— Պատճա՞ռը։

— Կիրակի օրը նա ինձ «Բանվորական տան» ներկայացման տոմսակ առաջարկեց, իսկ երբ ես հարցրի, թե բրտինքի հոտ չի՞ լինի այնտեղ, նա սաստիկ դայրացավ ու ինձ գիտե՞ս ինչ անվանեց։

— Չգիտեմ։

— Բուրժուական մեղկ մթնոլորտից... և ուրիշ շատ կոմպլիմենտներ, ուրա՞խ ես։

— Սաստիկ, տեղն է քեզ։

— Իսկ ես ենթադրում էի, թե դեռ չեն վերացել նահապետական պարզությունները հասարակ ժողովրդի միջից։ Մեծ քաղաքում ավելի զգալի է, թե ինչպես աշխատավորը շեղվում է իր ճամփից և իր ձեռքն ընկած պատահած գրքի ընթերցումից կորցնում գլուխը։

— Ասա, խնդրեմ, ո՞ր ճամփից։

— Խոհեմության։

— Միա՞ն, իսկ քիչ առաջ ասացիր, որ նա թողնում է ինտելիգենտ մարդու տպավորություն։

— Աչքի առաջ ունենալով, որ նա սոսկ մի բանվոր գարբին է։

Դարձյալ վեճի բռնվեցինք և հոգնած անցանք հերթական նորությունների։

Բավական երկար ժամանակ ես լուր չունեի իմ բարեկամուհուց, չէր երևում։ Ինչ էլ որ լիներ, պարտադիր էր գնալ տեսնել։

Մի հարմար տոն օր ճամփա ընկա։

Դուռը բացեց կապուտաչյա աղջիկն ու ինձ տեսնելով իսկույն ներս վազեց։

Անցել էի առաջի սենյակիս, երբ ներս մտավ տանտերը։

— Ձեր ընկերուհին այլևս մեզ մոտ չի,— ասաց նա բարևելով և հրավիրելով ինձ թեյի։

— Ի՞նչ եք ասում,— զարմացա ես։

— Մեզ համար միս ու արյուն դարձած ճշմարտություններն,— ասաց նա,— անհասկանալի էին օրիորդի համար, իսկ նրանք՝ մեզ։ Ես առաջարկեցի նրան. ինչո՞ւ նեղվել ու վիճել անենյութ ամեն օր։ Նա սենյակ գտավ և ահա երեք օր է տեղափոխվել է։ Իսկ ես այլևս սենյակս վարձու տալ չեմ, ուզում եմ ազատ ապրել իմ տան մեջ։

— Իսկ իմ բարեկամուհին ենթադրում էր գտնել նահապետական պարզությունը ձեր հարկի տակ,— չկարողացա չասել ես։

— Անհաջող ենթադրություն. նահապետների դարն անցել է, այժմ հարգվելու են նոր մարդու նոր իրավունքները...

Մենք բաժանվեցինք, ու մինչև օրս պատահելիս զրույցում ենք հին բարեկամների պես, ու նա չի մոռանում բաժանվելիս հարցնելու իմ բարեկամուհու մասին։

1904 թ.

10. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ես զուրս եկա տանից և քաղաքի անծանոթ փողոցները թափառելով, մոլորվեցի, ուղին կորցրի և զուրս եկա մի բարձրավանդակի վրա, որից սկսվում է քաղաքի ազրը հյուրընկալող ձորակը, քիչ հեռուն մի քանի ավեր շենքեր, մի գործարան և գետը...

Մեկնող գնացքի նման ինձ վրա ազդեց և գնացող շոգենավը. ախրեցի ու մի անբուժ ցավ զալարվեց կրծքիս տակ... Ինչո՞ւ գետը չի զոչում, գոչզոչում. հորիզոնը չի խրվել լեռների գագաթին, քարափներն ու ժայռերը զուրս եկել երկրի երեսը...

Կարոտը ճնշեց ինձ, և ես նստեցի գետնին ու մոքերիս կնիքը տվի ջրի հոսանքին...

Իսկ ձորակում, ազրի, կեղտի ու փոշու մեջ կյանքն էր եռում. այստեղ էին իրենց տերերին հավատարիմ ծառայած և բուրդը տված ծեր շներ, անտուն անտեր կատուներ, իրենց հոգսը քաշող խոզեր և այլ մանր մունր արարածներ, որոնց գոյությունը միայն իրենք պիտի զիտենան, մի կորած պատավ իր թոռնիկներով։

Ամենքն էլ ուշադիր, ամենքն էլ եռանդով որոնում էին իրենց ուզածը. ոչ ոք մեկին չէր խանգարում, ոչ ոք մեկի բաժինը չէր խլում։ Երևվում էր, որ ձորակը վաղուց էր համայնացրած այդ այլացեղ հաճախորդների մեջ. տականքը, մնացորդը, ազրն ու հինը խառնված էին

իրար ու դուրս թափված շեն քաղաքից։ Սպառողներն էլ նույնպես։ Սակայն պառավի բռնած դիրքը ավելի նախանձելի էր երևում. այս ու այն կողմ դրած տոպրակների մեջ նա թոռների հետ բարածուխի մանրուք էր հավաքում, փայտի կտորներ և ծվեններ։

— Տա՛տ, այ տա՛տ, մի տես թե ինչ եմ գտել,— վազում էր սրատրոփ ոսկեհեր մանուկը։ Բոլորը հավաքվեցին տատի շուրջը և զարմացած դիտում էին գյուտը։

— Տատիկ, ի՞նչ ման է, մեջը ի՞նչ է եղել։

Պառավը նայեց փոշոտ գետնին, շոր մատներով ոլորեց իր «շան տոտիկը» և սիրով ծխելով դիտեց ամանն ու սկսեց։

— Սա թիթեղյա ման է, հեռու աշխարհից փոքրիկ ձկներ են ստանում այս ամաններում յուղի մեջ կարգին շարված։

— Ինչպիսի՞ ձկներ, տատ...

— Փոքրիկ ձկներ, զավակս։

— Տատ, համո՞վ են այդ ձկները։

— Օ՜, շատ համով. յուղն էլ հատուկ։

— Դու կերե՞լ ես, տատ։

— Ես... ճիշտն ասած կերել եմ...

— Պատմի՛ր, պատմի՛ր։

— Երբ ես աղախին էի, տերերս հաճախ ուտում էին այս ձկներից և ամանները խոհանոց տանելիս ես մնացածը ուտում էի, իսկ ամանները մաքրում ու պահում ինձ համար։

Ման գտնող երեխան տրտմեց, իսկ ամենափոքրիկը ձայնեց դժգոհ.

— Իսկ ես քաղցած եմ, ուտել եմ ուզում։

— Մի քիչ էլ որոնենք, տուն կգնանք. ճանապարհին անպատճառ հաց կգտնեմ,— համոզեց պառավը։ Երեխաները դժկամ ցրվեցին՝ ամենն իր մտքում պատկերացնելով փոքրիկ համեղ ձկները հատուկ յուղի մեջ, թիթեղյա ամանում։

— Տա՛տ, այ տա՛տ, մի նայի՛ր, կոշիկ գտա,— ձայնեց մի փոքրիկ, և բոլորն էլ դարձյալ հավաքվեցին պառավի գլխին։

— Տա՛տ, կրունկին նայիր, բարձր. ա՜խ, խորամանկներ, որպեսզի շուտ չմաշվի։

— Չէ, հոգիս, տերերը չեն մաշում։

— Ինչպե՞ս։ Պատմի՛ր, տատ։

— Ճիշտ եմ ասում. նրանք շարունակ հագուստներ, կոշիկներ գնում են, մի քանի անգամ հագնում և դեն շպրտում։

— Դու ի՞նչ գիտես, տա՛տ։

— Երբ ես աղախին էի տերերի մոտ՝ տեսա. վեր են կենում առա-

վոտյան մի տեսակ են հագնվում, դուրս են գնում՝ մի ուրիշ տեսակ. երեկոյան ավելի շքեղ. և այսպես միշտ, ամեն օր...

— Տա՛ս, տուն գնանք,— ասաց փոքրիկ, վտիտ աղջիկը, քորելով կուրծքն ու փորը։

Ես վեր կացա ու խառնվեցի այդ փոքրիկ խմբին։ Ամենքն էլ մաշված էին հոգով, մարմնով, հագուստով, ամենքին էլ աղտն էր կրծել և հացի ահն ընկճել։

— Տա՛ս,— ասացի,— ձորակն ապականված է ու նեխված, կթառամեն քնքույշ երեխաները, ինչպես ծաղիկները խորշակից... պարապիր մի այլ գործով։ Ամռան տոթին դժվար է թափառել աղբանոցում...

— Անհոգ կաց,— պատասխանեց պառավը,— ողջը մեկ է ու ամեն տեղ էլ աղբանոց. ի՞նչ կարող եմ անել ես։ Կուշտ օրվա կարոտը կտրտում է սիրտս։ Նայեցեք, որբեր են. մայրը մեռավ, հայրերն անհայտ են։ Թաղում ծաղրն է նեղում նրանց, իսկ այստեղ մենք աղատ ենք...

Երբ մտանք նրանց փողոցը, երեխաները բռնեցին պառավի փեշից, իսկ փողոցի տղաները շրջապատեցին նրանց և բարձր ձայնով սկսեցին երգել մի անկապ երգ, ուր հիշվում էր խեղճ որբերի անունն ու ծագումը և մոր մեղքերի շարանը։

— Տեսնո՞ւմ ես, աղբանոցի խողերն ու շները մարդու համար այդպիսի երգ չեն հորինել երբեք...

1904 թ. Ռոստով–Դոն

11. ՓՈՂՈՑՈՒՄ

Ես նայում էի փողոց, իսկ ձյունը գալիս էր փաթիլ-փաթիլ...

Ձյան փաթիլները մի անուշ թախիծ են նետում ինձ ու ես անտրտունջ սկսում եմ խղճալ, ափսոսալ ինձ։ Ես էլ փաթիլ էի, հստակ, կայտառ։ Ինչո՞ւ ընկա վայր, գետնի վրա, ուր կանաչի ու ծաղկի հետ փոշի ու ցեխ էլ է լինում...

Ձյան փաթիլները ճնշում են ինձ ու մարում հույսերիս բոլոր կերոնները։ Երբ ձյուն է գալիս, ինձ թվում է, թե էլ ոչ մի գարուն տեսնելու չեմ ես, էլ ոչ մի ասող ժպտալու չէ ինձ, և կյանքս դառնալու է միօրինակ, տաղտկալի մի անհյութ պատմություն...

Այսպես ես նայում էի փողոց, իսկ ձյունը գալիս էր փաթիլ-փաթիլ։ Բյուրավոր թեթև, փափլիկ փաթիլները վիտում էին օդում, անձայն, անշշուկ պարում, խաղում և դարսվում երկրի երեսին, ժպտում մաքուր, առողջ ու անբիծ ժպիտով։ Այդ ժպիտը տարածվում էր պարզ երկնքի, ձյունածածկ երկրի վրա։ Այդ ժպիտը ընկճում էր ինձ, լարում մտքերիս

բոլոր լարերը, որ տառապեի հանելուկ կյանքի խորհրդաստ գոյությունով...

Ես նայում էի փողոց և հեռուներից թռչող մարդիս հոգնած դիմում էին ինձ, էլ չխոկալու խոստումով։ Է՜հ, թող լինի այսպես... պաղ ապակու հպումից ճակատս թարմանում է ու ես այժմ տեսնում եմ, թե ինչին էի նայում։

Ահա իմ դիմաց մի բարձր, եռհարկանի տուն։ Ձյունը նախշել է նրան իր կարողացածի չափ։ Նրա կողքի հին, փոքրիկ տունը մեղավորի նման կուչ է եկել դեռևի վրա, կարծես պատկառելով իր հարևանի բարձր դիրքից, կորել է ձյան հաստ շերտի տակ, որ շնկատվի իր աղքատությունը, թեև սրտանց ցանկանում է մի օր ձգվել դեպի վեր, ներս նայել բախտավոր հարևանի մեծ ու լույս լուսամուտներից, այնուհետև ինչ ուզում է թող լինի...

Փողոցի անկյունից երևաց մի աղքատ աղջիկ, ցնցոտիներ հագին, գիսախռիվ, կեղտոտ։ Նա ժպտալով կարկառում էր ձեռքը անցորդներին և ոչինչ չստանալով ժպտում, դուրս հանում լեզուն և որսում ձյան պաղ փաթիլները...

Մի ճնճղուկ իջավ ծառի ճյուղերի վրա, թափահարեց, ձյունն փոշի հանեց ու թռավ դնաց իր գործին։

Ջարահեճի մեկը ձյունագնդով խփեց մուրացիկ աղջկան ու փախավ տուն։

Ահա տաք ու շքեղ հագնված մի կին մուֆտի միջից մի նամակ հանեց, սեղմեց կրծքին, շրթունքներին և երեք անգամ խաչակնքելուց հետո ձգեց փոստային արկղն ու գնաց։

Անցնող պառավը մի կոպեկ ավեց աղջկան՝ ստիպելով հիշելու իր բոլոր մեռելներն ու կենդանի հարազատները։

Իսկ ձյունը գալիս էր փաթիլ-փաթիլ... Տխո՜ւր էր, խիստ տխո՜ւր...

1904 թ.

12. ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Նկատե՞լ եք ինչպես հանկարծակի ծագում է արևը գարնանամուտին. շուրջը ձյուն է, ձմեռ, մռայլ ու ցուրտ, հանկարծ ինչ-որ կատարվում է թուխպերի հետևը անխուսափելիորեն, և ծագում է արևը...

Ձյունը սկզբից ժպտում է նրան, աչիկները թարթում նազանքով, պսպղում, պեծին տալիս և հանկարծ մռայլվում, ամքում ու թևերը թուլացած լալիս ու լալիս...

Իսկ արևը ժպտում է, հա ժպտում, բարևում երկրին, մարդկանց,

թռչուններին. ագռավն ու զոլորշին վեր են բարձրանում երկրի ամեն մի անկյունից, արևը ժպտում է ու ասում ծիծաղելով.

— Տեսնո՞ւմ եք, եկա, չուշացա։

— Ուշացար,— տրտնջում է զոհիկ երկիրը,— հոգիս դուրս եկավ ցրտից ու սառնամանիքից։

— Լավ որ եկար,— քչքչում է առուն, ճարճատելով, հառաջ գլորելով իր կրծքի սառույցը,— ազատվեցի կապանքներից։

— Արևն եկավ, արևն եկա՛վ,— ազմկում են մանուկներն ու թռչունները։

— Տեսնո՞ւմ եք,— ժպտում է արև տրքան,— զեհ, վեր կացեք, գործի ելեք, ցանենք, քաղենք, աշխատենք ու զվարճանանք...

Եվ բլբլալով վազում էր հալված ձյունը, լիզում, մաքրում դաշտ ու հանդ, սար ու ձոր... Բազմամարդ ու բանուկ փողոցի ծայրում կանգնել էր կինը, նեղկված, օձված և ցեխի մեջ կորած։ Անցորդները ծաղրում էին նրան, կանայք խորշում ոչչախոհաբար, ջահելները՝ կատակներ անում։ Աբրած կինը լիտի կերպով հայհոյում էր ամենքին անխնա և ինչ-որ որոնում էր գրպաններում։

— Հե՛յ, գեղեցկուհի, երեկվա օ՞րն ես որոնում,— սրախոսեց հաղթանդամ մի ամիկ։

— Փողե՞ս չկան... ես լավ էի վաստակել, դողացան անիրավները,— ազիսազորմ լալիս էր հարբած կինը։

Կառքերը գնում էին ու գալիս, և ջրի ցեխը անիվների վրայից թռչելով ծեփում էին կնոջ դեմքը, հագուստը։

— Կանգնիր մի կողմ, պատի տակ, մաքրիր դեմքդ սրանով.— ես նրան առաջարկեցի երկու թերթ, բռնելով թևից։ Նա հնազանդվեց ինձ, նայեց դեմքիս, ծամածռեց դեմքը, և գուցե պիտի հայհոյեր, սակայն ես խանդարեցի նրան՝ թևից քաշելով դեպի մոտակա դռան խորքը։

— Մաքրվի՛ր,— կրկնեցի ես ավելի մեղմ։

— Մաքրվե՞մ,— կսկիծով ասաց նա,— ո՞ր մեկը մաքրեմ, մինչև ե՞րբ... ցեխը դիպել է իմ հոգուն, սրտին, խղճին։ Լսո՞ւմ եք, ես ամբողջապես թաղված եմ ցեխի մեջ ու երբ ջանացել եմ մաքրվել, աղատվել ցեխից, հացի կարոտը ինձ հրել է ավելի խորը...

Իսկ արևը ժպտում էր, հա ժպտում։

— Տեսնո՞ւմ եք, եկա. հալած ձյունը տեղ հասնելուն պես՝ կծլեն ծառ ու ծաղիկ։ Դե՛հ, վեր կացեք, գործի ելեք, ցանենք, քաղենք, աշխատենք ու զվարճանանք...

1904 թ.

13. ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

1

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, իսկ դու գեղեցիկների գեղեցիկն ես, իմ հայրենի՛ք։

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ առաքինի է, իսկ դու տառապում ես առաքինության համար, իմ հայրենի՛ք։

Տառապանքն եմ սիրում, ո՞վ է տառապել քեզ նման։

Սիրում եմ տոկալ, ո՞վ է տոկացել քեզ նման անդանդաղ։

Սիրում եմ հուսալ. որքա՜ն համառ ես դու քո լավ օրերի հուսով։

2

Մի՞թե չկայի ես, երբ դու կայիր. ես ծնա քո գրկի մեջ և գոյությունս գոյությանդ մեջ անհայտ, աննշմար կապրեր։

Դու գիտե՞ս, թե առաջ ուր էր իմ հոգին, վե՞րը թե վարը, ամպերի մե՞ջ, թե ծաղիկներում։ Ես քեզ մոտ էի, շունչս շնչիդ հետ, ես՝ քո, դու՝ իմ մեջ...

3

Ես սիրել եմ քեզ միշտ, սակայն այդ զգալի չէր կարող լինել ո՛չ քեզ և ո՛չ էլ ինձ համար, վասնզի դու ինձ չէիր տեսել, իսկ ես զբաղված էի քո արշալույսներին ու վերջալույսներին ողջունելով։ Քո պաղ ջրերը արբեցնում էին ինձ երջանկությունով, ծաղիկները հեքիաթ էին հորինում ինձ համար, իսկ զագաթները կանչում էին վեր բարձրանալ, վեր գնալ... Միշտ վե՛ր...

4

Գիտե՞ր, արդյոք, ո՞ւմ ես կյանք տալիս։ Ես ուզում եմ քեզ համար զարդ լինել, վասնզի իմ ամենաթանկագին զարդն ես դու, իմ հայրենի՛ք։ Ես զգում եմ իմ զորությունը, որ սնել ես դու և կմնամ զորավոր ամեն տեղ ու միշտ...

5

Տարիների ընթացքում դու զգացիր իմ այդ զորությունը. թախիծն էր գերել ինձ, վիշտն էր կապել աչքերս. սիրտս քեզ էր սիրում, հոգիս խռովել էր քեզանից, իմ հայրենի՛ք. դու էլ խռովեցիր ինձ հետ ու խամրեցրիր ծաղիկներս, իմ այն ծաղիկները, որ մի անգամ են ծաղկում...

6

Փախա քեզանից, լացիր դառնագին ու կանչեցիր ինձ, սակայն տառապանքն ուժեղ էր քեզանից, իսկ ես անբաժան նրա հետ... Ես քեզ համար լալով լացի, իմ հայրենի՛ք, ու սրտիս շարված կնճիռներին մեկի աչքը չէ հասել. կարոտդ շղթայի պես կախվեց իմ թևերից ու զողանջում է անդադար ու ճնշում է անդադար...

7

Շրջեցի մենակ, ուր որ գնացի, ցավդ տարա ինձ հետ, սուլերի նման ձգվեցի վրադ, որ խորշակը չայրե քեզ։ Ուզեցի միշտ կամար կապել ճակատիդ, արևից ճաճանչներ խլել, լույս ու ջերմություն տալ քեզ, ուզեցի բախտ մուրալ քեզ համար, որ ապրես ու ժպտաս, իմ հայրենի՛ք...

8

Ուր որ գնացի, տարա ես ինձ հետ խարույկը սիրույդ. ու ոչ մի աշուն չմարեց նրան։ Ես քեզ երգեցի աղոթքների տեղ, քեզ պաշտեցի աստվածների փոխարեն։ Դու ես աղբյուրն իմ զորության, իմ հայրենի՛ք...

Ես քեզ երգելով կերգեմ, իմ հայրենի՛ք։ Ես քեզ սիրելով կարո՞ղ եմ ատել, իմ հայրենի՛ք...

9

Թող բախտը փշե պսակ դնե քո գլխին, իմ հայրենի՛ք, ես վարդերով կզարդարեմ այն։ Թող բախտը խավարանի մրմունջներիդ մեղեդին, ես հզոր կզողանջեմ այն, չարի նահատա՞կ, իմ հայրենի՛ք...

1906 թ.

14. ՈՒՂԻՂ ՈՒՂԻՆ

Ամեն առավոտ նա գնում էր կայարանի այն մասը, ուր լիքը վագոններից դուրս էին թափում քաղաքի համար ստացված քարածուխը։

Մինչև ազդրերը խրված հոր՝ կարկատաններից ծանրացած կոշիկների մեջ, նրա հնամաշ բաճկոնը փաթաթած վտիտ մարմնի շուրջը, մեծ գդակը մինչև աչքերը քաշած, նա արագ թափահարում էր բաճկոնի երկար թևերի մեջ կորած ու սառած ձեռքերը, տրոփում կանգնած տեղը և ագահությամբ դիտում, թե ինչպես արագ լայն բահերը խրվում էին

քարածխի մեծ կույտի մեջ, վարժ վեր բարձրանում և ունուշ խշշալով քարածուխը թափվում էր սայլերի մեջ...

Իսկ երբ սայլապանները մտրակները օդում ճոճելով խրախուսում էին չարքաշ ձիերին իրենց հատուկ բացականչյունով ու ընկնում ճամփա, ցրտից փայտացած տղան որոշ հեռավորության վրա հարգանքով նայում էր եղյամի մեջ կորած ձիերին և ակնածությամբ հավաքում սայլից թափած բարածխի պաղ կտորները։

Ջեռնված սառնամանիք էր այդ ձմեռ, թանձրացած օդը դժվար էր շնչվում. սառած գետնի վրա անիվները քսվում էին ճռռալով, ձիերը սայթաքում ու սայլից թափվող քարածխի կտորները սև կետերով նախշում ձյունածածկ փողոցի սպիտակ գետինը։

— Ասված իմ, հոգյա՜կս, սիրելի՜ս, աշխատիր որ ձիերը հաճախ սայթաքեն, կամ թումբերի ու փոսերի հանդիպեն անիվները,— աղերսանքով մրմնջում էր տղան, դղակի տակից կապույտ աչքերը երկինք հառելով։

Այդպես միշտ գնում էր նա սայլերի հետևից, լուռ ու զգուշ, որ սայլապանը չնկատեն, մինչև որ տոպրակը ծանրանում էր և բաղցն ու ցուրտը զրկում էին նրան, տանջում և մի կերպ հրում դեպի տուն։ Լավ էր, երբ մի անգամ վառելու ածուխ հավաքված էր լինում։ Տղան հուզված, ատամները իրար ծեծելով տուն էր վազում և հետզհետե տաքացող հյուղում, վառարանի մոտ, մոր ու քույրերի սիրով տաքացած, ծամում էր եռանդով սև հացը տաք գետնախնձորի հետ։

— Ասված իմ, հոգյա՜կս, սիրելի՜ս,— աղերսում էր տղան վերոհիշյալ բացառիկ բախտավոր օրերի մտապատկերով թեավորված, երբ հանկարծ մի մեծ երկար կտոր քարածուխ ճռճաց, օրորվեց սայլի վրա և հանգարտ սողալով դեպի վայր, շուռ եկավ մյուս կողքին և ընկավ գետնին...

Կայծակի արագությամբ տղան վրա վազեց, դրեց ծանր կտորը և իսկույն անհայտացավ մի ամիս առաջ կատարված հրեական ջարդի ահռելի ավեր ու անմարդաբնակ հրեայի տան մեջ, մեծ դժվարությամբ պատսպարվեց հրդեհից սևացած աղյուսի կույտերի մեջ, հոգատար սիրով ածուխը փաթաթեց բաճկոնով, նստեց վրան, սրտատրոփ սպասեց իր անակնկալ բախտի վախճանին...

Ցուրտը փչում էր ավեր պատերից և բաց լուսամուտներից, կտուրից թափված թիթեղները դողում էին քամուց, խփվում քարերին և սարսափ բերում խեղճ տղայի վրա։

Սակայն նա անդադար շոշափում էր իր տակի քարածխի կտորը, սառած մատներով գծում, բաժանում մի քանի օր վառվելու մասերի և մոռանում և՛ ցուրտ, և՛ քաղց, և՛ ահ...

Սատանամանիքը դաղում էր նրա մարմինը, բամին բոբրում շապիկի ծվենները...

— Աստվա՛ծ իմ, սիրելի՜ս,— վերջին ճիգը վատնելով դողդոջ շըշընջում էր գունաթափ տղան, փայտացած մատները կոխում կոների տակ կամ անձկությամբ հենված աղյուսի կույտին...

Նրան թվում է, թե կաշին պոկվում է մարմնից, ցուրտը մտնում է նյարդերի, երակների, արյան մեջ ու ծծում ջերմության վերջին մնացորդը։ Նա զզույշ վեր է կենում, վերցնում բաճկոնով պարուրած քարածխի կասրը, սեղմում կրծքին և կուչ գալով աղյուսի կույտերից դուրացած փոսում, խոսում ինքն իր հետ.

— Մի քիչ հանգստանամ ու գնամ տուն։ Ինձ հետապնդող չի լինի այլևս, սայլապանները հեռացան։— Մի ցանկալի ջերմություն դեմքից, ականջներից վայր սահեց, անցավ կաշու տակը, ինչ-որ սրսկեց այնտեղ, քաղցր թմբիրը դերեց նրան, նա դոհ, երջանիկ ժպտաց ու քաջացավ, հուշիկ ցնցվեց ու մի երանելի անդորր իջավ նրա մարմնի ու հոգու վրա, ընկավ երազանքի մեջ.

«Ահա իրենց հյուղը, թաց, ցուրտ, խարխուլ, անծեփ։ Նա քաղցած ու ժժդոհ դուրս եկավ տանից, վերցրեց իր մրոտ տոպրակն ու գնաց կայարանի այն մասը, ուր ածուխ են դուրս թափում մեծ ու լիքը վագոններից։ Նա կանգնեց իր սովորական տեղը և սպասեց սայլերի ճամփա ընկնելուն, սակայն, բանալուն պես սայլերն անհայտացան։ Նա կորցրեց իր հյուղի ուղին և շվար թափառելուց հոգնած նստեց մի պատի տակ։

Նստեց մի պատի տակ ու նայեց շուրջը, աջ ու ձախ։ Ինչպե՜ս դոհ էին անցորդները. մտաղբաղ, խոհուն գալիս, գնում էին, խոսում, շտապում։ Նա ճանաչեց իրենց հարևանին, որ գարնանն էր մեռել-տրորվել մեքենայի տակ։ Գնում է դոհ, ինչ-որ պատմում իր մասին։ Նա տեսավ իր տատին, որ մուրում էր եկեղեցու դռան առաջ, նույնպես դոհ, ուրախ, չբավորության ոչ մի հետք։

— Տա՛տ, այ տա՛տ, կանչեց տղան։

Տատը ճանաչեց ու մոտեցավ նրան.

— Ի՞նչ ես շինում այստեղ...

— Մոլորվել եմ, տա՛տ։

— Հիմար տղա, կմոլորվե՞ն, երբ ուղիղ ուղին է աչքի առաջ...

Տղան զարմացած մոտեցավ տատին և ամեն ինչ չբացավ նրա դեմ. ու սև ածուխների բեկորներով լայն, անսկիզբ, անծայր ուղին բացված էր նրա առաջ։ Նա ընկավ ճամփա ու գնաց... գնաց ու կանգ առավ։

Գործարանների՝ կերոնի պես դեպի վեր ցցված ծխնելույզներից լույս էր կաթում մթության մեջ և բոցավառում երկինքը։ Բանվորները մի մի վառ ծաղիկ ձեռքերին ուր որ գնում էին։ Տղան մտավ մի հսկայական տուն, որի առաստաղը աստղաշատ էր։ Աշխարհի բոլոր բարիք-

ներից կային այնտեղ. այնտեղ էր և իր հայրը, որ մեռել էր Թոքախտից։

— Հա՜յր,— աղերսեց տղան,— մի կտոր ածուխ դտա, կորցրի, իսկ վառարանն արդեն մի քանի օր է, որ չէ տաքացել։— Հայրը ժպտաց, բռնեց որդու ձեռքից և տարավ։ Երբ գնացին բավականին, մտան մի տուն, մի լույս, կահավորված ու տաք տուն։ Տղան ցրտից ուժասպառ նստեց բոցավառվող վառարանի մոտ, փափուկ բազմոցի վրա։

— Հիմա տատդ քեզ տաք կերակուր կբերի,— ասաց հայրը և դուրս ելավ։ Կերակուրի անունը լսելով նրա՝ տաքությունից փափկացած մարմինը թուլացավ։ Նա ձգվեց բազմոցի վրա, որ մինչև տատի երևալը քիչ հանգստանա ու քնեց...

Հետևյալ օրը, երբ մի խումբ աղքատ երեխաներ ավեր տան մեջ այլված փայտի կտորներ էին հավաքում, աղյուսի կույտի տակում տեսան քնած տղային, սկսեցին զարթնեցնել ու սարսափահար փախան։

Երբ մարդիկ հավաքվեցին, մեկը մոտեցավ համարձակ և բաց արավ բսեկոնը, քարածուխը չկար։ Նրա տեղը դրված էր տան պատից փուլ եկած մի բեկոր։

1907 թ.

15. ՇՂԹԱՆԵՐԸ

...Ես քնած եմ ծառի տակ ու զգում եմ իմ կաղդուրվելը. արյունը մի հաղթական ուժով շրջում է երակներիս մեջ, զգալ տալիս առողջ քնի թովչանքը...

Տերևների արանքից ինձ են հասնում արևի շողերը, և ես զգում եմ իմ ուսին, կրծքին, ճակատին նրանց ջերմության ախորժահպումը։ Ջերմից տաքացած մարմինս կասես լցվում, մեծանում է։ Ես մեծ հաճույքով տարածվում եմ մեջքիս վրա։ Աջ ոտքս ընկնում է արևից անտես դով խոտի վրա, զգում նրա գաղտնությունը։ Ինչ-որ շշուկ հոսում է դետնի միջից, թրթռում ականջիս մոտ ու կորչում խոկույն։ Ես էլ չեմ զգում մարմնիս անդամների գոյությունը։ Ինչ-որ կախարդական շնչից չքանում, անէության ծոցն եմ ընկնում...

Երևի երկար է տևել իմ քունը ու մի երազ չէ տեսել նրան։ Զարթնում եմ դող, անհոգ բավականությամբ հորանջում մի քանի անգամ, տերևների արանքից նայում երկնքին ու բոլորովին արթնացած պառկում եմ երեսնիվայր և դեմքս հենելով արմունկներով բարձի մեջ խրված ձեռքերիս վրա, դիտում եմ, թե ինչ նորություն է կատարվել արդյոք շուրջս, ու ժպտում եմ, երկար ժպտում...

Ինչո՞ւ եմ ժպտում. զարմացած հարցնում եմ ինքս ինձ և քիչ նեղություն կրելուց հետո հիշում...

Դեռ քնելուց առաջ մի լավ ժպիտ խաղում էր սրտիս մեջ, հետո ընկավ աչքերիս մեջ։ Ես շտապով ճաշեցի և իջա պարտեզ։ Մի հարմար տեղ չէի գտնում պառկելու։ Առաջվա տեղերին էլ չէի հավանում. կարծես ամբողջ ամառանոցը կերպարանափոխված լիներ։ Բարձն ու պլեդը ձեռքիս թափառեցի երկար ու վերջապես հեռավոր ծառուղիներից մեկում, որ չէր մաքրվում խոտերից, պառկեցի ծառի տակ ու այդ ժպիտը դեմքիս քնեցի։

Ահա նա էլ զարթնեց սրտիս խորքում. այդ պատճառով էլ մի զոզանջուն երգ գալարվեց, թրթռաց կրծքիս տակ ու կտրվեց։

Բավական է...

Երևկոյանում է։ Ծառերն ու ծաղիկները իրենց ստվերներն ուղղում են դեպի արևելք։ Մեղմացող տապի հետ զգացվում է երեկոյան շունչը։

Երևի ծաղիկները էլ քնել էին ինձ հետ ու երազել հով, զեփյուռ, լուսնկա գիշեր, այժմ էլ նենգ ժպիտով նայում են արևմուտք թեքվող արևին և ով գիտե ինչ են մտածում նրա մասին։

Լինեին մարդիկ ծաղիկների պես, մտածում եմ ես. սիրեին լույսը, բույր ու գեղեցկություն տային կյանքին, ամենքն էլ անխտիր. նստեին մի հողի վրա, մի ձեռք խնամեր նրանց, մի անձրևով թարմանային, ոչ ոքի նեղ չէր լինի երկրի երեսին և ամենքն էլ տեղ կունենային ծլելու, ծաղկելու....

Հեռվից լսվում է երեխաների աղմուկը. խաղում են։ Ահա մայրս և խոհարարուհին երեացին «մեղոնինի» պատշգամբում, իջան առաջին հարկի կտուրի վրա, այսօրվա լվացած բուրդն են հավաքում, երևի շորացել է արդեն, և զրուցում իրար հետ։

Մորս ռուսերեն խոսքերի պաշարը շատ աղքատիկ է, ուստի խիստ արագ շարժվում են զանազան ձևերով նրա ձեռքերը, որոնցով և լրացվում է խոսքերի պակասը։

Երեկ հյուրեր կային մեզ մոտ, նրանցից մեկն ասաց, որ մեր բնակած «մեղոնինում» հենց իմ սենյակում մի ամառ երկու ամիս ապրել է Մ. Ն....-ը։

Երեկվանից այդ փոքրիկ, ցածլիկ սենյակը մի խորհրդավոր տեսք է ստացել իմ աչքում, նա այնտեղ քնել է, շրջել, մտածել...

Այդ վաթսունական թվականների հայ քաղաքացին, իր «Աղատն Աստվածով...»։

Մաքիս անիվը հպարտ պտույտ է գործում դեպի հետ անցյալը։

Սոցիալիզմի նվաճումներն արտասահմանում. Գերցեն, Օդարև, Բակունին և աղատամիտ հայը համամարդկային ցավը բուժողների փշոտ ճամփու վրա...

Որքան լավ է, որ եղել են արժանի մարդիկ։ Երբ մտածում եմ, թվեր

է բուսնում ուսերիս վրա։ Ակնածությամբ կարկառում եմ թևերս ու շշնջում աղոթքի պես. «Գալիս եմ, գալի՛ս...»։

Վերջին տարիների ապրումները մրրկում են հոգիս։ Վեր եմ նայում։ Մի՞թե այդ բուրդ հավաքող անդրադետ կինն է ծնել ինձ... Թափառում եմ ծառուղիներում. ամառանոցի մի ծայրում պարտիզպանի տնակի դիմացը մի հասարակ սեղանի շուրջ նստել է պարտիզպանուհին, հետն էլ երեք կին, ամենքն էլ մաքուր շՄև հագուստներով, սպիտակ թաշկինակները գլխներին, սեղանի վրա դրած է մի մեծ շիշ օղի, թարմ վարունգներ, հասարակ երշիկ ու մեծ կտոր սև հաց։ Օղու մնացորդը, նրանց կարմրած դեմքերը ցույց են տալիս, որ հանդեսը վաղուց է սկսած։

— Երգենք,— աշխատանքից կոշտացած բռունցքը խփում է սեղանին նրանցից մեկը։

Շտապ դատարկում են լցրած բաժակները, թևով սրբում բերանները և հազալուց հետո սկսում։

Սկզբից խառը ճիչերը աղմկում են օդը, ապա համերաշխ ելևէջները պարզ ու հասարակ երգի դուրս են սահում նրանց հոգնած կրծքերից։ Լավ են երգում մալոռուսկաները. սիրում են երգը, երգում են միշտ ու գիտեն երգել, երգում են երկձայն և քառաձայն, առանց որևէ ձայնագրական կանոնների մասին տեղեկություն ունենալու. նրանց երգը հաճախ լսողություն է շոյում և թախիծ փռում իր շուրջը։

Շատ առավելություններ ունի ռուս կինը, ի՞նչ փույթ որ երբեմն նա իր կսկիծները թրջում է օղիով։

Ինձ նկատեցին հակառակ իմ ցանկության. արբած պարտիզպանուհին երգելով դիմավորեց ինձ։ Ես նստեցի պատի տակ, նստարանի վրա։

— Երգ շատ է սիրում,— ասաց նա իր հյուրերին և ավելց մի քանի չափազանցացրած տեղեկություններ իմ մասին։ Լսողները արբածի պարզ ժպիտով մի քանի անգամ նայեցին ինձ և մնացին զոհ։ Ապա մի բաժակ էլ դատարկելով սկսեցին երգել առանձին եռանդով մեծ ժողովրդականություն ստացած երգը.

«Солнце всходит и заходит, А в тюрьме моей тем-но-о...».

— Պետրովնա, դու միշտ հյուրասիրում ես ինձ այդ երգով,— ասացի ես երգից հետո։

— Սա շատ հարմար է,— պատասխանեց նա, սև հացի կտորի վրա աղ ցանեց և ծամելով նստեց մոտս։

— Ինչի՞ն է հարմար։

— Ձեր կյանքին... Ձեզ...

— Չեմ հասկանում,— պատասխանեցի ես։

— Հիմա ասեմ, կհասկանաս։ Ահա մի ամիս է, որ ես նայում եմ ձեզ ու զարմանում. նստեցրել են ձեզ «մեղանինում», ինչպես թռչունին վանդակի մեջ, կերակրում են, հոգ տանում, իսկ դուք ուտում, խմում.

ման եք գալիս վանդակի շուրջը, ո՛չ մեր օղին խմել գիտեք, ո՛չ ձեր կարմիր գինին և ո՛չ էլ երգել մեզ նման...

— Գիտեք ի՞նչ «սեղան են սարքում սրանք»,— դարձավ նա մյուսներին,— «օղի՛, գինի՛, խորովա՛ծ և քեֆ մինչև կես գիշեր։ Օտարները ուտում, խմում են...։ Սո՞ւտ եմ ասում,— դարձավ գեպի ինձ,— իսկ դուք սուս ու փուս նստում եք նրանց մոտ, կամ երեխայի նման ճոճվում ճոճանակի վրա։

Իմ ծիծաղից վշտացած գնաց նստեց կրկին սեղանի մոտ ու նորից աղմկեցին օղը «ինձ ու իմ կյանքի հարմար» երգով.

«Не порвать мне, не разбить вас»...

— Հարկավոր է փշրել շղթաները,— նկատեց նրանցից մեկը և սկսեց հեծկլտալ։

— Ինչպե՞ս փշրել,— հայհոյեց մյուսը,— առանց դրան էլ ուժ չէ մնացել ինձ վրա. ահագին բանջարանոցի աշխատանքն ես եմ կատարում։

— Բանջարանո՞ցը... մե՛ծ բան, բանջարանո՞ցը. իսկ եթե ամուսինդ հարբեցող լիներ,— առանց պատճառի պոռաց երրորդ կինը։

— Սպասեցեք, թողնք խոսքս վերջացնեմ. շղթաները դիտե՞ք երբ են փշրում,— կանչեց պարտիզպանուհին մեծ դժվարությամբ ծխախոտը թղթի մեջ փաթաթելով։

— Ե՞րբ,— հարցրեց անտարբեր լացողը։

— Երբ որ սատանան գայթակղե,— խորհրդավոր կերպով ասաց պարտիզպանուհին, ճչաց և կողերը բռնելով անցավ առաջ. մյուս կանայք երերալով բարձրացան տեղից և սկսվեց սիրած պարը...

Մթնշաղը թևերը փռել էր օղի մեջ։ Թռչունները երեկոյան աղոթքն էին անում։ Ամառանոցներից լսվում էր երեխաների լաց, աղմուկ, սարքվող սեղաններից ամանների ձայն և բոլորովին արբած կանանց խռպոտ.

«Не порвать мне, не разбить вас»—*ը։*

1908 *թ.*

16. ԿՈՎԻՑ ՀԵՏՈ

Շրջում էր քամին ամայի կիրճում ու վայրագ երգով աշխատում վանել սարսափն իր սրտի։ Նա լսեց հանկարծ մի մեղմ հեծկլտոց, կռացավ, տեսավ սիրուն մի ծաղիկ լալիս է թաքուն.

Քուն չունե՞ս, աղջի՛կ, գիշեր է, քնի՛ր, մի՛ լար, նազելի...

— Եղրա՛յր, քարափից վայր գլորվեցին արյունոտ գիեր. տե՛ս,

մեկն էլ ահա ընկել է կրծքիս, տնքում է անլուռ ու մորը կանչում... ինքը քուն չունի՝ իմ քունն է կտրել... ասա դեթ թեքվի՝ մի քիչ շունչ քաշեմ...

Քամին լուռ շոքեց դիակի առաջ և պաղ թևերով գրկեց գլուխը տաք և արյունոտ ու լալով լացեց...

— Դե՛հ, մի քիչ կամաց,— տրտնջաց առուն։

Ի՞նչ ցասման դիշեր... դիակներ ընկա՞ն

Իմ կրծքի վրա. ուղիս կորցրած սողում եմ առաջ թե ո՞ւր՝ չգիտեմ...

— Վա՜յ, վա՜յ,— վայելեց բուն,— ոճիրն ու մութը գրկել են իրար։ Երևի դևը ունի խրախճանք։

Գորտն էլ տաք ճահճից քնահատ և դժգոհ կուռաց ու լռեց։

Ուռին սարսռաց անհայտ սոսկումից

Գլուխը կռխեց ջրերի վրա...

— Այս ի՞նչ աղմուկ կա այսօր ձորի մեջ,— հարցրեց նրան աստղ մի սիրունիկ, որ գլորվում էր հստակ առվակում։

— Մարդիկ են ընկել...

— Մարդի՞կ...

— Հա՜...

— Ի՞նչ մարդիկ։

— Այն, որ ապրում են երկրիս վրա ուժեղ ու հզոր, տեր ու տիրակալ...

— Հա՜, դեհ, ցույց տուր, շուտ, ինձ չէ պատահել մոտ լինել նրանց։

— Մի՛ նայիր, աստղիկ...

— Ուզում եմ նայել։

— Նոքա մեռած են...

— Ի՞նչ բան է մեռնել։

— Մեռնել-չքանալ...

— Ա՜խ, խորամանկներ, ինչ բաներ գիտեն. պիտ նայեմ, ուրիկ. վաղը թող պատմեն, որ երազի մեջ վառ աստղ են տեսել։

— Ավա՜ղ, չեն պատմի...

— Ինչո՞ւ. լավ չէ՞ այդ։

— Նոքա հոշոտված դիեր են, գավակս...

— Տե՛ս ագռավներն էլ աչքերն են կտցել...

Աստղիկը ճչաց ու թռավ երկինք.

— Ո՞վ է խանգարում կես դիշերային անդորրը երկնի,— դուրս լողաց խոժոռ լուսնկան իսկույն ու դժգոհ նայեց շուրջը դես ու դեն։

— Մա՛յր, վախենում եմ, եկ ինձ մոտ քնիր,— աստղիկն էր լալիս սարսափից շշմած։

— Ի՞նչ է պատահել, հուր-հերս, պատմիր։

— Մա՛յր, երկրում մարդիկ...

— Դե՛հ, լռի՛ր-լռի՛ր,— կանչեց լուսնկան, ամպերով իսկույն ծածկեց աստղիկին, նայեց հեգնանքով դեպի վար—երկիր ու նուրբ նազանքով մտավ ամպի տակ...

1913 թ. 11 փետրվարի

17. ՏԱՏ ԱՐԻՆԱՆ

1

Գետափին բարձրավանդակի վրա, ուր ձմեռվա ցեխն ու ամառվա փոշին հարաճուն են, բնակիչների պես պինդ կպել է գետնին հայտնի քաղաքի բանվորական թաղամասը։ Աղքատիկ տնակների անկանոն շարքերը, նեղ ու անհարթ փողոցների հետ, անհաշտ դիտում են հսկա քաղաքը և զարմանում, թե ինչպես մարդիկ անարդար կերպով են դասավորված երկրի երեսին. իսկ երկիրը—այդ վախկոտ տիտանը տեսնում ու լռում է այդ ու չի շարժում իր մեծ կուրծքը, չի խառնում իրար ամենքին ու չի գոռում ցասկոտ ձայնով.— «Տեղավորվեցեք ամենքդ էլ հարմար ու ազատ, անկուշտներ. ամենքիդ էլ հավասար անկյուն կբավե իմ կրծքի վրա...»։

2

...Տատ Արինան պառավ էր, կորացած, աննեցուկ աճած ճյուղի նման. գլխքը՝ բարդ կնճիռների տապանակ ուխտի։ Թոռը չքնաղ էր ու կայտառ, որի պատճառով ծերերին մաշում էր օրերի անդարձ կորուստը, ջահելներին՝ հանդուգն փափագների խոստացող շշուկը...

Եվ թաղամասի հեռու ծայրում, նեղ ու ցած հյուղի մեջ, ապրում էին այդ՝ մեկն ապրած ու մոռացված, մյուսն՝ ապրելու անհաղորդ դրավականներով լի դալլը հաշտ ու համերաշխ, նվիրական սիրով կապված։

3

— Տա՛տ, այ տա՛տ, ինձ մի տեղ ճարիր քաղցրավենիքի գործարանում. ծխախոտի հոտից զզվել եմ. սիրտս, հոգիս բուրում են ծխախոտով...— տրտնջում էր ամեն օր չքնաղ թոռը։

— Քաղցրավենիքից չես քաղցրանա, սնամիտ աղջիկ. քաղցրից էլ, դառնից էլ ուժով խլելու ես հացիդ գինը,— պատասխանում է տատը և իր զայրույթը դուրս թափելու համար կռվում ծեր կատվի հետ, որ վատ սովորություն ուներ նստելու մարդու մոտ և պոչը փռել ճամփու վրա։

— Է՛հ, լավ չես անում, տատիկ,— կշտամբում էր թոռը,— տե՛ս, մի օր էլ ես ծխախոտ կդառնամ. ինձ կգնեն մարդիկ, կծխեն և մնա-

ցորդը կնստեն մայթի վրա...— Ու անհոգ քրքիջն աղմկում էր հյուղը, քրքրում տատի հոգսերի ու մորմոքների մեծ կծիկը...

4

Տատ Արինան հեղինակություն էր թաղամասում. նրան հարգում էին ծեր ու ջահել, նրանից քաշվում ամենքն անխտիր: Նրա պարզ խոսքը վայր չէր ընկնում, չէր կորչում, այլ սիրով փաթաթվում էր լսողի սրտի վերքերին, վիրակապի նման փափուկ ու մաքուր տաքացնում, հանդարտացնում ցավն ու կսկիծը... Նրա բարի ժպիտից լույս էր կաթում հուզվող մարքերի մուլ ծալքերի վրա ու կյանք տալիս վրեժի անուժ ծիլերին:

Արբած բանվորը նրա մոտ էր գնում իր ցաված սրտի խոսքն ասելու. դժգոհ բանվորուհին՝ մորմոքների կապոցը բանալու, շար մանուկը՝ փողոցի կռվում ստացած վերքին ճար գտնելու: Եվ այսպես միշտ ու ամեն օր, գարուն ու ձմեռ... Բանվորը տուն էր դառնում նրա մոտից էլ չմտելու երդումով, բանվորուհին՝ բարեկամի հեռավորության կասկածով, մանուկը՝ չծեծվելու համառ խոստումով: Տատն էլ, այցելուներն էլ լավ էին զգում իրենց և իզուր չէր, որ թաղամասը հպարտանում էր իր տատ Արինայով...

5

Տատը բուբլիկ էր ծախում: Սակայն փողոցները չէր աղմկում ուրիշների նման, այլ լուռ մտնում էր փողոցից-փողոց, տնից-տուն և իրեն սպասողների մոտ սպասում բուբլիկները. այդպես էր տատ Արինան. մինչ պատմում էր, հանաք անում, մինչ սիրտ տալիս, մխիթարում՝ սամբյուղը դատարկվում էր, թեթևանում. իսկ զոհոցի տակից կախված լայն գրպանը ծանրանում: Ո՞վ կարող էր մերժել նրան, երբ առավոտ վաղ տաք ու կարմրած բուբլիկների հետ նա տալիս էր և՛ ժպիտ, և՛ համբույր, և՛ խորհուրդ, և՛ թարմ, դեռ չթևավորված նորություն...

Օրերն այսպես դլորվում էին իրենց սովորական ու հին ճամփով, ժամանակն իր ուղածն էր փորում տատի դեմքի վրա, իսկ հոգսը իր ունեցածը դարսում նրա ուսերին:

6

Գիտցողը գիտեր, որ տատ Արինան լավ էր ծեծվել կյանքի հետ, որ վերջինս տրորել ու քրքրել էր նրա բախտի բոլոր ծաղիկները. սակայն ամենքին ապշեցնում էր նրա անսպառ կորովի պատկառելի մեծությունը, կարող հոգու աննվաճ դիրքը. ոչինչ չէր կարող ընկճել ժիր տատին, ու հասկանալն էլ դժվար էր. ծիծաղո՞ւմ է նա, թե՝ լալիս, անի-

ծո՞ւմ է, թե՝ օրհնում... Իսկ կյանքը, որ արդեն ամաչում էր նրանից, ոչինչ չէր նյութում նրա համար։

— Նյութելու էլ բան չէր մնացել,— ասում էին զիտեցողները.

7

Ասում էին, որ նա ապրել է քաղաքում, հոյակապ տան մեջ, շրջել սեփական կառքով ու նավով, կերել-խմել ոսկի, արծաթ ամաններից, քնել փափլիկ-փրփուր անկողնու մեջ... Ասում էին, թե նրա այն թևը, որ հիմա բուբլիկներով լի զամբյուղ է կրում, բռնած է եղել միլիոնատեր շռայլ մի խնամի, զարդարել նրան ոսկեմանդների շարաններով... Թե նրանք ապրել են մի ամբողջ կյանք խնջույքի ու խրախճանքի մեջ, սիրուց ու հեշտանքից զինովցած ու... ասում էին...

— Ինչե՞ր չեն կարող ասել մարդիկ ինձ համար...,— պատասխանում էր խուլ ու բեկբեկ ձայնով տատը։— Մարդիկ ասում են և՛ լավը, և՛ վատը... Դե՛հ, կյանքն էլ այդպես է՝ և՛ լավ, և՛ վատ... Ու ի՞նչ. այդպես է... Փոխի՛ր, եթե կարող ես... փոխի՛ր, որ միայն լավ լինի...— Ու լռում էր. նրա փոքրիկ, սիրուն բերանը, կասես, գերեզման լիներ... Այդպես էր... ինչո՞ւ բանալ գերեզմանը, խանգարել մեռելների հավերժական հանգիստը...

8

— Խմի՛ր,— խնդրում էին կիրակի և տոն օրերը ծեր բանվոր-բանվորուհի։— խմի՛ր. ցավդ մեղմանա, մոռացվես...։— Եվ ոչ որ չէր ափսոսում իր բաժնից հանած և տատին կարկառած լիքը բաժակը։

— Խմի՛ր, տա՛տ, ցույց տուր տեսնենք ձեր դարում ինչպես էին խմում մարդիկ,— կատակ էին անում ջահելները։

Տատ Արինան սրտնեղ նայում էր բանվորներին և հանդարտ շարժում դատամյալ գլուխը։

— Վերքը օղով չեն լվանա, անմիտներ... կրած դառնությունը չեն տա մոռացության, որ չկարտավի վրեժի թևերը...

Զմռան երկար ու ցուրտ գիշերները, երբ մարդկանց այդպես ճընշում է գարնան կարոտը, երբ մարդիկ լավ են հասկանում միմյանց և շուտ մտերմանում իրար հետ՝ բանվորները հավաքվում էին տատի մոտ և գիշերները կարճում արգիլված խոսքի հուզիչ ազատով...

Տատը ակնապիշ լսում էր նրանց, խանդավառ ժպտում ամենքին, իսկ երբ բանվորները ցրվում էին իրենց տները, նա դուրս էր գալիս փողոց և մթի մեջ բռունցքը ճոճում քաղաքի կողմը.

— Ո՞ւհ... անիծված...

9

Հյուղը, որ բաղկացած էր մի փոքրիկ մուտքից և մի սենյակից, իր օրինակելի մաքրությամբ առաջինն էր թաղամասում։ Գիտցողը գիտեր, որ տատ Արինան կուշ է գալիս սև աշխատանքի դեմ, չգիտե որտեղից սկսել և ինչպես վերջացնել. այդ պատճառով էլ կանայք հերթով, տարին երկու անգամ, աշնանն ու մեծ պասին, շտկում էին տատի հյուղը։ Մեկը ծեփում էր, մյուսը լեղակած կավճով սպիտակեցնում ներսից ու դրսից, դրսի պատերի վարի մասը ներկում դեղին կավով, հարմարեցնում պատի տակի հողաթումբը, երրորդը իր տանը տնտեսած ներկով նաշխում ու թարմացնում էր դուռն ու պատուհանի փեղկերը։ Բանվորներից մեկն էլ կարկատում էր կտուրի փտած տախտակները, ամրացնում սարյակի ծռված բույնը։

— Տա՜տ, բունդ նորոգվեց. անվախ ընդունիր ձմեռ պապին,— ասում էր բանվորը՝ դիմացի պատի տակից գննելով կտուրը։

— Դիմեմ, զավակս, դիմեմ,— ժպտում էր տատը, ծխի քուլաները խուլ հառաչի հետ առաքելով դեպի աշնան թուխպերը։

— Տա՜տ, բույնդ շտկեցինք, ուրախ սրտով դիմավորիր գարնան արևին,— ասում էին գարնանամուտին։

— Դիմեմ, հարազատ, դիմեմ...— պատասխանում էր տատը, նայում հողաթմբին ու մտքով սլանում հեռու, դեպի ապրած գարունները, ուր կյանքը պատրանք էր, երազները՝ խենթ-խելառ...

10

Առաստաղը վերջացնելուն պես տատը շուկա էր վազում օրվա պարենը հայթայթելու համար։

— Վաստակի կեսը պետք է ծախսել,— խոսում էր նա ինքն իր հետ, անհայտ գալիքի հարվածներ ստեղծելով իր երևակայության մեջ և կիսելով գրպանի փողը. մի մասը պինդ կապում էր թաշկինակի ծայրը և օձիքից ներս ձգում կրծքի վրա։ Սակայն մի քանի քայլ դեռ շարած կանգ էր առնում խղճահարված։

Իսկ եթե հարցնեն.— տատ, խնձոր չկա՞ր շուկայում։ Կամ,— տատ, երնեկ հարուստ լինեինք...

Կսկծից ինչ-որ փլչում էր տատի գիտակ սրտի խորքում, ինչ-որ շարվում կոկորդում, թրթռում և աշխատում դուրս ժայթքել...

— Ո՜չ, ո՜չ, բոլորը կծախսեմ... բոլո՜ր... Կեր, զավա՜կս, կուշտ ու գոհ ապրիր, հարազա՜տ. թող քաղցր <չլկե> անմեղ հոգիդ... զրկանքը չկախվի ուսերիցդ...— Շշնջում էր տատը սաստիկ հուզված և դատարկ գրպանով և լիք զամբյուղով տուն շտապում ինքն իրեն և ողջ աշխարհը ուրացած ու մոռացած...

Վայ կատվին, եթե մոռանար նախօրոք թաքնվել մի հեռու անկյունում. վայ պատի տակ աղմկող երեխաներին, վայրահաչ շներին ու փողոցի աղբը քրքրող հավերին։ Տատը ջղայնացած կշտամբում էր ամենքին, դատապարտում, որ աղմկում են, խանգարում իրեն, չեն խղճում, չեն մտածում, որ Կլարան վազելով է ճաշի գալիս, որ Կլարան նեռի պես էր ճամփան կտրում, իսկ ո՞չ տանը կերակուրն է պատրաստ, ո՞չ սեղանը սարքած, ո՞չ էլ սենյակը մաքրած...

Մ՚իայն մեծերը գիտեին արդեն, որ մինչև կեսօր տատը ոստիկ խստապահանջ ու անհասկանալի է, «ընդունելություն» չունի և ոչ ոք չէր համարձակվում անցնել նրա .շեմքից...

11

Իսկ երբ վառարանի վրա քլթքլթում էր կաթսան, արդեն եփած բորշչի խոնավ ու թթու հոտով լցվում սենյակը, սև թավայի վրա ուժգնորեն էին կարմրող գառան միսն ու գետնախնձորները, ցոլում էր նոր լվացած և տեղ-տեղ դեռ թաց հատակը, անհամբեր մոմռում մսի հոտից մաշվող կատուն՝ տատը գոհունակ շուրջն էր դիտում, հարթում շտապով լվացած գոգնոցն ու ղլխի թաշկինակը և հպարտ, հաղթական քայլերով դուրս գալիս տանից, գուրգուրում երեխաներին, հորդորում իրար կրծող շներին և կչկչող հավերին, ժպտալով գնում, կանգնում փողոցի անկյունը...

— Տա՛տ, դու անկյունում կանգնած ի՞նչ էիր սպասում,— հարցնում է ճաշելիս թոռը, թշերը ուռցրած դեռ չծամած պատառով։

— Սպասում էի... հոգնած ոսկորներս հագիվ եմ քարշ տալիս, իսկ նա՝ «սպասում էիր»... անմիտ աղջիկ...,— փնթփնթում էր տատը, անհուն սիրո ճառագայթներով աչքերը լուսավորված։

Թոռին զբաղեցնում էր տատի անհաջող կեղծվելը, և նրա անհոգ քրքիջը հնչուն ալիքներով տարածվում էր օդի մեջ, դիպչում տատի սրտի նվիրական լարերին և բախտի ջինջ արցունքի բյուրեղ կաթիլներից սեղմում ու թրջում նրա աչքերը...

Թվում էր, թե ցածլիկ տառատաղը վեր է բարձրանում. պատերը հեռանում էին. նեղ ու փոքր պատուհաններից ներս ընկած արևի շողերը պարում, ծիծաղում ու երգում էին ինչ-որ սփոփիչ մեղեդի. հարթվում էր սրտի կնճիռները և ինչ-որ մրրիկ հոսում էր արյան հետ, երբ թոռը կուշտ, գոհ և ուրախ փաթաթվում էր տատի վզովն ու ջերմ համբույրներով ոսկեզօծում նրա դեմքը։

— Շնորհակալ եմ, տատիկս, կերա, կշտացա։

Երջանկությունը թևավորում էր տատ Արինային. նրա լեզվի տակից քանդվում էին այն կապերը, որոնք հացի ահով զրկանքն է հանգույցում, և նա դարձյալ ժիր ու արի իր կորովի ու գորովի մեծ պաշարով ծառանում

էր կյանքի դեմ, ու Թոռին դեպի գործարան ճանապարհելուց հետո, կըրկին պատկանում էր Թաղամասին...

12

Տատ Արինան մի բնորոշ մոլություն ուներ դեպի ֆիզիկական հավաքական ուժը։ Հասարակական մի երթ, բանվորական մի ցույց մագնիսի նման գուրս էին քաշում նրան, և նա հուզմունքից հալչում, կորչում էր հոծ բազմության սերտ շարքերում...

Բանվորները գիտեին տատի Թուլությունը և պատահած դեպքում խլում էին նրան առօրյա հոգսերից ու թեանցուկ չափում այն ուղին, որ ձգված է կամրջի պես աղջամուղջից մինչև այդ՝ տառապանքից մինչև նորոգ կյանք...

— Քո ի՞նչ գործն է, խառնվել ցուցարարներին,— կշտամբում էր թոռը տատին, որ տուն էր դարձել արորված ու բերծված արմունկով։

Տատին շփոթում էր Թոռի միամիտ հարցը. հիրավի ի՞նչ է օգակում նրան ամբոխի հետ... Ու նա մոլորված առանձնանում էր և երկյուղածությամբ թերթում իր կյանքի սև էջերը։ Հանդարտ քանվում էր նրա հուշերի մեծ կծիկը և ապրած հեղհեղուկ մի կյանքի ամբողջ ծավալը բացվում էր նրա առաջ, թեավորում էր պատճառների պատճառը, որ անպատիժ այլանդակում է մարդու հոգու գեղեցիկների գերագույնը...

Տատ Արինան անիծում էր իր բոլշևիկան թուլությունը և տատիկ զայրացած դիմում Թոռին.

— Ինչպե՞ս թե «իմ ինչ գործն է», անմիտ աղջիկ, միևնույն վիշտն ու հույսը կապում է ինձ նրանց հետ... Ես էլ, դու էլ և մեկ նման ամենքն էլ գնալու ենք նրանց հետևից, որ վերանա տառապանքի լուծը մեր ուսերից։

13

Հեղեղատն էր բանդել ձորակը, որով բարձրավանդակը իր բնակիչներով բաժանվել էր երկու Թաղամասերի։ Հնուց ինչ-որ խուլ դժգոհություն կար այդ մասերի բնակիչների միջև և բանվորներիդ մեծ ջանք էր պահանջվում պահել խաղաղության ձիթենին այն բացառիկ դեպքերում, երբ համերաշխություն էր հարկավոր ընկերվարական գաղափարի տարածմանը նպաստելու կամ որևէ գործնական բայլ անելու՝ հոդուտ բանվորության։

Վերոհիշյալ դժգոհության արդասիքն էր այն բուռն ոգևորությունը, որ դերում էր փոքրին ու մեծին, ծերին ու ջահելին, երբ առն կամ կիրակի օրերը տեղի էր ունենում մեծ համբավ ունեցող մուշտի-կռիվը կանաչագարդ ձորակում։

Զրիատես հասարակությունը տեղավորվում էր յուրաքանչյուրն իր մասի բլուրի լանջին և հոգու ամբողջ կարողությամբ ապրում վաբը՝ իր ոտքերի տակ կատարվածը...

14

Երբ նա նստեց բլուրի լանջին, կանաչ խոտի վրա ու նայեց հուզված ամբոխին, մարի խորունկ խորքերից դուրս թռան անցած գնացածի անկոչ էջերը։ Պատանին թվաց, որ նստած է օթյակում, սիրուն ու ջահել, զուգված և զարդարված...

— Հե՞յ, Սիշա, խփի՛ր, խփի՛ր, հարազատ,— կանչում էր տատն անսովոր ձայնով,— խփի՛ր, որ մեր թաղի անունը վայր չընկնի.

Ոգևորված տատը խրախուսում էր իր թաղի կարիճներին, մինչև որ նրանք հաղթողի միամիտ համեստությունով հանդարտված, գիսախիվ, փոշեթափալ վեր էին բարձրանում ձորակից ու տատի հետ վիճելով, աղմկելով հավաքվում առաջին դռան առաջ, սրտաբաց զրույցներով ճամփու դնելու հաջող օրը...

— Զարմանում եմ, որ քեզ հաճույք է պատճառում տուր ու դմփոցը, կարծես քսան տարեկան պատանի լինես,— փնթփնթում էր ոժգոհ թոռը։

— Հաճույք է պատճառում, անմիտ աղջիկ. քո խելքի բա՞նն է հասկանալ հաղթության թովչանքը... Սրբի նման անտրտունջ և անտենչանք ապրելն անհնարին է կյանքում. պետք է քանդել, շինել, հուզել, հուզվել...

15

— Զգո՛ւյշ, դավա՛կս,— ասում էր տատը թոռին, երբ նա ուշանում էր երեկոները,— զգո՛ւյշ. սիրուն դեմքով դժվար է շրջել աշխարհի երեսին, երբ ինքդ ես վաստակում քո հացի գինը...

Իսկ երբ թոռը պատմում էր իր դրսի կյանքի անմեղ, անհետևանք արարքների մասին, զարձյալ մոայլվում էր պառավը և խրճիթում բարձրանում էր փոթորիկ. կատուն թաք էր կենում մահճակալի տակ. տատը գանգատվում էր, որ մխիթարանք չունի. թոռը՝ որ ուրիշների նման մի կարմիր օր չէ տեսել...

Ու խակուն, կասես իրար հանկարծակի կորցնելու ահից սարսափած. զրկում էին միմյանց, ղղջում, ծիծաղում, լալիս և ձմռան երկար դիշերները կարճում բարեկամ զալիքի՝ զրույցներով...

16

Իսկ երբ տաքացավ ու դաշտերում էլ ձյուն չմնաց, արևի ջերմ ճառագայթները չորացրին ու տաքացրին նեղ ու հոտած փողոցները և ման-

կիկների կենսուրախ աղմուկը խառնվեց բները շտկող թռչունների կայտառ ծլվլոցին.

— Տա՜տ...,— ասաց կտրիճ Միշան ու տխուր նստեց Արինայի կողքին, թմբի վրա։

— Տա՜տ,— կրկնեց նա սառակ հուզմունքից բեկբեկ ձայնով,— սիրում եմ կլարային... ի՞նչ կասես դրան...

Տատը սարսափից կծկվեց նստած տեղում, կարծես գործարանի հսկա ծխնելույզը փուլ եկավ նրա գլխին։

— Տատ,— ողբերգեց տղան,— շատ եմ սիրում... կխնայարվեմ...— մի խոսք ասա... ամոքիր...

— Իսկ ե՞ս...,— ճչաց տատ Արինան,— իսկ ես ո՞ւմ սիրեմ, անմիտ տղա,— ու կնոջ դար խրատող, ամոքող տատը կարկամեց, խոսք չգտավ սիրտ տալու Թաղամասի ամենալավ տղին...

17

Շաբաթ երեկոները, երբ թաղամասը մաքրվում էր մի շաբաթվա աղտ ու կեղտից, երբ կանայք իրենք-իրենց կորցրած մի ամբողջ շաբաթվա թերությունները աշխատում էին գլուխ բերել մի քանի ժամում, երբ սուլիչի սուր ձայնը ինչ-որ ճնշող ուժով տարածվում էր օդում, և լծից արձակվում էին հոգնած, հյուծված բանվորների վաշտերը, երբ առատ վատնածի և չգոհացած վաստակի առթիվ մի անբարբառ պատմություն ունի աշխատավորի մարմինն ու հոգին, գործարանից օգնական հարթվում էր մի սայթաքող ուղի, որով հետ գարձողը խառնում էր իրար իր չարն ու բարին և կռում իր հոգսերի շղթան երկարացնող մի օղակ ևս...

Միշան մաքրված, լվացված, ոսկի գանգուրները կոկած նստում էր պատի տակ, տատի հյուղի գիմացը և գարմանի տխուր ելևէջներով դուրս թափում չարտասանած մոլմոքների մի հեղեղ։

18

Տատ Արինան զայրացած կուչ էր գալիս մի անկյունում ու մտքում անարգում հանդուգն տղային, որի նվագած երգերի միատոնավոր շարքը գաղանի չէին սրամիտ պատավի համար։ Նա մի քանի անհաջող փորձեր էր անում հեռանալու մի պահ, չլսելու հարմոնի ձայնը, սակայն չէր կարողանում, ուժ չուներ։ Սրտամաշ ելևէջները գերում էին նրան, օրորում, դուրգուրում, վեր թռցնում ինքնամոռացման այն թմբիրից, որտեղից սկսվում էր հուշերի և ապրածի մեծ ծովը...

Ու խեղճ տատը անդորրացած «կլանում» էր նվագը ու մոռանում ինքն իրեն։ Ահա հեռո՜ւ հեռուն մոռացության մշուշի մեջ կորած հայրենի գյուղը. լայն փողոցի ծայրում երևում է ցածլիկ ու նեղ խրճիթը եղեղնյա կտուրի ծանրության տակ կուչ եկած, չարքաշ մայրը։ Անհայ-

տացած հոր կսկիծն ամեն օր և կիսամերկ, անպաշար քույրերի ճնշող քանակը...

Խրճիթի դիմաց, բակում հոր տնկած բալի ծառերը, թիչ հեռուն հողմաղաց, իր աղած օրը մոռացած ու հողմերից բզկտած թևերով. ջրհորը, սոխակների հուզիչ դայլայլները և հարուստ հարևանի անտակնկալ ու այրող համբույրը...

Հետո մոր անտեղի ու անհիմն անեծքները, հարևանուհու ծեծը հրապարակով, պաղ բամու պես խամրեցրին նրա անմեղ երազների նուրբ թերթիկները. և գյուղի աղջիկների հետ ճամփա ընկավ սիրուն Արինան քաղաք՝ վարձվելու...

Հմուտ բեռին մի քանի օրվա ընթացքում վերապարձավ գյուղ, բեռնավորված աղջիկների ջերմագին բարևներով, ծնողներին, խրճիթներին և անասուններին ուղղված. իսկ անվստահ, անտաշ, գյուղի կեղտից ու գրկանքից կծղած աղջիկները կուլ գնացին մեծ քաղաքների լայն ու խորհրդավոր փողոցներում...

Կանոնավոր անունդն ու սապոնը դուրս քաշեցին Արինային իր գյուղական կեղեից, նա ձերմակեց ու կարմրեց Ուկրաինայի ընտիր այլուրի ու բալի նման... անթառամ ժպիտ բուսավ նրա սիրուն շրթունքների վրա, երկնագույն աչքերում ինչ-որ հուրհրում էր անմարելի ցոլքերով և հենց այդ օրից էլ նրան բաժին ընկավ պատահող տղամարդու համբույրն ու գգվանքը՝ սիրո խոսքերն ու խոստումները։ Այնքա՜ն բարի էին մարդիկ շեն ու հսկա քաղաքում...

19

Հետու մշուշի մեջ կորել են մայրն ու քույրերը։ Բախտավոր մարդիկ իրենց բախտի պես կույր են լինում. հետո խելակորույս մի պտույտ սիրո, գինու, խրախճանքի մեջ. երկրպագուների հեշտալի զրույց օրն ի բուն, զվարճալի օրերի մի խարույկ, առողջությունն ու տեսքը կորցրած, միլիոնատեր սիրեկան, ոսկի, արծաթ, աղնիվ նժույգներ և մոլությունը շվայտ կյանքի, մինչև որ միամիտ Արինան թաղում է իր <հետ> ապրած սիրեկանին, և պատվավոր օրինակների շրջանում կորցնելով իր միակ աղջիկն ու ողջ ունեցածը, նորածին թոռի հետ հեռանում է քաղաքից, բանվորական թաղամասում մի հյուղ գնում և սթարվում այնտեղ...

Մոռացման մոխիրների տակ թաղում է նա իր աղմկահույզ անցյալն ու մտերմանում իր նոր շրջապատի հետ և հոգով սիրում միշտ դրժոհ և միշտ արդար բանվորներին...

Տղան չէր նվազում, գարմոնը ծալած նա նայում էր անձկությամբ պատավի նեղ լուսամուտին և միամտորեն առիթներ որոնում... իրեն մոր պես սիրող տատի համատության հանգույցները քանդելու։

Հանկարծակի իջնող լռությունը զգաստացնում էր տատ Արինային. և նա գինովցածի նման երերալով դուրս էր գալիս և իր սրտի մաղձը թափում անմեղ տղայի գլխին։

— Ի՞նչ ես ակնապիշ նայում, անմիտ տղա, եկեղեցում մարդիկ աղոթում են, իսկ դու կպել ես պատին ու հիմար նվազովդ բարի մարդկանց ծիծաղն ես շարժում...

— Տատ, սիրելիս, մի խոսք ասա. կխնայադարվեմ... տուր ինձ Կլարային...,— մորմոքում էր շվարած տղան և լալով բռնում պառավի դողդոջ ձեռքը։

— Իսկ ե՞ս,— ճչում էր տատը,— ե՞ս ո՞ւմ սիրեմ, ո՞ւմ համար ապրեմ...

20

Երբ արևը ժպտում է, ծաղիկները ևս ծաղկում երկրի երեսին. ո՞ւմ ինչ. կյանքը գարուն է, գարունն էլ մի կյանք. ու կապրին մարդիկ կյանքի ու գարնան հետ. արև կա, որ ժպտում է լոկ մարդկանց և վարդեր են ծլում նրանց սրտի մեջ։ Ո՞ւմ ինչ, դեռ հնուց ապրում են մարդիկ կյանքում, գարնան հետ։ Խենթ պետք է լինել կարողություն ունենալու համար, պոկելու կյանքը գարնանից, գարուն՝ կյանքից, երբ հասակը ջահել է, սիրտը՝ բաց, անպարզ ու գեմքը սիրուն...

— Տատ, գործս լավ է գնում,— ասում էր թոռը տատին, երբ հավերի հետ բնող տատը իր գիշերվա աղոթքն էր մրմնջում անկյունում, սրբի առաջ։— Այսօր նոր կառավարիչը հավանեց աշխատանքս ու գովեց ինձ. իմ շինած ծխախոտից մի հատ ուզեց, ծխեց ու գոհունակ ժպտալով ասաց. «Ինչ անուշ է, կարծես հրեշտակն է շինել եգեմի վարդերից»։

Պառավի ձեռքը դողաց ճակատի վրա։ Նա կիսակատար թողեց իր խաչակնքելն ու շվարած գլուխը դրեց բարձի վրա։

— Տատ, լսո՞ւմ ես։

— Լսի՛ր, լսի՛ր, անմիտ աղջիկ, երեկոները դատարկ-դատարկ դուրս ես տալիս ու գիշերն էլ անմիտ զառանցանքով քունս խանգարում...

Աղջիկը շուտ եկավ անկողնում, երեսը դարձրեց պատին ու իր նազելի գեմքը շառագունող կարմրությունը թաքցրեց վերմակի տակ։ Սակայն թաքցնել անհնարին է այն մտորումները, որոնք օրըստօրև անխնայ կերպով մատնում էին պարզամիտ աղջկա հոգեկան փոթորկալից գրությունը։

Պատկերներ, մեկը մյուսից գրավիչ, մեկը մյուսից խոստացող ու

հմայիչ շարվում էին նրա առաջ ու երբ նա առավոտը զարթնում էր, խրբ-ճիթը երևում էր նեղ, աղքատիկ, տատը խստապահանջ, դառամյալ. իսկ իր հագուստները այնքան ծաղրելի, այնքան անհարմար...

21

— Ճորտե՞ր ենք, ի՞նչ է,— հուզված տրտնջում էին ծխախոտ շինող աղջիկները, իրար գլխի հավաքված,— նա իրավունք չունի մեզ հայհոյելու։

— Չունի՛, չունի՛,— գոռում էին միաձայն։

— Իրավունք չունի գործը չքննած դուրս շպրտել մեզ։

— Նա չավ է վարվում միայն սիրուն դեմք ունեցողի հետ։

— Եվ իր կամքը կատարողի։

— Բողոքենք, աղջիկնե՞ր։

— Գործատուլ հայտարարենք։

— Հարձակվենք վրան ու կտոր կտոր անենք...

Կարծես մի ձգված լար կար Կլարայի սրտի խորքում, որ կտրվեց... Նա քինոտ նայեց աղջիկների հուզված դեմքերին ու մտքով սլացավ գործարանի՝ իր վրա միշտ ահ ու երկյուղ ազդող գլխավոր դրասենյակը, կառավարչի նվիրական դեմքը, միշտ գոհ, կուշտ, ածիլված ու օծված։ Նա մտքով սեղմեց կրծքին, կասես իր ընկերուհիների հարվածներից պահելու համար ու գաղտագողի դուրս սողաց։

Մինչ աղջիկները դուրս էին թափում իրենց սրդար զայրույթը, Կլարան շիկնած ու զզվանք պատմում էր կառավարչին իր տեսածն ու լսածը։

— Իսկ չեչոտ Աննան, որի մորը արձակեցիք սենյակ ամսում, ասաց հարձակվենք վրան ու կտոր-կտոր անենք,— վերջացրեց Կլարան իր տեղեկությունը։

— Է՛հ, թող սպանեն,— կեղծ ու անփույթ ժպտաց կառավարիչը, սպիտակ ու գեր մատներով սկսեց ոլորել ընչացքը և միևնույն ժամանակ լայնը հայացքով կշռում էր մտքումը շփոթված աղջկա փորձառության պակասն ու մարմնի բոլոր առավելությունները...

— Գնացեք, ասացեք ձեր ընկերուհիներին, որ ես սիրով ընդունում եմ մահը նրանց քնքույշ ձեռքերից...

Ապրած մարդու հարվածն անվրեպ էր. և տատ Արինայի փայփայած ծաղիկը սեղմվեց ճայռոտ թևերի մեջ...

22

— Հանգիստ կաց, տատ,— համոզում էր Կլարան պառավին, ալտատ ձգված թավշյա բազմոցի վրա, վերջին տարաբով, սանրված և ճոխ հագնված,— տեսնո՞ւմ ես, ի՞նչս է պակաս, բոլորը նախանձում են ինձ...

— Լսի՛ր, լսի՛ր, անմիտ աղջիկ,— սաստում էր գունատ ու բոլորովին կուչ եկած տատ Արինան,— իմ ճամփով գնացիր...

Կնճիռները դողում էին նրա դեմքի վրա ու էլ ոչ մի լույս չէր ճառագայթում նրա պղտոր աչքերի մեջ։

— Տատ, հավատա, շուտով նա ինձ համար մի գեղեցիկ տուն է գնելու, հենց այնտեղ էլ ապրելու ենք պատկվելուց հետո. տեսնո՞ւմ ես։

Տատը վեր էր կենում և արտասուքը կուլ տալով... բռնում էր հյուղի ճամփան։ Մեծ քաղաքի լայն ու կոկ փողոցները ճնշում էին նրան, սիրող անց ու դարձը, ձիերի դոփյունը, էլեկտրաքարշի անդուլ աղմուկը մի հրեշի հռհռոց էր թվում նրան, որ հեռապնդում էր ու շշնջում դիվային քրքիջով.— Տատ, այ տատ, էլ սիրուն աղջիկ չունես, էլ սիրուն թոռ չունես, բեր տուր մեզ, մենք նրան դնենք կատաղ ոսկե բաժակից, մենք նրան կհագցնենք բեհեղ ու թավիշ, մենք նրա մատներին ադամանդներ կշարենք ու կպարենք նրա հետ վայելչի պարը, մինչև որ հոգնի, կաշին թուլանա ու կախվի դատարկ պարկի նման, մինչև որ լինի քեզ նման զառամյալ, թույլ, անտեր, անմխիթար։ Տատը արագացնում էր իր թույլ քայլերը և այդպես հալածվելով հասնում էր իր թաղամասը և դողդոջ ձեռքը ճոճալով դեպի քաղաք՝ շշնջում էր տատմները կրճատացնելով.

— Ո՞ւ, անիծված...

Եվ ալեկոծ ապրումների սանձն արձակելով մտնում էր բանվորների մոտ, անարգում նրանց, հաճախ անպատվում։

— Գրասաներ եք, լծկաններ. օդին ճզմել է ուղեղներդ, իսկ սրտերիդ մեջ լքումն է տեր դառել։ Քաղաքը ծծում է ձեր բրտնքի գնով ծորող ոսկին, որ հենց այդ ոսկով էլ հրապուրում է ձեր աղջիկներին՝ ցոփ գիշերների համար. անմիտ մարդիկ, ինչո՞ւ եք լռել, ո՞ւմ եք սպասում... Կանգնեցրեք բոլոր անիվները. աշխատանքը թող մեռնի երկրի երեսին և երկրի մութ խոնավ խորշերում. թող սովն ու մահը մտնեն քաղաք. ավերեն շեն փողոցներն ու պալատները, քար քարի վրա չթողնեն, իսկ դուք նորից գործի կանգնեք և կշինեք նորը... կսո՞ւմ եք, նորը, որ անիրավ կյանքը չհամարձակվի արարել կենդանի մարդուն ու խլել այն ինչ որ ամենանվիրականն է...

— Տատ, սիրելի՞, մենք այդպես էլ անելու ենք, մի քիչ համբերություն ունեցիր,— հանդարտացնում էին նրան բանվորները։

— Այդպես էլ անելո՞ւ եք,— ծաղրում էր տատը։— Անմիտ մարդիկ, չե՞ք տեսնում, որ օրըստօրի ինչ-որ փլչում է կրծքիս տակ, երբ գիշերը քուն եմ մտնում, վեր կենալու հույսը մարած է հոգուս մեջ։ Էհ, մխիթարել չգիտեք, ու կմեռնեմ այսպես, մեծ քաղաքի լպիրշ քրքիջը ականջիս...

23

— Ինչո՞ւ դու ինձ այս օրին հասցրիր,— տրտնջում էր Կլարան և արտասուքի հորդ կաթիլներով Թրջում սիրուն դեմքը։— Հետ դառնալ տատիս մոտ չեմ կարող. բանվորները կծաղրեն ինձ, կուրախանան, որ իրենց խոսքը կատարվեց, իսկ ապրել այսպես դժվար է։ Ինչո՞ւ ես պահում ինձ մարդկանցից։

— Քիչ էլ համբերիր, ամեն բան լավ կլինի, կամուսնանանք,— ժպտում էր գործարանի կառավարիչը, մտքումը հայհոյելով և՛ Կլարային և՛ այն բոլորը, որոնք այսպես թե այնպես կապված էին իր այս անդամվա անհաջող արկածի հետ։

Սակայն Կլարան չէր հավատում իր սիրեկանին, խանդում էր իր խեղճ տատին և մենակ մնալով տառապում լռելյայն, խանդի այրող կսկիծներից։

24

Սրտամաշ սպառնալիքներով անցավ տարին։ Կլարան ընկճվել, արտրվել էր, որպես ոտնակոխ արված մի ծաղիկ. սերը մի պատուհաս էր դառել իր գլխին. ու ցնորվածի նման ուզում էր լափել, խմել մինչև վերջին կաթիլը ամեն մի անարգանք, վիրավորանք, նույնիսկ ատրուքյուն՝ միայն թե սիրվեր, միայն թե նա լիներ իր մոտը, լսեր նրա ձայնը, զլուխը դներ նրա կրծքին...

Մի օր, լքված անբուն ու մենակ դիշերներից, խանդից մաշված. կարոտից շվար մտավ գործարան, կառավարչի երկար բացակայության պատճառն իմանալու։ Կնոջվա սուլիչը սուլել էր արդեն. բանվոր-բանվորուհիները դուրս էին թափվում գործարանից. նրան շրջապատեց իր վաղեմի ընկերուհիների մի հետաքրքիր խմբակ։

— Նա քեզ լա՞վ վարձատրեց,— հարցրեց աղջիկներից մեկը,— երևի արդեն ապահովված կին ես, ձեռքդ խնդրողներ շատ կլինեն, տես, շատ էլ մի հպարտանա ու մեզ էլ հարստանիքդ հրավիրե։

— Ես ձեզ չեմ հասկանում,— երկյուղով դիմեց աղջկան Կլարան։

— Ինչպե՞ս թե չես հասկանում. բոլորն էլ ասում են, որ կառավարիչը քեզ լավ վարձատրել է և ապա բաժանվել։ Երեկ նրա հարսանիքն է եղել հարևան քաղաքում, իսկ այսօր մեկնել են արտասահման։ Տեսնո՞ւմ ես, քեզ նման սիրունի թողեց ու ամուսնացավ գործարանատիրոջ պառավ ու տգեղ աղջկա հետ... Մեկ նմաններին խրատ չի լինում...

25

Տեսեք, ինչպես նա սիրուն է. սպիտակ կաշին կարծես թավիշ լինի, երկար արտեանունքները ոսկի փետուրի պես ընկել են վարդագույն թշերի վրա, բերանը կիսախուփ է, երևի տատին է քաշել. այսպես ջահել

ու սիրուն կմեռնե՞ն. ո՛չ, ո՛չ. մեռելները չոր ու ձգված են լինում, իսկ Կլարան պառկել է, երևում է բարակ հագուստի ծալքերի տակից սիրուն կուրծքը, կլոր ուսերն ու ազդրները...

Տատը խելակորույս համբուրում է, նրան կանչում, համոզում, տրտնջում...

— Դե՛հ, վեր կաց, անմիտ աղջիկ, խաղ մի անի, մի վախցնի ինձ, թե շուտ եմ եկել, վեր կաց, գիշերը չեմ քնել, երազները քրքրեցին սրտիս մնացած կտորն էլ... տատցի գնամ զավակիս տեսնեմ, մխիթարվեմ։ Լսո՞ւմ ես, Կլարա։ Դե՛հ, վեր կաց... Ճանապարհին Միշային պատահեցի, շատ բարև արավ... ե՛լ, զավակս, սիրուս այնպես տրոփում է... Կլարա՜...

Կլարան լուռ էր։ Նրա փոխարեն մահը պատասխան պատասխանեց իր մութ արարքի մասին... Ու պառավը սոսկումով նկատեց թոռան գանգի արյունահոս վերքը, կարմիր արյունը, որ ներկել էր նրա սպիտակ ուսն ու բարձը։

26

Տատը նայում էր գերեզմանափորի մաղոտ գեմքին և զարմանում, որ նա այդպես անտարբեր փորում էր փոսը. այդպես միայն մարդը են փորում գարնանամուտին։

— Կյանքը կատակ է,— փնթփնթում էր տատը,— ո՞վ կհանդգնի փոխելու սիրուն Կլարային այս մութ փոսի և սև հողի դույնի հետ...

Պետք է հարգով ունենալ և մինչև վերջը լուռ ու անտրտունջ դիտել կատարվածը, մինչև որ կատարվի հրաշքը և տատ ու թոռ մաղոտ գերեզմանափորին ծաղրելով տուն գնան ու ապրեն տաջվա պես հաշտ ու համերաշխ... Իսկ բանվորները ինչպես լուռ են, բանվորուհիները փսփսում են ու ցավակցում տատին, անմիտ կանայք, միայն լալ ու ցավակցել գիտեն...

Երբ բանվորները խոժոռ ու քինտոտ հեռացան գերեզմանոցից, տատը նստեց հողաթմբի վրա, զառամյալ գլուխը կախեց կրծքին ու էլ չշարժվեց...

— Տա՛տ,— բռնեց նրա պաղ ձեռքը Միշան ու անմխիթար հեծկլտաց,— տատ, շատ էի սիրում... մի խոսք ասա, կիսեցադարվեմ...

1913 թ. Նախիջևան

18. ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես ծնվել եմ 1876 թ. օգոստոսի 18-ին, Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ քաղաքում, արհեստավորի ընտանիքում։

Դրագիտություն ինձ սովորեցրել են կույսերը, որոնց ազգեցությանն

եմ ես վերադրում իմ այն ժամանակվա կրոնասիրությունը։ Տարրական կրթություն ստացել եմ տեղական հայկական դպրոցներում և ռուսական գիմնազիայում...

1893 թ. ես ընդունվում եմ հայկական սոց<իալ> դեմոկրատական Հնչակյան կուսակցության[1] անդամ։

Աշնանը կառավարկերպում եմ հեղափոխական խմբակ (եթե չեմ սխալվում՝ առաջինը) 18 հայուհիներից բաղկացած, իսկ <18>94 թ. գարնանը պատրաստվում եմ փոխել Հայաստան[2] և աշակցել նրա ազատագրմանը թուրքական լծից։

Ես անսահմանորեն սիրում եմ աշխատանքը և նրա անմիջական արտահայտման մոմենտները։ Ամառվա արձակուրդների ընթացքում ես աշխատում էի տնայնագործ ջուլհակի հետ, պրիմիտիվ հաստոցի վրա, ուրբերս կախած սառը փոսի մեջ։ Աշխատում էի բրուտի կնոջ մոտ՝ կավից ծնկելով կճուճներ, թոնիրներ, գնում էի «դեպի ժողովուրդը» անվարժ ձեռքերով, սատանձնելով դաշտային ծանր աշխատանքներ։

Պատահում էր հայրս խնայողության համար իր «գործարանը» փոխադրում էր տուն, ես աշխատում էի նրա մոտ դարձավարձով, պահանջելով իմ աշխատավարձը մինչև վերջին կոպեկը։ Այդ բանը նահապետական ավանդություններով դաստիարակված մայրս համարում էր «անհարկի վերաբերմունք դեպի ծնողը և վերադրում վատ գրքերի ազդեցությանը»։

Դեռ այն ժամանակ ինձ ապշեցնում էր մարդկանց անհավասարությունը։

Մաշիկ կարող հայրս աշխատելով վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, վաստակում էր շաբաթը մի քանի ռուբլի, նրա ենթավարպետը՝ մեկ ռուբլի քսան կոպեկ, տղան՝ հինգ կոպեկ, իսկ վաշխառուն՝ բոլորից շատ և այն էլ առանց աշխատելու։ Նա ինձ մխիթարում էր, որ բոլորի համար հավասարություն հանգերձյալ կյանքն է, երկինքը։

1896 թ. տեղական փոխանորդի օգնությամբ պատրաստվում եմ գնալ Թիֆլիս. Մոսկվա սովորելու։ Ուղևորությունը չի հաջողվում. փոխանորդին վտարում են «ոչ այնքան հնազավոր վայրեր» հեղափոխական արարքների համար։

1899 թ. օգոստոսի 15-ին լույս տեսավ իմ առաջին բանաստեղծությունը. ես ռուսահայերի մեջ առաջին բանաստեղծուհին եմ։ Լիրիկական երգերում գովերգում եմ իմ բազմաչարչար ժողովրդի վիշտը, իմ հայրենիքի ձյունածածկ լեռները և հորդառատ գետերը...

1903 թ. ես տեղափոխվում եմ Ռուսաստան։ Դա մասսայական գործադուլների ժամանակաշրջանն էր հարավում։ Հիշում եմ, գարնանային խաղաղ երեկո էր. ես երևանների հետ, կարկանդակի կապոցը ձեռքիս դուրս եկա խանութից։ Մրից սևացած մարդկանց բազմությունը, կա-

պույտ, յուղոտված բլուզներով, հզոր երդերով և կարմիր դրոշակներով մեծ փայտերի վրա, կուռ շարքերով գալիս էր կայարանից։

— Ովքե՞ր են դրանք,— հարցնում եմ գոգոլյան տիպի ծեր ինտելիգենտից։

— Ռուս պրոլետարիատը... Տեսնո՞ւմ եք, ցույց է։ Երեկ Բոուցիկ են բաց թողել, իսկ այսօր իրենց են ցույց տալիս։

— Իսկ ի՞նչ են ասում նրանք Բոուցիկներում,— հետաքրքրվում եմ ես։

— Պահանջում են 8 ժամյա աշխատանքային օր և որպեսզի զործարանատերը իրենց հետ խոսի «Դուք»-ով,— բմծիծաղ է տալիս նա։

Մայիսի 1-ին բանվորների կուռ շարքերը ինչպես տարերք, ինչպես ալիք, ինչպես կատաղի հոսանք սիրաբար առան ինձ ու տարան...

Ուշ երեկոյան վերադարձա տուն հոգնած, փոշոտված, վերածնված, և ես նկատեցի, որ իմ սրտի, հոգու լավագույն մասը մնաց նրանց հետ անվերադարձ, հավիտյան...

Այն ժամանակից բանվորների ելույթները, միտինգները, ցույցերը, մանիֆեստացիաները, ժողովները ինձ վրա ունենում են մոգական ազդեցություն, և ես գնում եմ նրանց ետևից, նրանց կողքով, առերևույթ նրանց օտար, սակայն բոլորից մոտ...

1905 թվականը իմ վերածնման տարին էր։ Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատը բաց արին իմ առաջ պրոլետարական իմաստության բոլոր թաքստոցները և իմ հայրենիքի երդերը օրեցօր նսեմանում էին։

1907 թ. Ն. Նախիջևանում հրատարակվող «Նոր կյանք»[3] հանդեսի դեկտեմբերյան № 27-ում լույս տեսավ «Հանդգրեք ջահերը» իմ հայանի պրոլետարական բանաստեղծությունը, այնուհետև «Արշալույսի զոհանջները»՝ իմ առաջին ժողովածուն։

Ես բանաստեղծներից ամենուսերջանիկն եմ։ Իմ երգերը համարձակորեն գնում են խրճիթները, ֆաբրիկաներն ու գործարանները։ Պրոլետարիատի դիտակից մասի հետ ես կապված եմ պայքարով, գալիք լավագույն օրերի հույսով...

1917 թ. հեղափոխությունը ես դիմավորեցի Ուկրաինայում։ Դարձյալ ես նրանց հետ եմ, առերևույթ նրանց օտար, բայց բոլորից մոտ...

Իմ երգերը չեն գնում ռուսական և ուկրաինական խրճիթները ու գործարանները, որովհետև ես գրում եմ նրանց անհասկանալի լեզվով և չունեմ ունկնդիրներ...

Կեցցե՛ ռուս և ուկրաինական պրոլետարիատը։

Կեցցե՛ ամբողջ աշխարհի պրոլետարիատը։

Կեցցե՛ պրոլետարիատի դիկտատուրան։

1920 թ. Խարկով

19. Ալ. ՌՈՒԲԵՆԻՆ

Ռուսական առաջին հեղափոխության շրջանում, հայ մարքսիստների փոքրիկ ընտանիքի երևան գալը, իր փայլուն գործունեությամբ, հայ իրականություն կոչված մղձավանջի մեջ, մի փոթորկալի և հույժ ուշագրավ երևույթ էր, որ իր անուրանալի հաղթանակի փառքով էջեր է դրավելու մեր նորագույն պատմության մեջ։

Նա էր, որ կարող ուժով և բացարձակ ըմբռնությամբ մարկեց կյանքի, գրականության հնամյա թմբիրը, պատռեց դավաճանների դիմակը և սանձահարեց տնաբույս դեմագոգների լկտի հոխորտանքները, որոնք մինչև այդ այնպես տիրաբար ու միահեծ խաղում էին «ամբոխային տրամաբանության» հետ՝ պայծառի ասպարեզներն ապահովելով արատավոր ինքնակոչների ու բախտախնդիրների համար միայն...

Ո՞վ կհանդգնի ուրանալ, որ մարքսիստների հրատարակած «Կյանքը», «Ձայնը» իրենց օգտաշատ հրատարակություններով, Բաքվի պարբերականները, նոր դպրոց, հանդրվան ստեղծեցին մի շարք, անդեկ ու անթի դեգերող ինտելիգենտների համար, որոնք հոգու բուռն թափով ատելով հանդերձ անանուն կուսակցության ստորաքարշ քաղաքականությունը, տիրող բռնակալ հասարակարգի ճնշման տակ, զուրկ սկզբունքային հենարանից, անջատ ու ցրիվ կարոտ էին փրկարար ելք խոստացող ձայնի։

Այդ ելքի ուղին հարթողների շարքում պատվավոր տեղ ունի բռնած հանգուցյալ ընկ. Ալ. Ռուբենին։

Ալ. Ռուբենու—Ծատուրի հետ, ինչպես անվանում էին նրան ընկերները, ես ծանոթացա Ն. Նախիջևանում, 1909 թ-ի աշնանը, ընկ. Ալ. Մյասնիկյանի միջոցով։

Պատկած էի, երբ լսեցի Մյասնիկյանի ձայնը.

— Ալեքսանդր Ծատուրյանը ուզում է տեսնել ձեզ,— հայտնեց նա շեմքից և իմ դեմքին ինչ-որ նշմարելով, ավելացրեց իսկույն,— իհարկե, բանաստեղծը չէ. հաբարակ մահկանացու—он же Ռուբենին։

— Գրո՞ւմ եր,— հարցրեց Ռուբենին, նստելով ինձ մոտ։

— Գրում եմ,— պատասխանեցի ես զարմացած։

Սովորական ողջույնի, համակրանքի շաբլոնը, որ ծանոթության առաջին պահին վատնվում է բանաստեղծի ներկայությանը, որպես պարտադիր տուրք դեղարվեստը սիրողների կողմից՝ չկար...

— Գրեցե՛ք, աշխատեցեք կատարելագործել ձեր տաղանդը, որպեսզի գեղեցիկ կտորների կողքին լույս չընկնեն թերություններ։

Ես սաստիկ հետաքրքրված թեքվեցի դեպի նա։ Ռուբենին նկատեց այդ, տարօրինակ ժպտաց։ Թվաց ինձ, որ լուռ խաղալով քթի հետ, մը-

տածեց, դուցե առաջին անգամ, մեղմ լինել մեկի հետ, որ և՛ բանաստեղծ է, և՛ կին, և՛ հիվանդ...

Ու նրա մեկը մեկին հաջորդող հարցերը, «ընկերական խորհուրդները», որոնք ես անփորձորեն գնահատեցի ուշ, ինձ համոզեցին, որ Ռուբենին, իր համառ մտքի ծանր մուրճի տակ, հանդուրժել կարող է միմիայն կայծեր արձակող շիկացած երկաթը...

— Մի լավ թափ տուր դրան այն սիրահռչակ նամակի* ուրիվ,— միջամտեց Մյասնիկյանը։

Ռուբենին նորից խաղաց քթի հետ, այս անգամ իսկապես ժպտաց ու խորաղնին, ծանր հայացքը հառելով դեմքիս, ասաց.

— Անցյալը թողնենք, սխալը միշտ կարելի է ուղղել։

Մի տեսակ զայրույթ պաշարեց ինձ. սկսե՞լ Ադամ-Եվայից և հիրավի «թափ տալ» այս թեորետիկ, պրոզայիկ մարքսիստի առաջ մի շարք, իրեն անծանոթ հին նորություններ, որպես ընորոշ արդյունքներ միջավայրի, կրթության սիստեմի ու տրադիցիայի, սակայն Ռուբենին նոր նկատեց, որ հիվանդ պառկած եմ ու հարցրեց իմ առողջության մասին...

Պարտեզում պատրաստ էր սառը գարեջուրը։ Ռուբենին աջակցեց իմ թախանձանքին՝ ընկերանալ իրանց։ Այնուհետև սկսվեց անվերջ դրույց. մարքսիզմ, մատերիալիզմ, մոնիզմ, դուալիզմ, Կանտ, Հեգել, Լենին, Տրոցկի, «Литературный распад», արժեքների վերագնահատում, մի փոքրիկ ժողովածուի նյութ, Ռուբենու գլխավոր աշխատակցությամբ...

Ակներև էր, որ Ալ. Մյասնիկյանը սիրում էր, օ՜, շա՜տ էր սիրում Ռուբենուն, և սրտանց ցանկանում, որ ես էլ իմ հերթին ձեռնպահ չմնամ։ Բայց առաջին տպավորությունը միշտ զորեղ է լինում, երևի հետո ուժ չթողնելու համար...

— Ուրեմն, այսպես,— ասաց նա գնալիս, զարմանալի ճշտորեն շարունակելով իր մի քանի ժամով ընդհատված խրատների շարունակությունը.— ամուր կանգնեցեք ձեր ընտրած հողի վրա, որ սայթաքում չպատահի, նամանավանդ երբ հոգացավ էլ ունեք։ Ապագայում ես կանգ կառնեմ ձեր տաղանդի վրա։ Հարկավոր է նոր էջեր բանալ մեր քննադատական ասպարեզում ևս. իսկ նախքան այդ հետևեցեք այն կյանքին, որին երգելու հավակնություններ եք ցույց տալիս...

Մի երկու օրից հետո նա եկավ հրաժեշտ տալու. գնում էր Մոսկվա։ Տվեց ինձ իր հավանած գրքերի ցանկը, որ անպայման կարդամ, զգուշացրեց երևան չգալ «միմոսների թերթերում» և խնդրեց, որ թղթի կտորի վրա մատնանշեմ իմ ժողովածուից այն բանաստեղծությունները, որոնք ես «սիրում եմ ու գոհ եմ»։

Որքա՜ն մեծ եղավ իմ զարմանքը, ավելին՝ վիրավորանքը, երբ նրա

---

* Մի ոտանավոր «Նոր կյանքում» տպված։

մեկնելուց հետո այդ թղթի կտորը ես տեսա սեղանիս վրա, մոռացել էր.

Հետևյալ օրն ուրախ ներս մտավ Մյասնիկյանը.

— Ինչպե՞ս է, հավանեցի՞ք Ռուբենուն։

— Ո՛չ։

— Ի՞նչ... Մի՞թե նա ձեզ վրա վատ տպավորություն թողեց։

— Եվ ինչպե՞ս։

— Փաստեր, փաստեր։

Սկսվեց վեճ։ Իմ բերած փաստերն, իհարկե, քննադատության ենթարկող արտաքին երևույթներ էին. մոայլ Ռուբենին ինձ վրա թողել էր բառի լայն իմաստով ինտելիգենտ, բազմակողմանի պատրաստված ու բացարձակ խելոք մարդու տպավորություն, իր տիպար խառնվածքով, սակայն ինձ զբաղեցնում էր այն չտեսնված սերն ու համակրանքը, որ Մյասնիկյանը տածում էր դեպի նա և մի բոպե անգամ չէր կարողանում հանդուրժել, որ մեկը կարող է չհիանալ Ռուբենիով։

— Ձեր ասածները կնոջ հատուկ տրամաբանություն է, դուք կհավանեիք Ռուբենուն, եթե նա ներս մտնելուն պես ձեր ձեռքը համբուրեր, դողեր, որ չտեսնված հանճար եք, որ ձեր գրվածքներով զառանցում է գիշերները և այդ մոռացված թղթի կտորի փոխարեն մի բան խնդրեր ձեռանից, որպես հիշելիք»...

Իմ մի գրվածքում՝ Մերունի ձկնորսով, ես պատկերացրել եմ Ռուբենուն իր կուռ կամքով, թունալի սարկազմով ու մռայլությամբ։ Մտադիր էի ուղարկել իրեն Մոսկվա՝ կարդալու և կարծիքն իմանալու, որի առթիվ նա հայտնել էր, որ կկարդա ուրախությամբ։ Ես կասկածեցի այդ ուրախության տեսողականության վրա. կա՞մ կը մոռանար կարդալու, կա՞մ տետրը կը կորցներ, կա՞մ ինձ համար, որպես հեղինակի, ոչ հաճելի անակնկալ...

Մտածողին դժվար է կերակրել արվեստով...

Ճակատագրական մի զուգադիպություն. վերոհիշյալ ձկնորսը կուլ է գնում մրրկահույզ ծովի ալիքներին, Ալ. Ռուբենին՝ կյանքի...

Ալեքսանդր Ռուբենին չկա այլևս, իսկ իր ամբողջ վեհությամբ կանգուն է նրա սիրած գործը։

Ռուբենու հավերժության կոթողն է դա...

1922 թ. 14 փետրվարի

Երևան

20. ԱՍՈՒՅԹՆԵՐ

Ամեն օր ապրել եմ ամեն օրվա հետ ու անցել իմ ճամփով. իսկ կյանքից էտ չմնալու պատճառով շտապել եմ հույժ, ու որքա՜ն ծաղիկներ կորցրել ճանապարհին. որքա՜ն նախշուն ծաղիկներ...

Սիրում եմ ես ինձ ու հիանում ինձանով ու օրհնում իմ անունը... իսկ երբ կինը սիրում է ինքն իրեն՝ մենակ է հավիտյան։

Ասում են կյանքը կատակ է. ո՜չ, կյանքը ծաղկոց է, ուր մենք փոխանակ վարդ քաղելու, միմոսություններ ենք անում, որ փշերին չդիպչենք։

Սուտ է, որ լսելիքը միայն ականջն է. երգը ես լսում եմ ամբողջ մարմնով. երգից հուզվում են իմ բոլոր զգայարանները։

Քրիստոնեությունը սկսել է ճեղքվածքներ երևան հանել իր հսկայական կառուցվածքի ամուր պատերում։ Այդ նրա համար է, որ նա կյանքի հետ մի ճամփա չէր կարող բռնել, կյանքին նման լինել։

Քննադատը նման է պարողի, որի համար ո՜չ նայող կա, ո՜չ էլ նվագածություն։ Վա՜յ կրիտիկոսին, որ երկաթ պարել ու շատ կոտրատվել է սիրում։

Ազգը ատել անհնարին է ու դատապարտելի՝ նրան կուրորեն սիրելը։

Սեփականությունը փակում է մեր հոգու աչքերը ու բթացնում զգայարանները։

Ով հարգում է ժամանակը, նա չի ապրում անպտուղ։

Ես տեսա՝ հավատը փախչում էր եկեղեցուց։ Աղջիկս կտեսնի նրան քաղաքից դուրս, թոռս՝ չի տեսնի նրան։

Ասում են կնոջ ուղեղի քաշը պակաս է տղամարդու ուղեղի քաշից։ Ես միշտ այդ իմ պակասը լրացնում եմ իմ սրտից։

Որքա՞ն ափսոսում եմ, որ պիտի մեռնեմ մի օր ու նախանձում եմ ինձանից հետո ապրողներին, որոնց բաժին է ընկնելու նոր կյանքը, նոր բաղձանքները։

Պետք է լայն սիրտ ունենալ նեղ չապրելու համար։

Կինը կատարյալ՝ կուշանա, վասնզի տղամարդու հակումները դեպի նա դեռ չեն բյուրեղացած։

Կրոնը հին գինի է, որ սրբեցնում է մարդուն, պղտորում գիտակցությունը և կռվել տալիս հարևանների հետ։

Կրոնը բռնակալների համար ամպհովանի է, որի ձգած ստվերի տակ հանդչում են նոքա ոճիրներից հետո անդորր ժամանցի համար։

Երբ նայում եմ քահանային, ինձ թվում է, թե նա ծեփված է խնամքով և կյանքի ձայնը չի հասնում նրա զգայարաններին։

Ես բախտ ունեցա տեսնել ալաստասենչ հույզերի մրրիկները։ Դժվար է նրանց խափանելը, վասնզի բռնությունն է ջրում նրա արմատները։

Ալաստություն սիրողին բանտը դուռ չունի, շղթան՝ ծանրություն։

Գրողի վարած կյանքն ու երկերը չպիտի շփոթել, վասնզի առաջինը իրենն է, երկրորդը՝ մերը։

Մասսան հեղաշրջելու համար չպետք է մոռանալ նրա հոգեբանությունը։

Սոցիալիստական հեղափոխության ժամանակ ղոհերի կորուստը չեն ողբում. ինքը կռիվն է, որ ղոհերի ու արյան ուղիով ապահովում է դալիքի փրկությունը։

Ջարդացող արդյունաբերությունը ինքն է սնում իր գերեզմանափորներին։

Պոետներից բախտավորն եմ ես, որ դեռ մթի միջից դուշակում էի լույս բերողների անհերքելի հաղթանակը։

Պոետներից բախտավորն եմ ես, որ ներբողում էի՝ ստրուկների թագավորությունը։

Հարկավոր է հաշտվել, որ մեծ գործը մեծ սխալներ կունենա։

Ներել՝ հեղափոխության թշնամուն, նշանակում է ընկերանալ նրան։

Կոմունիզմի հաղթանակը նրանումն է, որ անխուսափելիորեն կոմունիզմագրվում են մասսաներն ամենուրեք։

Ներկա մամուլն ես հարգում եմ այն պատճառով, որ նա իր ցեխոտ տապանով փակել է հնի նեխված բերանը։

Արդի պոետներն աբբած են հեղափոխությունով, ուստի նրանց ներելով հանդերձ պետք է սպասել գգաստության ժամին։

Մայրենի լեզուն չիմացողը նման է անտառը մտած մարդուն, որ աղատ կարողանում է շվացնելով նմանվել գանազան թռչունների։

1913 թ.

ՊԻԵՍՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Անտոն.—*Բանվոր*
Մարթա.—*Անտոնի սիրած աղջիկը*
Աննա.—*Մարթայի մայրը*
Մակար.—*Աննայի փոքր որդին*
Պաշա.—*Մարթայի ընկերուհին*
Բանվորներ
Մերուկ
Մեքենապետ
Լիզա.—*Դերձակուհի*
Աղջիկներ.—*Դերձակուհիներ*
Մեծահարուստ աղջիկ
Մեծահարուստ աղջկա հայրը
Լակեյ.
Քաղաքապան
Հյուրեր

Ա. ԱՐԱՐ

1904 թ. ամառը, կիրակի առավոտ, Ռուսական քաղաք: Բանվորական թաղամաս: Նեղ փողոցով վազվզում են երեխաներ: Ցածրիկ ու փոքր տների առաջ, պատերի տակ նստած վիճում, խոսում են ծեր ու ջահել բանվոր-բանվորուհիներ: Աննան և Անտոնը նստած են իրենց պատի տակ:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ա Ն Ն Ա.—Ե՞ս եղա նրա անկման պատճառը, հա՞յրը, չբավորությո՞ւնը՝ չգիտեմ... (Մտածում է) Նա մի խելոք, գթասիրտ աղջիկ էր... Ինձ համար նա եղել է մայր, քույր. ես միշտ թույլ ու հիվանդ, կարոտ եմ եղել նրա օգնությանը, նրա պաշտպանությանը: Սակայն, չնայելով այս ամենին, նա տանջանքս ավելացրեց, կսկիծս անբուժելի դարձրեց... (Սրբում է աչքերը) Թաղամասում նրա պես գեղեցիկը, նրա նման խելացին չկա, հավատացեք, Անտոն. բայց ինչ օգուտ... դուք կարծում եք մյուս աղջիկները անարա՞տ են, վարքուբարքով մաքո՞ւր... չէ՞, հոգիս, ես ամենքին էլ լավ գիտեմ, բայց նրանք խորամանկ են, զգույշ, իրենց պահել գիտեն, սպրում են փեսա ճարելու հույսով ու մտորումներով, իսկ Մարթան...

Ա Ն Տ Ո Ն.—Ո՞ղ այդ տխուր մտածմունքը, Աննա: Ինչ որ էլ պատահած լինի, Մարթային չի արատավորի: Ով աչք ունի տեսնելու՝ կըտեսնի: Նա մի խելքը գլխին տղամարդու համար երջանկության աղբյուր կլինի: Ո՞ւմ ինչ նրա անցյալը: Մեկալ անցյալը հարկավոր է մոռացության տալ, որ չպառակտվեն ներկան անսխալ պահող ուժերը...

Ա Ն Ն Ա.—Այդ միայն դուք եք այդպես ասում, միմիայն դո՛ւք: Անցյալ գիշեր նա ինձ ասում էր.— «Մայր, Անտոնի այդ աստիճան աղնիվ վերաբերմունքը դեպի ինձ՝ ամաչեցնում, կատաղեցնում է ինձ, ճնշում է հոգիս: Ուզում եմ գլխին մի խաղ սարքել, որ հիասթափվի, տեսնի ինձ իմ իսկական գույնով...» Տեսնո՞ւմ եք: Դա լուրջ աղջիկը կասի՞: Ես ձեզանից ինչպե՞ս գոհ եմ, վճարում եք կանոնավոր, օգնում, պաշտպանում եք, իսկ նա ինչե՞ր է մտածում: Ուրիշ աղջիկ լիներ... էհ, ո՞ր մեկն ասեմ:

Ա Ն Տ Ո Ն.—(Ժպտերես) *Միամիտ կաց, Աննա, նա ինձ ոչ մի անախորժություն չի պատճառի, դառնությունից է այդպես ասում։ Նկատել եմ, որ նա տանջվում է, ինչ-որ կատարվում է նրանում... ժամանակով այս ամենը կանհետանա ու կհանդարտվի նա... բնավորությունն էլ կմեղմանա։*

Ա Ն Ն Ա.—*Չկարծեմ. նա միշտ դատում է առանց մտածելու։ Նա չի բաշվում մեկին վիրավորելուց։ Ամենքին կշտամբում է, ծաղրում, քննադատում։ Նրա պատճառով ազգականներս երես են դարձրել ինձանից։ Ոչ որ չունենք մեզ մտերիմ կամ ցավակից, հարևաններս ծաղրում են, ես վախենում եմ, որ վերջը նա բոլորովին թշվառանա* (Արբում է աչքերը)։ *Իսկ ես էլ ուժ չունեմ. մանկուց տանջված ու ծեծված եմ։ Մի հարված էլ՝ կընկնիմ, հավատացեք...* (Լալիս է բաքուն) *Այսօր ամբողջ դիշերը սպասել եմ նրան։ Դժվար է... խիստ դժվար։ Ինչո՞ւ լլկում, անարգում են իմ դավակին, ինչո՞ւ խլում են նրա մտքմինը... մեկը չի սիրում նրան, մեկը չի մտածում նրա բախտավորության մասին։*

Անտոնը գլուխը նենած ձախ ձեռին, ծխում է սաստիկ։

Մ Ա Կ Ա Ր.—(Սրտաբորի վազում է կողքի փողոցից) *Մայրի՜կ, Միշայի փեսան կառքով եկավ, հարսնացուին տանելու է շրջելու։ Միշան ասում է, որ քույրն այլևս դուրս գալու չէ, չորս հատ ոսկի մատանի ունի։ Փեսան Միշային 20 կ. է տվել։ Մայրիկ, մենք փեսա ունենալու չենք։ Ինչո՞ւ Մարթան չի ամուսնանում, նա բոլոր աղջիկներից գեղեցիկն է։*

Ա Ն Ն Ա.—(Համբուրում է) *Նա էլ կամուսնանա, որդիս, քիչ համբերիր...*

Մ Ա Կ Ա Ր.—(Դժգոհ) *Համբերի՜ր, համբերի՜ր, ամեն բանի համար համբերիր, էլ ուրիշ բան չգիտե՞ս ասելու.* (Նենգորեն)։ *Ես քիչ առաջ պարծեցա տղաների մոտ, որ Մարթան էլ շուտով նշանվելու է։*

Ա Ն Ն Ա .—*Սուտ մի խոսիր, Մակա՜ր, լավ չէ։*

Մ Ա Կ Ա Ր.—*Ուրիշ ժամանակ լավ չէր, այսօր խիստ լավ եղավ, բոլորն էլ զարմացան, լսո՞ւմ ես։—Իհարկե, ասաց Միշան,— Մարթան գեղեցիկ է և գեղեցիկ տղամարդու էլ պիտի գնա։*

Ա Ն Տ Ո Ն.—(Սթափվելով) *Այդ ո՞ր գեղեցիկին տվիր քրոջդ։*

Մ Ա Կ Ա Ր.—(Վախկոտ) *Եթե ասեմ, չե՞ք բարկանա։*

Ա Ն Տ Ո Ն.—*Իհարկե ո՜չ։*

Մ Ա Կ Ա Ր.—*Ասացի, որ դուք էլ Մարթային եք առնելու, բոլորն էլ հավանեցին ասածիս, չծաղրեցին, ուրեմն սուտ չէր։*

Ա Ն Տ Ո Ն.—(Սիծաղում է) *Դեհ, որ այդպես է, ահա քեզ, դնա քեֆ արա* (Ուշի չդարձնելով մոր նշաններին, Մակարն անհայտանում է փողոցում)։

Ա Ն Ն Ա.—*Դուք երես եք տալիս նրան։*

Ա Ն Տ Ո Ն.—Ես սիրում եմ նրան։

Ա Ն Ն Ա.—Շնորհակալ եմ։ Առավոտ էլ ձեր սիրտը ուրախացնի, վատ օր չտեսնեք կյանքի մեջ...

Ա Ն Տ Ո Ն.—(Մատանին) *Ո՞ղ, Աննա, լսիր ինչ եմ ասում։ Եկ հանգիստ թողնենք Մարիային... չճնշենք* (Հուզվում է) *խնամենք սիրով, մխիթարենք, թող ապրի իր ուզածի ու դատածի պես... կյանքը պատահարների խաղալիք է, ո՞վ գիտե...* (Լռում է իսկույն)։

Ա Ն Ն Ա.—Թող ապրի, իմ միակ ցանկությունն է նրան հանգիստ ու բախտավոր տեսնել։ Իսկ նա այդ չի հասկանում, ծաղրում է։ Ես ավելի շատ նրանից եմ վախենում, քան նա ինձանից... չէ՞ որ մայր եմ ու կան բաներ, որ ինձ դժվար է տանելը...

Ա Ն Տ Ո Ն.—Սխալվում ես. նա քեզ էլ, ինձ էլ լավ է հասկանում։ Միայն թե հպարտ է ու համառ։ Կտուժե, միայն թե չխոստովանի։ (Ինքնիրեն) *Սատանի համառ, ինքն իրա մեջ լճացած...* (Խոսակցության ձևը փոխելով)։ *Այսօր տուն գալու չէ՞։*

Ա Ն Ն Ա.—Չգիտեմ։ Նա ինձ առհասարակ ոչինչ չի ասում։ Նրան սխալմամբ մի բան հարցնեմ, սպասնում է, որ կթողնի և կանհետանա։ Գոնե մեկի հետ կապվեր ու ապրեր, (Անտոնը ցնցվում է) *թե չէ ի՞նչ շահ նրա դեղեցկությունից։ Ես քանիսին դիտեմ, որ այդ միջոցով ապահովել են և՛ իրենց, և՛ ծնողներին...*

Ա Ն Տ Ո Ն.—(Սաստիկ հուզված) *Թող, Աննա... խնդրում եմ...* (Աննան լուռ ու զարմացած դիտում է նրան, մոտենում է նրանց մի ծեր բանվոր։

Ծ Ե Ր Բ Ա Ն Վ Ո Ր.—(Անտոնին) *Բարև, տղյուծ.* (Ծիծաղելով խփում է ուսին)։ *Կիրակի օրով ի՞նչ ես նստել պատավի կշտին. ջահել տղա ես, գնա քեզ տրա, աղջիկներին քարշ տուր հետևիցդ։ Ա՛խ... լավ տղա ես, բայց ախորժակ չունես ապրելու։*

Ա Ն Տ Ո Ն.—(Թողնելով իր տխուր մտքերը) *Ախորժակ ունեմ և լավ ախորժակ, բայց սրտիս ուզած պատառը չեմ գտնում...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Միայն Անտոնին) *Լավ պատառը քթիդ տակն է, ինչո՞ւ ես թողնում, որ ուրիշները լափեն։*

Ա Ն Տ Ո Ն.—(Զայրացած) *Ես թեզ խնդրել էի դդույշ կենալ...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Դեհ մի բարկանալ. քեզ սիրելուցս եմ ասում, սովորություն ունեմ կատակ անել ջահելների հետ, զայրացնել նրանց...

Ա Ն Տ Ո Ն.—Իսկ ես, դժբախտաբար, սովորություն չունեմ պատժելու կանանց և ծերերին... (Շրջվում է զայրացած)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Լավ ես անում, որդի, խիստ լավ. վատնդի պատված ինքն իր ձեռքով պատժել է նրանց. առաջիններին՝ որ կին է ստեղծել, երկրորդներին՝ որ խլում է տվածները և դեպի փոսը հրում։ Էհ, տուր մի

ծխախոտ, վեր առաքենք ցավերս։ (Ծխում են)։ *Պատերազմից նոր լուր կա՞։*

Ա Ն Տ Ո Ն.—Կա, բայց ոչ մխիթարական։ Դրությունները վատ է, ծերուկ...

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Բայց զինվորը մեղավոր չէ, լսիր ինձ, ռուս զինվորը ապրել չգիտենալով հանդերձ, դիտե քաջի նման մեռնել։ Ես այդ լավ գիտեմ։ Նա զրկանքին, բաղդին սովոր է ծնված օրից՝ այդ պատճառով դիմացկուն ու համբերատար է պատերազմի դաշտում։ Ահա քեզ հաղթելու զրավականներ, սակայն դրությունները, ասում ես, վատ է։ Ուրեմն ձակատագիրն է. նրանից չենք փախչի։ (Անտոնը ձեռքերը գրպանում շրջում է տան առաջ։ Հեռվից երևում է Մարթան՝ ավելի բան նոխ հագնված։ Անտոնը երջանիկ ժպիտը երեսին նայում է նրան։ Մարթան բարևում է ծերին և տուն մտնում)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Սիրուն արջիկ է։ Աստված վկա, կարծես Բագուհի լինի։ (Դեղում է Աննային) *Տեսա՞ր, նույնիսկ աչյուրին չնկատեց. կեցցես աղջիկ։ Հը, Աննա, նա ո՞չ քեզ է նման, մոլորված, խեղճ ու կրակ, ո՞չ էլ գալան հորը...*

Ա Ն Ն Ա.—(Դժգոհ) *Նա իմ աղջիկն է, պապ... մի կպչիր նրան...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Ցոլալով) *Դե՛հ, լավ, լավ... հանաք արի։* (Դիմում է Անտոնին աղերսանքով)։ *Տուր մի քանի կոպեկ, աստված սիրես, ամանը կա, գնամ կոկորդս թրջեմ։* (Անտոնը տալիս է, ծերը ճեռանում է)։

Մ Ա Ր Թ Ա.—(Նստում է պատուհանին) *Բարև պրոլետար։*

(Անտոնը ուրախ մոտենում է և բռնում ձեռքը)։

Ա Ն Տ Ո Ն.—Իսկ ես կարծեցի, թե չտեսար ինձ։

Մ Ա Ր Թ Ա.—Ես քեզ դեռ փողոցի ծայրից նկատեցի, բայց... Դիտե՞ս որտեղից եմ գալիս։

(Անտոնը չի պատասխանում։ Մարթան լուռ դիտում է նրան)։

Մ Ա Ր Թ Ա.—Դու չե՞ս հետաքրքրվում։

Ա Ն Տ Ո Ն.—Ո՛չ, ինձ հետաքրքրում է միայն մարդկանց ո՞ւր գնալը։

Մ Ա Ր Թ Ա.—Ե՞ս էլ մարդ եմ։

Ա Ն Տ Ո Ն.—Իհարկե։

Մ Ա Ր Թ Ա.—Թող ձեռքս։

Ա Ն Տ Ո Ն.—Մի՞թե իրավունք չունեմ ձեռքդ բռնելու։ (Ձգույշ համբուրում է)։ *Որքան մատանիներ ես հագել, սիրո՞ւմ ես...*

Մ Ա Ր Թ Ա.—(Անտարբեր) *Սիրածս չսիրածս չեմ իմանում։ Հագնում են ուրիշները, ես էլ ետ չեմ մնում նրանցից։*

Ա Ն Տ Ո Ն.—(Խուլ ձայնով) *Երևի նվերներ են...*

Մ Ա Ր Թ Ա.—Գրեթե (Մտազբաղ), *ամեն մարդ իր հիշատակն է թողել։ Քեզ պատահե՞լ է տեսնել մի ավերակ մատուռ, ուր ամեն մի այցե-*

լու անպայման իր անունն ու ազգանունն է գրում։ Ես էլ մի ավերակ մատուռ եմ... (Անտոնը բաց է թողնում նրա ձեռքը)։

Մ Ա Ր Թ Ա.—Բարկացա՞ր։

Ա Ն Տ Ո Ն.—Բոլորովին. ի՞նչ իրավունք ունեմ։

Մ Ա Ր Թ Ա.—Սակայն քեզ չի սազում, ես աչքերումդ կարդում եմ, որ ստում ես չարաչար։

Ա Ն Տ Ո Ն.—Եթե աչքերիս այբբենարանը կարդալ գիտենայիր, այդ և մի քանի նման հարցեր չէիր տա ինձ, երբե՞ք...

Մ Ա Ր Թ Ա.—Սովորիր բոլորը, այն ժամանակ կխոսենք միմյանց հասկանալու համար...

Մ Ա Ր Թ Ա.—(Մտածում է) *Դիտե՞ս, ես խաղում եմ քեզ հետ։ Ոչ թե դու, այլ ես ինքս եմ ստում։* (Բռնում է Անտոնի ձեռքը)։ *Ես քեզ այն չեմ ասում, ինչ-որ մտածում եմ։ Չեմ էլ կարող ասել։ Սակայն լսիր միայն այս փոքրիկ ճշմարտությունը, որը ծրագրով, մխիթարանքով մարդուն ուղղել, ինչպես ասում ես «հեղաշրջել» չի կարելի, Անտոն, հավատա ինձ...*

Ա Ն Տ Ո Ն.—(ժպտում է) *Այդ ի՞նչ մարդու մասին է խոսքդ։*

Մ Ա Ր Թ Ա.—(Նույնպես) *Մի մարդու, որին միայն կշտամբում են ու խրատում։*

Ա Ն Տ Ո Ն.—Ահա այն մարդուն, որ նրան միայն սիրում են ու գուրգուրում (Գիծադրում են)։

Մ Ա Ր Թ Ա.—(Խաղում է Անտոնի գլուխ հետ և զննող հայացքով նայում նրա դեմքին)։

Ա Ն Տ Ո Ն.—Ինչ ուզում ես ասա, լավ աղջիկ ես։ Ես գոհ եմ, որ պատահեցի քեզ, իսկ բախտավոր կլինեի, եթե մի բարոյական, գաղափարական կապ հաստատվեր մեր մեջ, հասկանայիր ինձ, ապրեիր գիտակցորեն, նայեիր կյանքին բաց աչքերով։

Մ Ա Ր Թ Ա.—(Լայն բանալով աչքերը) *Ես այդպես էլ նայում եմ։*

Ա Ն Տ Ո Ն.—(ժպտում է) *Ո՛չ, Մարթա, ցավալին այն է, որ չես նայում։ Ոչ թե միայն դու, այլ առհասարակ մեր բոլոր աղջիկները, ընչին բացառությամբ։ Ես մի կողմ եմ թողնում բուրժուական ընտանիքում սնվածներին, մի կողմ եմ թողնում քաղաքների պատմական ավանդությունները լեցված ու ճահճացած միջին դասակարգի աղջիկներին, այլ վերցնում եմ քեզ և բոլոր բանվորական միջավայրում մեծացածներին ու չեմ կարող ներել ձեզ...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հորանջում է) *Ակսե՞ց...*

Ա Ն Տ Ո Ն.—(Ոգևորված) *Չեմ կարող անտարբեր նայել ձեր մոլոր մտքերին ու քնած հոգուն։ Կյանքի անիվը պտտվում է արագ։ Այս օրը երեկվա նման չէ, վազը դալու է նոր հովերով, նոր պահանջներով, իսկ դուք այդ չեք զգում, չեք տեսնում։ Ձեզ լափել է անձնական բարոր-*

թյան ապահ ցանկությունը, առօրյա հացի ահը։ Ձեզ կեղերում, հարբատահարում են գործարաններում, արհեստանոցներում, մասնավոր տներում, սակայն դուք քնած եք, չեք զգում, չեք զգում որ տանում եք տվել բանական մարդու ամենանվիրականը (հուզված) չեք զգում ձեր կորստի մեծությունը... (Տխուր) Իսկ մեզ համար ի՞նչ խրախույս՝ տեսնել ձեզ մեր կողքին, մեր զենքերով զինված...

ՄԱՐԱ.—Զարմանալի մարդ ես։ Իսկ եթե ես զինվելու կամ կռվելու ո՞չ պահանջ եմ զգում, ո՞չ էլ տրամադրություն ունե՞մ։

ԱՆՏՈՆ.—(խիստ) Պիտի զգաս, այլ կերպ չի կարելի ապրել։

ՄԱՐԱ.—Ես ապրում եմ և գոհ եմ իմ վիճակից։

ԱՆՏՈՆ.—(Զայրացած հետ է գնում) Գո՜հ ես... մի՞թե գոհ ես դու

ՄԱՐԱ.—(Նույնպես) Այո՛, մի՞թե չես տեսնում։

ԱՆՏՈՆ.—(Խուլ ձայնով) Չէ... չեմ տեսնում... չեմ ուզում տեսնել այդ...

ՄԱՐԱ.—Որովհետև դու ցանկանում ես, որ բոլորը զժգոհ լինեն, բոլորը տրտնջան, բողոքեն ու պահանջեն։ Երբ դու սկսում ես խոսել, ինձ թվում է, թե դուրսը անձրև է գալիս, աշնան համառ ու անվերջ անձրև, խփում է կարին, դռանը, ծեծում լուսամուտը, ծառին, թոշնած տերևին, մարդու դեմքին՝ մի խոսքով ամեն բանի թախիծը գրկում է հոգիս։ Փախչել աշնան անձրևից չեմ կարող, ուժ չունեմ... (Մտածում է) Դուրս եմ գալիս, աշունը կանչում է ինձ, անձրևը խփում է գլխիս, լիզում դեմքս, հոգիս դուրս է թռչում մոռացության երաշների գրկից, լքում է, իջնում ինձ վրա, սոսկում եմ ինչ-որ անխուսափելի ցասման ներկայությունից... (Դանդաղում է) Ու զգում եմ, որ մի տեղ ցավ կա, մի տեղ տառապանք, մի տեղ դավն է իշխում, մի տեղ սիրը շրջում անպատիժ, մի տեղ մեռնում են մարդիկ, որ պիտի ապրեին, մի տեղ թաղվում են դեռ չապրած։ Ահռելիս եմ զգում քո նկարագրած կյանքին նայելիս... Դու միշտ իմ դեմ մի մռայլ, անհատակ խորխորատ ես բաց արել ու հրում ես ինձ այնտեղ։ Հրում ես գիտակցության և արթնացած մտքի անունով, որը դու ունես, որից զուրկ եմ ես... ինչո՞ւ ես անում այդ... (Տանջված ու թույլ ձայնով) Իմ հոգին էլ, մարմինն էլ հոգնած են, հասկանո՞ւմ ես... քեզ ինչ շահ իմ մոլորվելուց. ամեն մարդ պիտի ապրի այնպես, ինչպես որ կարող է և ընդունակ է, ինչպես որ ինքը հասկանում է կյանքը...

ԱՆՏՈՆ.—(Զգացված) Լավ ասացիր՝ դուրսը անձրև է ու աշուն... երբեմն քեզ խիստ հաջողվում է ազդող կերպով որոշել իրերի դրությունը։ Դուրսը անձրև է ու աշուն... (Մտածում է) Իսկ ի՞նչ կանես, եթե քեզ ասեն, Մարթա, մի լրվիր, մի փախչիր, կաց (Ոգևորվում է)։ Թող աշուն լինի, լինի մեղ ու մշուշ, անձրև պաղ ու անհամբույր։ Արթուն կաց. շուտով կհասնի կենսատու գարուն, կարմիր ու վառ արևի տակ կեռա արթ-

նայող կյանքը, հպարտ ու կայտառ աշնան լքումից հետո չի մնա։ Արթուն կաց, Մարթա՛, ողջունելու այդ գարնան, ջահել ու սիրուն, Յարմ հույզ ու տենչանքներով թեավորված վայելելու այդ գարնան համբույրն ու ժպիտը, հրճվելու արևի տակ... (Նայում է աննամբեր) Ի՞նչ կասես...

ՄԱՐԹԱ.—(Անտարբեր) Երբ այդպես, քո սասծի պես լինի, դու ինձ կկանչես՝ եկամ...

ԱՆՏՈՆ.—(Վշտացած) Կդաս... Իհարկե. այն ժամանակ քեզ նման եկողների թիվը շատ կլինի, իսկ մինչ այդ, քանի՞ մայր իր զավակի կորուստը պիտի սդրա, քանի՞ որբ հայր պիտի որոնե, քանի դիակներ պիտի դիզվեն իրար վրա անթաղ ու անխաչ, ազատվներին կեր ու կերակուր, քանի՞ խելոք զլուխներ պիտ ջախջախվեն, քանի ժիր բազուկներ պիտ մաշվեն կալանների մեջ, որքա՞ն անմեղ արյուն պիտ հոսե... դու այս գիտնալ չես կամենում... սպասում ես բարվոք կյանքին մի հեռու անկյունից... վերջ տանք... ես չեմ կարող լսել քեզ...

ՄԱՐԹԱ.—(Բարկացած) Այդ քո ազատ կամքն է։

ԱՆՏՈՆ.—(Հանդարտվելով, մեղմ) Ների՛ր։

ՄԱՐԹԱ.—(Դեպի մորը, որ ամբողջ խոսակցության ընթացքում մոլորված նայացքով հետևում էր նրանց)։ Մայր, այդպես հուսահատ մի նայիր ինձ, քիչ էլ համբերիր՝ մի հարուստ փեսացու կգտնեմ, կպսակվեմ, անպատճառ։ Լսո՞ւմ ես մայր. քաղաքի հենց կենտրոնում մի երկհարկանի սենյական տուն կունենամ, կտոր, ծառաներ, աղախիններ, դու էլ չես աշխատի, հագած-կապած, կերած-խմած տանտիրուհու նման կխաղաս թոռներիդ հետ։ Մակարը կգնա արտասահման՝ բժշկվելու, այնպես կապրենք երջանիկ։ (Անտոնին, կամաց) Մի դրա դեմքին նայիր, ինչպե՞ս է հրճվում։ (Մորը) Հը՛, մայր, ի՞նչ կասես դրան, չե՞ս հավատում, մի՞թե պառավել եմ կամ տգեղացել...

ԱՆՆԱ.—Ա՜խ, աղջիկս...

ՄԱՐԹԱ.—(Չի թողնում մորը խոսքը վերջացնելու, բարկացած) «Ամբողջ թաղամասում ո՞վ կա քեզանից սիրուն ու խելացի»։ (Հենվում է պատուհանին, ինքն իրեն) Իմ միակ զենքերը, որոնցից առաջինը խլվում է, երկրորդը՝ արհամարհվում...

ԱՆՏՈՆ.—Ինձ ինչո՞ւ մոռացար։

ՄԱՐԹԱ.—(Չի նայում նրան) Իսկ... քեզ կպսակեմ քո գարնան գալուն սպասող, մազերը կտրած, ծխախոտը բերանին մի քաջասիրտ «ընկերի» հետ, առավոտից մինչև ուշ գիշեր, ձեռք-ձեռքի տված, կյանքը հեղուշրջեք սիրուն խոսքերով ու նորն ստեղծեք...

ԱՆՏՈՆ.—(Շրջում է մտազբաղ)։

ԱՆՆԱ.—Նրան մի բարկացնի։ Ինչո՞ւ այդպես կոպիտ ես վարվում հետը. քո տեղը մի ուրիշը լիներ...

ՄԱՐԹԱ.—(Բարկացած) Ոչ մի խոսք, բանի անգամ ասել եմ...

ԱՆՏՈՆ.—(Դառնացած) Դեհ, մի կանչիր, մարդ կիմանա։

ՄԱՐԹԱ.—(Կատաղած) Թող իմանան։ Ես ոչ ոքից չեմ վախենում։ Իսկ դու մյուս անգամ չհամարձակվես կրկնել ասածդ. վերջին անգամ ասում եմ՝ կանհայտանամ, դու կլինես պատճառը...

ԱՆՆԱ.—(Վախեցած) Էլ չեմ ասի, ներիր։

ՄԱՐԹԱ.—(Ավելի է զոռում) Ինչ-որ կարող էի՝ արի. ինչ-որ ունեի՝ վաճառքի հանեցի։ Էլ ի՞նչ ես ուզում ինձանից... Էլ ի՞նչ մնաց, որ չեմ զոհել քեզ համար. ասա, պարզիր...

ԱՆՏՈՆ.—(Շշմած Աննային աչքով է անում նեռանալու։ Աննան մտնում է տուն. իսկ ինքը մոտենում է Մարթային, զուրգուրանքով) Դիտե՞ս ինչ եմ մտածում։

ՄԱՐԹԱ.—(Արհամարհանքով) Իմ մասին մի նորություն։

ԱՆՏՈՆ.—Ճիշտ է. նայում եմ քեզ և զարմանում. ինչո՞ւ քո մեջ բացակայում է մի բան շինելու, ստեղծելու ցանկությունը, այնպես զսպված ես, քանդում ես առավոտից մինչև ուշ գիշեր, քանդում անսիրտ, անխնա և հրճվում փլատակների վրա։

ՄԱՐԹԱ.—(Դժգոհ, ծպտով) Իսկ առաջ ասում էիր, թե ոչինչ չեմ անում...

ԱՆՏՈՆ.—Սպասիր, մի կարիր խոսքս։ Օրինակ, սկսում ես մի կար, ձեռագործ, ամիսներ անկատար քարշ է գալիս սենյակում, մինչև որ կամ մայրդ է վերջացնում, կամ մեկին ես տալիս։ Կարդում ես գրքի, թերթի կեսը՝ խնդրելով, որ մնացածը ուրիշը վերջացնի, կամ պատմի քեզ։ Վճռում ես մի բան անել ու թողնում կիսաճանապարհ։ Հարգում ես մեկին, հետևյալ օրը հետը խոսելու անխուսափելի հնարը որոնելով, սիրում ես մեկին, ատելու ծրագիրը նախօրոք կազմելով և այսպես անվերջ...

ՄԱՐԹԱ.—(Ոչ լարված լսում էր) Վերջացրի՞ր։

ԱՆՏՈՆ.—(Տխուր) Դրեթե...

ՄԱՐԹԱ.—(Վշտացած) Ուրեմն ինձ այդպե՞ս ես հասկացել... (Երկար մտածում է) Դիտե՞ս ինչ. մի կնոջ հասկանալը քո բանը չէ... Դու կարդա, ճարիր, խոսիր, աշխատիր, ամեն ինչ արա, միայն մի ջանա նրան հասկանալու՝ այդ քո խելքից, մարդից, ուժից վեր բան է, հավատա՛, պրոլետար։

ԱՆՏՈՆ.—(Ծիծաղում է) Մի՞թե։

ՄԱՐԹԱ.—(Լուրջ) Ճիշտ եմ ասում... Հետո, այն որ սիրում կամ հարգում եմ մեկին, ատելության պատրաստակամությամբ՝ ճիշտ է։ Միայն ոչ քո հասկացած կետից։ Ճիշտ է, որովհետև նոր մարդուն ես մոտենում եմ ինչ-որ սպասելիքներով, ինչ-որ նոր աշխարհներ տեսնելու նրա մեջ, որից այսպես թե այնպես զրկված եմ ես։ Մոտենում եմ որոնողի հուսաշատ սպասելիքներով... սակայն երբ որոնածս չեմ գտա-

նում, տեսնում եմ նրանց ինձնից էլ արատավոր, անպետք, ինձնից էլ վատ, մեղավոր, թքում եմ ու հեռանում... Ես ինքս ինձ եմ ուտում, որ վատ եմ, կարո՞ղ եմ վեպի մեջ վատը հարատև սեր կամ հարգանք զգալ։

ԱՆՏՈՆ.—(Քենոզ հայացքը Մարթային հառած) Մարթա, ուրեմն դու որոնում ես քե՛զ համար...

ՄԱՐԹԱ.—(Կտրում է նրա խոսքը) Թող, բավակա՛ն է։ Լավ կանես, եթե իմ մասին չմտածես, չնկատես ինձ... հաշվիր թե չկամ...

ԱՆՏՈՆ.—Դու ինձ արգելում ես...

ՄԱՐԹԱ.—(Շտապ) խնդրում եմ...

ԱՆՏՈՆ.—Իսկ եթե չկարողանա՞մ... չես ուզում պատասխանել։ (Գզվանքով բռնում է ձեռքը) Դե՛հ, թող, մի տխրիր։ (Հուսաբեկ) Երբ տանը չես լինում, կարոտն իանդգր կրծում է հոգիս, բոպեներն եմ հաշվում, ծրագրեր եմ կազմում՝ տեսնելիս ուրախացնել, մխիթարել, բավականություն տալ քեզ։ Իսկ երբ մոտդ եմ լինում, հակառակն է դուրս գալիս, սկսում ենք վիճել, հակառակվել միմյանց և բաժանվել դժգոհ, վշտացած։ (Ապերսանքով) Սովորեցրու ինձ, Մարթա, ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս խուսափել այս ակամա վրդովմունքներից։ Ասա (Նկատելով Մարթային մտատանջ) Դեհ, թող, ի՞նչ ես մտածում, ինչո՞ւ տխրեցիր...

ՄԱՐԹԱ.—(Սաստիկ տխուր) Ես արդեն ասացի, որ ինձ չնկատես, այն ժամանակ ոչ մի վնաս, ոչ մի թյուրիմացություն չի պատահի... (Հեռանում է լուսամուտից)։

ԱՆՏՈՆ.—(Մենակ ու դառնացած) Չնկատե՞մ քեզ... ո՛չ, ո՛չ, չեմ կարող, ուշ է։ Այժմ չափից դուրս մեծ է հմայիչ ուժդ ինձ վրա։ Գերել ու տիրել ես հոգուս, մտքիս, էությանս... ո՛չ, ո՛չ... Կյանքը ինձ ընկճված չէ տեսել, երբեք, արգելքը չէ դիտել իմ թիկունքը։ (Ժպտով) Իսկ քեզանից խուսափել, փախչել չեմ կարող, երբեք։ (Ուժգին) Սիրում եմ քեզ...

ՀԱՐԲԱՆՎՈՐ.—(Ճռնվելով երևում է անկյունից, սպառնալով) Անիծված, ասում եմ քեզ՝ բավ է, խղճա, մի մարիր օջախս հրատը։ Վնց հատ աղջիկ կա, բավական է։ Մնիր մի տղա, (Ձեռքերով ցույց է տալիս ու լալիս) մի փոքրիկ, շարաճճի մանչուկ, որ փողոցից տղաները գան, կանչեն նրան՝ «Օհան Կուլիկով, եկ խաղանք» (Միծաղում է ու հազում) Օհան Կուզմիչ Կուլիկով։ (Բռունցքներով հարվածում է պատուհանին, փակ դռանը։ Անտոնը վազում է ու գրկած հեռացնում է նրան դրսից)։ Անտոն Ֆոմիչ, ընկեր... մի բարկանա։ Ես օղուց չեմ արբել. ցավից, կսկծից եմ արբել։ Ես մի... մի աղնիվ բանվոր, ինչո՞ւ անժառանգ կորչեմ։ Ասացեք, ինչո՞ւ (Հարձակվում է դեպի դուռը. Անտոնը պահում է նրան) Կխեղդեմ... (Բռունցք է ցույց տալիս) Ի՞նչ ես ջղրացնում... ինչո՞ւ գիտամբ աղջիկ ես ծնում... կխեղդեմ։ Ի՞նչ է ուզածս՝ մի որդի... փոքրիկ շար տղա, որ քույրերին ծեծե, հրամայե քեզ... ամեն տանը... փողոցը...

Ա Ն Տ Ո Ն.—Հանգստացիր, երեխաները լալիս են, ինչեր ես ասում։

Բ Ա Ն Վ Ո Ր.—(Ուզում է հարձակվել) *Կխեղդեմ բոլորիդ էլ։*

Ա Ն Տ Ո Ն.—(Բռնում է նրան, զայրացած) *Վերջ տուր, անսիրտ կենդանի, թե չէ դանդգ կփշրեմ։ Տանը բաղցից նվաղում է ծննդկան կինդ, իսկ դու...*

Բ Ա Ն Վ Ո Ր.—(Կծկվում է պատի տակ և հազում սաստիկ) *Անտոն Ֆոմիչ, ինչո՞ւ է խարում ինձ այդ օձը։ Ինն ամիս շարունակ ասում էր, որ տղա է։* (Լալիս է) *Ինչո՞ւ էր խաբում... ահա վեցերորդ անգամն է, որ խաբում է նա ինձ... Կխեղդեմ, ծնիր տղա, մի փոքրիկ շարաճճի տղա, որ փողոցում կովի, քար թաշև անցորդներին։*

Ա Ն Տ Ո Ն.—(Դառաղած) *Լռի՛ր... քնիր այստեղ, ես քեզ տուն չեմ թողնի...* (Դռան շեմքին Մարթային նկատելով) *Մարթա, եկ դնա ներս, հանգստացրու, երեխաները լալիս են.* (Մարթան վազում է բանվորի տուն) *Քնի՛ր, ասում եմ։*

Բ Ա Ն Վ Ո Ր.—Օհան Կուլիկով... Իմ որդին... Կխեղդեմ...

Բ. ԱՐԱՐ

Մեծ սենյակ. երեք փոքր լուսամուտներ դեպի փողոց։ Մի անկյունում վառարան, կողքին՝ մի դուռ դեպի կողքի սենյակը։ Վառարանի դիմացի անկյունը մահճակալ՝ վարագույրով ծածկված։ Աղքատիկ կահկարասի։ Մի փոքրիկ կոմոդ լուսամուտների մեջտեղը, վրան գրքեր, թղթե ծաղիկներ, հայելի։ Քիչ հեռու պատից կախ մի հնամաշ, փոքրիկ ջութակ։

Պ Ա Շ Ա.—Ասում են խառնակիչները պատրաստվում են տապալելու Ռուսաստանը. հրեաները տակառներով, որպես աղած ձուկ, դրամ են ուղարկում հապոնացոց։ Դրա համար էլ միշտ հաղթությունը նրանց կողմն է։ Օ՜, ինչպես տանջվում եմ։ Ինչ պատուհաս է պատրաստվում իմ հսկա հայրենիքի գլխին։ Մի՞թե նա, մեծ Ռուսաստանը, պարտություն պիտի կրի ինչ-որ թզուկ Ճապոնիայից։ Մտածում եմ գիշեր ցերեկ։ Հնար չկա։ Ուժ ունենայի, տակն ու վրա կանեի ամբողջ աշխարհը՝ մի գիպչեք իմ հայրենիքին, իմ ժողովրդին։

Մ Ա Ր Թ Ա.—Իզուր ես այդպես մտածում։ Ասում եմ քեզ, որ սուտ է այդ ամենը. ո՛չ տակառով դրամ, ո՛չ խառնակիչներ, միայն ասացին, որ բանվորները պատրաստվում են բողոքելու ինչ-որ իրավունքներ ձեռք բերելու համար։ Ռուսաստանին սպառնացող վտանգ չկա և չի էլ կարող լինել։ Ո՞վ կհանդգնի, երեխա ես, ի՞նչ է։

Պ Ա Շ Ա.—(Կասկածանքով) *Անտոն Ֆոմի՞չն էր այդպես ասում։*

Մ Ա Ր Թ Ա.—(Անտարբեր) *Ոչ, լսել եմ կողմնակի խոսակցությունից։*

Պ Ա Շ Ա.—Երևի նա քեզանից թաքցնում է։ Նա ամեն բան գիտե,

զգույշ կաց նրանից։ Ինձ թվում է, թե նա հասարակ բանվոր չէ։ Ամուսինս պատահել է նրան հարուստ աղջիկների հետ... Կիրակի երեկո թատրոնում է եղել. հագված, սանրված, կարծես գործարանատեր լինի։ Տեսնո՞ւմ ես, իսկ մյուս բանվորները. ինքդ դատիր։

ՄԱՐԹԱ.—(Իմանալով) «Հարուստ աղջիկների հետ»... (Մտորում է, Պաշային) Մյուս բանվորները տգետ են, հարբում են, իսկ Անտոնը միայն ծխում է, այն էլ տրտունջով։ Կարդացած մարդ է, առանց գրքի, թերթի օր չի անցնում...

ՊԱՇԱ.—Իսկ իմ կարծիքով հենց այդ կարդացողներն են ռճրագործներն ու հայրենիքի դավաճանները։ Հարբեցողից ինչ վախ. հարբեց՝ էլ գաղտնիք չկա, դիտցածն ու մտածածը փողոց է հանում։

ՄԱՐԹԱ.—Սխալվում ես, ամեն մի չարիքի պատճառը օղին է։ Այդ ինձ ու քեզ լավ հայտնի պիտի լինի. տեսնո՞ւմ ես, մենք ուր հասանք հարբեցող ծնողների պատճառով։ Իսկ Անտոնը, եթե ամուսնանա, նրա ո՞չ կինը փողոց կընկնի, ո՞չ էլ աղջիկը։

ՊԱՇԱ.—(Հուզված) Սակայն թույլ կտա, որ իր հայրենիքին վնասող սպառնացողների շարքերը խտանան։ Ես դիտեմ դրանց... Նա միայն քեզ կարող է համոզել։ Անցյալ օրվա թուղթիկը կարդացի՞ր։

ՄԱՐԹԱ.—(Քմծիծաղ) Այդ էլ նա՞ էր գրել։

ՊԱՇԱ.—(Զայրացած) Նա չէր, նրա ընկերն էր, մի՛նույն չէ՞։ Շշմեցրել են խեղճ բանվորներին իրենց խոսքերով։ Անիծվեն դրանք։ Դու դատիր, սա անիրավություն չէ՞ միթե տերը ծառայի հետ դուքով խոսի։ Սա էլ պահանջ է։ Ուրեմն հարուստ մի տերն իր խլնքոտ ու գռեհիկ ծառային տալով իր կոշիկները խոնարհաբար խնդրելու է.— «Օհան, խնդրեմ բարի լինեք և մաքրեք իմ կոշիկները...»։

ՄԱՐԹԱ.—(Ծիծաղում է)։

ՊԱՇԱ.—(Դժգոհ) Ծիծաղում ես. կարծես մի շատ ուրախալի դեպք է պատմածս և կարծես քո երակներում չի հոսում ռուսի արյուն։

ՄԱՐԹԱ.—Այդ ամենը թող, ասա ինչպե՞ս որ երևացիր։

ՊԱՇԱ.—Իսկ դու հաճա՞խ ես գալիս։ Անցյալ օրը աղջիկները դանդաղվում էին, որ դու սկսել ես խուսափել նրանցից։

ՄԱՐԹԱ.—(Դժգոհ ու արտում) Մի քանի շաբաթ կլինի, որ տանից դուրս չեմ եկել...

ՊԱՇԱ.—(Հեռաֆրիր) Ինչո՞ւ։

ՄԱՐԹԱ.—(Մտազբաղ) Չեմ իմանում։

ՊԱՇԱ.—(Նեղանալով) Առաջ մեր մեջ գաղտնիքներ չկային, Մարթա։

ՄԱՐԹԱ.—Հիմա էլ չկան, հավատա... միայն ես դժգոհ եմ ինձանից։ Մայրս նույնպես... դգալ է տալիս, որ վաստակս նվազում է։ Տա-

բերս՝ աճում... Օֆ, երնեկ այն խելառ օրերին, Պաշա, հիշո՞ւմ ես... ոչ խելք ունեինք...

Պ Ա Շ Ա.—(Փայտում է) *Գտար ինչին երանի տալու։ Իսկ որ վաստակդ նվազում է ու տարիքդ անցնում, ինքդ ես մեղավորը։ Ոչ մի հանգամանքից չկարողացար օգտվել։ Քեզ ասում էի պսակվիր այն Ծերուկի հետ։ Այժմ նա մեռած կլիներ, իսկ դու սիրուն ու հարուստ այրի...*

Մ Ա Ր Թ Ա.—*Ես չեմ կարող կողակից ունենալ։*

Պ Ա Շ Ա.—*Սակայն մեկն ունենալու դեմ լինելով հանդերձ, չես խորշում տասնյակներից։*

Մ Ա Ր Թ Ա.—(Հազիվ լսելի) *Դա իմ արհեստն է, Պաշա։ Դրա համար ես օրինական փաստաթուղթ ունեմ... տանտիկին լինելը մեզ նմաններին չի սազում։*

Պ Ա Շ Ա.—(Գոհ) *Թվում է, թե ինձ սազում է։ Գրեթե մի տարի է, որ մենք ապրում ենք հաշտ ու սիրով։*

Մ Ա Ր Թ Ա.—(Հեգնորեն) *Սիրո՞վ։ Թող, խնդրեմ։ Ի՞նչ սեր, որտեղի՞ց ճարեցիր։*

Պ Ա Շ Ա.—(Անվստահ) *Մի քիչ կար... մնացել էր...*

Մ Ա Ր Թ Ա.—(Լուրջ) *Ինքնախաբեություն է* (Շրջվում է նուզված)։

Պ Ա Շ Ա.—(Հետևելով նրան) *Սխալվում ես... մի ջինջ ու հստակ, ավելի շուտ մի մոլի զգացմունք է։ Այդպես են սիրում ձեր կաղ ու տկար շները իրենց տերերին։ Սողում են նրա հետևից, լիզում ձեռքերի տեղ աչքերը՝ գիշեր ու ցերեկ դուրս շպրտվելու ահի մեջ, մի առաջ ու ջահելին տեղի տալու սարսափը դեմքերին...* (Նստում է գլխիկոր)։

Մ Ա Ր Թ Ա.—(Կարեկցորեն) *Տեսնո՞ւմ ես... Իսկ ես այդ չեմ կարող անել։ Գինին ու ծախված գիշերը գերադասում եմ... լկանք, կեղծիք, կեղտ՝ մի գիշերով, կարճ ժամանակով, փախչելու, աղատվելու ու մոռացվելու ապրեցնող հուսով, իսկ դո՞ւ...*

Պ Ա Շ Ա.—(Տրտում) *Ինչ արած* (Քիչ լռելուց հետո) *Գիտե՞ս ինչու եմ եկել։*

Մ Ա Ր Թ Ա.—(Անտարբեր) *Ասա, որ գիտենամ։*

Պ Ա Շ Ա.—(Ամոթխած) *Ինձ թվում է, թե... հղի եմ... մայր եմ լինելու...* (Մարթան ցնցվում է և դուրս նայում պատուհանից։ Պաշան շարունակում է սաստիկ նուզված) *Մեկը չունեի, եկա քեզ մոտ։ Սիրտս լցված է սաստիկ. ուզում էի քեզ հետ խոսել։* (Նստում է Մարթայի դիմացը) *Մեքենա գնեցի, կար եմ անում... Ուզում եմ տնտեսել նրա համար... ուսումի կտամ,* (Հուզմունքից դողում է) *Կպաշտպանեմ... Չեմ թողնի, որ մեկը խեթ նայի նրան։ Ինչ որ ես չկերա, նա պիտի ուտե, ինչ որ ես չտեսա, նա պիտի տեսնի... Ինձ մայրս ծախեց կես շիշ օղի ավել խմելու համար. ես կյանքս կզոհեմ իմ զավակի երջանկության համար* (Լալիս է)։

Մ Ա Ր Թ Ա.—(Սաստիկ գունատ) *Հարբած չե՞ս։*

Պ Ա Շ Ա.—(Աչքերը սրբելով) *Ես այժմ չեմ խմում։*

Մ Ա Ր Թ Ա.—*Դիշեր ցերեկ տանն ես, հավատարիմ...*

Պ Ա Շ Ա.—(Խոսքը կտրելով) *Հավատարիմ շան պես։*

Մ Ա Ր Թ Ա.—*Իսկ նա* (Հեգնանքով) *ամուսինդ։*

Պ Ա Շ Ա.—(Խույս տալով նրա հայացքից) *Ես խոսում եմ միայն իմ մասին...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կատաղած) *Այդպես եք դուք, ամենքդ։ Ատում եմ ձեզ... Իմ մայրն էլ հարբած հորս ծեծից կապտած, ջարդված դուրս էր գալիս փողոց, ժպտում, հանգիստ պարծենում, որ ծեծված չէ...* (Դիշ մատնելով) *Իսկապես կարծում ես, որ երեխա՞ կունենաս։ Իսկ եթե...*

Պ Ա Շ Ա.—*Լռիր, թող ապրեմ հույսով։*

Մ Ա Ր Թ Ա.—*Ապրիր, որ հիասթափումը է՛լ ավելի դառը լինի...*

Պ Ա Շ Ա.—(Մի ծաղում է) *Դուրս չես գալիս, խոսում, դատում ես լուրջ մի տանձնուհու նման* (Ցուցամատը շարժելով)։ *Կարծում ես չե՞մ հասկանում... Մի զարմանար, տա ասուված դու էլ բախտավոր լինես* (Համբուրում է)։ *Շնորհակալ եմ, խոսեցինք թեթևացա, ասուված էլ քեզ միխիթարե* (Գնում է)։

Մ Ա Ր Թ Ա.—(Մեծ դժվարությամբ) *Կա՛ց։* (Պաշան նա է գալիս զարմացած։ Մարթան ինքն իրեն) *Ի՞նչ էի ուզում ասել... Հա* (Պաշային) *Ասա ի՞նչ կերպ* (Շփոթվում է)։

Պ Ա Շ Ա.—(Ժպտալով) *Ինչ կերպ իմ կյանքն այս ընթացքը ստացավ։*

Մ Ա Ր Թ Ա.—(Ուրախ) *Այո՛, այո՛... միայն ճիշտն ասա...* (Քաշվելով) *Ես էլ ուզում եմ...* (Փոխում է խոսքը) *Ես հոգնել եմ, Պաշա՛...*

Պ Ա Շ Ա.—(Ժպտում է) *Ես մի քիչ փոշ էի տնտեսել սև օրվա համար։ Դա ինձ օգնեց* (Ժպտում է) *Օրինավոր կին դառնալու... Մանրամասնությունը հետաքրքիր չէ...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հիասթափ) *Մի՞թե դոհ ես դու...*

Պ Ա Շ Ա.—(Խուսափում է նրա ճնշող հայացքից) *Այժմ մի անկյուն ունեմ սթարվելու։ Ամբողջ օրը զբաղված եմ աշխատանքով. դա էլ մի տեսակ միխիթարանք է, մոռացում... Իսկ իմ կյանքը մանկութ սահել է մայթերի վրա, էժան հյուրանոցներում... հոգնել էի, Մարթա՛...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կարեկցորեն շոյում է) *Դեհ դնա, կուշանաս, լավ արիր, որ եկար* (Պաշան գնում է, լսվում է երեկոյան շշակի ձայնը մոտ գործարանից)։

Մ Ա Ր Թ Ա.—(Մենակ) *Ամենքն էլ դժգոհ են... այժմ ո՞վ դժգոհ չէ... սակայն շատ քչերի համար երջանկություն է սթարվել մի հարկի տակ։ Դշվառ աղջիկ, ես գիտեմ, թե ինչ գնով տնտեսում էիր կոպեկները ու մի բան ծամած լինելու համար... է՜հ, ինչո՞ւ հիշել, պետք է մոռանա՞լ, մո-*

ռանա՞լ (Շրջում է մոտանալ): Բայց լավ ասաց, թե կյանքը սահել է մայթերի վրա... Կիսաքաղց, անառակ տարիների շարանը, կյանք է եղել, հա՛, հա՛, հա՛. լկտի վայելումների, ծախված գիշերների սև կյանք է եղել... ու սահել է անարգելը, սահել է առանց ետ նայելու... Իսկ աղքատությունը նույնն է մնացել, տառապանքը, զրկանքը նույնը, բոլորը նույնը: Միայն ես եմ փոխվել, որովհետև կյանքս սահել է ու սահել: Որքա՞ն փոխվել եմ ես... (Նստում է մի պահ լուռ, անորոշ կետի նայացքը ճառած) Երազ է կարծես, թե՞ վաղուց լսած մի սիրուն հեքիաթ, որ ես էլ մի անմեղ ու խենթուլիկ աղջիկ էի, ինչպես լինում են առհասարակ աղջիկները... Իմ տենչանքն էր լոկ կուշտ ուտելն ու վազվզելը բանվորական թաղամասի նեղ ու հոտած փողոցում, ուր այնքա՞ն շատ, այնքա՞ն կիսամերկ ու կիսաքաղց են աղջիկները... ուր այնքա՞ն առատությունն, օդի հետ ծծում, ներս են քաշում կյանքի այլանդակ ու վարակված օդը, այն օդով մեծացող ու ժամով թառամող աղջիկները:

Հիշում եմ, դեռ 8—9 տարեկան՝ «ամուսիններ» ունեի... Մենք օդի էինք խմում ձորակում, անում.էինք այն, ինչ-որ վաճակվել էր տեսնել ու լսել... (Երկար լռություն) Իսկ երբ գործարանի կառավարիչը այդտեղից ինձ ու մորս արդյունավոր պաշտոն առաջարկեց, ես էլ տղաների հետ չխաղացի... Կյանքը սահեց ու սահեց. հեղեղի նման սահեցին կեղտ ու ոճիր: Իսկ այժմ... Ի՞նչ եմ ես, ո՞վ եմ ես...

ԱՆՏՈՆ.—(Ներս է մտնում մրոտ, յուղոտ) Բարի երեկո, Մարթա:

ՄԱՐԹԱ.—(Առանց նրան նայելու, ենգնաձոով) Այժմ (Առանձին շեշտակի) սիրող աննորմալ կարգերի աննորմալ պտուղ...

ԱՆՏՈՆ.—(Սկսում է լվացվել, մաքրվել) Ճիշտ է զավակս, ավելի քան ճիշտ:

ՄԱՐԹԱ.—(Դժկամ) Թող խնդրեմ: Ես զարշում եմ քո այդ հատուկ հայրական հոգատարությունից, առհասարակ: Իսկ ճառերդ ինձ վաղուց ձանձրացրել են: Դու և քո ընկերները մոռանում եք ինձ առանձին ուշադրությամբ և իմ կյանքն ու ապրումները քրքրում «տնտեսական հողի վրա»: Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, ողորմելիներ, ի՞նչ գիտեք դուք, ո՞ւր եք ձգտում դուք...

ԱՆՏՈՆ.—(Լվացված, մաքրված, սկսում է ծխել) Միշտ միևնույն դժգոհ, բայց խելոք Մարթան: Մենք ձգտում ենք մարդավայել կյանքի մեր արդար կռվով, այլ կերպ, սիրելիս, ապրելն անկարելի է, զավն ու ոճիրը խեղդում է անզորներին, իսկ անզորների ու անմեղ մեղավորների թիվը խիստ մեծ է մեծ Ռուսաստանում:

ՄԱՐԹԱ.—Խառնակիչներդ հավաքվեցեք և...

ԱՆՏՈՆ.—(Իսկույն) Բոլոր թողներս հավաքվում ենք (Խոր ոտ) վերջ տալու այս անել կացությանը: (Մեղմ ու զգվանքով մոտենում է Մարթային) Մի մխիթարանք էր քեզ էլ տեսնել մեր շարքերում: Մի՞թե հոգ-

նած ես, ուժ չունես մի նորն ստեղծելու պայքարին դիմանալու։ Եկ, լքսիր ինձ. ես քեզ հետ կլինեմ միշտ, կհսկեմ արթուն որպես մի Արգոս...

ՄԱՐԹԱ.—Ուժ չունեմ, հոգնած եմ։ Արդարև գիտողին այդպես է երևում։ Կարծում ես դուցե, որ ես կորցրել եմ ամենը, ինչ որ կար ինձանում արժանի մարդկային ու, ինչպես դուք ասում եք, «մի բարվոք կյանքի» չունիմ փափագ կամ կարոտ։ Թող լինի այդպես։ Ես ձեր «բարվոք կյանքին» չունեմ փափագ կամ կարոտ, այլ ձգտում եմ նրան, որ իմը, իմ անձնականն է լինելու, իմ ես։ Բարօրության համար դոհ է հարկավոր, ողջակեղ, նահատակ, պատրաստ եմ, ուժ էլ ունեմ, կորով էլ, լսո՞ւմ ես, պրոլետար... ասում են, որ մարդ աշխարհ է գալիս իր բաժին բեռով ու բախտով։ Առաջինը կրել եմ, իսկ երկրորդին դեռ չեմ հասած... (Անտոնը լավ նայում է նրան) Իրավունք չունե՞մ հասնելու։

Լկկանքը, օդին, ծախված ժպիտն ու համբույրը այլևս նողկալի է ինձ համար։ Բավ է, զզում եմ, որ տանջվել եմ անմեղ, անարդվել իզուր։ Խոսի՛ր, պրոլետար, լսել եմ, որ շատ աղջիկների խորհրդատու ես, ինձ էլ սովորեցրու՝ ի՞նչ անել, ո՞ւր փախչել, ո՞ւր որոնել...

ԱՆՏՈՆ.—Այդ աղջիկները իմ ընկերներն են, Մարթա, դու իզուր ես խուսափում նրանցից։ Մոռացիր անցյալը, սուր կյանքիդ մի կանոնավոր ընթացք։ Այդ աղջիկները քեզ կօգնեն ինչով, ինչ կերով որ կամենաս։ Իսկ քո փրկությունը լոկ մեզ հետ է. այս մի մոռանար, երբեք...

ՄԱՐԹԱ.—(Հեգնորեն) Մի՞թե... Երևի ձեր անլեզալ թռուցիկները տարածելու համար գլխից ձեռք վերցրած մեկն է հարկավոր, կամ դուցե այսպիսի մի գլուխն ուսերից բաժանող գործ-հանձնարարություն։ Ես գիտեմ, որ պատրաստվում եք...

ԱՆՏՈՆ.—(Խույս տալով շիտակ աչառասխանից) Ինչեր ես մտածում։ Թե՛ ես, թե՛ նրանք ուզում ենք նպաստել քո անձնական բարեկեցությանը։

ՄԱՐԹԱ.—(Արհամարհանքով) Այսի՞նքն...

ԱՆՏՈՆ.—(Շփոթված նրա զննող հայացքից) Թե՛... Եթե, դու, օրինակի համար, աշխատել ուզենաս, գործ գտնել...

ՄԱՐԹԱ.—(Կտրում է խոսքը) Իմ գործը ես եմ գտնում կամ հյուրանոցի սենեկապետը։

ԱՆՏՈՆ.—(Ավելի ևս շփոթ) Պաշտպանել քո իրավունքները...

ՄԱՐԹԱ.—(Նորից կտրում է խոսքը) Ես վաղուց է, որ ձեռք եմ բերել իմ իրավունքների օրինական փաստաթուղթը (Մնում է լուռ ու գլխիկոր, ապա կամաց, կարծես գերեզմանային ձայնով) Ինչպե՞ս աշխատում էի շարժանանալ այդ պատվին. ի՞նչ հնարներ էի գործ դնում, շեղավ... Զմեռվա մի ցուրտ գիշեր էր. մայրս հիվանդանոցում պառկած էր երկունքով, կենդանի մնացած վերջին քույրս խեղդվում էր բկացավից... տանը ո՞չ վառելիք կար, ո՞չ հաց, ո՞չ լույս։ Մակարը հագուստ

չուներ փողոց դուրս գալու... Միայը, թե քույրս կմեռնի քաղցից ու ցըրտից ուժասպառ, կատաղի վազը էր դարձրել ինձ: Նա մի սիրունիկ, կապուտաչյա, ոսկեհեր աղջիկ էր ու երբ փոքրիկ, փափլիկ մարմնով հրպվում էր կրծքիս, մոռանալ էր տալիս ամեն վիշտ ու դառնություն, որոնցով լի՝ էն է արատավորված կյանքը... Ուշ գիշեր էր. ես տանից դուրս էի եկել բեռ խոստումներով... Ամբողջ մարմնով սառած, փայտացած շըրջում էի մայթերի վրա, հարձակվում անցորդների վրա՝ չեն վերցնում... այդ գիշեր ես ընկա... Հետևյալ օրը, երբ դեղին տոմսով քաղաքամասից տուն եկա, քույրս արդեն մեռած էր... (Լալիս է) *Լսո՞ւմ ես, պրոլետար, ահա թե ինչպես ձեզ բերի իմ իրավունքների օրինական փաստաթուղթը... Ես բեղանից ավելի պատավաղոր քաղաքացի եմ: Ինձ հսկում են, նայում խնամքով, բռնում...*

Ա Ն Տ Ո Ն.—(Սառաբիկ գունատված մոտենում է ու նստում մոտը, ձեռքը դնում ուսին) *Մոռացիր. մի հիշիր, թող, ինչո՞ւ ես տանջում քեզ. թող այդ ամենը...*

Մ Ա Ր Թ Ա.—(Նկկիծով) *Ուշ է, Անտո՛ն:* (Մտածում է) *Սկզբում ծանր էր ու դժվար... Կարծում էի թե կցնորվեմ, չեմ դիմանա: Իսկ երբ նայում էի շուրջս, ինձ նմաններին, ուժ էի ստանում: Թվում էր, թե այդպես էր կյանքի օրենքը: Շատ եմ մտածել թաղնել հեռանալ, սակայն ամենօրյա հացի ահը կաշկանդում էր ինձ: Վճռել էի, ինչ գնով էլ որ լինի, նեցուկ լինեմ տնարախտ մորս, որ կյանքում միայն ծնած է կերել, ծնել ու թաղել... Չեղավ: Երեխաները կարկտահար ծաղիկների նման թոշնեցին, մեռան, քաղցն ու զրկանքը մնացին մեզ կենակից... Իսկ այժմ ուշ է ու դժվար ետ դառնալը...*

Ա Ն Տ Ո Ն.—*Իսկ եթե սիրես մեկին... ամուսնանաս...*

Մ Ա Ր Թ Ա.—*Ամենակեղտոտ տղամարդն անգամ սիրահոժար չի ամուսնանում մեզ վրա: Ենք էլ մեր կողմից նրանց խիստ լավ գիտենք ու չենք ձգտում այդ բախտավորությանը: Այս դեռ ոչինչ, չարիքը նրանում է, որ հասարակական կարծիքն է մեզ իշխողն ու մեր վիճակը որոշողը: Մեզ ատում են, մեղանից խորշում: Ո՞վ կսիրե պոռնիկ աղջկան... Բացառություններ կան և կմնան...*

Ա Ն Տ Ո Ն.—(Հուսահատ) *Դու էլ հեռևիր վերջիններին:*

Մ Ա Ր Թ Ա.—*Թո՛ղ... կապրեմ այսպես:*

(Ներս է մտնում Մակարը մի կեռ ձող ու աղտոտ տոպրակ ձեռքին):

Մ Ա Ր Թ Ա.—*Գուցե քաղցա՞ծ ես: Քիչ սպասիր, հիմա մայրիկը կգա: Լվացվիր, մարդվիր* (Մակարը դժգոհ ինչ-որ փնթփնթում է, լվացվում, մաքրվում ու նստում է պատի տակ:)

Ա Ն Տ Ո Ն.—(Կարծես դառը մտորումներից սթափվելով, Մարթային) *Կերակրիր երեխային. տուն գալիս ինձ մի ընկեր ասաց, որ մայրդ ու մի քանի բանվորուհիներ մնացել են պայմանաժամից դուրս աշխատելու*

Տեսնո՞ւմ ես, Մարթա, դեռ մենք ամենքս էլ գերի ենք մեր օրվա ապրուստին։ Սակայն այդ դեռ չի նշանակում, որ այդ հսկայական չարիքը լափելու է մեզ, որ մենք կուրորեն տանուլ ենք տալու մեր մարդկային իրավունքները... Բանվորությունը այսօր կոիվ է մղում հարստահարման այդ ձևի դեմ, իր արյան գնով ձգտում է կրճատել աշխատանքի ժամերը։ (Ձայրույթով) Իսկ մերոնք ձգտում են մի հոգով երկուսի չափ աշխատել, մի օրում երկու օրվա գործ անել, իրենց ուժն ու եռանդը անխնայորեն վատնել...

ՄԱՐԹԱ.—(Հեգնում է) Ձգտո՞ւմ են... ինչի՞ր ես ասում. ձգտում են շատ ու էժան աշխատելու։ Ի՞նչ զրպարտություն։ Ինչպե՞ս կարելի է ձգտել։ Էհ, Անտոն... մի գատիր հեշտորեն, նրանք չեն ձգտում, նրանք կուլ են գնում ուժից վեր աշխատանքի, որովհետև կին են, մայր, քույր։ Ջրավորությունը գամել է նրանց ուղեղը բաղցի ահով։ Ի՞նչ անեն, այլ կերպ չի կարելի ապրել... իսկ ձեր անհամ ու խորթ պրոպագանդան էլ չի օգնում, իզուր այնպես պարծենում էր քո ընկերուհին...

ԱՆՏՈՆ.—Պրոպագանդան անզոր էր, որովհետև մեր բանվորուհիները ոգեղ են, անզրագետ, ուստ կինը սիրում է զգալ իրեն միշտ անմեղ նահատակի դերում, օժտված է վատնզավոր ցավ դարձած զիով, ստրկական ներողամտությամբ։ Նա ավելի շատ կզիջե, քան թե կպահանջե, ավելի շատ կլռե, քան թե կբողոքե...

ՄԱՐԹԱ.—(Սառեկ վշտացած) Այո, այս ուստ կինը ապրում է նահատակի դերում։ Այդպես է կինը, նրան անընդունելի քո անմիս ու անարյուն վարդապետությունը։ (Միծաղում է) Հա՜, հա՜, հա՜, հա՜։ Ի՞նչ սիրուն ու մխիթարական խոսքեր. «անգլիական շաբաթ, ութ ժամվա աշխատանք»։ Այդ ամենը մեկ համար չէ ասված։ Քո գրքերին նայելով՝ մեր կյանքը մի պարտավիր։ Նրանք իրար նման չեն, հավատա։ Դու գիտե՞ս, արդյոք, այդ ոգեղ բանվորուհիներին, որոնք այսօր, շաբաթ օրով ուշ են տուն գալու։ Գիտե՞ս, որ նրանցից շատերը ծնված են արդանդի սխալով, շատերը կրծքի տակ թարցնում են կենդանի արարածներ, աշխատանքից չզրկվելու ահով շատերին սպասում է մի ամբողջ շաբաթ չհավաքած, չժողոված տուն, կեղտ ու ապականության մեջ կորած երեխաներ, իր բացակայության ժամանակ պատահած անուղղելի սխալ, աննորելի մեղք... արբած ամուսնու կամ սիրեկանի անպատկառ հանցանք, հաճախ ծեծ։ (Մնում է լուռ) Քո բրոշյուրները քիչ գիտեն, հոգիս, այն ծով տառապանքից, որ ես տեսել եմ մանկությ... որքա՞ն անտանելի է կյանքը, որքա՞ն անպատիժ ոճիր ու տառապանք է ծնում ու սնում նա... Ուրիշ բան է մխիթարել մեկին, սովորեցնել, թեթևացնել մեկի բեռը, նեցուկ լինել ճգնաժամին։ Բայց դատել պետք չէ, Անտոն, մեղադրելը. պախարակելը. ոչ որ չի ուզում իր վատ լինելը, չի ձգտում դրան, բայց հակառակ իր ցանկության, նրան մատով են ցույց տալիս։ Ինչո՞ւ։ Չէ՞ որ կյանքն է

վատը, ինչո՞ւ է լափում, տրորում, մարդուն որդի նման սողալ տալիս, հողին հավասարեցնում...

ԱՆՏՈՆ.—(Ոտ ճիացած լսում էր նրան) Խոսիր, Մարթա, դատիր, թող քո սիրուն աչքերում փայլի բարկության հուրը։ Կեցիր միշտ այդպես, քո գեմքից հեռու վանիր լքման ամպերը, գլուխդ բարձր պահած դնա առաջ հաստատուն քայլերով (Շոյում է մազերը) առանց ետ նայելու... Սիրում եմ տեսնել քեզ այսպես։ Դու շատ ես տեսել, շատ ես ապրել քո այդ դպայուն քնքուշ սրտով։ Հավատում եմ, ասա, պատմիր, սովորեցրու ինձ, եղիր իմ մխիթարանքի մատյանը... երբ մոտդ եմ լինում, մի հմայիչ ջերմություն եռում է կրծքիս տակ, հրաբուխի նման, սրտիս վրա լույս է իջնում, հոգուս՝ անդորը... Թվում է, թե բացվում է մի հսկայական գիրք, վերցնում, գրկում է ինձ ու վայելքներ խոստացող մեղեդիով օրորում... (Նկատելով Մարթայի ժպիտը) Ժպտում ես։ Տես։ Ինչ լավ է, որ չես վշտանում ու տրտնջում։ Կաց այդպես, հոգիս թող առյուծ դառնա, մարերս՝ արծիվ, կաց այդպես՝ ես ծառացած եմ արհավիրքի ու մահվան դեմ, ես մահն անարգել ու կյանքը սիրել գիտեմ...

ՄԱՐԹԱ.—(Հանդարտ ժպտում է) Ոգևորվեցիր... Դու միշտ այդպես ես եղել։

ԱՆՏՈՆ.—(Նույնպես) Միշտ, իսկ այժմ անչափ, անսահման, ուզում եմ պատահողին գրկեմ, սեղմեմ գրկիս, վարակեմ իմ բերկրալի ոգևորությամբ, ուզում եմ, որ ամենքն էլ ինձ նման հուսան ու խնդան։ Ուզում եմ, որ առաջին վարակվողը դու լինես. դեպի լավը ունեցած հավատի անհատնում պաշարը դու կիսես ինձ հետ... Դե՛հ, պատասխանիր, ասա մի բան...

ՄԱՐԹԱ.—(Մեղմ) Խոսիր, կլսեմ սիրով...

ԱՆՏՈՆ.—Հա (Ժպտում է)... Ինչպե՞ս չոգևորվել, երբ բարի ու գեղեցիկ կանգնել են իմ դեմ հպարտ ու անպարտ, կանչում են արթուն.— Կաց, Անտոն, չընկճվես, բնավ. ե՛կ դեպի մեր գիրկը հպարտ ու անպարտ. ե՛կ... թռի տուր թևերդ արծիվների պես, որ կատեն շղթան ու չունեն երկյուղ, մրրիկների պես, որ արգելքների գոյության մասին չեն լսել երբեք, պատի՛ր բարձունքներից էլ հանդուգն, երազներից էլ արագ։ Ե՛կ, մենք քեզ լուր տվինք վարդավառ գարնան հետ, ծաղիկների մրմունջով, քամու թևերի վրա, թռչնիկների վզերից կախած, քո ուղին զուգեցինք աստղերի ցանցի տակ ցողապատ դաշտերի կրծքերին արևի ջերմ համբույրի տակ, կոթող լեռների լանջերին. քեզ ենք կանչում կյանքի ու էության հիմնի արծաթահնչուն զողանջներով՝ արթուն կաց և եկ, ու ես հույսը ճակատիս, սերը սրտիս դիմում եմ դեպի բարին ու գեղեցիկը. ես հավատում եմ նրա անխորտակելի, անհերքելի գոյության հաղթանակը՝ կարո՞ղ եմ չոգևորվել։

Ու գնում եմ ես այդ զողանջների արձագանքով հոգիս աղմկած, օր-

ըստորև թափելով իմ վզից կախված և կուրծքս բերող շղթաների օղակները, որ կյանքն իր հարակից պայմաններում, բռնությունն իր գոյության իրախնձանքի կերոններով կռել են ու կոփել, հոգով թույլերի ու մտքով անզորի համար։ Ահա ես, Մարթա, որ քնած էի, արթնացա ու կարդացի բնության հրաշալիքների գերագույն գաղտնիքը, քրքրեցի մարդկային հոգու ապրումների ոսկեղջև հյուսքին։ Ահա ես, որ սողում էի ցեխոտ գետնի երեսին, մտքով երկինքն եմ քրքրում։ Ես, որ աշխատում էի անդուլ վառ հնոցի առաջ, շեկ երկաթին տված ուժից ու քրտինքից, անմասն, անհաղորդ, այժմ հնոցն ու երկաթը ընկեր են ինձ, իսկ մուրճս իմ կամքին դերի... Կարո՞ղ եմ չոգեորվել ես... Թող լինի դարբը աշուն ու անձրև, քո սասծի նման, ես արհամարհում եմ նրա լրումը, գարունն է գալիս... (Ժպտալով նստում է Մարթայի մոտ)։

ՄԱՐԹԱ.—Երանի՜ քեզ։

ԱՆՏՈՆ.—(Անսահման սիրով) Ինչո՞ւ։

ՄԱՐԹԱ.—Այնպես, եթե ես քեզ նման հոգեկան վայելքների այդքան պաշար ունենայի, մենակություն չէի զգա և կապրեի երջանկի։

ԱՆՏՈՆ.—Իսկ մարմի՞նը, մի բաժանիր նրանց, կիսախտես գոյության իմաստուն ներդաշնակությունը, հոգով ապրելու գարն անցել է...

ՄԱՐԹԱ.—(Հանան) Ես կապրեի, ինչի՞ս է պետք մարմնավորը, որ կեղտի ու ոճիրի օրրան է (Նրազանմով) Իսկ հոգուն մեկի պղտոր հայացքը անգամ չի հասնի։

ԱՆՏՈՆ.—Սխալվում ես. էությունը մի է, անբաժան, մարդն է նրան ջոկ-ջոկ անուն տալիս, լոկ տարբերելու նյութականը վերացականից։ Նրանք չեն բաժանվում, վասնզի անբակտելի են։ Սուտ է, եթե մեկն ասում է՝ ապրում եմ հոգով. դա միայն ճգնավորական պատանցանք է, որ թողել են մեզ անցնող դարերն ու քրիստոնեական վարդապետությունը, ուստի նույնպես, որ հոխորտում են միայն մարմնով, չիր դարձնելով հոգեկանի դերը։ Եթե առաջինը աշխարհիս ունայնության համար է, երկրորդը նրա շինության, ուր մարմնին սնունդ տալու համար չի արհամարհվում ոչ մի պիղծ միջոց, ուր մարմնի բարեկեցության համար հարստահարվում են սերունդներ, կեղեքվում անզորներ... տեսնո՞ւմ ես, սիրելիս... գնանք մի քիչ թափառելու, խաղաղ ու տաք է իրիկունը ազատ դաշտում ազատ երկնքի տակ կիսոսենք, բնությունը արձակում է մարդու կապերը, նա կապանք չի սիրում։ Գնանք, Մարթա։

ՄԱՐԹԱ.—Մայրս դա, հետս... (Սկսում է Անտոնի թափթփված իրերը հավաքել, սեղանը պատրաստել, գնում է դուրս)։

ՄԱԿԱՐ.—(Անտոնին, որ մտազբաղ շրջում է սենյակում) Իսկ ես այսօր 9 կ. վաստակեցի. 3-ը կպահեմ ջութակիս համար, 5-ը կտամ մայրիկին, 1-ը վաղը կծախսեմ ինձ համար։ (Ինքն իրեն) *Հավաքում ես կեղտոտ հոտած լաթեր ու փող է դառնում։* (Ժպտում է) *Երբ 5 մանեթը*

լրացավ, իսկույն Մարթայի հետ կգնամ ջուրթակ գնելու. ահ, ինչպե՞ս նվագելու եմ, լավ սրտառուչ երգեր։ (Ցնորամիտ, անշարժ հայացքով)։ Ես այդ երգերն այժմ գիտեմ... Զգում եմ, նվագեցի, ստացած վիկտ, լաց կլինեք (Մնում է լուռ և ապա պատից վար է առնում մի հնամաշ ջուրթակ և նվագում ինչ-որ տրտում հառաչանքով, լայն բացված աչքերը հառած մի կետի։

ԱՆՏՈՆ.—(Շոյում է) Լավ երեխա (Փող է տալիս ու նստում մոտը)։

ՄԱԿԱՐ.—(Սրափվում է) Շնորհակալ եմ, քեռի։ (Խաղում է փողի հետ) Այսօր երբ հավաքածս քուրջերը տարա, Շմարցի պառավ մայրը մենակ էր.— «Նստիր.— ասաց,— կիսոսենք, դու լավ տղա ես»։ Նստեցրեց բակում։ Ես նրան պատմեցի, որ չեմ ծխում, օղի չեմ խմում մյուս քուրջ հավաքողների նման։ Հավաքում եմ փող, որ ջուրթակ գնեմ։ Նա ինձ ապուր ավեց ձկով եփած և ասաց, որ ազոթելիս հիշեմ իր որդի Ահարոնին, որ մեռցրել են չար մարդիկ։ Իսկ ես նվիրեցի նրան աղբանոցում գտած մի փոքրիկ մկրատ։ Այդ մկրատը ես վճռել էի տալ մեր դրացի աղջիկ Անուշին, բայց չտվի. անպիտան, երես առած աղջիկը չի ուզում հետս խաղալ, ասում է, որ իմ դեմքը նման է եկեղեցում կախված մի սրբի դեմքի... Խիստ բարի կին է այդ պառավ հրեան և միշտ լաց է լինում։ Երբ ջուրթակ գնեմ, նա ինձ սովորեցնելու է մի հրեական երգ, որ ինքը երգելիս է եղել Լեհաստանում իր օրիորդ ժամանակ։ Նա առաջ այնքան դեղեցիկ է եղել, որ թագավորի որդին նրան չի առել կնության լոկ հրեա լինելու պատճառով...

ԱՆՏՈՆ.—(Ցույց տալով ջուրթակը) Իսկ այս ո՞վ է գնել։

ՄԱԿԱՐ.—Մարթան։

ԱՆՏՈՆ.—Վաղո՞ւց է։

ՄԱԿԱՐ.—Երեք տարի կլինի, այն ժամանակ մենք լավ էինք ապրում. ձեր սենյակում կենում էր հիվանդ օրիորդը, նա էլ ջուրթակ ուներ ու մի օր բարկացած խփեց պատին, փշրեց։ Ես չէի սիրում նրան, իսկ նա Մարթային շատ էր սիրում. կարդալ, գրել սովորեցրեց։ Այն ժամանակ Մարթան վատ էր, տուն չէր գալիս շաբաթներով, հորս նման հաշիվը չէր ճանաչում, օգնում էր ամենքին, իսկ օրիորդը կռվում էր նրա հետ և լալիս էին երկուսն էլ։ (Խորհրդավոր) Այժմ Մարթան խնամում է օրիորդի երեխային, որ ապրում է դյուղում մեր բավորի մոտ։ Մարդու բան չասեր, Մարթան ինձ կծեծի... Այդ օրիորդի պատճառով Մարթան իր փողերը վատնեց, նա մեզ մոտ ապրում էր տիրուհու նման. նրա պատճառով բանտ նստեց...

ԱՆՏՈՆ.—Ինչո՞ւ։

ՄԱԿԱՐ.—(Հպարտ) Գնացել էր օրիորդի ամուսնու մոտ, ապտակել էր նրան, վատ խոսքեր էր ասել։ Հետո խաբեցին, որ Երեխան մեռել

է։ Մարթան մի թուղթ տարավ ու փող ստացավ, որ օրիորդը բժշկվի, սակայն նա մեռավ, փողը մնաց երեխային։ Իսկ եթե նա էլ մեռնի, կըմնա Մարթային, օրիորդն է գրել այդպես։

(Ներս են մտնում Մարթան և մի ներկված, դեղին մազերով, գունատ ճիճաք աղջիկ, որ հեկեկում է)։

Մ Ա Ր Թ Ա.—Հանգստացիր, կտեղափոխվես ինձ մոտ, կապրենք միասին։

Մ Ա Կ Ա Ր.—(Անտոնին, խոնարհվավոր) *Տեսնո՞ւմ եք...*

(Աղջիկը սրբում է աչքերը և խաչակնքում։ Անտոնը մտնում է իր սենյակը։ Մարթան հետևում է աչքերով)

Ա Ղ Ջ Ի Կ Ը.—Այսպես, հարգելի տանտիրուհին է գրավում վարձի փոխարեն ու ինձ փողոց նետում, գնում եմ Պաշայի մոտ։ (Ժպտում է) *Դու տեսնո՞ւմ ես նրա ամուսնուն, անբախտ Պաշա։ Հա, նրա ամուսինը հյուրանոցում է, ինձ հանդիսատ չի տալիս։ Պաշան վիրավորվում է ու ինձ մեղադրում, որ գրավում եմ նրա ամուսնուն ու վանդում է։ Մի քանի օր ցերեկները թափառում էի, իսկ գիշերները քնում պուրակում։ Այսօր լսեցի, որ իմ* (ուզում է հայհոյել, Մարթան արգելում է) *սիրեկանը չէ թե Ռուսաստան է գնացել մեռած մորը թաղելու, այլ կապվել է մի պառավ պոռնիկի հետ։* (Լալիս է ու հազում սաստիկ)։

Մ Ա Ր Թ Ա.—(Կարեկից) *Հանդարտվիր։ Ես կգնամ նրա մոտ, կխոսեմ։ Գուցե սիրո՞ւմ էիր...*

Ա Ղ Ջ Ի Կ Ը.—(Անփույթ) *Ի՞նչ սեր, ո՞վ է ինձ սիրել, որ ես էլ ուրիշին սիրեմ։ Դժվարն այն է, որ երկու հատ մատանիս ծախեցի ու նրան նոր կոշիկներ գնեցի։ Կոշիկները հին էին, իսկ ես չէի ուզում, որ աղջիկները ծաղրեն նրան։ Ես ամենքին էլ խաբել էի, որ 20 մանր. ոսկիկ է ստանում, իսկ Ռուսաստանում էլ հող ու խրճիթ ունի։ Ահա թե ինչ։* (Լալով) *Իսկ այժմ նա ապրում է ուրիշի հետ իմ սեփական կոշիկները հագին։* (Հազում է) *Կուրացնելու եմ երկուսին էլ, պատմելու եմ ամենքին, որ նա ինձ տանում է...*

Մ Ա Ր Թ Ա.—(Դարձյալ խանգարում է) *Լսիր. կան բաներ, որոնց մասին չեն խոսում...*

Ա Ղ Ջ Ի Կ Ը.—(Ծիծաղում է) *Տեր Աստված, կարծես օրինավոր կին լինեմ* (Հազում է)։

(Մտնում են անկարգ, աղմուկով մի խումբ աղջիկներ)։

Ա. Ա Ղ Ջ Ի Կ.—Քո արածը խոզություն է. ինչո՞ւ չես երևում։

Բ. Ա Ղ Ջ Ի Կ.—Անցյալ կիրակի Դոնի ափին բեֆ արինք. եղեգնուտի միջից մի վերարկու գտա, ծախեցի 3 մանեթով.

(Պտույտ է գալիս կրունկի վրա)։ Անտոնն ուզում է դուրս գնալ։ Լիզան մոտենում է ու բարևում։ Նա ժպտում է ու փախչում)։

Գ. ԱՂՋԻԿ.—(Լուռ, Անտոնին դիտելուց հետո) *Այժմ ինձ չի զարմացնում քո նստակյաց կյանքը։*

ԼԻԶԱ.—(Բարձրաձայն) *Զուր ենթադրություն։*

Գ. ԱՂՋԻԿ.—*Քե՞զ ինչ։*

ՄԱՐԹԱ.—*Դիտե՞ք, աղջիկներ, դժվար թե կարողանամ այսօր տանից դուրս գալ... դարձ ունեմ...*

Ա. ԱՂՋԻԿ.—*Ասա որ ամաչում ես մեզ հետ երևալու։*

Գ. ԱՂՋԻԿ.—*Կամ թե ամուսնանում ես...*

ՄԱՐԹԱ.—*Ո՛չ առաջինը և ո՛չ էլ երկրորդը* (Մնում է շվար)։

ԼԻԶԱ.—(Մի պահ մտածում է, միայն Մարթային) *Ես նրանց խոսք կհասկացնեմ։ Եթե լուրջ պատճառ ունես, կեցիր։ Փող պե՞տք է, վաղը կբերեմ պարտքս, հիվանդ չե՞ս...*

ՄԱԿԱՐ.—*Ես ինչպե՞ս առում եմ այս աղջիկներին, երբ մեծանամ, տուն թողնելու չեմ...*

ՄԱՐԹԱ.—(Միծաղում է)։

ԼԻԶԱ.—(Ներս է բռնկում) *Ասա, ի՞նչ է պատահել, չկարողացա համբերել։*

ՄԱՐԹԱ.—(Բռնում է նրա կոնակից) *Եկ թողնենք այս կյանքը։*

ԼԻԶԱ.—(Ապշած) *Մեռնե՞նք...*

ՄԱՐԹԱ.—(Շտապ) *Ո՛չ, ապրենք այլ կերպ, մի բան անենք։*

ԼԻԶԱ.—*Ի՞նչ դիտենք, որ ինչ անենք, հանգի՞ր ես անում։*

ՄԱՐԹԱ.—(Խեղճ ու մոլոր) *Ես լուրջ եմ ասում։*

ԼԻԶԱ.—*Իսկ ես չեմ հասկանում. ապրենք այլ կերպ, կարծես մեկին խանգարում ենք։*

ՄԱՐԹԱ.—*Դեհ գնա։* (Դռից հայցողում են) *աղմկում են դռան առաջ, լավ չէ։*

ԼԻԶԱ.—(Երկար զարմացած դիտում է Մարթային) *Բարկացա՞ր։* (Պարում է կաֆե շանտանային պար երգելով)։

«Ո՛չ աղջիկ ենք, ո՛չ էլ կին,
Պատկանում ենք ամենքին,
Ու այս կյանքում անօգուտ
Ջենք վայելում սեր ու գութ։

Գարուն, ամառ ու ձմեռ
Օր կը քաշենք առանց բեռ,
Մինչ թառամի մեր կաշին
Հողը տիրե մեր լեշին...։

Ահա քեզ մեր կյանքը, մեր գործը (Գնում է)։

(Մարթան հավաքում է աղջիկների խառնած իրերը, մտնում է Անանուն, լուռ, գունատ)։

Ա Ն Ն Ա.—Մակար, եկե՞լ ես, սպասել տվի, (Շտապով նայում է) *եկ սրտիս, եկ իմ միակ, իմ հարազատ։* (Գրկում է, համբուրում։ Նստում են ուտելու։ Մարթայից ծածուկ ծոցից հանում է օղու մի փոքրիկ շիշ)։

Մ Ա Կ Ա Ր.—(Կամաց) *Մի քիչ էլ ինձ թող։*

(Աննան տալիս է բաժին։ Մարթան գլուխը Անտոնի սենյակի դռանը հենած կանգնում է լուռ ու մտատանջ)։

Մ Ա Ր Թ Ա.—Սիրում եմ քեզ, սակայն չեմ համարձակվում հայտնել քեզ այդ։ Վախենում եմ մոտենալ քեզ՝ ես մեղավոր եմ ու արատավոր, դու անմեղ ու արժանի...

Մ Ա Կ Ա Ր.—(Մորը) *Պառավն ասում է, որ նա այնպես գեղեցիկ է եղել ու երգել է այնքան լավ, որ թագավորները նրան կնության չեն առել լոկ հրեա լինելու պատճառով։*

Գ. ԱՐԱՐ

Շմեղ տուն, պարտեզ, շատրվան, լայն տերրասում բացած շեն սեղան, դիմացը հեռուն տանող լայն ծառուղին մաքրում ու ջրում է, ծերուկ «խոխոլը», պնդված մալոռուս ծծմայրը մանկական մի սիրուն կառք բռնած շրջում է։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Հեռվից ապշած դիտում է նրան) *Բո՛ւհ, սատանի ճուտ, փքվել է հնդկահավի նման։* (Ավելում է կասես բարկացած)։

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—Պատ, սպասիր անցնեմ, փոշի մի հանիր։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Հայացքով շափում է նրան) *Վաղո՞ւց է, որ այդպես քնքշացել ես։*

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—(Միծաղում է) *Վաղո՞ւց...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Բայց քայլում ես կոշիկ հագած արջի նման։

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—(Կառքը շրջում է դեպի ծերուկը) *(Իսկ դու լավ ես կը-ծում նույնիսկ ատամներիդ վատ ժամանակը։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Ինչ-որ փնթփնթում է) *Դեհ անցիր, գնա՛։*

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—(Նստում է նստարանի վրա ձեռքերը փորին խաչելով) *Օֆ, տեսա, որ գյուղից նոր եկած ես, ասի գնամ քիչ խոսեմ, մխիթարվեմ, իսկ դու վռնդում ես։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Նայում է աչքի տակով ու ժպտում) *Որտեղացի՞ ես։*

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—(Անգիր արած դասի նման) *Խարկովյան նահանգից, Ստարաբիլյան գավառից, Շուշկինյան վիճակից, Ստալակև գյուղից։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Ավելի մաքրմորեն) *Ինչպե՞ս է, գո՞հ ես դրանցից* (Ցախավելով ցույց է տալիս տունը)։

Ծ Ծ Մ Ա Յ Ր.—Է՜հ, ոչինչ, լավ են կերակրում, հագցնում։

ՄԵՐՈՒԿ.—(Քմծիծաղ) Առաջինը երևում է, համաձայն եմ, իսկ երկրորդը ինձ դուր չի գալիս։

ՄՄՄԱՅՐ.—Ի՞նչ տրած, ձևը այդ է։ Դժբախտությունը նրանումն է, որ ոչ մի կերպ չեմ հաշտվում իմ վիճակի հետ։ Տխուր է, գյուղի կարոտը մաշում է ինձ։ Դիշերները չեմ քնում, այս գիշեր էլ այնպես տրխուր էր, նստեցի պատուհանի վրա ու մտքով սլացա գյուղ։ Թվաց, թե լսում եմ քնած անապատի մշշոց. մեր դրացու դամփռը հաչեց մեկի վրա, արլսրները ձայն տվին իրար, վաղեց մեկը փողոցով... հասավ ինձ քաղաք խոտի անուշ բուրմունքը, արբեցրեց ու ես կարծելով թե տանն եմ, սկսեցի բարձր ձայնով երգել։ (Աչքերն է սրբում) Երևան քնից սարսափահար զարթնեց, լաց եղավ... ինձ անարդեցին, որ մյուս անգամ չհամարձակվեմ հիմարանալու...

ՄԵՐՈՒԿ.—(Կարեկցորեն) Տանը ի՞նչ ունես։

ՄՄՄԱՅՐ.—Սկեսրայր, սկեսուր, մի տղա, երկու հարսնացու տալ և մի 8—9 ամսական տղա, ամուսինս էլ գինովոր է գնացել հետու երկիր։ Գրում է, որ գարուն, ամառ ձյունը չի հալվում սարերի գագաթից։

ՄԵՐՈՒԿ.—(Ծիծաղում է սրտանց) Թու, սատանի ճուտ, չի՞ հալվում։

ՄՄՄԱՅՐ.—Հա, ապրում են զարմանալի մարդիկ. խաչակնքում են, մեծ-մեծ եկեղեցիներ ունեն, բայց ռուս չեն։

ՄԵՐՈՒԿ.—(Հրնվում է) Թու, սատանի ճուտ, խաչակնքում են ու ռուս չե՞ն։

ՄՄՄԱՅՐ.—Կանայք ճակատներին շատ ոսկի դրամներ են հագնում... սև մազերով են, սև աչքերով...

ՄԵՐՈՒԿ.—(Հրնվանքին չափ չկա) Թու, սատանի ճուտ, ոսկի են հագնում... (Հանդարտվելուց հետո) Հող ունե՞ք։

ՄՄՄԱՅՐ.—Շատ քիչ... Ինձ տագրս օր չէր տալիս, ասում էր ապրիր հետս։ Հաղթվ կերակրվում ենք, ասում էր, հնարավորություն չկա, ասում էր, կարգվել մինչև եղբորս գալը, ասում էր, կապրենք միասին, ես քեզ մի դեյրացու, ասում էր ու տիրացուի կնոջ պես մի գլխի շալ կդնեմ, ասում էր...

ՄԵՐՈՒԿ.—(Զարմացած) Ինչո՞ւ չհամաձայնվեցիր։

ՄՄՄԱՅՐ.—Ես վախենում էի նրանից, նա վատ գրքեր էր կարդում, ասում էր... (Սատիկ ծիծաղում է) աշխարհը կլոր է, ամերուկի նման, օդի չէր խմում, չէր խաչակնքում...

ՄԵՐՈՒԿ.—(Սատիկ զայրացած) Թու, սատանի ճուտ։

ՄՄՄԱՅՐ.—(Ծիծաղով) Ասում էր, որ ինքն էլ, ես էլ, նույնիսկ գյուղի քահանան՝ պոչ ունենք, առաջ կապիկներ ենք եղել ասում է (Թուլանում է ծիծաղից)։

ՄԵՐՈՒԿ.—Թու, սատանի ճուտ, անպատկառ։

ԾԾՄԱՅՐ.—(Աչքերն է սրբում) *Ասում էր, որ հասարակական հողը պետք է բաժանել հավասար, տերերն էլ, ռամիկներն էլ պիտի հավասար ցանեն, քաղեն, ասում էր։*

ԾԵՐՈՒԿ.—*Թու...* (Մտազբաղ ծոծրակն է քորում)։

ԾԾՄԱՅՐ.—*Մարդիկ հավասար են, ասում էր։ Աստված տեր ու ծառա չի ստեղծել։ Ասում էր։*

ԾԵՐՈՒԿ.—(Մոլոր նայում է ձեռքերին) *Թու...* (Ցսպում է իրեն)։

ԾԾՄԱՅՐ.—*Զինվոր գնալ պետք չէ, ասում էր, պատերազմը մեղք է... բոլոր մարդիկ եղբայրներ են, ասում էր..*

ԾԵՐՈՒԿ.—*Հա՞* (Մնում է շշմած)։

ԾԾՄԱՅՐ.—(Երկյուղով նայում է տան կողմը և իսկույն բարձրանում ու հեռանում է)։

ԾԵՐՈՒԿ.—*Թու, սատանի ճուտ... ինչեր ասաց... «մարդիկ եղբայրներ են, ասում է»...* (Մնում է զարմացած)։

ՄԱԿԱՐ.—(Գալիս է մի փոքրիկ շուն ու բերք ձեռին) *Բարև պապ։*

ԾԵՐՈՒԿ.—*Աստծու բարին թող, ի՞նչ կամենաս։*

ՄԱԿԱՐ.—*Սրանից երկու օր առաջ այս շնիկը գտա փողոցում։ Քույրս այսօր թերթում կարդաց, որ խնդրում են գտնողին վերադարձնել։* (Ցույց է տալիս բերքը) *Տե՛ս, այստեղ գրված է, որ խոստանում են վարձատրություն։*

ԾԵՐՈՒԿ.—(Խեր խեր նայում է բերքին) *Գրածին խելքս չի հասնում, անգրագետների բանակից եմ, բայց որ վարձատրելու են, այդ լավ է, տար, աղա, մի բան կտան* (Մակարն ուզում է գնալ) *բայց կեցիր, ինչո՞ւ բերիր, կխաղայիր հետը, նրանք շատ ունեն։*

ՄԱԿԱՐ.—*Ես ուզում էի թողնել, քույրս ասաց տար, նա հասարակ շուն չէ, դժվար է կերակրել։*

ԾԵՐՈՒԿ.—(Ժպտուն) *Տեսնո՞ւմ ես, խելքը քույր ես ունեցել, թեև աշխարհում այնքան խելոք կնիկ կա, որքան սև կոպեկ իմ ու քո դրպանում, ղե՛հ տար։*

(Մակարը մոտենում է տերտերի սանդուխներին, աղախինը ինչ-որ բան է դուրս բերում տան հետևից ու դնում սեղանի վրա, Մակարին նրկատելով)։

ԱՂԱԽԻՆ.—*Ի՞նչ ես ուզում։*

ՄԱԿԱՐ.—(Վախկոտ վար է առնում գլխարկը) *Ձեր շնիկն եմ բերել, օրիորդ, այստեղ գրված է...*

ԱՂԱԽԻՆ.—*Ա՜, դա մեր շնիկն է, ինչպես պիտի ուրախանա օրիորդը։*

(Վերցնում է շունը և հեռս վազում։ Մակարը զարմացած շուրջն է դիտում)։

ՕՐԻՈՐԴ.—(Դուրս գալով տերտերս) *Այդ դո՞ւ ես բերել իմ շնի-*

կին, բարի տղա, որտեղից գտար, երբ, քեզ ո՞վ տվեց մեր հասցեն (Նկատելով բերքը) *հա, կարդալ գիտե՞ս։*

Մ Ա Կ Ա Ր.—(Հպարտ) *Քույրս, Մարթան կարդաց. այստեղ գրված է, որ...*

Օ Ր Ի Ո Ր Դ.—(Ժպտալով) *Որ գտնողին խոստանում է վարձատրություն։* (Մակարը գլխով է անում) *Այս բոպեիս, հոգիս, սպասիր մի քիչ։* (Նեռս է վազում, լվում է ծիծաղ, աղմուկ, խնդրում են մեկին նվագել, ծափահարում են)։

Մ Ա Կ Ա Ր.—(Մտազբաղ) *Եթե մի մանեթ տա... Ինչ սիրուն աղջիկ էր, ասաց «շնորհակալություն, բարի տղա»։* (Վճռական) *Երևի կտա...* (Համոզված) *Իհարկե կտա, իսկ եթե չբերեի՝ լավ կլիներ։* (Նայում է շուրջը) *Մարթան ապրեր այստեղ... Նա սաստիկ սիրում է ծաղիկներ, պարտեզ... Մարթան էլ, մայրիկն էլ ասացին, որ ինչ-որ տան, իմն է, ջութակիս բախտին։ Ես համոզված եմ, որ մի մանեթ կտա։* (Կամաց ու խիստ նուզված) *Իսկ երբ ջութակ գնեցի, մի օր կգամ այստեղ, առավոտ կանուխ, երբ դեռ թռչունները քնած են լինում, ամենքը, կթաքնվեմ այս ծաղիկների տակ, կնվագեմ մի նուրբ երգ սիրուն օրիորդի համար։ Նա կզարթնի իմ նվագի ձայնից, կհրամայի երգչին իր մոտ բերել. ծառաները կընկնեն քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, որ գտնեն ջութակահարին և ով էլ որ լինի, ուր էլ որ լինի տանեն օրիորդի մոտ՝ ճիշտ հեքիաթի նըման։* (Պարծենկոտ) *Կգտնեն։ Ես իսկույն կփախչեմ պատավ Շմարցի մոտ։ Նա ինձ կթաքցնի քուրջերի մեջ՝ փնտրիր որ գտնես...*

(Տանից լսվող աղմուկը դադարում է—լսվում է նվագածություն, հեծկլտում, լալիս է ջութակը նուզիչ ելևէջներով և բաց լուսամուտներից դուրս լողում։ Մակարը մի պահ մնում է շանթահար, գլխարկը վար է ընկնում ձեռքից։ Նրա վտիտ մարմինը մերթ դողում է, մերթ ցնցվում, կցկտուր ելևէջները հիպնոսացրած նրան, քաշում են մագնիսի նման դեպի իրենց։ Մակարը վերացած, լայն բացված աչքերը հառած անորոշ բարձրության, թերև ու անձայն լուսնոտի նման տերասի սանդուխի պատերին հենված սողում է դեպի վեր, վիզն երկարացրած ձգվում է դեպի նվագը և անմտորեն կպչում է սեղանին ու վար ձգում ամանեղեր, գդալներ և այլն)։

Լ Ա Կ Ե Յ.—(Տերասի ձախ կողմից ինչ-որ բերելով) *Ախ, դու սրիկա.* (խփում է տղին ու դեն հրում) *Դեռ կաթնատամներդ չեն թափվել զողություն ես անում։*

Ն Ե Ր Մ Ի Յ Ջ Ա Յ Ն Ե Ր.—*Ի՞նչ պատահեց։*

Լ Ա Կ Ե Յ.—(Հավաքելով թափթփված իրերը. Մակարը ցնորամիտ ժպիտը երեսին կանգնել է պատի տակ) *Օր ցերեկով գողություն։* (Մակարը նորից դիմում է դեպի նվագը) *Ես ցույց կտամ, անպիտան գող* (հարձակվում է որ խփի)։

ՕՐԻՈՐԴ.—(Մոտենալով լուսամուտին) *Սխալվում ես, դա իմ շնիկը բերող տղան է, երևում է որ աղքատ, բայց աղնիվ տղա է։* (Մակարին) *Այս բոպեիս* (Ուզում է հեռանալ)։

ԼԱԿԵՅ.—*Ես նրան բռնեցի գողության մեջ, օրիորդ։*

ՕՐԻՈՐԴ.—(Բարկացած) *Զրպարտել անմեղին գովելի չէ, իսկ ծեծելը մի թույլ տղայի, ավելի քան անգթություն* (Հեռանում է զայրացած)։

ԼԱԿԵՅ.—(Վշտացած ու բարձր, որ ամենքը իմանան) *Ես չզրպարտեցի, այլ ձեր ոսկի գդալները հանեցի գրպանից* (Մինչ այն դադարում է նվագը, հյուրերը դուրս են գալիս)։

ՄԱԿԱՐ.—(Որ դեռ չէ սթափվել, զմայլանքի ժպիտը երեսին դիմում է հյուրերին) *Ի՞նչ երգ... Ինչպիսի՞ ելևէջներ... Ես հենց այդ տեսակ երգն եմ սիրում, որ կասես կպչում է ինձ, հոգուս, մարմնիս, գրկում է ինձ, օրորում, համբուրում ու լալիս...* (Աղերսանքով) *Ո՞վ էր նվագում նոր ջութակի վրա։* (Լսողների դեմքին աճ ու կասկած) *Թողեք գեթ մոտից նայեմ, չէ՞ որ ես էլ ջութակ եմ գնելու...* (Տխուր ու հանդարտ ձայնով)։ *Ես դեռ շատ փոքր էի, երբ տեսա Երապում, որ մի ծերուկ ինձ ոսկեկալար ջութակ տվեց։ Երբ ես աղեղը քսեցի լարերին, ջութակը ճչաց ու ես արթնացա։ Մարթան, Կլարան լալիս էին, մայրս ճչում էր ցնորվածի պես, բանվորները այլայլած վազում էին դես ու դեն, կաթսան պայթել ու սպանել էր հորս։ Մենք հեռացանք գործարանի հանրակացարանից, իսկ ջութակի ճիչը մնաց այստեղ* (Ցույց է տալիս կուրծքը) *կրծում է ու ճնշում։ Երբ ասում եմ մորս, նա չի հասկանում։ Մարթան ասում է, որ ամենքս էլ ծնված ենք մեր բաժին բեռով, որ պիտի ճնշեն մեզ գիշեր-ցերեկ...* (Մնում է մի պահ լուռ) *Երբ ջութակ ունեցա, պիտի նվագեմ, որ հալվի վերանա այդ ճնշումը իմ կրծքի վրայից, պիտ նվագեմ, որ մարդիկ իմանան իմ ցավը, իսկ երբ նվագեցի, չեն արդելի, ուզեն չուզեն կլսեն...* (Ընդհանուր անկպաստ տրամադրություն ենկատելով) *Ես գող չեմ։* (Լալիս է աղեկտուր) *Ես շնիկը բերի, բարի օրիորդը ինձ խոստացավ վարձատրել։*

ՕՐԻՈՐԴ.—*Թողեք նրան, նա ճիշտ է ասում։*

Մի ջանել շրեղ հագնված երիտասարդ.—*Չեմ հասկանում, պարոնայք, ակներև է, որ մենք գործ ունենք* (գլուխն է ցույց տալիս) *հետ։ Նման դեպքում ամեն մի կարգասեր քաղաքացու պարտականությունն է դիմել ուր որ հարկն է։*

ՕՐԻՈՐԴ.—(Զարմացած) *Ինչե՞ր եք ասում, հայր, տո՛ւր...*

ՏԱՆՏԵՐ.—(Հաստափոր ծերուկ) *Վարձատրության մասին ոչ մի խոսք...*

ՋԱՀԵԼ ՊԱՐՈՆ.—(Մակարին) *Դուք ի՞նչ գործով եք պարապում... կամ այսպես ասած, ը՞, ի՞նչ մարդ եք։*

ՄԱԿԱՐ.—(Մտերմորեն ժպտում է) *Ես հրեա Շմարցի համար բուրջ եմ հավաքում։*

ՄԻ ՀԱՍՏ ԿԻՆ.—*Քաղցած էիր, հաց ուզեիր. քո ինչ գործն է սեղանից գդալները հավաքել այն ժամանակ, երբ դեռ մենք նախաճաշած չենք։* (Ընդհանուր ծիծաղ)։

ՄԱԿԱՐ.—(Որ ծիծաղում էր ամենքի հետ) *Հավատացեք, ես ոչինչ չեմ վերցրել։* (Դիմում է օրիորդին) *Որոնեցեք* (Դուրս է քաշում գրպանները) *Տեսեք, օրիորդ, չկա ոչինչ։*

ՀԵՏԵՎԻՑ ՄԵԿԸ ԻՐ ՀՂԻ ԿՆՈՋԸ.—*Մաշա, քեզ այդ գրության մեջ չի կարելի դիտել զանազան այլանդակություններ, գնանք* (Թևանցուկ գնում են)։

ՏԱՆՏԵՐ.—(Ինչ-որ նրանանգներ է տալիս մեկին, նա վազում է իսկույն դեպի փողոց)։

ՕՐԻՈՐԴ.—*Հայրիկ, ինձ թվում է, թե տղան անմեղ է։*

ՏԱՆՏԵՐ.—*Ավելի վատ։*

ՕՐԻՈՐԴ.—(Զարմացած) *Ինչո՞ւ։*

ՏԱՆՏԵՐ.—*Ուրեմն* (Ցույց է տալիս գլուխը) *Այս մասը վնասված է։*

ՕՐԻՈՐԴ.—(Վախեցած նորն է փաթաթվում) *Չես սխալվում, խեղճ տղա։*

ՏԱՆՏԵՐ.—(Բռնելով աղջկա դունչը, համբուրում է նրան) *Ես միայն քնածս ժամանակ եմ սխալվում։*

(Մտնում է մի բաղաքապան, բաշ իր ղերի մեջ և մոտենալով Մակարին, բռնում է թևից ու գնում)։

ՄԱԿԱՐ.—(Լալով) *Ես ոչինչ չեմ վերցրել, որոնեցեք, հավատացնում եմ։*

ՔԱՂԱՔԱՊԱՀ.—*Ձա՛յնդ, լակոտ, տերերը սուտ չեն խոսում, դեմքիդդ երևում է՝ ինչ պտուղ լինելդ։*

ԾԵՐՈՒԿ.—(Որ այդ ամենը դիտում էր ծառի ետևից, գաղտագողի մոտենում է բաղաքապանին) *Փողոց դուրս գալուն պես թող աղատ այդ թշվառին, աստված սիրես, նա անմեղ է։*

ՔԱՂԱՔԱՊԱՀ.—(Ցասկոտ սպառնում է նրան ու հեռանում)։

ՀԱՍՏ ԿԻՆ.—*Իսկ մատները, նկատեցիք, ես կարդացել եմ մի տեղ, որ գրպանահատները այդպիսի տղաներին վերցնում են սովորեցնելու իրենց արհեստը. բարակ, երկար մատներով խիստ դյուրին է մուտք գործել ուրիշի գրպանը, ժամացույցին կամ քսակին տեր դառնալու։*

ՀՅՈՒՐԵՐԻՑ ՄԵԿԸ.—*Ինչ աստիճանի հարպկություն. մտել է դողության, կենսագրականն է պատմում։ Բանից դուրս է գալիս* (Օրիորդին) *որ ձեր հրաշալի նվագածության ունկնդիրներից մեկը և...* (Ծիծա-

ղում են) *ուզում էր ձեր գլխների վրա մրցել ձեզ հետ* (Ընդհանուր ծիծաղ):

ՋԱՀԵԼ.—Զարմանալի կերպով այլասերվում է մարդկությունը։ Երեսակայեք մի 10—12 տարեկան տղա և այդ ասոիճան բարոյական անկում։ Սոսկալի է պարոնայր, միանգամայն սոսկալի...

ՀԱՍՏԿԻՆ.—Սպասեցեք, մի նման դեպք պատմեմ։ Թաթախման երեկոյին աղջիկս տոնածառ էր սարքել։ Հրավիրված էին շատ երեխաներ։ Երբ մեծերը սեղան նստեցին, փեսան, այդ միլիոնատեր դեմոկրատը (ծիծաղում են) *դեհ, գիտեք... Հա, նա հրամայեց սպասավորող լակեյին, որ դուրս գա փողոց և պատահած աղքատ կնոջ, աղամարդու, նամանավանդ երեխայի գլխավոր մուտքից պատշաճավոր ներս ընդունեն և բերի հյուրերի մոտ։ Շատերը այդ քմահաճույքը խիստ սրամիտ գտան, շատերը բողոքեցին, որ երեխաները կարող են վարակվել։ Վերջապես, վճռեցինք բակում, դռնապանի հսկողության տակ մի լավ սեղան սարքել, որ մտնողը ուտե, նվերն ստանա և հեռանա։ Այսպես էլ արին։ Իհարկե, փեսայիս առաջարկը իզուր չանցավ. տոն իրիկունով փողոցում ինչն է շատ, եթե ոչ աներես աղքատները, այդպես հերթով մտնում են, ուտում ու հեռանում։ Ի միջի այլոց լինում է մի փոքրիկ, 8—9 տարեկան, ցրտից կապտած, ցնցոտիներ ծածկած, կերակրում են։ Այդ ժամանակ լակեյն ու դռնապանը զբաղված են լինում ակումբից վերադարձող հյուրերին ընդունելով ու մոռանում են աղջկան տուն ուղարկելու։ Քիչ չանցած աղմուկ է բարձրանում և ինչ, աղջիկը մտել է մուշտակների տակ և գրպաններն է խառնում։ Երբ դռնապանը նկատում է այդ, վրա է վազում, աղջիկը երանելի ժպիտը երեսին ասում է.— «Քեռի, տես, ես մի սիրունիկ փիսիկ ունեի, ցրտից փայտացել էր երեկ գիշեր ու մեռավ այդպես, տես, սրանք իսկ և իսկ իմ փիսիկի նման են, փափլիկ»,— աղջիկը ցույց է տվել հյուրերից մեկի մուշտակի մորթյա ստտաները։ Տեսնո՞ւմ էք, դռնապանը ասում էր, որ նույնիսկ լաց էր լինում, երեսը քսում մուշտակին...*

ՕՐԻՈՐԴ.—Խեղճ աղջիկ, բան չէ՞ր վերցրել։

ՀԱՍՏԿԻՆ.—Ո՛չ, գրպանին երևի չէր հասել. կամ թե շուտ էր բռնվել՝ թողել էր։

ՕՐԻՈՐԴ.—Ի՞նչ արիք նրան։

ՀԱՍՏԿԻՆ.—Է՛հ, ոչինչ, անհարմար ժամանակ էր, նվերները ետ առանք ու ճանապարհ դրինք։

ՋԱՀԵԼ.—Իսկ կերա՞ծը... (Ընդհանուր ծիծաղ, նորից ներս են գընում, լսվում է ծիծաղ, աղմկալից խոսակցություն):

ՕՐԻՈՐԴ.—(Մենակ, մտատանջ) *Գուցե իրավ, սիրում էր այդ տըղան նվագածությունը... ով է իմանում, գուցե մի Գորկի, Շալյապին...*

Մ Ա Ր Թ Ա.—(Դալիս է սաստիկ հուզված, գունատ, ծառային) *Ասացեք, խնդրեմ...*

Օ Ր Ի Ո Ր Դ.—(Սանդուխներով վար է վազում) *Ի՞նչ եք կամենում։*

Մ Ա Ր Թ Ա.—(Արագ վազելուց շունչը կտրած, հազիվ զսպում է իրեն) *Մի քանի ժամ առաջ մի աղա... շուն բերե՞լ է այստեղ...*

Օ Ր Ի Ո Ր Դ.—(Այլայլվում է) *Այո։* (Շփոթվում է Մարթայի սուր հայացքից)։

Մ Ա Ր Թ Ա.—*Ինձ ասացին տեսնողները, որ նրան քաղաքապահը տանում էր քաղաքամաս։ Ի՞նչ է նշանակում այս։*

Օ Ր Ի Ո Ր Դ.—(Ավելի ևս շփոթված) *Կարծեմ նա ինչ-որ սխալմամբ վերցրել է սեղանից։*

Մ Ա Ր Թ Ա.—(Սարսափած) *Վերցրե՞լ է...* (Ձայնը նվաղում է) *Ի՞նչ է վերցրել. թշվառ երեխա* (Տանջանքով)։ *Դուցե սխալվում եք, օրիորդ... Նա գող չէ։*

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Մոտենում է նրան, քի տակ երգելով, աղջկան) *Հյուրերը քեզ են սպասում աղջիկս, գնա նորից նվագիր* (Աղջիկը տուն է վազում։

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Լիտի կերպով դիտում է Մարթային և գոհ նրա բողոքած տպավորությունից, հարցնում է սիրալիր) *Ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ, տիրուհի։*

Մ Ա Ր Թ Ա.—(Սարսափահար նստ նստ է գնում ու հարցնում հազիվ լսելի խեղդված ձայնով) *Այդ դո՞ւք եք...*

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Ցնցվում է) *Ինչո՞ւ ես եկել։*

Մ Ա Ր Թ Ա.—(Նույնպես) *Այդ դո՞ւք եք...*

Տ Ա Ն Տ Ե Ր.—*Լսո՞ւմ ես, առանց աղմուկի, կարի՞ք ունես...*

Մ Ա Ր Թ Ա.—(Ուժասպառ) *Ինչ հանդիպում։* (Մի պահ մնում է զբաղված, ապա ասանձված ձայնով) *Տուր եղբորս...*

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Ուրախ և զարմացած) *Այդ երեխան քո եղբա՞յրն է եղել։*

Մ Ա Ր Թ Ա.—(Խելացնոր) *Շտապիր, ազատիր, տուր եղբորս... Նա չի դիմանա անարդանքի, ծեծի, թույլ է, տուր, հիվանդ մայրս ցնցվում է կոկծից...*

Տ Ա Ն Տ Ե Ր.—*Քիչ կամաց, առանձին բան չկա այդքան սրտնեղելու. նրան այնտեղ հարց ու փորձ կանեն և եթե այլ, այսպես ասած, առիթ չգտնեն, կարձակեն տուն։ Նա մի քանի ոսկի գդալներ է գողացել իմ սեղանից* (Տոփանքով) *Բայց ինչպես մեծացել, հասունացել ես...*

Մ Ա Ր Թ Ա.—*Ո՞վ տեսավ գդալները նրա մոտ։*

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Պագշոտ ժպիտով դիմում է Մարթային) *Կարծեմ մեր լակեյը, դեհ, հանդգնացիր, նա ծառային տեսնելով թափել է գետնին ու ասել, որ մոռացել է լուսամուտին նվագը լսելու, նա ինձ մի քիչ տա-*

բորինակ երևաց։ Ասում էր, որ սիրում է երգը, ջութակը։ (Միծաղում է) *Խորամանկ լակոտ էր...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կարծես խոր մնից արթնացած) *Հա... մի՛ ծաղրիր, հրեշ* (Մոտենում է հարվածելու)։ *Ճիշտ է, նա սիրում է երգը, նվագածությունը... նա թույլ ու քնքույշ է, երազկոտ, բայց գող չէ։*

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Զորս կողմը դիտելով) *Զգույշ, թե չէ կհրամայեմ մազերիցդ քարշ տալով փողոց նետել...*

Մ Ա Ր Թ Ա.—(Դառնացած) *Չես համարձակվի, լսո՞ւմ ես, դու այդ չես անի, հա՛, հա՛, հա՛, հա՛... գարշելի, ճարպոտ* (Ցույց է տալիս տունը) *տուն-տեղ, ընտանիք, ոսկի զգալներ, ամեն ինչ ունես, ամեն հարմարություն, բացի մարդկային արժանիքներից... ամեն ինչ ձեռք ես բերել, բացի մարդու կոչումից։* (Մի ինչ-որ կատաղություն իջնում է Մարթայի վրա, լացն ու ծիծաղը մրցում են նրա հուզված դեմքին. հանդուգն, վստահ ու իր միջավայրին հատուկ միմիկայով մոտենում է նա շվարած տանտիրոջը գոռալով) *Հիշո՞ւմ ես այն ցոփ ու շվայտ դիշերները... դու գնում էիր խեղճ աղջիկներիս մարդկային ամենանվիրական զգացմունքներն ու տրորում անպատկառորեն։ Մոռացած չես լինի... Հիշո՞ւմ ես, թե ինչպես մեր անմեղ աչքերի առաջ բաց էիր անում լկանքի անասելի արարքներ, մեզ գինով արբեցած սողալ տալիս ճարպոտ մարմնիդ շուրջը. դու քո անասնական քմահաճույքով ապականում էիր մեր սրտի անբիծ խորքերը, խաղում մեզ հետ, և հագեցած դեն շպրտում...*

Մենք մեր ևսը մոռացանք քո գրկի մեջ, քո լիքը քսակի առաջ և ինչ-որ մաքուր էր և սուրբ, կորցրինք առհավետ... Մեր հոգին զրկվեց իր սրբազան բովանդակությունից, մեր միտքը հաշտվեց անբարոյական ապրումների մրի հետ ու դարձած մի անպարունակ պարկ՝ ընկանք փողոց, արթուն գինվորների պես, մեր գեմքի ու մարմնի արժանիքներին հարմար, դիրքեր բռնեցինք մայթերի վրա ու շեն քաղաքը լափեց մեզ վերջնականորեն։ Տե՛ս, այն սիրուն աղջկա տեղ կին է կանգնած քո գիմաց և քանի անմեղ աղջիկների դու փողոց նետեցիր, կին դարձրած... (Մի պահ լռում է) *Դու տուն-տեղ ունես, ընտանիք, ոսկի զգալներ...* (Հուզմունքից դողում է) *Իսկ ես ոչինչ չունեմ։ Մի խեղճ եղբայր ունեի՝ նրան էլ հասավ քո սնարագործ ձեռքը...* (Վրա է վազում և ուժգին ապտակում) *Տո՛ւր եղբորս...*

Տ Ա Ն Տ Ե Ր.—*Լկտի... անզգամ...* (Հարձակվում է) *Ես քեզ...*

Մ Ա Ր Թ Ա.—(Ինքի իրեն կորցրած) *Տուր, ասում եմ, մայրս ցնորվում է* (Հարձակվում է նորից)։

Տ Ա Ն Տ Ե Ր.—(Նվս հարձակվում է Մարթայի վրա, ծերուկը վազում, կանգնում է նրանց մեջտեղ)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Անվախ) *Մի դիպչեք աղջկան, ամոթ է...*

ՏԱՆՏԵՐ.—(Ինքն իրեն զսպելով ինչ-որ գրում է այցետոմսի վրա. ծերուկին) *Գնա՛ քաղաքամաս, այս տար...* (Թաշկինակով սրբում է քրտինքը, անհայտանում պարտեզում):

ԾԵՐՈՒԿ.—(Բռնում է Մարբայի թևից) *Գնանք աղջիկս... քո եղբայրն անմեղ է, նա կպավ սեղանին, դդալները վար թափվեցին։ Գնանք, մի հուսահատվի* (Նայում է Մարբային և թևով աչքերն է սրբում, հետո ինքը):

ՄԱՐԲԱ.—(Ձեռակապելով) *Ո՞ւր գնանք։*

ԾԵՐՈՒԿ.—(Կարեկից) *Գնանք եղբորդ մոտ, միամիտ կաց, կարձակեն...*

ՄԱՐԲԱ.—(Ցասկոտ) *Դեռ երկար պիտ շրջեմ ես մենակ ու լքված, անպարտունակ մի պարկ... հոգիս մորմոքում է կսկծից. ինչո՞ւ ինձ վիճակվեց միշտ կորցնելը, մինչդեռ կյանքը այսպես հաջող* (Ցույց է տալիս տունը) *դասավորվում է միշտ խլողի, ոճրագործի համար. է՜հ, գընանք, պապիկ, գնանք...*

ԾԵՐՈՒԿ.—(Ձայրացած) *Թքիր նրանց վրա, աղջիկս, մարդիկ եղբայրներ են։* (Ինքն իրեն) *Թու, սատանի ճուտ, այդպես չէր։* (Բարձր) *Աստված մարդկանց հավասար է ստեղծել, ծառա ու տեր չպիտի լինի...* (Գնում են):

Դ. ԱՐԱՐ

Բ. Արարվածի սենյակը բիչ բարեփոխված, աթոռների վրա, դես ու դեն թափթփված կար ու կտոր, երեք ջանել աղջիկներ կար են անում: Աննան խիստ փոխված, ավելի ևս տժգույն, կասես ծերացած աշխատում է վառարանի մոտ: Մարբան մի անկյունում առանձնացած ձեռքով ինչ-որ կարում է: Առաջին գործողությունից մինչև այժմ անցել է 9 ամիս: Վարագույրը բացվելուն պես շարունակվում է երգը. երգում են առաջին և երկրորդ դերձակուհին, ժողովրդական երգի եղանակով:

ԴԵՐՁԱԿՈՒՀԻՆԵՐ.—

Մենք դեռ ջահել, բախտ չտեսած՝
Երկարում ենք օրը կարով,
Որ վաստակենք մի կտոր հաց,
Չթառամենք քաղցի ահով։

Սիրտ խինդը մեզ համար չէ,
Մեզ համար չէ երգն ու ծիծաղ.
Պատիր, անիվ, մի հառաչի,
Հաց չի տալիս կարը դանդաղ...

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Անպիտաններ, գոնե մի ուրախ երգ երգեցեք, առանց դրան էլ մոլորվել եմ վշտից... ախ... (Մտորում է, տրտում ու երգում).

Դու իմ սեր շուտ արի,
Ես այսօր չեմ կարի.
Հացի տեղ՝ տաք համբույր,
Ջրի տեղ՝ դիրկդ տուր... (Լռում է իսկույն):

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Այ քեզ հիմար, այդպիսի պաշարով երկու օրից կսատկես քաղցած շան պես...

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Ես էլ «հավերժ հանգիստ» երգելով, ոտքերիցդ քաշելով կտանեմ աղբանոց թաղելու, վրադ մի խաչ կըտնկեմ ու կերգեմ, որ ասա հանգչի մի հիմար ու ծույլ դերձակուհի, որ ապրում էր սիրով ու համբույրով (Միծաղում է):

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Հեգնանքով) *Կգրե՞ս, անգրագետները չեն գրում, սիրունիկս։*

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Մինչ այդ նա կղարդանա, կարդալ գրել կսովորի (Աչքով է անում Մարթայի կողմը և ծիծաղում է նեգնորեն):

ՄԱՐԹԱ.—(Տխուր, ինքն իրեն) *Խեղճ աղջիկներ, ապրելու ահը շշմեցրել է ձեզ, իսկ սերն ու համբույրն էլ սնունդ չեն տալիս մարմնին... գրկում է լոկ հոգին, տանում հեռու, այս զարշելի իրականությունից, բաց թողնում երազանքի հովտում ազատ ճախրելու, որ հետ դառնալիս է՛լ ավելի մեծ կսկիծով զգա կյանքի արհիճյա լծի ճնշումը,* (Դառն) *անիծված կյանքի...*

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Աղջիկներ, ձեզանից ո՞վ շաբաթ օրը ինձ մի մանեթ փող կտա։

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Դարձյալ, մի ամիս է 6 կոպեկս չես կարողանում տալ։

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.— (Հեգնանքով) *Երբ ունենա, կտա...*

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Անհար) *Ասված վկա կտամ, իսկ մի մանեթ ինձ խիստ հարկավոր է։ Մարթայից շաբաթ օրը շատ քիչ ստանալիք ունեմ։ Իսկ եթե դատարկաձեռն տուն գնամ, մայրս կըսպանե ինձ, ինչ անեմ* (Նայում է շվարած): *Ա՜խ, մի հրաշք, մի փորձանք պատահեր, ազատվեի այս տանջանքից, մինչ այժմ հայրս անգործ է. տանը ծախելու բան չէ մնացել։ Հինգ ամիս է տան վարձը տված չենք, միակ հույսը իմ աշխատավարձն է, այն էլ անիծվի...* (Մկրատը խփում է աթոռին ու կարում է կատաղաբար, լսվում է շչակի մի անսովոր տագնապալից ու երկար սուլոց):

ՄԱՐԹԱ.—(Նույնպես) Վատ էր կյանքը, իսկ ես լավ չէի նրանից։ Ես փոխվեցի, իսկ կյանքը մնաց նույնը, չփոխվեց... Ինչ-որ կար այստեղ (ցույց է տալիս կուրծքը) մեկ-մեկ փուլ եկավ, կորավ, ինչո՞վ լցնել այդ բացը, ո՞ւր որոնել նոր բաղձանքներ, ո՞ւր բարձրանալ կամ իջնել, ի՞նչը քանդել կամ շինել (նույն) այլ կերպ ապրել չեմ կարող...

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Երգում է).

Սերդ խնդրեցի մուրացկանի պես,
Խոստացա լինել ցմահ քո գերին,
Դու աշխատում ես, որ ինձ չհանդիպես,
Քաշվում ես նայել իմ կոշտ ձեռքերին։

ՄԱՐԹԱ.—(Կամաց) Խեղճ աղջիկ, սիրում ես ու դանդաղվում, իսկ ես իրավունք չունեմ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսն անելու...

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Լալահառաչ)

Կուզեի լինել շատերի նման
Ես էլ կուշտ ու գոհ ու կերպաս հագիս,
Սակայն չոր հաց էլ չի տա մեքենան
Իսկ ես՝ դեռ մանկուի քաղցած եմ հոգի՛ս...
(Աչքերն է սրբում)։

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Զգացված) Որտեղի՞ց էլ գըտնում ես հարմար երգեր... օ՞ֆ...

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Երգը կյանքին միշտ պիտի հարմար լինի, որ երգվի։

ԱՆՆԱ.—(Անհանգիստ) Մարթա՛ կեսօրվան շչակն արդեն վաղուց սուլել է, Անտոնն ինչո՞ւ ուշացավ։ (Մատանի շրջում է վառարանի շուրջը, նկատելի կերպով կորցնում է ինքն իրան ու ցնորամիտ հայացքը հատած դռանը մնում է քարացած)։

ՄԱՐԹԱ.—Չեմ իմանում...

ԱՆՆԱ.—(Սարսափահար մոտենում է Մարթային) Փորձանք պատահած չլինի՞... Կաթսան... անիվը... Մարթա, աղջիկս, դարձյալ սկսեցի վախենալ։ (Դողում է, խղճալի կերպով նայելով Մարթային)։

ՄԱՐԹԱ.—(Բարկացած) Կրկին գուշակումներ. նստիր, հանգըստացիր, ոչինչ չկա։ (Աննան Մարթայից վախեցած մոտենում է դռանը)։

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Դժգոհ ու կամաց) Մաստիկ քաղցած եմ, ի՞նչ կարիք կա սպասել Անտոնին։

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Առանց նրան ախորժակով չի ուտվում։

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Մեր ախորժակը բաց է դեռ երեկվանից. աշխատեցնելիս բոպն չեն կորցնում, իսկ կերակրելու ժամանակ ժամերն են երկարացնում։

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Չես հավանում, մի կարի։

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Ինչո՞վ ապրեմ։

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Սիրով ու համբույրով (Ծիծաղում են)։

(Ներս է մտնում ցրտից կապտած մի աղջիկ իրենից շատ մեծ կոշիկներով ու վերարկուով, խաչակնքում է երեսը, բևով սրբում սառած քիթը և ագահ հայացք ձգելով վառարանին, ասում սերտած դասի նման)— *Աղջիկներ, մեր ավագ դերձակուհին ասաց, որ կարերդ թողնեք...* (Շուրջն է դիտում) *կարերդ թողնեք ու դուրս գաք փողոց։ Ընդհանուր,* (Նկատելով աղջիկների ծիծաղը, ինքն էլ է ծիծաղում) *ընդհանուր գործադուլ է. ոչ ոք չպիտի աշխատի։* (Աննան ծածուկ մի խաշած գետնախնձոր է տալիս նրան, դերձակուհիները մերթ Մարթային են նայում, մերթ աղջկան։ Դրսից ուժգին բակում են դուռը, լուսամուտը։ Մի դեմք օդանցքից ներս նայելով գոռում է հուզված)— *Ընկեր դերձակուհիներ, միացեք մեզ հետ. թող ոչ մի անիվ, ոչ մի ասեղ չպտտվի, չշարժվի, մինչև որ մեր արդար պահանջներին բավարարություն չտան մեզ հարբսատահարողները...* (Մի քանի դեմքեր մոտենում են լուսամուտին, ծիծաղում են, կանչում. օդանցքից ներս են նոնում բռունցքներ։ Մարթան որ այլայլված դիտում էր այդ ամենը, կարը ձեռին բարձրանում է տեղից և մոտենում աղջիկներին)։

ՄԱՐԹԱ.—(Թույլ ձայնով) *Ի՞նչ եք շվարել,* (ժպտում է) *պատասխան տվեք աղջկան։*

ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Մենք ձեր դեմ ոչինչ չունենք...

ԵՐԿՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—Մենք կարը չենք թողնի, մի ժամից կգնանք (Դրսից գոռում են)— *Ապակիները կփշրենք։*

ԱՌԱՋԻՆ ԴԵՐՁԱԿՈՒՀԻ.—(Խելացնոր ընկնում է դես ու դեն հագուստները որոնում և կիսահագնված խաչակնքում է երեսը շերմեռանդորեն մի քանի անգամ ու դուրս վազում)։

ԵՐԿՐՈՐԴ և ԵՐՐՈՐԴ ԴԵՐՁԱԿՈՒՀԻՆԵՐ.—(Գլխիկոր հագնվում են, ամաչկոտ նայում են Մարթայի կողմը և նույնպես խաչակնքելով գլխիկոր հեռանում են։ Փողոցում ուրախ քրքիջ, ծիծաղ, աղմուկ է։ Աննան սարքում է սեղանը և քաշվելով մի անկյուն սկսում է ջրվալ կարել։ Մարթան անհանգիստ մոտենում է լուսամուտին)։

ԱՆՆԱ.—(Ինքն իրեն, ցնորամիտ) *Խիստ կանուխ էր... հայրդ քընած էր. նա չտեսավ, ես մի փոքրիկ փոս փորեցի գետափին և թաղեցի նրան։ Մատաղիկ շտապելուս պատճառով փոսը նեղ եղավ և սիրուն աղան*

մեջը կուչ եկած մնաց. այ, այսպես (Զոհեշոհ մոտենում է Մարթային և ցույց տալիս) *տես այսպես. խի՜-խի՜-խի՜...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կատաղած) *Լռի՜ր, լսո՞ւմ ես...* (Անհան նստում է տեղին ու կարում):

Ա Ն Ն Ա.—*Իսկ ձմեռները ցուրտ է ու... մրսում է թոռնիկս* (Լալիս է) *Ես մոռացա գեթ մի լաթով փաթաթել նրան, մրսում է սիրունիկս, ձմեռները ցուրտ... բուբ-բորան...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կսկծից շվարած) *Լսի՜ր, խղճա ինձ... կթողնեմ քեզ մենակ, կկորչեմ:*

Ա Ն Ն Ա.—(Բոլորովին ցնորված) *Կորի՜ր, հեռացիր... ես առանց քեզ էլ կապրեմ. այն ժամանակ ոչ ոք ինձ չի արգիլի սրտիս ուզածը պատմելու, կորիր... դու ինձ միշտ ճնշել ես ու սասել* (Լալիս է): *Իսկ իմ լավ աղջիկը մեռավ, նա քեզանից սիրուն էր ու համեստ... Նա չուզեց գործարանի կառավարչին սիրուհի դառնալ ու նրա գրկից փախչելիս ընկավ անիվի մոտ. յուղած անիվը խլեց նրա ոսկեհեր մազերից, վեր ու վար արավ ու* (Լալիս է դառնապես) *իմ սիրուն Կլարայից բան չմնաց, որ գրկեի, կրծքիս սեղմեի...*

Մ Ա Ր Թ Ա.—(Մոտենում է նրան զգվանքով) *Մի՜ հիշիր, մոռացիր, մայր, նորից կհիվանդանաս:*

Ա Ն Ն Ա.—(Զլսելով) *Իսկ դու լկտի սիրեկաններիդ հետ քեֆի էիր գնացել. նույնիսկ նրա տրորված լեշերին վերջին հրաժեշտը չտվիր, անպատկառ...* (Մարթան գլուխը ափերում պահած դուրս է նայում լուսամուտից): (Անհան առանց Մարթայի կողմը նայելու) *Հեռացի՜ր, ես վաստակել չգիտեմ, ես քեզանից զզվեցիկ եմ:* (Ժպտում է, խռճիդավոր ձայնով) *Նորից կսկսվի գործադուլը... Բանվորները քաղցած գայլերի նման կհավաքվեն, կխոսեն... հա՜, հա՜, հա՜, հա՜... քաղցից կխոսեն, կվիճեն, առանց օդու, առանց ծխախոտի, թքերը կուլ տալով. խի՜, խի՜, խի՜, խի՜, մենք էլ սիրուն տեսքով բանվորուհիներս լավ կլվացվենք հոտավետ օճառով, կկոկվենք և դուրս կգանք սիրեկանների դեմ... Ե՞րբ կվերադառնանք, միևնույն չէ, փող կբերենք: Գիտե՞ս, անգետ աղջիկ, ինչ կնշանակի փողը խռովարարի համար: Մենք այդպես էինք անում իմ հայրենի քաղաքում... լրտեսում էինք բանվորուհիներին ու վաստակում...* (Երկար լռություն):

Մ Ա Ր Թ Ա.—(Սաստիկ անհանգիստ) *Ինչո՞ւ ուշացավ...*

Ա Ն Ն Ա.—*Այժմ խինդ, ծիծաղ չկա. գլուխս ազատվեց կոպիտ կոշիկի պայտած կրունկից... այդ քո հայրն էր ինձ տանջողը, հիշո՞ւմ ես, ես կերակրում էի նրան, իսկ նա—երախտամոռ խողը ծեծում էր ինձ...*

Մ Ա Ր Թ Ա.—(Մոտենում է կրկին գուրգուրանքով) *Մոռացի՜ր անցածը, մայր... այնպես լավ է մոռանալը, լսիր ինձ...*

Ա Ն Ն Ա.—(Կարծես նրան չնկատելով) *Ատված պատժեց նրան, նա*

պայթեց... Դու կարծում ես կաթսա՞ն պայթեց, չէ՞ աղջիկս, սուտ է, բանվորները խաբեցին, դու նրանց երբեք մի հավատա... Նա բարկությունից պայթեց, նախանձից, որ ինձ ներում էին ուրիշները, ինձ գործ էին տալիս, ինձ հետ լավ էին վարվում. ահա թե ինչու պայթեց նա... Երբ նրա մարմնի կտորները հավաքեցին, աջ ձեռքը չկար... այդ այն ձեռքն էր, որով նա անվերջ հարվածել էր իմ գլխին... Ես իմ աչքերով տեսա, թե ինչպես մի սիրունիկ հրեշտակ այդ ջլոտ ու մրոտ ձեռքը երկինք տարավ աստծուն ցույց տալու և պատմելու իմ և իմ կրած զրկանքների մասին... Ահա թե ինչու իմ գլուխը միշտ ցավում էր... (Լալիս է)։ *Իսկ երբ Մակարս մեռավ, ցավս էլ հետը տարավ... Ես տեսա, իմ ձեռքովը զրի նրան խորունկ փոսի մեջ, Մակարիս կողքին, մի ահագին ծանր ցավ էր...* (Բարձրանում է ու հարձակվում Մարթայի վրա) *Ես քեզ կխեղդեմ, իմ որդին գող չէր... Նա ոչ մի գգալ չէր գողացել... ընկած, պոռնիկ... քեզ ի՞նչ, թե ես ուշ տուն կգամ, չե՞ս տեսնում, գործատուլ է... Անտոնն էլ չեկավ...* (Մնում է ակնապիշ) *Այս անգամ գործատուլը երկար կանի... Այժմ բանվորները անվախ են ու համառ... Կարդալ գրել գիտեն... Մարթա, աղջիկս, տուր քո լավ հագուստներից. գնամ շրջեմ, վախենում եմ մենակ մնալուց... Ինձ կծեծեն բանվորները... դու կարծում ես թե ես ցավ չե՞մ զգում... տուր մի բաժակ օղի լցնեմ վերքերիս վրա, որ Մակարը հասցրեց... տուր սիրուն, բայց անբախտ աղջիկս... տուր...* (Հեռզգենտե հանդարտվում է) *Ահա նստում եմ կարելու... տուր մոռացվեմ, թերեւանամ...* (Մարթան խղճահարված մի բաժակ օղի է տալիս նրան, Անանան ագահ խմում է) *Օ՜ֆ, ապրես. ես Մակարիս էլ քեզանից թաքուն օղի էի տալիս, ծխախոտ գնում, որ ամրանար, ժրանար՝ չեղավ... Նա թույլ էր... Նա էլ գնաց. տասնմեկ հատ թաղեցի... մնացինք ես ու դու...* (Կարում է) *Երբ 10 ջվալը վերջացնեմ, 13 կ. քեզ կտամ, միևնույն է* (Մարթան լալիս է) *մի լար, մի լար աղջիկս, միևնույն է, միևնույն է...* (Դրկում է ծնկները և մնում անշարժ)։

(Անտոնը հանկարծակի ներս է վազում, իր սենյակից ինչ-որ վերցնելով նույնպես դուրս է գնում։ Մարթան իսկույն լցնում է նրա համար կերակուր, նստում է գլխիկոր՝ հագիվ զսպելով արցունքների հոսդ տարափը)։

ԱՆՏՈՆ.—(Մոտենում է անսովոր կերպով ուրախ, հպարտ և ձեռքը Մարթայի ուսին ասում) *Ի՞նչ ես մտածում, Մարթա, ինչո՞ւ տխուր ես։* (Քննելով նրա դեմքը) *Դու լալի՞ս ես* (Նստում է դիմացը)։ *Ի՞նչ է պատահել, քեզ վիրավորե՞լ է մեկը, չէ՞* (Մարթան բացասական շարժում է գլուխը, Անտոնը հանդարտված)։ *Դեհ հանգստացիր ու մի էլ մտածի, միևնույն է, առանց կռվի ոչ մի բարօրություն չի այցելի քեզ. իսկ ես այսօր մի պատառ բերանս դրած չեմ, ինչ կասես դրան։*

ՄԱՐԹԱ.—(Ողջագուրանքով դիտում է նրան, աչքերում անպատ-

մելի կարոտ ու զուսպ արտասում) *Ես այդ դիտեմ, քեզնից սովորեցի ու կռվում եմ ահա...*

Ա Ն Տ Ո Ն.—(Սիրով) *Ո՞ւմ, որի՞ դեմ։*

Մ Ա Ր Թ Ա.—*Նախ ինքս ինձ հետ, և ապա դրա* (Ցույց է տալիս մարը) *դեմ, նստիր, կեր։ Ինչո՞ւ ուշացար։* (Աննկատելի ճանդիմանանքով) *Մի շաբաթ է անկանոն կյանք ես վարում, դիշերն էլ տանը չէիր...*

Ա Ն Տ Ո Ն.—(Ուտում է անուշադիր) *Առաջինի հետ լավ ես անում. կռվիր, ջախջախիր նրա համառությունը, իսկ նրան* (Ցույց է տալիս Աննային) *թող հանդիստ, մեղք է... տեսա՞ր անցյալ երեկո ինչեր էր ասում. մի ցնորված բանվորուհի, որ ապտակում ու թքում էր այն այլանդակությունների երեսին, որին մենք առայժմ ստիպված ենք կյանք անվանելու...* (Գդալը վար է դնում և ցավակցորեն դիտում է Աննային)։

Մ Ա Ր Թ Ա.—(Դժկամ) *Ի՞նչ օգուտ...*

Ա Ն Տ Ո Ն.—(Զայրացած) *Ամեն անգամ, երբ ինձ հուզում, դրգռնում է մի երևույթ, դեպք, դու քո հարցերով կարծես սառը ջուր ես ածում ինձ վրա։* (Մտածկոտ) *Իսկ ինչե՞ր կարող էիր դու տալ ինձ...* (Հանկարծ նկատելով դերձակումիների բացակայությունը) *Ո՞ւր են աղջիկները...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հեգնանքով) *Գնացին քո ճանապարհով։*

Ա Ն Տ Ո Ն.—(Վեր է ցատկում)։ *Մի՞թե, գործադո՞ւլ հայտարարեցին* (Նրա ուրախ բարձր ծիծաղը աղմկում է սենյակը) *Կեցցեն, բրավո... հա՜-հա՜, հա՜* (Մարթային նմանվելով նստում է սեղանի մոտ և ձեռքը հենելով երեսին, նուրբ ձայնով) *Իսկ ինչպե՞ս է զգում իրեն մեր «գործարանատիրուհին»* (Միծաղում է)։

Մ Ա Ր Թ Ա.—(Սառը) *Առանձին ոչինչ. կգան ուրիշները, ասա ի՞նչ է պատահել, քիչ մնաց ապակիները փշրեին։ Մի խլնքոտ աղջիկ էլ ասաց, որ «ընդհանուր գործադուլը սկսվել է»... ճի՞շտ է...*

Ա Ն Տ Ո Ն.—(Քրքրում է կիսատ թողած կարերը, նայում է մեքենաներին, ժպտում է ու նրնվում) *Միասի՞ն գնացին։*

Մ Ա Ր Թ Ա.—(Անտարբեր) *Միասին։*

Ա Ն Տ Ո Ն.—(Չի կարողանում զսպել իրեն, ծիծաղում է) *Դեհ, մի պատմիր մանրամասնորեն։*

Մ Ա Ր Թ Ա.—(Բարկացած) *Սկզբից ինչ-որ ավագ դերձակուհու կողմից մի փոքրիկ աղջիկ էր ուղարկված. նա դեռ չէր վերջացրել, երբ եկան մի խումբ աղջիկներ դուռն առաջ աղմկեցին, սպառնացին բռունցքներով, մեկն էլ գլուխը օդանցքից ներս մտցրեց ասաց իր ասելիքը և վերջացավ... դու ոչինչ չկերար, նստիր, կեր...*

Ա Ն Տ Ո Ն.—(Զզացված նրա հոգատարությունից, նորից նստում է ուտելու և դարձյալ ծիծաղում է) *Անգութ աղջիկներ... երեքն էլ միասին գոնե մեկը գթար...*

ՄԱՐԹԱ.—Թող, հակառակ դեպքում կվերջացնեմ ու կհեռանամ։ Ես ոչ մեկի գթությանը կարոտ չեմ...

ԱՆՏՈՆ.—(Տխրում է հանկարծ) *Իսկ ես կարոտ եմ մանկութ։ Հավատա, ավելի քան կարոտ, հայր, մայր չեմ տեսել, երեխ չեմ ունեցել, չեմ ունեցել քույր, եղբայր, ազգական... ամբողջ կյանքս անցել է կրոիմների, հալածանքի մեջ... չգիտեմ ինչ է երջանկությունը, սիրված ու փայփայված լինելը մեկից...* (Դառնացած) *Ինձ համար դեռ չեմ ապրած...* (Կշտամբանքով) *Ուզեցի, խանդարեցիր... քո մի ժպիտը, խրախուսական մի խոսքը բավական էր ինձ երջանկացնելու՝ ղլացար... Թող քո կամքը լինի... այս ձեռքը, որ այնքան վարպետորեն խաղում է ծանր մուրճի հետ, ձև տալիս շիկացած երկաթին, այս կոշտերով ծածկված ձեռքը մի մարուր ու նուրբ սրտի հետ քեզ են հսկել տարի ու կես, գիշեր ցերեկ։ Այս ձեռքն ու սիրտս չեն խոնարհվել մեկի առաջ, չեն մուրացել երբեք,* (Մեղմ) *սակայն խոնարհվեցին քո առաջ* (Շրջում է նուզված և ապա կանգնում Մարթայի դեմ)։ *Ահ, երկաթ չես որ հետդ խաղամ իմ ուժով, սար չես, որ հիմնատակ տապալեմ, գնդակ չես, որ բաց կրծքով դիմեմ հարվածներիդ* (Մեղմ ու սիրալիր) *սակայն որքան անհաղթ ես դու, անընկճելի։ Ինձ կատաղեցնում է քո համառությունը։ Ես թույլ եմ քո դեմ հոգով ու հոգեկանով, կարոտ քո այդ գթոտ, խնամատար սիրույն, ուստ աղջկա այդ թանկագին սիրույն...* (Նստում է գլխիկոր և ծխում)։

ՄԱՐԹԱ.—(Գունատված) *Միշտ միևնույնը... բանից դուրս է գալիս, որ ես բնածին մի գթության քույր եմ եղել, աշխարհ եկած կարմիր խաչը կրծքիս... Իսկապես կարմիր խաչը կրծքիս...*

Դեռ փոքր հասակից իմ խնամքին ու գթությանն են ապավինած եղել խլախտավոր, նիհար ու անվերջ լացող քույր ու եղբայրներ. իմ խնամքին ու գթությանն է հանձնված եղել ծանր ու անվստահ աշխատանքից բրտացած, օղուց բթացած հայր։ Սա էլ (Ցույց է տալիս մորը) *նույնպես։ Ավելի շատ ես եմ եղել նրան մայր, քան թե նա ինձ, անվերջ անարգել ծնել է և դեռ երեխա, ես եմ թեթևացրել նրա երկունքի ցավերը...* (Ցավատանջ) *Դեռ 10 տարեկան չկայի և կյանքը ինձանից ոչ մի զաղանիք չուներ... մանկական խաղերի դեռ չմոտեցած, ինձ հրում էին ելեզոի, ապականության, տառապանքի ու սնբագործության ավերումներին ականատես լինելու և հաճախ անձամբ մասնակցելու, և այսպես 25 տարի, գթության քրոջ կարմիր խաչը կրծքիս ես շրջել եմ միշտ արթուն՝ կյանքի հիվանդանոցի անվերջ, անծայր սենյակներում, հիվանդ մարդկանց վշտի թերթիկները կարդալով, վերքերն ու քոսերը լվանալով, հառաչանքի անվերջ երաժշտությունը լսելով... Վատնել եմ սեր, գութ, խնամք, վատնել եմ արքածի նման, անխնա, առանց հաշվի, բավ է, գնե դու այլ կերպ վարվիր։* (Մնում է շվար ու ապա վճռական) *Իսկ դու*

թող ինձ... հեռացիր՝ շարաստավորեմ միտքդ ու հոգիդ, ես էլ ուզում եմ լինել անկախ, ազատ։ Տե՛ս, մի ժամ առաջ կարում էին՝ մտքով ու հոգով գերի չար հայցին, տրտնջում էին, երգում ու բողոքում։ Դեռ ճաշած էլ չէին, բայց ինչ-որ պատահեց հանկարծ, թեավորվեցին ու թռան աչքիս առաջից։ (Լալիս է) *Ո՞ւր թռան, չգիտեմ... Այժմ նրանք, ես գիտեմ, արհամարհում են քաղցը, սառնամանիքը, հպարտ ու երջանիկ են։ Իսկ ես... ինձ դեռ չէ վիճակվել մի այդպիսի թռիչք...*

Ա Ն Տ Ո Ն.—(Բուռն սիրով շոշում է նրա առաջ, համբուրում ձեռքերը, փայփայում) *Թող... ես քեզ մոռանալ կտամ քո ցավատանջ անցյալը, կթեթևացնեմ քո բեռը, քո վրեժը ես կհանեմ կյանքից* (Յասկոտ) *Իսկ մի նորոգ կյանք ստեղծելու համար եկ մեզ մոտ։* (Բաց է անում թևերը) *Եկ. իմ սիրած կինը ինձ հետ պիտի լինի, իմ ճամփին կանգնած, իմ ուսին հենված...* (Սպասում է թևերը տարածած)։

Ա Ն Ն Ա.—(Միծաղում է և խոսում կարծես իրեն երևացող մեկի հետ) *Տեսնո՞ւմ ես, խի՛, խի՛, խի՛, հիմա գործադուլը կսկսվի... բանվորները պիտի խոսեն երկար, կատաղի, նրանք այժմ համառ են, հանդուգն ու անվախ, գրել կարդալ գիտեն...*

Ա Ն Տ Ո Ն.—(Սատիկ հուզմունքից խոպոտած ձայնով) *Եկ գնանք, մտիր մեր հաղթական շարքերը. միայն մի ուղի կա դեպի բարվոք կյանք՝ մե՛ր ուղին է դա։ Միայն մի կռիվ կա հաղթող ու արդար՝ մե՛ր կռիվն է դա։ Ե՛կ, գնանք, սիրելի Մարթա։* (Անժամանակ շչակների ուժգին սուլոցով աղմկվում է փողոցը. Անտոնը վեր է թռչում տեղից) *Կատարվե՛ց...* (Բարձրացնում է Մարթային, տանում դեպի լուսամուտը) *լսո՞ւմ ես,* (Հազիվ կարողանում է խոսել) *ես անցուլ պայքարի, հեղեղուկ ապրումների ենթակա մի զինվոր եմ, կուզեի մի հանգրվան ունենալ ու քեզ այնտեղ՝ դշխուհի։ Կարծում էի, թե կուսակցական գործը լիովին կլանել էր սիրտս ու հոգիս, բաց տեղ չէր մնացել։ Սխալվեցի. մեծ բացը ազատ էր մինչ այժմ, քաջի նման գրավիր այդ բացը, ապրենք, կռվենք միասին, ինչ կևրպ, որտեղ որ կամենաս...*

Մ Ա Ր Թ Ա.—(Կարծես ինքն արթնանալով) *Քո կի՞նը լինել...*

Ա Ն Տ Ո Ն.—(Աղերսանքով) *Այո՛, այո՛...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հուզված) *Ես տանել եմ բոլոր նրանց, որոնց կինը լինել ինձ վիճակվել է օրով, թե ժամով...*

Ա Ն Տ Ո Ն.—(Գոռում է) *Մարթա՛...*

Մ Ա Ր Թ Ա.—...*եվ արհամարհել բոլոր նրանց, որոնք երբևիցե ապավինել են իմ գթությանն ու խնամքին...*

Ա Ն Տ Ո Ն.—(Ցավից ինքնիրեն կորցրած) *Մարթա՛... խնայիր* (Մընում է քարացած)։

Մ Ա Ր Թ Ա.—(Սեծ դժվարությամբ) *Իսկ քեզ* (Դիտում է նրան

զմայլանքով) *Դու ինչպես գունատվում ես։* (Երեք անգամ թակում են լուսամուտը) *Քեզ ի՞նչ պատահեց... Ինչո՞ւ թակեցին լուսամուտը...*

Ա Ն Տ Ո Ն.—(Խեղդված) *Իսկ ինձ... ասա, շուտ... լսո՞ւմ ես...* (Խըրոխտ) *շուտով կատարվելու է մի ահեղ դեպք։* (Ցնցում է Մարթային) *Երազներս իրականանում են, ցնորքներս կենդանանում. պատասխան տուր ինձ, Մարթա՛, ուխտս ու ընկերներս ինձ են սպասում, կարո՞ղ եմ գնալ և էլ ետ չգալ... Իսկ եթե եկա...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հազիվ լսելի ձայնով) *Գնա... ես կսպասեմ քեզ...*

Ա Ն Տ Ո Ն.—(Ցավակցորեն) *Ասում ես՝ գնա. գիտե՞ս արդյոք, թե ո՞ւր եմ գնում, միամիտ երեխա...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հպարտ) *Գիտեմ, գնա շուտ... ես ամեն բան գիտեմ... կուշանաս, Անտոն...*

Ա Ն Տ Ո Ն.—(Հիացմունքով մի պահ նայում է Մարթային և ապա գրկում ու երկար համբուրում է նակատը)։

Բ Ո Ս Ի Ա Կ.—(Հևալով ներս է մտնում) *Ընկեր Դաբրիել, ձեզ են սպասում... ավելք կապոցը։* (Նայում է Մարթային կարեկցաբար)։ *Դժվար է սիրած կնոջից բաժանվելը, ինչ արած* (Շփում է ցուրից սառած ձեռքերը)։

Ա Ն Տ Ո Ն.—(Իր սենյակից մի կապոց դուրս բերելով) *Հասի՛ր, մինա՞կ ես։*

Բ Ո Ս Ի Ա Կ.—*Ինձ սպասում են...*

Ա Ն Տ Ո Ն.—*Բանվորները հավաքվե՞լ են...*

Բ Ո Ս Ի Ա Կ.—*Չտեսնված բան, ծով բազմություն, առաջինը դո՞ւք եք խոսելու։*

Ա Ն Տ Ո Ն.—*Այո, գնա* (Բոսիակը գնում է, ինքն էլ մտնում է իր սենյակը և փիշ հետո դուրս է գալիս բոլորովին կերպարանափոխված, լայնեզր գլխարկը ձեռքին, մորուքավոր։ Մարթան սկզբից շվարած նայում է ու ծիծաղում)։

Ա Ն Տ Ո Ն.—(Նույնպես ծիծաղով) *Դեհ բաժանվենք։* Բռնում է Մարթայի ձեռքը) *Եթե իմ մասին հարցրին, կասես այն, ինչ որ գիտես, աղջիկների մասին լռիր։ Եթե թաղամասին վտանգ սպառնա, մարդ կուղարկեմ կգաս ինձ մոտ,* (Ժպտում է) *քեզ մի գործ կգտնվի այնտեղ... Թույլ տուր համբուրեմ...* (Գրկում է ու համբուրում) *Սպասիր ինձ։* (Գնում է, նորից վերադառնում) *Խուսափիր հաճախ փողոց դուրս գալուց...* (Աղերսանքով) *Տանից դուրս մի գար... Մարթա՛, խոսք տուր, որ ասածներս կատարելու ես ճշտությամբ։*

Մ Ա Ր Թ Ա.—(Ուրախ) *Ոչ մի տեղ չեմ գնա մինչև քո վերադարձը...*

Ա Ն Տ Ո Ն.—(Նորից համբուրում է ու դուրս վազում)։

Մ Ա Ր Թ Ա.—(Մենակ) *Գնաց...* (Վազում և բարձրանալով լուսամուտից նայում է փողոց) *Գնա, փրկիր կեղեքվածներին, իմ կեղեքված սիրը*

քեզ պահապան... (Վար է իջնում հանկարծ դիպչելով ջուրակին, լարերը կարծես հառաչում են):

Ա Ն Ն Ա.—(Աղերսանքով) *Մարթա՛, մի կպչիր, Մակարս կբարկանա...*

Մ Ա Ր Թ Ա.—(Ուղղում է ջուրակը) *Ես փոշին սրբեցի։*

Ա Ն Ն Ա.—(Նիծաղում է):

Մ Ա Ր Թ Ա.—*Երգդ մնաց, իմ թշվառ եղբայր...* (Լալիս է):

Ա Ն Ն Ա.—(Առանց ետ նայելու) *Մի լար աղջիկս, մի լար սիրուն ու թշվառ աղջիկս... կարծում ես ես քեզ չե՞մ սիրում, չե՞մ խղճում... քիչ առաջ ուզում էի հարձակվել Անտոնի վրա, խեղդել՝ մի դիպչիր իմ զավակին. մի խաբիր...* (Համոզիչ) *Դու նրան մի հավատա, նա քեզ չի սիրում, նա քեզ կծեծի կոշիկի պայտած կրունկով, իր կոշտ բռունցքներով,* (Մոտենում է) *Ես չեմ թողնի։* (Գրկում է ու սեղմում կրծքին) *Տասնմեկ հարը մեռան, միայն սա մնաց...* (Լալիս է) *Մի դիպչեք սրան...* (Ընկնում է վար):

Մ Ա Ր Թ Ա.—(Տանում, տախտի վրա պառկեցնում) *Պառկիր, հանգըստացիր։*

Աղմուկով ներս են մտնում Մարթայի ընկերուհիները՝ Լիզան, դեղնագույն մազերով աղջիկ և մի ուրիշը, ձեռքին մի կապոց։

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ղ Ջ Ի Կ.—*Ձեզ չասացի՞, թե նա տանը նստած կլինի, առանց դիտենալու, թե դուրսը ինչ է կատարվում։ Մի դրան նայեցեք, կարծես զանձ է գտել ու ժպտում է ինքնագոհ, ինչպես էլ գիրացել է։*

Դ Ե Ղ Ի Ն Մ Ա Զ Ե Ր Ո Վ Ա Ղ Ջ Ի Կ.—*Հրամանքներդ միտինգներին ներկա չէ՞ր։*

Մ Ա Ր Թ Ա.—*Ոչ օրիորդ, ինչի՞ս է պետք միտինգը, երբ քիչ առաջ իմ արհեստանոցում* (Ցույց է տալիս) *և՛ միտինգ էր, և՛ գործադուլ, և՛ ապստամբություն...* (Նիծաղում են):

Լ Ի Զ Ա.—*Կեցցեն... ինչ-որ հարստահարեցիր բավական է, սկսել էիր յուղ կապել, ինքդ կարիր ու ինքդ էլ կեր...* (Երեք մատները, թաթը մոտեցնում Մարթայի քթին) *Ձեռ ուզո՞ւմ...* (Նիծաղում է):

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ղ Ջ Ի Կ.—*Կարծես հանաքների համար ենք եկել...*

Լ Ի Զ Ա.—(Լուրջ) *Դեհ, ուշադրություն, երկար խոսելու կարիք չեմ զգում։ Այս դերձակուհին էլ մեզ օրինակ։ Հա, Մարթա, մենք էլ չենք ուզում այս ճգնաժամին ձեռքներս ծալած նստել։ Ամենքը կազմակերպվում են, գործադուլ հայտարարում, պահանջներ առաջ բերում, իսկ որովհետև մենք, էհ աղջիկներ, արժե խոսել մեզ վրա, ո՛չ աշխատել ենք, ո՛չ էլ գործադուլ կհայտարարենք, պահանջելու էլ բան չունենք, վասնզի մենք ինքներս ենք մեզ վաճառում, ինչևիցե. անենք, ինչ-որ կարող ենք, գնանք ապստամբների մոտ, մաքրենք, լվանք, խնամենք՝ դա էլ օգնություն է։*

ԴԵՂԻՆ ՄԱՋԵՐՈՎԸ.—Գնանք, փրկենք Ռուսաստանը (Հազում է):

ԱՌԱՋԻՆ ԱՂՋԻԿ.—Զգիտես, չես հասկացել, գոնե լսիր. ի՞նչ Ռուսաստան։ Նրան միամիտ կաց, ձեռք տվող չկա. մենք գնում ենք բանվորներին օգնելու։

ԴԵՂԻՆ ՄԱՋԵՐՈՎԸ.—Դե՛հ, մի զայրանա, թող քո ասածը լինի...

ԼԻՋԱ.—(Մարթային) *Հիշո՞ւմ ես, դու ինձ մի օր ասացիր, որ գրժգոհ ես, ուզում ես այլ կերպ ապրել։ Ես այն ժամանակ չհասկացա քեզ, ավելի լավ, առ կապիր...*

ՄԱՐԹԱ.—(Զարմացած) *Ի՞նչը։*

ԱՌԱՋԻՆ ԱՂՋԻԿ.—(Բաց է անում կապոցը և հանելով մի սպիտակ կապ կարմիր խաչով տալիս է Մարթային) *Այս. որպես կամավոր գթության քույրեր անարգելք կմտնենք հեղափոխականների մոտ. հասկանալի՞ է։*

ՄԱՐԹԱ.—(Շշմած) *Դարձյա՞լ կարմիր խաչ...*

ԼԻՋԱ.—Մի վախենա, գնանք, ինչ ուզում է թող լինի. մի անգամ մեռնելու ենք, միևնույն չէ՞...

ՄԱՐԹԱ.—(Տնտղում է) *Իմ խաչը... կարմիր գթության... ա՛խ...*

ԱՌԱՋԻՆ ԱՂՋԻԿ.—(Բարկացած) *Դե՛հ շուտ, ի՞նչ ես հիմարացնում մարդու։*

ԼԻՋԱ.—(Աչքով է անում) *Դու էլ նախօրոք մի տաքանա։*

ԴԵՂԻՆ ՄԱՋԵՐՈՎ ԱՂՋԻԿ.—Միևնույնը չէ՞, մի օր մեռնելու ենք Ռուսաստանի... (Հանդիպելով աղջկա հայացքին լռում է):

ՄԱՐԹԱ.—(Մի պահ նայում է մորը, ապա ջուրակին և հանկարծ գունատվում, խեղդված ձայնով ասում է) *Լավ, գալիս եմ... սպասեցեք ինձ բակում, մորս ասելիք ունիմ...*

(Աղջիկները գնում են՝ նախօրոք բերին կապելով կարմիր խաչեր):

ՄԱՐԹԱ.—Մա՛յր, լսիր ինչ եմ ասում։ (Մայրը հրում է նրան) *Մա՛յր, գնամ Մակարին բերեմ... Մակարին։* (Ցնորվածը չի նայում նրան): *Մա՛յր, Մակարին քաղաքամաս տարան, գնամ, բերեմ...*

ԱՆՆԱ.—(Նստում է ու լալիս) *Արդեն տարան, խեղճ երեխա։*

ՄԱՐԹԱ.—(Անհամբեր) *Գնամ բերեմ նրան...*

ԱՆՆԱ.—(Անտարբեր) *Գնա, աղջիկս, գնա։*

ՄԱՐԹԱ.—(Ազատ շունչ քաշելով) *Դե՛հ, լսիր, ահա գնում եմ, դու տանից դուրս չգաս... Եթե քեզ հարցնեն իմ մասին, կասես, որ գնացել եմ Մակարին տուն բերելու։ Պահարանում ուտելիք կա, օղի էլ...* (Աննան օղու անունը լսելուն պես վեր է ցատկում):

ԱՆՆԱ.—(Շտապեցնելով) *Գնա՛, գնա՛, կուշանաս* (Անհամբեր նայում է պահարանին):

ՄԱՐԹԱ.—Գնում եմ... Կարո՞ղ եմ չգնալ... Ծնվեցի կարմիր խաչով. ինչո՞ւ չմեռնել նրան թեթև կապած... (Մարում է) Երևի երջանկության համար չեմ ծնված եղել... Ա՜խ, Անտոն...

ԱՆՆԱ.—Գնա՛, գնա՛... կուշանաս...

ՄԱՐԹԱ.—Թշվառ կին (Սոմողից ինչ-որ հանում է ու պահում կրծքում): Բոլոր երեխաներիդ մահը գողացավ քեզանից, իսկ ինձ դու քո ձեռքով ես ուղարկում...

ԱՆՆԱ.—(Սարսափած) Գնա, աղջիկս, կուշանաս... չես հասնի...

(Աղջիկները բակում են դուրը):

ՄԱՐԹԱ.—(Հուզված) Լավ, թող լինի այսպես... դեհ մնաս բարով (Գրկում է):

ԱՆՆԱ.—(Ճչում է սարսափահար) Կուշանաս...

(Մարթան դուրս է վազում):

Ե. ԱՐԱՐ

(Բարձրավանդակ, հեռուն սևին է տալիս քաղաքը, ձյունախառն քամի, ճեղ փողոցներում երևում են մարդկային սիլուետներ, երբեմն լսվում է հրացանաձգություն: Բարիկադի մոտ նստած են մի ծերուկ ու մի քանի բանվորներ, աղմուկ, կանչ, ծիծաղ):

ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐ.—(Ծերուկին) Պատմի՛ր, պատմի՛ր:

ԾԵՐՈՒԿ.—Հա, ինձ ասացին, որ հսկեմ ճանապարհը ու մարդ երևալուն պես շվացնեմ: Մտա վագոնի տակը և նայում, թե ո՞ր տխմարը ծուղակն է ընկնելու: Հանկարծ փսփսոց եմ լսում: Թու, սատանի ճուտ, աղամարդը մեռնելիս էլ այդպես չի փսփսում: Կամաց սողում եմ առաջ և ինչ եմ տեսնում (Ծիծաղում է ինքնագոհ ու ներս է քաշում ծուխը) երեք հոգի (Ծիծաղում է բուլացած) Օ՜ֆ... երեք աղջիկ դիմում են առաջ: Ի՞նչ անել, շվացնեմ, վախից վայր կընկնեն. դեհ եկ ու դրանց խոսք հասկացրու, չշվացնեմ չի լինի, ընկերները դժգոհ կմնան: Վերջապես խելքիս դուռ ավի և վճռեցի սուտ վիրավոր ձևանալ ու սկսեցի ողորմելի ձայնով տընքալ: (Պառկում է ու ձեռացնում) Օ՜ֆ, օ՜ֆ, անգութներ, անասնածներ, ի՞նչ ուզեցիք ծերիցս, ես ձեզ ի՞նչ էի արել... աղջիկները քարացած կանգնեցին. մեկը, որ հազում էր շարունակ, ասաց.— Թողնենք, փախչենք,— մյուսները ինչ-որ փսփսացին: Մի անպիտան էլ ասաց.— գուցե լրտես է, թող սատկի շան պես:— Իսկ երրորդը, որ մի բարձրահասակ սիրուն աղջիկ էր, խիզախորեն մտավ վագոնի տակ և մոտեցավ ինձ... (Լռում է խորհրդավոր):

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ.—Հետո՞, հետո՞:

ԾԵՐՈՒԿ.—(Ժպտում է) ...Գրկեց գլուխս և անուշ ձայնով հարցրեց իմ ցավի մասին:

ԲԱՆՎՈՐ.—Եվ դու, իշարիկ, բռնվեցիր։

ԾԵՐՈՒԿ.—(Նենգ ժպիտով) Չէ, տեսնեմ նա իր կապոցից վիրակապեր է հանում։ Ես իսկույն հայտնեցի, որ վիրավոր չեմ, այլ լավ ծեծված։ Մի կերպ դուրս եմ սողում վագոնի տակից և նայում ենք միմյանց։ Բանից դուրս է գալիս, որ մենք հին ծանոթներ ենք. ես՝ մահակը ձեռին, նա՝ գթության քրոջ կարմիր խաչը կրծքին։

ԲԱՆՎՈՐ.—Հետո՞...

ԾԵՐՈՒԿ.—(Դժկամ) Էլ ի՞նչ հետո, վերջացավ...

ՄՅՈՒՍ ԲԱՆՎՈՐԸ.—Ինչպե՞ս թե վերջացավ, աղջիկները ո՞ւր գնացին։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐ.—(Հեգնանքով) Տուն փախան։

ԾԵՐՈՒԿ.—Տարա ընկերների մոտ։

ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐ.—(Մտատանջ) Քանի՞ հոգի էին։

ԾԵՐՈՒԿ.—(Բարկացած) Թու, սատանի ճուտ, ասացի, թե երեք։ Չորս են եղել, մեկը ճանապարհին ընկել է կաղակների գնդակից ու իսկույն մեռել։ Մեկն էլ սաստիկ ցաղում էր ու հազում, նրան պատկեցրին հիվանդանոցում, իսկ մնացած երկուսը աշխատում են իրար հետ...

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐ.—Իսկապես մենք մինչ այժմ չենք ճանաչել մեր աղջիկներին։ Ինչ պարծանք, որ ընդհանուր բողոքի ու կռվի պահին նրանք աջակցում են մեզ, ձեռք են մեկնում օգնության։ Եթե նրանց կատարածը մի դդալ ջուր է ծովի մեջ, սակայն որքան մեծ է նրանց տված ոգևորությունն ու խրախուսանքը։ Մեր ընկերները, շատ շատերին դիտեմ, որոնք ետ են դառել կիսաճանապարհ, ընկճվել ու մոռացել են անասելի զրկանքներով ձեռք բերած գիտակցության փշրանքները՝ իրենց տգետ մոր անեծքի, լացի, կնոջ անկամ ու սպառնալից ճիչերի տակ։ Ճիշտ է, ես... (Լսվում է հրացանաձգության տարափ, ամենքը վեր են կենում, զենքերը պատրաստելով)։

ԱՆՏՈՆ.—(Իջնում է բլրակից մի բանվորի հետ, գլխիկոր ու տրտում) Ասում ես, ոչ մի լուր չբերի՞ր...

ԲԱՆՎՈՐ.—Այո՛, առաջին անգամ ցնորված մայրն ասաց, որ գնացել է եղբորը՝ Մակարին բերելու քաղաքամասից, սաստիկ խմած էր։ Երկրորդ անգամ տանը ոչ ոք չկար, հարևաններն ասացին, որ աղջիկը գնացել է ընկերուհիների հետ քաղաք...

ԱՆՏՈՆ.—(Շփոթված) Քաղա՞ք ես ասում...

ԲԱՆՎՈՐ.—Այո՛, ասացին, որ նա արդեն հայտնի...

ԱՆՏՈՆ.—(Գունաթափ) Լավ... Իսկ այսո՞ր։

ԲԱՆՎՈՐ.—Այսօր էլ, որ գնացի, տունը ծխում էր, պատերն էին մնացել, (Անտոնը ցնցվում է) ասացին, որ մորը աղգականներից մեկը տարել է իր մոտ, իսկ աղջիկը մինչև օրս չկա՞ ու չկա՞... 2

Ա Ն Տ Ո Ն.—(Հազիվ լսելի) *Շնորհակալ եմ... այլևս ոչինչ հարկավոր չէ... դնա ճաշիր* (Հանում է ժամացույցը) *արդեն 12-ն է։* (Մյուսներին) *Ընկերնե՛ր, գնացեք ճաշելու, ես կմնամ այստեղ։* (Բանվորները գնում են, նկատելով ծերին, որ ուղղում է զուրգուրանքով բարիկադին մեկնած կարմիր դրոշն ու ապա տեղավորվում նրա մոտ) *Գնա, ծերուկ, դու էլ տաքացիր, կշտացիր, ժամանակ է...* (Հենվում է բարիկադին)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Գոհ, ուրախ) *Ես տաքացել, կշտացել եմ...*

Ա Ն Տ Ո Ն.—*Մի՞թե, այս ճգնաժամին...* (Բռնում է գլուխը) *Ո՛չ, ո՛չ, անկարելի է, ես սեղանի վրա փող էի դրել, կարիք չդգա... դուցե... Ա՜խ, Մարթա, Մարթա...* (Լալիս է շնչախեղդ)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Կարեկից) *Դժբախտությո՞ւն է պատահել տանը։*

Ա Ն Տ Ո Ն.—(Ինքն իրեն) *Ասաց.— «Գնա, կսպասեմ քեզ...»։— Գընացի ես. ո՛չ, ո՛չ... թևեր առած թռա... ոտքերիս տակ հող չէի զգում և օդի տեղ ազատ ներշնչում, կորով ու եռանդ, ու մի ծանր ու մրոտ մուրճի տեղ կենդանի խոսքով հարվածում էի հնի, բռնության և չարի գլխին. իմ ձայնը երբեք չնվաղեց, չհատնեց խոսքերիս պաշարը, բանվոր բազմության ճռճող գլուխների ծովը արբեցրել էր ինձ, միտքը, որ կարոտով ու փափագով լսում են ինձ, հասկանում, տենչանքներով ձուլվում, միանում են ինձ հետ։ Վեր ու վեհ էր ու այսպես մի շաբաթ միտինգից՝ միտինգ, դիրքից՝ դիրք, բարիկադից՝ բարիկադ, անքուն, անհանգիստ սպասում եմ ողջունելու արշալույսի զողանջներին, Մարթա, քո սերն ու ժպիտը կրծքիս՝ ի՞նչ արիր դու... ո՞ւր ես դու... ա՜հ...* (Գնդակը սուրալով անցնում է նրա մոտից)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Սարսափահար) *Դե՛հ, քիչ կռացիր, արձակում են անիրավները, կվիրավորվես։*

Ա Ն Տ Ո Ն.—(Սրափվելով նրում է ծերին) *Հեռու, ես վիրավոր եմ արդեն վաղուց։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Ժպտում է) *Այսպիսի կորիճին ո՞վ կարող է վիրավորել։*

Ա Ն Տ Ո Ն.—(Ցասկոտ) *Մի անգութ, անսիրտ աղջիկ...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Միծաղում է) *Իսկ ինձ հետ ընդհակառակն է պատահել։*

Ա Ն Տ Ո Ն.—(Մխում է) *Ինչպե՞ս։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Հլու) *Նստիր, կպատմեմ։*

Ա Ն Տ Ո Ն.—(Հպարտ) *Այստեղ վախկոտներն են նստում։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Ներողամիտ ժպտով) *Ես քեզնից պակաս անվախը չէի, բայց պառկա և չդղջացի, հավատա։*

Ա Ն Տ Ո Ն.—(Վրդովված) *Ծերուկ, հանաքի անհարմար ժամանակ է, լավ կանես եթե մի տաք անկյուն որոնես ու քնես։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Համառ) *Ինձ պատվիրել են, «արթուն կենալ»։*

Ա Ն Տ Ո Ն.—Ո՞վ։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Մի սիրուն աղջիկ։

Ա Ն Տ Ո Ն.—(Հայացքով շափում է նրան և անցնելով բարիկադի մյուս կողմը, ծխում է մտատանջ)։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Հիացած դիտում է նրան) *Ի՞նչ զույգ... իսկ ես ի՞նչ անեմ, թու, սատանի ճուտ, տրաքվում եմ, չեմ կարող լռել, մարդ է ուզարկել տուն, որոնում է, լալիս ու տանջվում աչքիս առաջ։ Թու, կյանքումս գաղտնիք պահած չեմ, դրա համար էլ զորաբաժնում ինձ մականունով էին կանչում, ի՞նչ արած, կենդանի մա՞ղն էլ գաղտնիք պահի, ահա խոսքերը շարվել են կոկորդումս, քիչ է մնում շնչահեղձ լինեմ։ Թու... բայց շատ աղաչեց.— «Պապիկ, լուր ու հեռուիր. հաշվիր թե որդիդ է (Զգացվում է,) քանի հնարավորություն կա, թող օգնեմ, մխիթարեմ, ով կարոտ է դրան... Թող գթության քույր լինեմ...* (Թեռվ սրբում է աչքերն ու բարձր սրբում քիթը ցուցամատի օգնությամբ) *Դեհ, լավ, թող քո ասածը լինի, տրաքվելու էլ լինեմ՝ չեմ ասի...* (Մոտենում է ու մոտենում Անտոնին) *Մի բանով չե՞մ կարող մխիթարել քեզ։*

Ա Ն Տ Ո Ն.—(Նայում է նրա խոնուկ կերպարանքին ու հեգնանքով) *Ինձ չեն մխիթարում...*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Զարմացած) *Ապա ի՞նչ են անում։*

Ա Ն Տ Ո Ն.—(Անտարբեր) *Ես էլ չգիտեմ։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Տեսնո՞ւմ ես. (Մոտենում է վատահ ու ինքն իրեն) *Ինչպե՞ս սկսեմ։*

Ա Ն Տ Ո Ն.—Ի՞նչ ես ուզում։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Ինչո՞ւ համար են կռվում բանվորները։

Ա Ն Տ Ո Ն.— (Անտարբեր) *Ազատության։*

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Լուրջ) *Ես այդ գիտեմ։*

Ա Ն Տ Ո Ն.—Էլ ինչո՞ւ հարցրիր։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Բայց չէ՞ որ ասված ասել է՝ «Մի՛ սպանիր»։

Ա Ն Տ Ո Ն.—Նա, ում որ ասել է, նրանք չկան այժմ, իսկ եթե մեզ լավ գիտենար, մեզ էլ չէր ասի։

Ծ Ե Ր Ո Ի Կ.—Նա այդ կտակել է ամբողջ մարդկությանը։

Ա Ն Տ Ո Ն.—Մարդկությունը, կյանքն ու պայմանները, փոխվում և փոխվել են դարերի ընթացքում, իսկ նրա կտակը մնացել է միշտ միևնույնը, չի փոխվել, դրա համար էլ չի հարմարվում մեր կյանքին, մարդկային տառապանքի պատմությունը ցույց է տալիս, որ նա այդ քայլն անելու, այսինքն իր կտակը փոխելու երբեք տրամադիր չի եղել և չէ... իսկ մենք ահա ոտքի ենք կանգնել ուղղելու նրա դարավոր սխալը, հասկացա՞ր...

Ծ Ե Ր Ո Ի Կ.—(Հիացած) *Իսկ հետո՞։*

Ա Ն Տ Ո Ն.—Ի՞նչ հետո։

ՄԵՐՈՒԿ.—Ամեն բան տակն ու վրա անելուց հետո ո՞վ պիտի գրի նոր ավետարանը կամ կտակը, ինչպես ասում ես, մարդկությանը և կրոնքին հարմար։

ԱՆՏՈՆ.—Նա արդեն գրված է։ (Աղերսանքով) Այժմ թող ինձ, պապիկ, հետո էլ, կիսասենք, կդատենք։ Ես էլ սիրում եմ խոսել։ (Ցույց է տալիս կուրծքը) Ներիր, այստեղ օձեր են գալարվում, լրջորեն մտածելու կամ դատելու անկարող եմ...

ՄԵՐՈՒԿ.—(Սիրալիր) Նստիր, աղաչում եմ (Ինքն իրեն) ուղղակի տրաքվում եմ... ե՞րբ պիտի վերջանա այս տանջանքը. կյանքումս այսքան լուծ չեմ եղել... Իմ ի՞նչ գործն էր գաղտնապահ դառնալը։ Թու, Անտոն։ (Նստում է տխուր, վազելով գալիս են մի քանի բանվորներ) Ընկեր Անտոն, գլխավոր պահակում ձեզ կանչում են (Նկատելի իրարանցում, վազում են դես ու դեն, Անտոնը գնում է, բանվորներից մեկը գաղտագողի ետ է դառնում և նստածակվում ծերուկի վրա)։

ԲԱՆՎՈՐ.—(Հանդուգն) Հը, ծեր արջ, լավ կովեցի՞ր։

ՄԵՐՈՒԿ.—(Անուշադիր) Ինչ է, շքանշա՞ն պիտի տաս։

ԲԱՆՎՈՐ.—Միտքս գրել եմ։

ՄԵՐՈՒԿ.—Ջուր ծախս։

ԲԱՆՎՈՐ.—Ինչո՞ւ։

ՄԵՐՈՒԿ.—Ես դեռ շնորհքս ցույց տված չեմ։

ԲԱՆՎՈՐ.—Վախենո՞ւմ էիր։

ՄԵՐՈՒԿ.—Չէ, դեռ կարիք չէ զգացվել։

ԲԱՆՎՈՐ.—Իսկ երբ զգացվի՞։

ՄԵՐՈՒԿ.—Այն ժամանակ կաշխատեմ ամոթով չմնալ։ Ես լավ զինվոր եմ եղել և ավելի լավ կռվել, դե՛հ, դնա գործիդ։

ԲԱՆՎՈՐ.—Ուշ է շնորհքդ ցույց տալու։

ՄԵՐՈՒԿ.—(Միամիտ) Ինչո՞ւ։

ԲԱՆՎՈՐ.—(Արհամարհանքով ցույց է տալիս կարմիր դրոշը) Սա վար առ։

ՄԵՐՈՒԿ.—(Կատաղած) Չհամարձակվես, անպիտան, լակոտ, սրիկա...

ԲԱՆՎՈՐ.—Դավաճան, ապստամբ, ո՞ւմ դեմ ես կռվում... (Հարձակվում է)։

ՄԵՐՈՒԿ.—(Ձայրույթից դողալով) Մի մոտենար, լրտես, ստոր...

(Բանվորը հանում է ատրճանակը և սպանում ծերին, խլում է դրոշը, նստում ու խփում ծերի կրծքին, փախչում։ Երևում է Անտոնը մեքենայապետի հետ, երկուսն էլ ընկնված են ու գունաթափ)։

ԱՆՏՈՆ.—(Անպատմելի հուսահատ) Վերջացավ... Իսկ ինձ թվում էր, թե կդիմանանք... Ի՞նչ դրություն (խփում է կրծքին) դեռ բոլորովին դուրս չի թափվել այստեղից վրեժն ու գառնությունը. ինչպե՞ս հանդուր-

ժել պարտությունը... (Ընկերոջը) *Դու գնա...* (Ձեռքը նրա ուսին է դնում) *Լսիր ինձ... ես այստեղից ոչ մի քայլ անելու չեմ, թող լինի ինչ-որ լինելու է...*

ՄԵՔԵՆԱՅԱՊԵՏ.—Ես թեղ մենակ չեմ թողնի, հասկանո՞ւմ ես... ինձ սպասում են տանը, կին, երեխաներ, մայր... այս տագնապին, երբ մնում է մեզ մեր սեփական կաշու պաշտպանությունը, ի՞նչ ամբոխություն քո անտեղի համառությունը...

ԱՆՏՈՆ.—(Հաստիկ նուգված գրկում է ընկերոջն ու հեկեկում) *Ինձ սպասող չկա... խոստացել էր մեկը՝ խաբեց... ես դարձյալ մենակ մնացի, դարձյալ անտուն-անտեր... բաղձանքներս ու տենչերս հօդս ցնդվեցին, չարը հաղթեց, բռնությունը ուժեղ էր մեզանից...* (Վեռական) *Ես կմնամ այստեղ...* (Վեռական դիմում է բարիկադին ու հանկարծ նկատելով ծերուկին) *Խեղճ ծերուկ, քիչ առաջ հանաք էր անում ու ինձ հիշեցնում աստծու կատակը՝ «Մի՛ սպանիր».* (Կռանում է) *Պապ, վեր կաց խոսենք. այժմ ես ուզում եմ խոսել* (Ցնցում է նրան) *Նա վիրավորված է... պապ, ինչ դեղեցիկ դիրք հավերժ քնելու, կեցցե՛ս, ծերուկ...*

ԾԵՐՈՒԿ.—(Թույլ ձայնով) *Մի լակոտ ուզում էր դրոշը վար առնել... չթողի, խփեց... տրաքվում եմ, չեմ կարող... այլևս բռնել... կռացիր...*

ԱՆՏՈՆ.—(Գրպանից) *Ասա, ի՞նչ ես ցանկանում, կկատարեմ։*

ԾԵՐՈՒԿ.—(Ժպտում է) *Սիրիր... Մարթային... լավ պահիր... ասա որ մնում ձեզ օրհնելով* (Թույլ կերպով խաչակնքում է Անտոնի գլուխը)։

ԱՆՏՈՆ.—(Ցնորված) *Մարթային... ո՞վ ես դու... ո՞ւր է Մարթան...*

ԾԵՐՈՒԿ.—(Զզվում է) *Օ՜ֆ, հանդստացա... գնա կանչիր նրան... ասա.. .*

ԱՆՏՈՆ.—(Մոլորված) *Ասա, ո՞ւր է... շո՛ւտ...*

(Վազելով գալիս է մեկը տաք հագնված, մինչև աչքերը շալով փակած, կարմիր խաչը բևին, երկու բանվորների հետ)։

ՄԱՐԹԱ.—Զարմանալի բան. տեսել է մեռնող ծերուկին ու փոխանակ մի կերպ հիվանդանոց բերելու կամ իմաց տալու, պատմություն է անում, ես այդ տղային չհավանեցի, ընկերներ։ (Մոտենում է)։

(Անտոնը և մեքենայապետը ետ են քաշվում, Մարթան կռանում է) *Պապիկ...* (Գրկում է գլուխը) *Այդ դո՞ւ ես...* (Լալիս է)։

ԾԵՐՈՒԿ.—(Վերջին նիզով) *Ասացի... չկարողացա... ներիր... Մարթա, զավակս.* (Մարթան երկյուղած դնում է մեռնողի գլուխը գետնին, Անտոնը ապշած նայում է նրան, ծերուկը ժպտում է ու <պարզում> *ձեռքը դեպի Անտոնը, նա մոտենում է ու ճանաչում)։*

ԱՆՏՈՆ.—Մարթա... (Գրկում է ու շոքում ծերուկի մոտ)։

ՄԱՐԹԱ.—(Սաստիկ հուզված բանվորներին) *Տարեք... ես իսկույն կգամ։*

(Բանվորները վերցնում են դիակն ու հեռանում)։

ԱՆՏՈՆ.—(Ինքն իրեն կորցրած) *Մարթա...* (Գրկում է ու համբուրում) *որտե՞ղ էիր։*

ՄԱՐԹԱ.—(Բաց է անում դեմքը) *Եկել էի քո ետևից...*

ԱՆՏՈՆ.—(Զարմացած ու շփոթված) *Ինչո՞ւ։*

ՄԱՐԹԱ.—(Ժպտում է ու ցույց տալիս թեր, Անտոնը հիացած դիտում է նրան ու չի հավատում աչքերին)։

ԱՆՏՈՆ.—*Անգին աղջիկ... Իսկ ինձ ասացին, որ մայրդ...*

ՄԱՐԹԱ.—(Տխուր) *Նա, տնակը, իմ ողջ անցյալը այրվեց, չկա... ինքն է այրել, թե մարդիկ՝ չգիտեմ. ինձ ասացին, որ պատերն են մնացել...* (Անտոնը գրկում է նրան՝ ուզելով մխիթարել) *Դու կարծում ես ցավո՞ւմ եմ, երբե՞ք։ Այսպիսի մի բախտավորություն ես նույնիսկ երազած չէի։* (Ազնուված) *Այրվեց ինչ որ հին էր, ապականված, հիվանդ ու անլոր... Իմ աղքատ խրճիթի ծուխն էլ խառնվեց այն մեծ հրդեհին, որից մնացած փլատակները մաքրելու ուխտ եմ արել ես՝ նորը շինելու անխորտակ հավատով՝ լսո՞ւմ ես, պրոլետարիատ...*

ԱՆՏՈՆ.—(Սիրով) *Չեմ հավատում աչքերիս, ականջներիս։*

ՄԱՐԹԱ.—*Հավատա։* (Սիրով ու ողջագուրանքով) *Չէ՞որ դու էիր ինձ կանչողը, ահա ես էլ եկա...*

ՄԵՔԵՆԱՅԱՊԵՏ.—(Հանում է գլխարկն ու մոտենալով Մարթային) *Հասկացա... Անտոնի և ձեր ընկերը, ուրախ եմ ու չափազանց գոհ...* (Երկար թափահարում է Մարթայի ձեռքը)։

ԱՆՏՈՆ.—(Հպարտ) *Հավանեցի՞ր...* (Սեղմում է կրծքին) *Սա իմ Մարթան է... իմ... իմ...*

ՄԵՔԵՆԱՅԱՊԵՏ.—(Աշխույժ) *Լավ, լավ, դրա մասին հետո կըխոսենք, պետք է փախչի։* (Մարթային) *Իմ կինը մի շատ լավ մարդ է, գոհ կմնաք նրանից։* (Բռնում է Մարթայի թևից) *Գնանք* (Անտոնին) *իսկ դու կեցիր, էլ չեմ խնդրում, դա քո աղատ կամքն է։* (Մարթային) *Քիչ առաջ համառել էր, որ տեղիցը շարժվելու չէ։*

ԱՆՏՈՆ.—(Կանգնում է նրանց առաջ) *Քիչ առաջ... Իսկ այժմ իմ սրտի ընտրյալը ինձ հետ է։* (Տխուր) *Ա՜խ, Մարթա, պարտված պիտի փախչենք կռվի դաշտից։* (Մտախոհ) *Դեռ մեծ բաց ունի լցնելու ռուս բանվորը իր անհերքելի հաղթանակի դրոշը պարզելու համար։*

...Դեհ գնանք. մի մխիթարանք, որ տանից դուրս եկա մենակ, այժմ գնում եմ ընկերով՝ երկուսով... ոչինչ։ (Սպառնում է բաղաքին) *Ես գընում եմ ուժերս կռելու, կռվելու, ես գնում եմ թշնամիներիդ թիվը ստվարացնելու, արհամարհում եմ քո դավադիր ուժի ժամանակավոր հաղթանակը, ատում ծերացած-հնացած սրտիդ օրհասական քրքիջը...*

(Ոգևորված) Գնանք, փախչենք, մայրաքաղաքի հեռագիրը արդեն հայտնում է բոլորին...

ՄԱՐԹԱ.—(Ազատելով քեզը) Ես չեմ փախչում... ինձ խիստ դժվար էր վեր կենալ ու գնալը միայն, այժմ, այս մի շաբաթվա ապրումներից հետո ետ դառնալն ինձ անհնարին է։ Գնալու եմ... (Սրտամորմոք) տուր ձեռքդ իմ թանկագին, իմ սիրելի... թող այս վշտի ու լքման վայրկյանին քեզ հայտնի լինի այն բուռն սերն ու հարգանքը, որ ունեցել եմ մի տարի, որ թաքցրել եմ մի տարի...

ԱՆՏՈՆ.—(Խելակորույս) Ա՜հ, իսկ ես ինչ վատն եմ եղել, կուլյրը...

ՄԱՐԹԱ.—Տուր ձեռքդ. տձև երկաթի հետ կռեցիր, կոփեցիր և իմ ողջ էությունը, ձև ու դիրք տվիր իմ խոսքն մաքին, խլեցիր ինձ խաբող տղմուտ հոսանքից։ Օրհնված լինես դու... (Սրբում է աչքերը) Օրհնված լինի քո ուխտը, քո ճանապարհը... (Մնում է մի պահ լուռ ու խուլ. հազիվ ինքն իրեն զսպելով) Ես գնում եմ քո հարթած ճանապարհով, մնաս բարյավ, Անտոն...

ԱՆՏՈՆ.—(Անակնկալ երջանկությունից շշմած) Գնանք, այժմ դու իմն ես, ոչ ոք, ոչ մի ուժ քեզ չի կարող խլել իմ ձեռքից... գնանք դավակ.... (Ժպտով) Գնանք մի բուն շինենք, սիրավենք, հանգստի կարոտ է հոգիս, շատ եմ տանջվել, շատ եմ մաքառել...

ՄԱՐԹԱ.—(Տխուր) Դու ինձ չհասկացար, Անտոն։

ԱՆՏՈՆ.—Գնանք, դեռ խոսելու, վիճելու շատ բան կա։ Հիշո՞ւմ ես, թե ինչպես ես տանջել ինձ, անգութ աղջիկ...

ՄԱՐԹԱ.—(Աղերսանքով) Անտոն, դու չհասկացար ինձ...

ԱՆՏՈՆ.—(Զարմացած) Ի՞նչ ես ուզում, սիրելիս։

ՄԱՐԹԱ.—(Խղճալով նայում է Անտոնին) Այն որ մենք պիտի գնանք բաժան-բաժան... (Անտոնը գունատվում է) Ուզում եմ ասել մի ճամփով միևնույն դաղափարի համար, բայդ ոչ հրար հետ...

ԱՆՏՈՆ.—(Մոլորված) Մարթա, ինչե՞ր ես խոսում...

ՄԱՐԹԱ.—(Համոզիչ) Հանդարտվիր։ Ինձ ավելի դժվար է քեզանից բաժանվելը, (Սրբում է աչքերը) Սակայն ուխտս ստիպում է ինձ խլել, ճնշել խելացնոր սերը սրտիս մեջ... Անտոն, ես տանջանքի դավակ եմ, երջանկության համար, դեթ առ ժամանակ խորթ ու օտար, գնում եմ տանջանքի ու տանջվածների մոտ՝ ինձ մի՛ ճնշիր, մի՛ բռնանա... (Գրկում է նրան) Տե՛ս, բարիկադները, այս հանդուգն ապստամբները քո ծանոթ Մարթային թաղեցին. նա այլևս չկա՝ մեռավ... Այրվեց իր հայրենական խրճիթի, իր դեղին տոմսի հետ... այժմ քո դեմ կանգնած է նոր Մարթան, որ այստեղ, բողոքի ու վրեժի ժխորի մեջ աշխարհ եկավ։ (Աղերսանքով) Այդ նոր Մարթայի վերածննդյան համար շատ բան ես տվել դու, մի պտնար, և հիմա հանդարտվիր, բաժանվենք հաշտորեն։

(Բռնում է ձեռքը) *Ժպտա ինձ, սիրելիս. թո՛ղ քո բարի ժպիտը մնա ինձ հիշատակ։* (Գլուխը հենում է կրծքին, բոլորն էլ լալիս են) *Դե՛հ, մնաս բարով։*

Ա Ն Տ Ո Ն.—(Դառնասիրտ) *Իհարկե, մի անմտություն էր ընկնել ցընորքների հետևից, մատնվել երազանքի, թող լինի պարտություն և իմ սիրույն, նա էլ թող փուլ գա այս բարիկացների հետ։ Կնշանակե նրանց հիմքերը խարխուլ էին...* (Կատաղած) *Պետք էր էլ ավելի ուժեղ զարկ* (Պարզում է բռունցքը) *էլ ավելի ցասկոտ հարված...* (Մարթային) *Ես քեզ սիրեցի այնպես, ինչ կերպ որ կարող էի, հոգու էլ ոչ մի անկյուն չմնաց, որ գերած չես։ Ինչո՞ւ այսպես եղավ՝ չգիտեմ... Ազատ ես, Մարթա... Ես, որ ամբողջ իմ հալածական ու թափառական կյանքով կռվել եմ բռնության դեմ ու կռվում եմ՝ ես չեմ կարող բռնանալ քեզ վրա... գնա՛...*

Մ Ա Ր Թ Ա.—*Օ՜, ո՜չ. ես քեզանից այդպես չեմ բաժանվի, հանդարտվիր, Անտոն։*

Ա Ն Տ Ո Ն.—(Առանց նրան նայելու) *Ես այժմ ավելի քան հանդարտ եմ։*

Մ Ա Ր Թ Ա.—(Ժպտալով փաղաքշում է) *Իսկ ես կուզեի, որ ինձ հաշտության համբույրով ճանապարհ դցեիր։*

Ա Ն Տ Ո Ն.—(Սառն) *Դա մի ապահով ղենք չէ մենակ ճամփա ընկնող աղջկա համար։*

Մ Ա Ր Թ Ա.—(Համբուրում է ձեռքը) *Անտոն...*

Ա Ն Տ Ո Ն.—(Մեղմ ու հուզված նրա զգվանքից) *Ասա՛...* (Նստում է ու գլուխը առնում ափերի մեջ, Մարթան հետևում է նրան։

Մ Ա Ր Թ Ա.—Անտոն, քո կինը լինելու, քեզ բախտավորացնելու դեռ պատրաստ չեմ, արձակիր ինձ։ Մինչև հիմա դու ապրել ու կռվել ես քո պաղատարքի, քո ձգտումների համար և հարվածել միշտ քո ճամփին կանգնողին։ Մի՞թե ես ես իրավունք չունեմ լինել քեզ նման, առաջ դու էիր կանչում ինձ, ես չէի հասկանում և լսում քեզ, այժմ երբ հասկացա, ինչո՞ւ ես կանգնում իմ դեմ, մի՞թե գերազասում ես այն, որ կեղծեի, խարեի քեզ ու խոնարհ կին դարձած քեզ ընտանեկան խաղաղություն ստեղծեի կեղծիքի ու անարդանքի մեջ թաքցրած... չէ, չեմ կարող, անձնական ոչ մի վայելք ինձ չի դրավում, ոչ մի անդորր չի կանչում մրրկող հոգուս, մի կանգնիր իմ դիմաց... թող գնամ...

Ա Ն Տ Ո Ն.—(Կարոտով) *Ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անելու, մի՞թե կարելի է այդքան ցեթև կերպով նայել կյանքին, ա՜խ, Մարթա, Մարթա...*

Մ Ա Ր Թ Ա.—(Խիզախ) *Գնում եմ ժողովրդի մոտ...*

Ա Ն Տ Ո Ն.—(Ժպտում է) *Իսկ մինչև այժմ որտե՞ղ էիր, անխելք երեխա, և մի՞թե դրա համար ինձնից փախչել է հարկավոր, մի՞թե ես ժողովրդի թշնամի եմ...*

Մ Ա Ր Թ Ա.—(Համեստ) *Ես այնպես չասի, ինչպես որ պետք էր...*

Ես արտահայտվել չեմ կարող (Ժպտում է) *Ուզում եմ գնալ գործել... Նվիրվել կեղեքվածներին, իսկ եթե քեզ հետ լինեմ, սերն ու բախտավորությունը կլափի ինձ բոլորովին, կկուրացնի... Ես ուզում եմ քեզ պես լինել... արժանի լինել քեզ... ուզում եմ քավել վատ օրերի մեղքը... թող սերս քեզ լինի ամբողջովին, խնամքս ու գուրս՝ կարոտյալներին:* (Հուզվում է սաստիկ) *Չեմ հասկանում, ինչո՞ւ ես համառում, ուրիշ աղջիկների ինքդ էիր հրում, քարոզում, համոզում, որ նստած չմնան, գնան գործեն, մաքառեն... Դու ինքդ դատապարտում էիր, ինքդ հանդգնություն չէիր տալիս...* (Անտոնը նայում է նրան բուռն սիրով) *Կգնամ, կըզորձեմ որքան ուժերս ներեցին, քեզ կգրեմ միշտ իմ մասին...*

Ա Ն Տ Ո Ն.—Հետո՞...

Մ Ա Ր Թ Ա.—Հետո կգամ (Կարոտալի) *Մինչ այդ ինձ չե՞ս մոռանա...:*

Ա Ն Տ Ո Ն.—(Վճռական վեր է կենում և բարձրացնում Մարթային) *Գնա... թող քո կամքը լինի... գգույշ կաց, գործելու պաշտոն ու ատիճան չկա այդ ասպարեզում, միշտ խանարհ ու անկեղծ եղիր: Գիտցիր, որ չես գնում պարտավորեցնելու կամ սովորեցնելու՝ այլ ընդհակառակը. այս մի մոռանար, հոգիս...* (Մեծ դժվարությամբ) *Լավ պահիր քեզ...* (Գրկում է ու սեղմում կրծին):

Մ Ա Ր Թ Ա.—Ինձ չե՞ս մոռանա:

Ա Ն Տ Ո Ն.—Քեզ մոռանա՞լ... սիրտս, հոգիս, էությունս հետդ ես տանում, քեզ մոռանա՞լ կլինի...

Մ Ա Ր Թ Ա.—(Բերկրանքով) *Շնորհակալ եմ, կաշխատեմ, որ զոհ մնաս:* (Մոցից ծուար է հանում) *Առ, օրիորդի որդու մահվան պատճառով ինձ մնաց. մի մասը ես վերցրի... սրանով էլ դու...* (Հեծկլտում է) *մի անտեր, որբ տղա... ընկեցիկ խնամիր... անունը Մակար դիր...*

Ա Ն Տ Ո Ն.—(Սաստիկ զգացված) *Դեհ, թող... հերոսուհին էլ լա՞... շատապիր, բաժանվենք, ժամանակը վատ է: Ո՞ր կողմն ես գնալու...* (Քիչ մտածում է) *Մենա՞կ ես...*

Մ Ա Ր Թ Ա.—(Հանգիստ) *Որ կողմը եղածը դեռ չգիտեմ, հետո կիմանաս, իսկ գնում եմ Նինայի, Զինայի ու Օլգայի հետ...*

Ա Ն Տ Ո Ն.—(Զարմանքից Ֆարացած) *Նրա՞նց... գո՞ւ... սպասիր* (Ինչ-որ մտածում է) *Այդ գո՞ւ էիր հիվանդանոցում... այդ քե՞զ էի գովում ընկերներիս... ա՜հ...*

Մ Ա Ր Թ Ա.—Ես էի...

Ա Ն Տ Ո Ն.—Ապա ասում էին, որ օտար տեղից է, ճանապարհը փակվելու առթիվ կայարան եկած...

Մ Ա Ր Թ Ա.—Ես խաբել էի, անունս էլ փոխել, որ դու չիմանաս... երբ տանից դուրս եկար, ես էլ իսկույն եկա քո հետևից:

Ա Ն Տ Ո Ն.—(Գոհ, հանգիստ) *Ո՞վ էր սպասում. իսկ այն անպիտանները, գոնե մի խոսք ասեին, այժմ որտե՞ղ են:*

Մ Ա Ր Թ Ա.—Կայարանում ինձ են սպասում, գնացքը շարժվելուն պես գնում ենք։

Ա Ն Տ Ո Ն.—Իսկ եթե ինձ չպատահի՞ր (Ցավով) *պիտի անհայտանայի՞ր այդպես։*

Մ Ա Ր Թ Ա.—Ո՞չ, մենք վճռել էինք քեզ անպայման իմաց տալ։

Ա Ն Տ Ո Ն.—Մենք. ուրեմն աղջիկները գիտե՞ն, որ այժմ ինձ մոտ ես։

Մ Ա Ր Թ Ա.—Իհարկե, նրանք գիտեն ու սիրում են քեզ։ Նինան ծիծաղում է քեզ վրա, որ միշտ պարծեցել ես, թե քո սրտում մի կին տեղ ունենալու չէ... իսկ այդ խեղճ ծերուկն էլ իմ խնդրանքը էր գիշեր ցերեկ հսկում քեզ... և այդպես էլ մեռավ, տեսնո՞ւմ ես, նա իմ հին ծանոթն էր...

Ա Ն Տ Ո Ն.—(Ապշած) *Ա՜հ, նոր եմ զլխի ընկնում...*

Մ Ա Ր Թ Ա.—Ուրիշ շատ բաներ կան պատմելու, հետո, ուշանում եմ (Երկյուղած) *գնամ, Անտոն...*

Ա Ն Տ Ո Ն.—Գնա, սիրելիս... գնա... (Համբուրում է)։

Մ Ա Ր Թ Ա.—(Քանդում է թևից կարմիր խաչը) *Իսկ այս քեզ հիշատակ... հիշիր ինձ քո աղոթքներում։*

Ա Ն Տ Ո Ն.—Ես չեմ աղոթում, բողոքում եմ. կհիշեմ քեզ իմ բողոքի ու վրեժի վայրկյաններին, որոնք կյանքիցս անբաժան են, գնա, Մարթա... կարող ենք ձերբակալվել... (Տխուր) *Տեսա՞ր ինչ եղավ մեր դրությունը։*

Մ Ա Ր Թ Ա.—(Խիզախ) *Ոչինչ, ես այսպես հպարտ եմ զգում ինձ, այժմ միայն հասկացա, թե ինչեր կարող ենք անել։ Պարտվեցինք, սակայն մեծ շահով, հավատա... բաժանվենք...* (Համբուրում է ու վազում բարձրավանդակով)։

Ա Ն Տ Ո Ն.—(Վազելով դեպի նա) *Մարթա, սպասե՞մ...*

Մ Ա Ր Թ Ա.—Մնաս բարյավ... սպասիր... քաջ կաց... դեհ, ժպտա, հպարտ կանգնիր... այդպես... մնաք բարյավ (Անհայտանում է)։

Ա Ն Տ Ո Ն.—Գնաս բարյավ... (Համբուրում է կարմիր խաչը)։

ՄԵՆԱԿ ԿԻՆԸ

Ծովափ: Վերջալույսը հրդեհել է հորիզոնը: Ծովը խաղաղ է, եզերքին, քարի վրա նստած է ծերունի նավավարը խիստ հանելի դեմքով, սպիտակաճեր և ծխում է: Հեղինեն, աջ ձեռքով հենված նավակի քթին, մտածկոտ դիտում է հեռուն՝ սպիտակ լայն շղարշը ուսերին գցած:

Ա. ԱՐԱՐ

Ա. ՏԵՊԱՐԱՆ

ՆԱՎԱՎԱՐ.—(Մի պահ լռությունից հետո):

Խաղաղ է ծովը, դուր է ահ, երկյուղ։
Ուզո՞ւմ ես, ափով կթիավարեմ,
Լողանք մինչև գյուղ։

ՀԵՂԻՆԵ.—*Իսկ եթե հանկարծ... երկչում եմ, պապի՛կ։*
Մի գուցե մրրիկ, հողմ կամ հորդ անձրև
Երկինքը թափի։
Արևն էլ ծածկե թուխպերը ամպ,
Մառայլից շշմած չհասնենք ափի...
Ես ծով եմ մտնում առաջին անգամ
Ու սարսափ կզգամ։

ՆԱՎԱՎԱՐ.—(Մոտենալով):

Դեհ, թող, անհոգ կաց. հեշտ բան է ասել
Անհեթեթ խոսքեր արևի մասին։
Երկնային փառքով ծովին է հասել
Ու կմտնի մայր
Եվ կառնե դադար կյանքն հարախառով,
Կյանքը նենգ, պատիր,
Կյանքը անգորով,
Դու լսիր ծերիս ու վախն ատիր։

ՀԵՂԻՆԵ.—*Ատո՛ւմ եմ, ատո՛ւմ... ու թեև կյանքում*

Ապրում եմ անհայտ միչտաի նման,
Սակայն հոգուս մեջ խորան կա կանգուն,
Կերոնները վառ սրբատաշ սեղան
Ու դանդակները արծաթահնչյուն... (Տրտում)
Ինչո՞ւ չեմ թռչուն,
Ա՛ղա՛ղ, թեավո՞ր...

ՆԱՎԱՎԱՐ.—(Քմծիծաղ)
Մարդը թեավո՞ր. կատակ է անմեղ,
Մի աննյութ բաղձանք ժամանցի համար։
Ուժեղն ո՞ւր խլե պատառը համեղ,
Ո՞ւմ մեջքին դարսե վայելքն իր հարմար,
Ո՞ւմ ճնշե անսիրտ, ո՞ւմ ուսին բառնա
Իր բեռը—բաժին, արարքները՝ ցած,
Որ կյանքն անզորի մի դժոխք դառնա,
Ապրի գեռնաքարշ քենով բթացած,
Ագահ ու անմիտ, գաղաններից վատ՝
Միմիայն երկու ոտքերի ատթիվ
Անվանվելով մարդ... (Դառնացած)։
Չե՞ս տեսել, ինչպես գերել են մարդուն
Բռնության նյութած հոգսերը ճնշող,
Աշխարհն էլ կասես մի մութ հավաքուն՝
Ո՛չ ջերմ, ո՛չ ջինջ շող...
Իսկ ով ապրում է աչքերը միշտ դոց,
Խիղճն անտաղանդ՝ ուղում է թևեր
Թռչելու դեպ վեր...

ՀԵՂԻՆԵ.—(Ծիծաղում է)
Ի՞նձ ես ակնարկում, թե՞ այն մարդկության
Անբախտ սերնդին,
Որ ամառները դեպ հարավ կգան,
Ու չի շորանա քո նավակն ու թին։

ՆԱՎԱՎԱՐ.—Ե՛վ քեզ, և՛ ինձ, և՛ նմանների անկանոն շարքին,
Որ մինչև օրս կատարյալ մի կյանք
Կերտելու փոխան
Դեպի վեր փախան... (Սրանեղ)։
Գնո՞ւմ ենք, թե՞ չէ...

ՀԵՂԻՆԵ.—(Տատանվում է)
Ե՛վ վախենում եմ, և՛ հույժ փափագում
Ջրերի վրա լողալ ու լողալ։
Ինչ-որ անհաղթ ուժ,
Ինչ-որ խենթ հակում

Դերել է հոգիս... Պապ, էլ չեմ դողալ։ (Ոտքը դնում է նավակի մեջ)։

Դեհ սիրով ու ժիր
Թիերդ շարժիր...

Մերուկը գոհ և հապճեպ պատրաստվում է։ Ժայռերի հետևից առաջ է գալիս Զավենը՝ հիացմունքով ծովը դիտելով։ Հանկարծ նկատելով Հեղինեին հանում է գլխարկը և շտապ մոտենում։

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Զ Ա Վ Ե Ն.—Ներեցեք, խնդրեմ, ուզում ե՞ք գնալ։
Հ Ե Ղ Ի Ն Ե.—Ուզում եմ գնալ։
Զ Ա Վ Ե Ն.—(Ոգևորված հորիզոնն է ցույց տալիս)։

Երեկոն սիրո թագին է դարձել,
Օրս զոհեցի արև արքային.
Կուզեի թևերս մի նավակ վարձել,
Լողալ ու խորհել կյանքը մարդկային,
Աղոթքն ու նվովքն այդ հեթանոսի,
Դարեր չաուծվող հարցերը նրա,
Մինչ որ լուսնկան սրտիս հետ խոսի,
Հուշերս ցանև ջրերի վրա...
Ուշ ապ դուրս եկա,
Ապատ նավ չկա։

Հ Ե Ղ Ի Ն Ե.—Թե չունեք ոչինչ
Ուղեկցելու ինձ... (Ձեռքով հրավիրում է)։

Զ Ա Վ Ե Ն.—(Օգնում է Հեղինեին նստելու)։

Ուրախ եմ անչափ. ո՞վ եք դուք, տիկին.
Եկվո՞ր, տեղացի՞...

Հ Ե Ղ Ի Ն Ե.—(Անհոգ)։

Լոկ մենակ մի կին...

Ն Ա Վ Ա Վ Ա Ր.—(Որ դժկամ հետևում էր Զավենին, նավակը հրում է ջուրը, Հեղինեին)։

Խոսքդ է խելացի...

Զ Ա Վ Ե Ն.—(Լսելով)

Լոկ մենակ մի կի՞ն,
Ո՛չ ա՞զգ, ո՛չ անո՞ւն...

Հ Ե Ղ Ի Ն Ե.—Միշտ միևնույնը... երբ միտք եմ անում,
Մնում է խղճալ, ակամա ներել

Հզոր ձեր սեռին՝
Սրտի տեղ մարմին,
Մարդու տեղ անուն
Սիրում է սիրել...

ԶԱՎԵՆ.—Դուցե իրավունք ունեք դատելու,
Ո՞վ չունի սխալ իր կարճ կյանքի մեջ։
Սակայն զուր է միշտ ջանքն ատելու,
Երբ որ սիրելու կարոտն է միշտ մեծ...

ՀԵՂԻՆԵ.—(Հեզնորեն):
Կարոտյալների բանակի՞ց եք դուք...

ԶԱՎԵՆ.—Պատդամով հատուկ
Որպես մարգարե
Իր ուղին բռնած համառ ուխտավոր,
Նոր հորիզոնի իմ սիրտը կհարե
Եվ տեղ հասնելու հուսով բախտավոր։
Նոր երգի, խոսքի ճշմարիտ սիրուն
Կարոտ ու պապակ,
Սուտը ճնշելու ունի մեծ փափագ։

ՆԱՎԱՎԱՐ.—Փափա՞գ ես ասում, չէ՞որ առանց ճար
Վաղուցվա վերքը հոժար չի բուժվի,
Իսկ մարդարեն էլ լինի նա հանճար,
Երբ խոսքն է առատ, գործը կտուժի
Ու այսպես տնանկ
Դեռ շատ կմնանք...
(Նստում է և շարժում թիերը):

ԶԱՎԵՆ.—(Արհամարհանքով)
Թիերիդ պես վարժ լեզուդ էլ վարպետ
Շարժել ես սովոր... (Հեղինեին):
Խոսենք, զրուցենք. սիրուն կնոջ մոտ
Քանդվում են լեզվիս կապերը բոլոր,
Հոգիս պարուրում շփոթ մի անճառ
Ու ծաղկում սրտիս ծաղիկները վառ,
Լույս կաթում վրաս։

ՆԱՎԱՎԱՐ.—(Մեղմ):
Է՛հ, չկա վնաս,
Մինչ գտնվում ես ջրերի վրա թիակներիս մոտ... (Գրնում են, արևը կորչում է ջրերի տակ, վազում է թեթև քամի և խորշոմում ծովի երեսը):

(Գիշեր է. աղոտ փայլում է լուսնկան և իր լույսով ակոսել է ծովի մութ դեմքը. նավակը դանդաղ մոտենում է եզերքին):

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՋԱՎԵՆ.—(Գոհ ցատկում է ափ):
Այ քեզ զբոսանք. (Հեղինեին)
Զզջում, ափսոսանք
Չնեսեց նա ձեզ՝
Տրամեցիք այդպես։
ՆԱՎԱՎԱՐ.—(Նավակը հեռելով դեպի ափ):
Միայն անցածին ափսոսում է մարդ.
Վասնզի ներկան թվում է անդարդ։
ՋԱՎԵՆ.—(Օգնում է Հեղինեին նավակից իջնելու):
Ասում են մարդիկ, որ առանց նեցուկ
Դժվար է ապրել այս կյանքում անձուկ։
ՆԱՎԱՎԱՐ.—*Նայած թե ինչ մարդ։*
ՋԱՎԵՆ.—(Հենվելով Հեղինեին):
Ձեզ տալ հրաժե՞շտ... թե՞...
ՆԱՎԱՎԱՐ.—(Վճռական):
Այդ անհրաժեշտ է...
ՀԵՂԻՆԵ.—(Փարաթվում է շղարշով):
Ձեզ դիշեր բարի։ (Վարձատրում է ծերուկին և անհայտանում):
ՋԱՎԵՆ.—(Նրա ետևից):
Ձեզ էլ հանգիստ քուն (Ծերուկին, ճայնեպ)
Գիտե՞ս ով է նա։ Խնդրում եմ ասա։
Սիրում եմ հարգել ես շիտակ մարդուն։
Թերևս հույս կա՞, թե ե՞ս ուշ հասա...
Սակայն այս դիշեր կմնամ արթուն,
Ծաղրելու ահը վայել սարկին,
Հանելուկ չէ՞ այս. լոկ մենակ մի կին (Դժվարությամբ խառնում է քսակը և կարկառում ծերուկին):
ՆԱՎԱՎԱՐ.—*Ներեցեք, պարոն, ինձ վարձող կինը*
Իմ աշխատանքի վճարեց դինը։
ՋԱՎԵՆ.—(Նենգորեն):
Այս էլ իմ կողմից...
ՆԱՎԱՎԱՐ.—*Ծեծկված եմ հողմից։*

ՋԱՎԵՆ.—(Զլսելով)։

Նա միշտ ձեր նավով շրջո՞ւմ է ծովում։

ՆԱՎԱՎԱՐ.—(Նույնպես)։

Ու կռվել, կոփվել կյանքի շեկ բովում

ՋԱՎԵՆ.—(Նույնպես)։

Մենա՞կ է գալիս, թե՞ ունի ընկեր
Ծանոթ կամ եղբայր, դուցե ամուսի՞ն...

ՆԱՎԱՎԱՐ.—(Անուշադիր)։

Միայն լեշեր են ագռավներին կեր,
Արժե և խորհել քիչ դրա մասին։ (Թիերն առած գնում է)։

ՋԱՎԵՆ.—*«Լոկ մենակ մի կի՞ն»*
Առեղծվածային և տարօրինակ,
Մե՛ռթ·լուռ խռովիչ ու մե՛ռթ անմեկին... (Ծիծաղում է)։
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ծերն է խորամանկ
Երկուսը նրա,
Որը, հիրավի, չի սիրում հանգաք,
Երբ կինը շրջում ջրերի վրա...

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Քարափից իրար հետևից վազում են աղջիկները)

ԱՌԱՋԻՆ

ԱՂՋԻԿ.—Ինչպես վախեցա (Անզգույշ դիպչում է Զավենին)։

Ներեցեք խնդրեմ։

ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՋԻԿ.—Ես էլ դիշերով չեմ իջնի եզերք։

ԵՐՐՈՐԴ

ԱՂՋԻԿ.—(Դիպչելով Զավենին)։

Ահ, ներողություն... կացեք... միասին...

ՉՈՐՐՈՐԴ

ԱՂՋԻԿ.—(Զավենին նկատելով)

Ինչո՞ւ եք ցցվել մեր ճամփի վրա,
Գեթ տուն հասնեինք (Զննում է Զավենին),
Քնա՞ծ եք, պարոն. որպիսի՞ սարսափ...

ՋԱՎԵՆ.—(Կտրելով աղջկա ճանապարհը)։

Ի՞նչ է պատահել... (Ուզում է բռնել)։

ՉՈՐՐՈՐԴ

ԱՂՋԻԿ.—(Խուսափելով)

Այնտեղ ժայռերին...
Ճերմակ շղարշով...
Չեմ կարող ասել (Քիչ հանդիսա),
Երգում է մի կին, դուցե թե տեսիլ...

ՋԱՎԵՆ.—*Ճերմակ շղարշո՞վ... ու երգը նրա՞...*

ՋՈՐՐՈՐԴ

ԱՂՋԻԿ.—*Ժայռի գագաթին, անդունդի վրա...* (Փախչում է):

ՋԱՎԵՆ.—(Դեպի ժայռերը գնալով)

Իսկ ինձ ասում էր, թե լալ ու երգել
Արատ են երկու
Կյանքի մեջ անդեն, անիմաստ հոգու... (Գնում է)

Գ. ԱՐԱՐ

(Նույն տեսարանը: Արևը դեռ չի ծագել: Մշուշի մեջ կորել են ափերն ու ջրերը: Նավավարը շտապով գալիս է թիերը ուսին, լվացվում, աղոթում և դժվար հոդարկելով իր ճոգեկան նուզումը, նստում է քարի վրա և սաստիկ ծխում:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՆԱՎԱՎԱՐ.—*Խենթացել եմ,*
Թե՞ դև է փռվել խեղճ սրտիս վրա,
Ջնջում է կյանքիս տարիները շատ,
Որ օրը աչքիս երազ երևա:
Որ ես ցնորվեմ... (Լռում է մի պահ)
Թե՞ հուր է ընկել իմ պաղ սրտի մեջ,
Վառում է ինչ-որ կար այնտեղ թաքուն,
Թե՞ կյանքն անիրավ, հեքիաթ անամեջ,
Հավիրժ անպատիժ պիտ ծաղրև մարդուն...
Թե՞... (Մեղմ) *դեռ չվառնես անսուտ մի կորով,*
Զապրած հեշտանք մի...
Թե՞ մի ջերմություն ապրողին հատուկ
Այնքան հմայիչ ամեն հատակի,
Որ գերում հայանի, շղթայում ծածուկ՝
Սիրտս կը համակի:
Խենթացել եմ ես... (Շրջում է մոլոր ու նորից նըստում)
Ինչ լավ է այսպես:

Ինչ-որ ընկել է իմ ուսերից վար,
Ինչ-որ հրում է՝ թռչեմ թևավոր
Ու ոչինչ դժվար,
Ոչինչ ահավոր

(Մոտենում ուղղում է նավակը, հարմարեցնում և լաթով սրբում նստարանները ու նստակը)

Թե սիրո համար օրենքներ չկան,
Սերն ամեն դեպքում հզոր է կամքից։
Այսպես խանդակաթ ու այսպես անբիծ
Գուցե սիրեի ես իմ աղջկան՝
Չգիտեմ ոչինչ։
Սրրիկ է լափել մտքերս բոլոր
Եվ բախտավոր եմ և շշմած մոլոր։
Մերթ խանդն է մաշում գործած մեղքի պես
Խենթացել եմ ես... (Նստում է նորից և գլուխն ափերի մեջ առած մնում է այդպես)։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Գալիս է Հեղինեն վերարկուն հագին ու գլխաբաց)

Հ Ե Ղ Ի Ն Ե.—(Գոռ)
Տեսնո՞ւմ ես, եկա ծագեցի ափում
Արևից էլ վառ (Մերուկը ցնցվում է և ոտքի կանգնում. Հեղինեն թփերի վրայի ցողը նկատելով)։
Իսկ գիշերը սև արցունք է թափել
Իր փառքին, ավա՜ղ։

Ն Ա Վ Ա Վ Ա Ր.—(Ողջունելով)։
Ասրես... աղջիկս... ատիր եղկելի
Մուլությունը միշտ,
Երկար օրվա հոգսն է լի ու լի,
Վաստակը անվիշտ։

Հ Ե Ղ Ի Ն Ե.—(Ժպտալով դիտում է ծերին)
Չգիտեմ ինչու՝ լսում եմ ես քեզ։

Ն Ա Վ Ա Վ Ա Ր.—(Շփոթվում է)
Նույնը հայտնելու միտքն ունեի ես։

Հ Ե Ղ Ի Ն Ե.—*Այսպես աչալուրջ դու ինձ կհոգաս,*
Ջես ուզում փոշի ինձ վրա (Միծաղում է)

Ամեն օր թարմ ձուկ, կբոսանք ծովում...

ՆԱՎԱՎԱՐ.—(Սրտնեղ):

Դե՜հ, թող... շուտ արա

Միայն ծառային տերն է գովում

Իսկ ես... (Նկատելով Հեղինեի ձեռքի տետրակը)

Ի՞նչ է այդ։

ՀԵՂԻՆԵ.—*Տետրակ ու մատիտ։*

ՆԱՎԱՎԱՐ.—(Զարմացած):

Ի՞նչ ես անելու։

ՀԵՂԻՆԵ.—*Ծով նկարելու։*

ՆԱՎԱՎԱՐ.—(Զայրացած)

Թո՜ղ, ասուված սիրես. «Ծով նկարելու»

Չգիտես հարգել ոչ մի վեհություն,

Խոնարհվել հլու

Մեծության առաջ։

Փայտի կտորը թղթի հետ առած

Դու հանդգնում ես ծո՞վ նկարելու։ (Հեղինեն ծիծաղում է. ձերը փնթփնթալով կապում է թիերը և արևի ծագումը նկատելով)

Կուզեի տեսնել ծագումն արևի։ (Հայարտ ցույց է տալիս)

Գուցե ծովի պես նա էլ նկարիդ լավ նյութ կերևի։

ՀԵՂԻՆԵ.—(Վազելով առաջ)

Օ՜հ, ի՜նչ պերճություն. (Երկնակամարը շառագունում է և դուրս է սահում արևը)

Ի՜նչ գեղեցկություն...

Օ՜հ, ի՜նչ վեհություն... (Մերունին զոհ մերթ արևին է նայում, մերթ Հեղինեին)

Որպիսի՜ շքեղ տեսարան, պատկեր... (Բռնում է ծերունու թևից ու լուռ դիտում)

Արև պաշտեինք... առավոտ կանուխ

Լուսեղեն գնդի շողերի առաջ

Աղոթք սրտաբուխ,

Ցնծություն, հառաչ,

Երգ, սաղմոս, մորմոք

Հղեինք նրան...

Չերկմտեր ոչ ոք։

Նրա գոյության

Մաշող կասկածոտ.

Ու ամեն առտու

Ոսկի լույսը ծով,

Լույսին հուսատու

Ողջունենինք մենք։
Հոգնած դիշերի
Մթից սև ունենք
Լոկ լույսին դերի,
Մաշենք օրը ճնշող կարգերը։
Մենք ժիր բերկրալից
Հուսով պսակված,
Որ վաղը նորից
Կը ծագի ասված,
Կառաքն լույս հույս... (Լաչում է ձեռքերը կրծքին)։

ՆԱՎԱՎԱՐ.—Խոսքդ է իմաստուն
Ու անփորձ տարիդ,
Տեսնել միշտ ատածուն,
Բախտը ճշմարիտ։
Իսկ երբ ապրել ես մի կյանք անգորով,
Սպասել անհույս մենակ ու խռով,
Ո՛չ, ո՛չ, թող մնա ասված անքննին,
Անհասանելի,
Անտեսանելի...
Որ օրն էլ լինի և ինձ տանելի,
Նորից սպասեմ, հուսամ, որոնեմ։
Ես էլ (Հուսահատական շարժումով հրում է նավը և մրտ-
նելով մեջը, սպասում)։

ՀԵՂԻՆԵ.—(Կարեկից)
Որ դու էլ...

ՆԱՎԱՎԱՐ.—(Մռայլ)
Ողջ տեղ չթողիր... խառնում ես անհոգ
Մոխիրները պաղ...

ՀԵՂԻՆԵ.—(Զարմացած)
Մի՞թե ասածու...

ՆԱՎԱՎԱՐ.—(Անուշադիր)
Նստի՛ր...

ՀԵՂԻՆԵ.—(Հետաքրքիր)
Խառնում եմ անհոգ մոխիրները պա՞ղ...

ՆԱՎԱՎԱՐ.—(Տրտում)
Դեպի ա՞ջ, թե՞ ձախ։

ՀԵՂԻՆԵ.—(Նենգորեն)
Ուղիղ դեպի ծով։

ՆԱՎԱՎԱՐ.—(Զարմացած)
Կատա՞կ ես անում։

ՀԵՂԻՆԵ.—Օ՜հ, ամենևին։

ՆԱՎԱՎԱՐ.—(Մեղմ)

Զարմանալի է. երեք ամիս է
Ամին էի քերում,
Զարմանալի է...

ՀԵՂԻՆԵ.—Այդ ի՞նչ է արդյոք

ՆԱՎԱՎԱՐ.—(Ժպտալով)

Քո անվախության դրդապատճառը.

ՀԵՂԻՆԵ.—(Նստում է)

Աղոթքից հետո անվախ եմ լինում...

ՆԱՎԱՎԱՐ.—(Շարժում է թիերը)

Քեզ չեմ հասկանում.
Աղոթեցիր ո՞ւմ,
Ե՞րբ կամ որտե՞ղ։

ՀԵՂԻՆԵ.—Քիչ առաջ, այստեղ... (Նավավարը զարմացած նայում է նրան արագ թիավարելով)։

Գ. ԱՐԱՐ

Փոքրիկ անշուք կայարան։ Գալիս ու գնում են մարդիկ ծանրաբեռնված էշերով։ Պատի տակ, նստարանի վրա նստած են մի քանի քնիատ կանայք։ Հեռվից լսվում է ավլորների կանչ և շների հաչոց. ամպոտ առավոտ է։ Քամին թափում է ծառերից դեղնած տերևները։ Լսելի է ծովի շաչյունը։ Գալիս է նավավարը կոկ հագնված մի մաղ ու զամբյուղ ձեռին ու նստում է առանձին պատի տակ, գծին մոտիկ։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՆԱՎԱՎԱՐ.—(Թախծալի հայացքով երկար շուրջը դիտելուց հետո)

Դարունն էլ գնաց... (Ժպտում է պարզամիտ)
Գնաց, ի՞նչ կանես, ու էլ նա չի գա։
Մրրկից հոգուս մորմոքը քնած,
Ինձ հանգիստ չկա։
Ո՜չ գետնի վրա, ո՜չ էլ... (Կասես մեկին է պատմում)
Չէր ուզում գնալ. չի սիրում մարդկանց,
Ուզում է ապրել ծովի եզերքին,
Աղքատ ու անգանձ.
Իր երգը խառնել ալիքի երգին...

Պատվիրեց հիշեմ, երբ արփին ծագի,
Երբ վերջալույսին խաղաղ մանի մայր.
Իսկ երբ հողմերից ծովը մրրկի,
Ես ցանցը փռեմ իր բախտի համար... (Շրջում է և մոտենալով գծին, երկար դիտում, շոշափում)
Մի տես, թե ինչպես ձգվել է հպարտ
Երկրի երեսին,
Որ հեշտ ապահով շրջե ամեն մարդ
Հոգսերով իր սին։
Քանի զույգ ձեռքեր այս ճամփու շենքի
Հոգնան, կոշտացան։
Հույսերն էլ մարան նրանց սև դեմքին։
Ու չկշտացան... (Նստում է տեղը)
Առաց ապրեի քեզ հետ, հյուղիդ մեջ (Հուզվում է սաստիկ)
Քեզ ձուկ խաշեի, սիրեի հոր պես... (Ժպտում է)
Եվ այդ միշտ է այդպես,
Իր բաղձանքները հանդուգն, անվերջ։
(Վանանցից մեկը բարձր)—*Պապ, դիտե՞ս արդյոք,,*
Ժամը քանիսն է։

ՆԱՎԱՎԱՐ.—(Դժգոհ)
Մի նոր բան չկա, ողջը դեռ հին է։

ԿԻՆԸ.—(Հորանջելով բեմվում է պատին)
Կուզեի դիտնալ, ե՞րբ ենք մեկնելու.

ՆԱՎԱՎԱՐ.—(Սրտնեղ)
Մեկնելուց առաջ սպասիր հլու՝
Կերթաս, չես մնա...

ՀՐԴ ԿԻՆ.—(Քնից զարթնելով)
Ո՞վ պիտի մնա... (Կանայք ծիծաղում են ու նորից լռում) Զանգի ձայն է լսվում։ Ներունին անհանգիստ վեր է թռչում տեղից, իրերը ձեռքին վազում դեպի գիծը, նայում աջ ու ձախ։ Գալիս է Հեղինեն նաճապարհորդական վերարկու և գլխարկ հագած, մի փոքրիկ պայուսակ ձեռքին։

ՀԵՂԻՆԵ.—(Ներունուն նկատելով)
Եկե՞լ ես արդեն։

ՆԱՎԱՎԱՐ.—(Ուրախ)
Եկել եմ, եկել...

ՀԵՂԻՆԵ.—(Իրերին նայելով)
Ո՞ւր ես գնալու...

ՆԱՎԱՎԱՐ.—(Անվստահ)

Քեզ համար է այդ... նվերս վերջին...

ՀԵՂԻՆԵ.—(Ձեռքը դնելով նրա ուսին)

Ես չեմ մոռանա քեզ։ (Ծերունին զգացված ու շփոթ)

Պարոն Ջավենը դեռ չի երևում։

ՆԱՎԱՎԱՐ.—(Երկյուղած)

Սխալվել եմ ես... վաղվա դնացքի

Տոմս առա նրան։

ՀԵՂԻՆԵ.—(Գոռ)

Մի՞թե... (Ծիծաղում է սրտանց)

Ուրախ եմ սատիկ։

ՆԱՎԱՎԱՐ.—(Հանգիստ)

Ինձ դուր չեն գալիս շատախոս մարդիկ,

Տանել չեմ կարող։

Իսկ դո՞ւ։

ՀԵՂԻՆԵ.—(Ծպտում է)

Սիրել կարող եմ լոկ բարի մարդու։

ՆԱՎԱՎԱՐ.—(Միամիտ)

Բարձր հասակով։

ՀԵՂԻՆԵ.—(Ծիծաղում է)

Հասակով, մտքով՝ միայն թե բարձր

Ինձնից վեր, կարող։

(Լսվում է մոտեցող գնացքի դղրդյունը և սուլոցը, ծերունին սաստիկ անհանգստանում է)

ՀԵՂԻՆԵ.—Հանդարտվիր, մոտ չէ։

ՆԱՎԱՎԱՐ.—Հեռու թե մոտիկ պիտի տանի քեզ...

ՀԵՂԻՆԵ.—(Սիրով)

Իմ բարի ծերուկ։

ՆԱՎԱՎԱՐ.—Երբ որ տեղ հասնես, զրիր իմանամ...

ՀԵՂԻՆԵ.—(Ցավակցորեն)

Կարդալ չգիտես։

ՆԱՎԱՎԱՐ.—Քեզ ի՞նչ... Կկարդամ (Գնացքը կանգ է առնում. Հեղինեն վազում է, ծերունն էլ հետևից։ Քիչ հետո երևում է վագոնի լուսամուտից Հեղինեն, որ նոնում է իր փոքրիկ բաշկինակը)։

ՀԵՂԻՆԵ.—(Գնալով) Տե՛ս, չմոռանաս։

ՆԱՎԱՎԱՐ.—(Վազելով) Դու բարով գնաս։ (Գնացքը չքանում է, ծերունին երկար մնում է գլխիկոր և ապա թևով դեմքը սրբելով).

Գնաց... էլ չի գա...

ՆԱՄԱԿՆԵՐ

1. ԱՐՇԱԿԻՆ[1]

24 մարտի, 1895 թ.
Ալեքսանդրապոլ

Հարգելի Արշակ.

Շնորհավորում եմ բանանամյա տարեդարձդ՝ ցանկանալով քեզ երկար և երջանիկ կյանք, տոկունություն կյանքի ձախորդ խոչընդոտների դեմ մաքառելու և իրագործումն իղձերիդ ու միտումներիդ...

Առաջ գնա, իմ բարեկամ,
Կյանքի ազնիվ ուղիով՝
Ուր թե շուտ կամ անագան
Կը վարես սուրբ կյանք... վեհ սիրով...

Գնա առաջ... մի երկնչիր,
Թող ծաղրեն քեզ տխմարներ՝
Լոկ այդ ուղիով կը վայելես
Երջանկության սեգ ժամեր...

Շ. Փոփոլենյանց[2]

2. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ[1]

23 հունվարի, 1907 թ.
Ռոստով-Դոն

Հարգելի պ. Հովհ. Մալխասյան.

Ուրախ եմ թերթիդ հաջողվելուն։ Ցանկանում եմ ուժ և տոկունություն այդ վսեմ ասպարեզում՝ որը հանդիսանալու է մի բուռն կեղծված և հարստահարված թշվառների <համար> որպես մի մտավոր փարոս, որպես գաղափարական նեցուկ։

Որպես բարեկամ, թույլ եմ տալիս ինձ Քեզ խորհուրդ տալու, որ

թերթը այնպիսի հիմքերի վրա դնեք, որ չլինի «ոտքերը—կապած, ձեռքերը—շղթա...»։ Կյանքի և մտքի այժմյան տեմպերամենտի պահանջները լա՞յն են... ազա՞տ, ըմբոստ... ուստի քիչ թե շատ, այսպես թե այնպես նորածին թերթը պիտի ձևվի նրանց չափերին համեմատ, հարմար։

Խուսափեցեք նեղ, սահմանափակ տենչերից, շատ լողունգների հետ, որոնք Ձեր սրտին մոտ են, դրեք և այս «Пусть будут все живущие существа свободны от страданий...»:

Վերջապես քաջ եղեք, հառաջ տարեք առանց վհատվելու խոչընդոտներից։

Հարգանոք՝
Շուշանիկ Կուրդինյան

3. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

11 Նոյեմբերի, 1907 թ.
Ռոստով-Դոն

Հարգելի կոլեգա պ. Ավետիք.

Ուղարկում եմ երկու կատր գրվածք և գիրքս. առ այժմ բավականացեք դրանցով։ Սաստիկ զբաղված եմ, հետո կուղարկեմ այլ տեսակներից՝ իմ մեջ կատարվող նոր հոսանքից...

Գիրքս՝ չնայած այն, ինչ-որ կուզեի։ «Նոր կյանքի»[2] *փակվելու պատճառով ինձ օգնողները կապույտ քեռիների մոտ հյուր գնացին, ամբողջ գործը մնաց անտեր, անտիրական, ռուս գրաշարների ձեռքում։ Ինչպես գիտեք, ես էլ զբաղված եմ պաշտոնով ամբողջ օրը... Մոտ հարյուր օրինակ էլ հոգուն հանգուցելոց եղավ դեռ չտատցած։ Մի խոսքով սոցիալիզացիայի հանգիպեց։*

Բարևեցեք իմ կողմից պ. Հովհ. Թումանյանին։ Ես նրա հետ ծանոթացել եմ Աղեքսանդրապոլում իմ առաջին ցենզորի (Հովհ. Կոստանյան) միջոցով և մինչև այժմ հիշում եմ։

Շատ բան ունեմ գրելու, մնա մյուս անգամ։ Ահագին գործ կա առաջիս։ «Բանվորուհի» երկիս համար նամակներ ստացա. ինչպես շուտ է զգացվում մոտիկ ցավը...

Ընդունեցեք բարևներս՝
Շ. Կուրդինյան

Հ. Գ. Իզուր ծրարիս վրայի հասցեով չեն ուղարկում թերթը, այդպես շատ ուշ եմ ստանում։ Հայտարարությունը փոխելով դնել տվեք և գրքիս վրայի հասցեն։

Նույն։

4. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ[1]

22 ապրիլի, 1908 թ.
Ն. Նախիջևան

Հարգելի պարոն Գարեգին.

Շնորհակալությամբ ստացա Ձեր թղթդ՝ «Գեղարվեստը»[2], ողջունում եմ համակրանքի և խրախուսանքի արժանի աշխատանքդ՝ ցանկանալով սրտանց կատարյալ հաջողություն։

Ուղարկում եմ երկու կարճ գրվածք ևս, մոտ ժամանակում կուղարկեմ արձակներ։

Բարևներով՝
Շ. Կուրդինյան

5. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻՆ

5 փետրվարի, <19>09 թ.
Թոստով-Դոն

Հարգելի պարոն Աղայան.

Նկարս և կենսագրական համառոտ տեղեկություններ մի քանի օրից կուղարկեմ։

Լավ կլիներ, նախքան գրքի հրատարակվելը[1], բարի լինեիք, ինձ մի երկտողով հայտնել իմ գրվածքներից ընտրված նյութերի մասին։

Ջերմ հարգանքներով՝
Շ. Կուրդինյան

6. ԱՐՇԱԿԻՆ

20 հուլիսի, 1910 թ.
Անապա

Սիրելի Արշակ.

Բոլորս էլ լավ ենք։ Նամակդ ստացա, կարդացի և շատ մտածեցի. մտածելու աղատ իրավունք ունի և կինը, ուստի ես էլ ինձ մեղապարտ չեմ զգում, երբ մտածում եմ և լռում այդ մասին հաշիվ տալու նրան, որն որ առանց այդ էլ լուսավորչական եկեղեցու օրենքով ահա 12 տարի է (ես տարի կասեմ, դու դար հասկացիր) խլել է ձեռքիցս ամեն մի հաշիվ։ Եթե ձեռքս իրավունք տային աշխարհիս երեսին գտնվող բոլոր ամուսիններին մինչ մահ մի ոտքի վրա կանգնեցնել կտայի, լեզուներն էլ քթերի ծայրին կպցրած։ Հիմա դիտեմ կուրախանաս, որովհետև քթիդ

14—358

ծայրը վեր չէ. ուրախացիր։ Ինչո՞ւ չես գրում, թե ինչպես ես ապրում. մեզ թեյի հյուր էին եկել, վաղը խորոված ենք անելու։ Արշամիկը[1] նայում է նրանց, մոտենում և քեզ որոնում։ Այս շաբթիս ըմբոստը այդտեղ կլինի. առողջություն, սրամտություն կա, սակայն քո բացակայությունը ճնշում է կարծես, որը ենք մնացել։ Առավոտից մինչև գիշեր քո մասին ենք խոսում, քեզ հիշում։ Եթե գալդ հաստատ վճռել ես, եկ օգոստոսի 15-ին. կանուխ չեմ ուզում գալ. ինչպես բաժանվել այն վայրերից, որ այնքան անտանելի ցավերս բուժեց. իհարկե այս դու կվերագրես սառնության՝ հետաձգում է մեր տեսակցությունը. դուցե. հերքելու համար սիրտս չեմ կարող ուղարկել այդտեղ, որ քննես. հերդ էլ անիծած։

Քո Նուշանիկ

7. ԱՐՇԱԿԻՆ

31 հուլիսի, <1915>
Եվպատորիա

Սիրելի Արշակ.

Վերջացրի ցեխի վաննաներս ու խիստ գոհ տուն դարձա...

Հաղորդածդ նորությունները մեկը մյուսից ախորժելի էին... Բայց և այնպես բախտավոր մարդ ես. ի՞նչ է նշանակում կրծքի տակ կրել հավիտենական սիրով բաբախող մի սիրտ. դա մի բացառիկ երջանկության ակն է, որի պատճառով հաճախ ծարավ է մնում իմ տապից պապակած սիրտը...

Ստացա «Բանվորի» 15-րդ համարը. ես էլ կարծում էի, թե իմ կոչ նամակիս հետո «Բանվորի» ֆոնդի սնդուկը տրաքվելու էր նպաստներից։ Տեսնո՞ւմ ես, ինչ է նշանակում անարժեք խոսքը. դա ինձ խրատ կլինի, հետագայում, հեղինակավոր կոչերով հրապարակ չիջնել, գոնե դու, երդվյալ սոց. դեմոկրատ, կեղեքվողների դատի պաշտպան, մի քանի ռուբլիով պակասեցնելիր փոխառության գումարիդ քանակը և հարգելիր իմ այնքան սրտացավ դիմումը՝ նպաստել «Բանվորին»...

Էհ, բոլորդ էլ մարդ չեք... Ձեզ համար ի՞նչ է գաղափարը, դրականությունը, ճշմարիտը և գեղեցիկը...

Այս ձմռան համար գնվելիք պաշարը հարկավոր է եռապատկել. ձմեռը դժվար է լինելու ապրելը, եթե պատերազմը չվերջանա։

Ինձ մնում է ավելի դյուրին վաննաներ։ Ջեմ ուշանա, ձանձրալի է մենակ ապրելը, պարապել չեմ կարողանում...

Ամսի 3-ին տերհորը տան վարձ եմ տալու կես ամսվա 50 ռ<ուբլի>. ինձ մոտ ունեմ միայն ապրելու փող։ Իմ բաց նամակում գրածս անհաշիվ է. 100 ռ<ուբլի> չի բավականացնի. ուղարկիր 150

ռ<ուբլի> անպատճառ և մի ուշացնիր, որ կարողանամ նախօրոք տոմսակ վերցնել։

Երևի ծախսածս քեզ շատ է թվում. ինչ արած, վատ ապրել չեմ կարող, ամեն ինչ թանկ է ու սակավ։ Անցյալ օրը մի ավելի աժան տեղ գնացի կերակուր ուտելու, ճաշը 2 ռ. 40 կ., Արշամը չկերավ և դուրս եկավ սաստիկ բողոքելով իմ վարմունքի դեմ։ Ուր որ երաժշտություն կա, այնտեղ է դիմում ուտելու, և լսած եղանակների հետ ձեզ հիշում, աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ թափելով։ Լավ տանջվեց իմ վանանների պատճառով, ես չէի սպասում։

8. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

7 նոյեմբերի, 1910 թ.
Ն. Նախիջևան

Հարգելի պարոն Միքայելյան.

Ուղարկում եմ «Գարուն»[1] ալմանախի համար մի կտոր գրվածք՝ ուշացած անակնկալ հիվանդության պատճառով։

Հարգանքով՝
Շ. Կուրղինյան

9. ԱՂԱՍԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ

22 փետրվարի, 1915 թ.
Խարկով

Սիրելի Աղասի.

Վաղուց է, որ ոչինչ գրած չեմ, թեև գիտեի, թե ինչ հոգեկան ապրումների ենթարկված էիր դու։ Շավարշը[1] բավականին լուրջ հիվանդացավ։ Նախկին բժիշկը, որի մոտ նա բժշկվում էր, բանից դուրս է գալիս, որ ունքը շինելու փոխարեն աչքն է հանել՝ տխմարաբար բարդել ստամոքսի հիվանդությունը։ Այժմ գնում է Մելիք-Ադամյանի[2] մոտ, տեսնենք ինչ կլինի։

Ի՞նչ ես շինում այդտեղ. հեռացիր, փախիր, կխեղդվես։ Երևակայում եմ, որքան ջանք ու կորով է հարկավոր հաշտ, համերաշխ լինելու քեզ շրջապատող արարածների հետ։

Ամառը մտադիր ե՞ս մի տեղ գնալու, եթե ոչ՝ գրիր ինձ։ Շավարշը սաստիկ ցանկություն ունի գալ այստեղ, հատկապես քեզ հետ թափառելու, կազդուրվելու, մայիսի վերջին ուզում է գալ, որ գնանք Անի, Էջմիածին, այլուր ու ապա Թիֆլիս, Անապա ու տուն։

Ամեն օր խոսում, ծրագիր է կազմում, հիրավի, լավ բան կլիներ, եթե ազատ լինես, ավելորդ ծախսերդ ես կհոգամ։ Բացի քեզանից, մեկը չունեմ, որ հավատամ նրան, այսինքն, նա ինքն էլ միայն քեզ հետ լինել է ցանկանում. կմտածես ու կգրես ինձ։

Բարեւիր բոլորին էլ, ում որ պատահես, իսկ եթե մոռանաս բարեբախտաբար ու չբարեւես իմ կողմից՝ ավելի լավ արած կլինես։

Ո՞ւր գնացին կամ թե որտեղ են ընկերդ Մկոն ու կինը, մի ամբողջ ամիս դու ինձ լավ պատժեցիր. այ քեզ ինտելիգենտ կին, չէ հոգնես. միմիայն ռուսն է ուժեղ իր ուժեղ կանանցով, հոգով արի, հոգով ուժեղ, ավելի քան ուժեղ։ Հենց այդ պատճառով էլ հուսատու և խորացող է Ռուսաստանի ապագան, իսկ մեր կանայք, ի՞նչ են դրանք, մի մի զատարկ պարկ, անելություն, անպարունակ, լսեցի՞ր, երեւի, թե այդտեղից ովքեր ինձ հետ էին եկել. Աղասի, չէ թե կանգնած, այլ մի քանի տարով էլ ետ են գնացել. առաջ քայլելու ո՞չ ձիրք, ո՞չ ձգտում, ո՞չ ուժ, սա ի՞նչ այլանդակ պակասություն է ու մինչև ե՞րբ այդպես։

Դեհ ցգրություն, պատասխանիր.

Քո Նուշանիկ

10. ԱՂԱՍԻ ԾԱՀԻՆՅԱՆԻՆ

13 նոյեմբերի, 1913 թ.
Ն. Նախիջեւան

Սիրելի հոգերան.

Հույժ ուրախ եմ ազատվելուդ համար։ Լավ է որ վերջնականապես հրաժարվեցիր հրապարակային ահ ու դողից ու «անպետք» գտնվեցար հայրենիքիդ համար...

Գրում ես, որ սկսել ես կասկածանքով վերաբերվել դեպի բելետրիստիկան ընդհանրապես, այսինքն նրա գրական հասարակական դրդիչ ուժը, ծառայելու ընդունակ լինելուն և առհասարակ չես կարդում ո՞չ պրոզա, ո՞չ էլ քնարական երկ։

Համաձայն չեմ. բելետրիստիկան, ավելի լավ է ասել գեղեցիկ գրականությունն առհասարակ, եղել է և կմնա կարդացող հասարակության համար դրդիչ ուժ, խթան, իսկ այս ուժն ունենալու համար նա լինելու է կյանքին, ժամանակին, ձգտումներին, որոնումներին, ապրումներին մոտ ու մտերիմ, անաչառ թարգման, թէ չէ առանց գեղարվեստական, գեղեցիկ կարդացող գրականության մարդու ականջները կթառամեն, հավատա։

Ասում ես, որ Գեղամ Արմենն ինձ և Հ. Հակոբյանին բանաստեղծ անվանելուց հրաժարվեց։ Չգիտեմ թե ինչ կասի Հ. Հակոբյանը, ես չեմ

համարձակվում նրան պաշտպանելու, այդ կարող է ինքն անել, վասնզի այդ գործով նա վաղուց է որ հայտնի է հրապարակում։ Հիշո՞ւմ ես, «Մշակում» ինքնապաշտպանությամբ պարապող «Credo»-ին[1]. իսկ ես, որովհետև ինձ շատ եմ սիրում և երբեք չեմ պաշտպանում, իսկ ես կասեմ, որ ո՛չ բանաստեղծուհի եմ, ո՛չ էլ հրապարակախոս, ո՛չ տենդենցիոզ, ո՛չ մենդենցիոզ՝ այլ մի հասարակ, սովորական «просто приятная дама», ճիշտ չե՞մ ասում. պրծավ գնաց. թե ո՞ւր, ո՞ր ճամփով, չգիտեմ...

Սանիկիս նկարը ստացա. իհարկե, չճանաչեցի, մինչև որ նամակդ կարդացի, շնորհակալություն։

Այստեղ ձմեռն սկսվել է, երկու օր է ձյուն է գալիս։

Ջերմագին սեղմելով իմ ձեռքը, մնամ

Ռ. Շուշանիկ

11. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

17 մարտի, 1916 թ.
Խարկով

Հարգելի պ. Գ. Լևոնյան

Ափսոս, որ մոռացել էի. «Միտինգը» լույս է տեսել մի թերթում, «Ո՞ւմ ինչը» անտիպ է։

Վերջին ուղարկածներս էլ այժմ ինձ տաղտկալի են երևում։ Ուղարկում եմ նորերը։ Վարվեցեք ըստ ձեր հայեցողության։

Ինչպես կտեսնեք, կա և Բուրբահայ բարբառով։ Թե ինչո՞ւ. այնպես։ Այդ բարբառը խիստ ճկուն է և իրեն հատուկ բառերով ու հոլովներով նպաստավոր սիրուն հանգեր շարահյուսելու. միայն ա՛յս։

Գրել եք. «Բարևիր ինձ չճանաչող զավակներիդ»։

Զավակներս ձեզ ճանաչում են. մեծ հաճույքով թերթում «Գեղարվեստը» և զարմանում, որ ամիսը մի անգամ լույս չի տեսնում, հայ իրականությունը նրանց դեռ անծանոթ է...

Զավակներս ձեզ հարգում են, որպես եղակի մի մարդու, որ առաջինն ու վերջինն է գրեթե, ով հարգել է իրենց մոր աղքատիկ երգը, անշահ ցանկություններով նեցուկ դառնալ համեստ փորձի անվստահ քայլին։

Հիշո՞ւմ եք, դուցե շատ է անցել, օրերի ու տարիների մի երկար շարան։ Ես այժմ էլ տեսնում եմ ձեր ժպտուն դեմքը, լսում ձեր ձայնը. «Քաջ կացեք, շատ կարդացեք, գրեցեք և գրեցեք, ձեր մեջ ես տեսնում եմ բանաստեղծական կայծ...» և այլն, և այլն։

Եվ տարիներով դուրդուրած երազս իրականացրիք—երգս տպված էր «Տարազում»[1]։

Պատահում են դեմքեր, դեպքեր, որ չեն մոռացվում բնավ. հենց այդ պատճառով էլ երեխաներս գիտեն, թե ով է Գ. Լևոնյանը...

Ընդունեցեք Արշակ, Շավարշ, Արշականուշ[2] և Արշամիկ Կուրղինյանների ջերմագին ողջույնները։

Ձեր՝ Շ. Կուրղինյան

12. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

20 դեկտեմբերի, 1920 թ.
Վլադիկավկազ

Հարգելի Հովհաննես Թումանյան.

Երևի չեք հիշում, որ անձամբ հին ծանոթներ ենք մենք. ահա հիշել եմ տալիս ու «օգտագործում» անցած-գնացածը։

Ուղիղ երկու ամիս է, որ Խարկովից եկել ու գեմ եմ առել սարերին։ Հիվանդ եմ և կարոտ կլիմայական բժշկության։ Ինձ բժշկող պրոֆեսորի խորհրդով անհրաժեշտ է ձմեռս անցկացնել Թիֆլիսում, սակայն ոչ մի կերպ չեմ կարողանում տեղական վրացական հյուպատոսից թույլտվություն ստանալ։

Պահանջվում է իրենց ներքին գործոց նախարարի համաձայնությունը։

Այդ պատճառով էլ դիմում եմ Ձեզ, հատկապես խնդրելով, լինել բարի ու հանձն առնել այս նեղությունը, կարելին չափ շատպ (սարերն արդեն ձյունով են ծածկվել) անպայման աշխի առաջ ունենալով, որ հետս բերելու եմ իմ անտիպ գրվածքները, անհրաժեշտ գրքեր, որոնց ապահովությունը, վրացական տերիտորիայում, օրինական կերպով պիտի խոստացվի Ձեզ, որպես եղակի մեկին, որին պարտադիր եմ հավատալ։

Հետս լինելու են աղջիկս ու որդիս։

Ողջույն՝
Շ. Կուրղինյան

13. ՄԱՐԳՈ ԵՎ ԱԼԻՍ ԱԼԱՆՅԱՆՆԵՐԻՆ

6 նոյեմբերի, 1925 թ.
Խարկով

Մարգո[1] և Ալիս[2] չան.

Լինում է, չի լինում մի փոքրիկ ծիտիկ է լինում։ Այդ ծիտիկն ապրում է մի հին ու ծերացած ծառի վրա, իր փոքրիկ ընի մեջ։

Մի առավոտ աչքը բաց է անում ծիտիկը և սաստիկ զարմանում՝ արևը փայլում է երկնքում, աղբյուրը քչքչում է, ծաղիկները բացվել պարդարվել են, իսկ թռչունները երգում են ուրախ, ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ...

— Լա՜վ, լա՜վ,— ասում է փոքրիկ ծիտիկը,—դե՜հ, շատ մի զարմացեք, սպասեցեք բունս հավաքեմ, փետուրներս սարքեմ, կտուցս մաք-

բեմ, թռչեմ, թռչեմ մի սիրուն ծառի ճյուղին և ես էլ երգեմ, իմ ձայնն էլ հասնի արևին, աղբյուրին...

Ու փոքրիկ ծիտիկը տեղավորվում է մի կանաչ ծառի ճյուղի, հըպարտ նայում է դես ու դեն, վեր ու վար և սկսում է՝ ծի՛վ-ծի՛վ ծի՛վ-ծի՛վ, հե՛յ-հե՛յ...

Մի պառավ թռչուն բարկանում է հանկարծ,— Ձայնդ կտրիր, անպիտան, հեյ-հեյն ի՞նչ է, արի մեզ մոտ, մեզ նման երգիր, որ մարդիկ լսեն ու հավանեն...

— Հե՛յ-հե՛յ,— նորից երգում է ծիտիկը։

Մի սոխակ ասում է այն պառավ թռչունին.

— Թո՛ղ, մի՛ խանգարիր, թող երգե հե՛յ-հե՛յ։

Մի նախանձոտ, նիհար թռչուն գնում է շար կատվին կանչելու, որ գա ծիտիկին ուտի։

— Իմ ի՞նչ գործն է մինչև անտառ գնալը. քո էլ ի՞նչ գործն է ծիտիկի հե՛յ-հե՛յ կանչելը,— թաթով խփում է թռչունի գլխին և ուտում կըշտանում է...

Փոքրիկ ծիտիկը մեծանում, բուն է շինում, փոքրիկ ձվեր ածում և սիրուն ու փափլիկ ձագուկներ հանում...

Նստում են ձագուկները բունց ծառի վրա ու երգում... Մի օր հանկարծ իջնում է երկնքից մի չարսիրտ ուրուր ու տանում ուտում է մեծ ձագուկին։

Ծիտիկը լաց է լինում գիշեր ցերեկ, լաց են լինում ձագուկներն ու մեծանում...

Մի օր ծիտիկը նստած ծաղիկների մոտ մտածում է և հանկարծ վար է ընկնում ու ոտքը սաստիկ ցավում է։

Էլ չի երգում ծիտիկը։ Պառկած իր բնի մեջ նայում է անտառին. ծառերը խշխշում են, թռչունները երգում, պտուղները կարմրում։

Գալիս են չարսիրտ թռչունները, նայում են հիվանդ ծիտիկին ու հարցնում.— Ինչո՞ւ պառկել ես, վեր կաց աշխատիր։

— Հա՞... ոտքդ ցավո՞ւմ է, հա՞...

— Միայն մի՞ ոտքդ է ցավում...

— Բեր թևերդ կտրենք, ոտքդ կլավանա. բեր սիրտդ հանենք՝ դընենք ոտքիդ տակ, որ գնտնին հասնի, ման գաս...

Ծիտիկը մնաս բարով է ասում անտառին, արևին, աղբյուրներին ու թռչում, գնում է տաք երկիր...

Այդ երկրում ոչ ոք չի խանգարի ծիտիկին «հե՛յ-հե՛յ» երգելուն։

Մի օր ծիտիկի ոտքը կլավանա և կթռչի, ման կգա, մի լավ ծառ կըգտնի, նոր բուն կշինի ու երբ բունը վերջացնե՝ ձեզ կկանչի, որ տեսնեք իրան, ուրախանաք...

Մարգո և Ալիս ջան, Դյոմային էլ դուք պատմեցեք ծիտիկի մասին։

Ձեր տատիկ՝ Շ. Կուրղինյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շ. Կուրղինյանի արխիվը, որ պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, պարունակում է բանաստեղծուհու համարյա ողջ գրական ժառանգությունը։ 59 մեծածավալ և փոքրածավալ տետրերում ընդգրկված են նրա ամենավաղ շրջանի՝ անցյալ դարի 90-ական թթ. սկզբից մինչև կյանքի վերջին շրջանը՝ մեր դարի 20-ական թվականները գրած բանաստեղծությունները։

Սույն «Գրական ժառանգություն» գրքում ընդգրկված են Շ. Կուրղինյանի մինչ այժմ անտիպ բանաստեղծությունների, արձակ էջերի, պիեսների և նամակների մի մասը միայն։ Նրա արխիվում տակավին կան բազմաթիվ չտպագրված բանաստեղծություններ։ Թերևս սխալ կլիներ պնդել, թե ինչպես այս հատորում տպագրված, այնպես էլ չտպագրված բանաստեղծությունների հրապարակումով նոր բան կավելանար «Հանգցրեք ջահերը», «Ես տար բռ խաչը», «Բանվորները», «Հայ բանվորներին» և բազմաթիվ այլ փայլուն բանաստեղծությունների հեղինակի հռչակին, սակայն դրանք ճանաչողական արժեք են ներկայացնում այն առումով, որ հնարավորություն են ընձեռում ավելի ամբողջական ներկայացնելու Շ. Կուրղինյանի անցած ստեղծագործական ուղին։

Շ. Կուրղինյանի հարուստ բանաստեղծական ժառանգությունից նախահեղափոխական շրջանում տպագրվել է մի փոքրիկ ժողովածու միայն՝ «Արշալույսի զողանջները» (Ն. Նախիջևան, 1907)։ Բանաստեղծուհին թեև մի ժողովածու էլ հրատարակության է պատրաստել տասական թվականներին, սակայն վերջինս մերժվել է գրաքննության կողմից։ Երկրորդ ժողովածուն, արդեն բանաստեղծուհու մահից հետո, գրականագետ Ա. Ասատրյանի ընդարձակ առաջաբանով տպագրվել է 1939 թվականին (Շ. Կուրղինյան, «Հատընտիր», կազմող Անուշ Կուրղինյան, խմբագիր և առաջաբանի հեղինակ Ա. Ասատրյան, Հայպետհրատ, Երևան, 1939)։ Ժողովածուն ընդգրկում է «Արշալույսի զողանջներ» ժողովածուի և պարբերական մամուլում տպագրված մի շարք բանաստեղծություններ։ Երրորդ ժողովածուն, որն ամփոփում է բանաստեղծուհու տպագրված և մինչ այդ անտիպ բազմաթիվ բանաստեղծություններ, լույս տեսավ 1947 թ. «Երկերի ժողովածու» խորագրի տակ (կազմող և խմբագիր՝ Հ. Մկրտչյան, Հայպետհրատ, 1947)։ Բանաստեղծությունների մի ժողովածու էլ տպագրվել է 1971 թվականին՝ «Բանաստեղծություններ» վերնագրով (կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ջ. Միրզարեկյան, Երևան, 1971)։ Եվ վերջապես՝ Շ. Կուրղինյանի «Հատընտիրը» («Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1978)։

Այս հատորում ամփոփված բոլոր բանաստեղծությունները (բացառությամբ ծանոթագրություններում հատուկ նշվածների) տպագրվում են առաջին անգամ։

1. «Խավարի գրկում ծնված իմ հոգին» (էջ 12)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Շուշանիկ Կուրղինյանի ֆոնդում (այսուհետև՝ ԳԱԹ, ՇԿՖ), տետր № 1, էջ 5։

Սույն բանաստեղծությունը զետեղված է մի ընդհանուր տետրում, ուր կա 120 բանաստեղծություն՝ տպագրված և անտիպ։ Տետրի վրա գրված է՝ 1894—1908 թթ.։

Մյուս բանաստեղծությունների տակ հերթականորեն գրված են դրանց գրության թվականները, սակայն վերոհիշյալ և հաջորդ մի քանի բանաստեղծությունները, որոնց զետեղված են տետրի սկզբում, տարեթիվ չունեն։ Պետք է ենթադրել, որ դրանք գրվել են 1894—95 թթ. ընթացքում։

2. Անմուն գիշերից (էջ 12)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 1, էջ 7։

3. «Ես տեսա նուռն շատ օրեր անցած» (էջ 13)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 1, էջ 8։

4. Յարի աչեր (էջ 13)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 1, էջ 9։

5. «Զասեմ ափսոս, երբ ես մեռնեմ» (էջ 14)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 1, էջ 48։

6. Կալանավորներ (էջ 14)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 1, էջ 66։

7. Իմ երգը (էջ 15)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 8, էջ 5։

8. Անցած օրերը (էջ 16)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 8, էջ 19։

9. Գեղջկուհու բախտավորությունը (էջ 17)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 10, էջ 12։

10. Զմռան (էջ 18)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 10, էջ 13։

11. «...Եվ մենք քան դար...» (էջ 18)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 4, էջ 16։

Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ։ (Աւետարան ըստ Մատթեոսի ԺԱ 29։ Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ)։

12. «Հիվանդ օրերի թշվառ երգիչներ» (էջ 20)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 4, էջ 11։

13. «Լսո՞ւմ ես, ընկեր...» (էջ 21)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 24։

14. «Կյանքի գիշերում...» (էջ 22)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 28։

15. Պարիսպ մշեցու նամակը (էջ 22)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 31։

16. Ընկնվածը (էջ 23)

Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 49 և ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 8, էջ 27։

Տպագրվում է № 5 տետրի ինքնագրից։

17. «Դու դեռ ինո՞ծ ես...» (էջ 24)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 55։

18. Աշնան երգերից (էջ 24)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 72։

19. «Օդում ձգված...» (էջ 25)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 73։

20. «Գնա՛ մի վայրկյան...» (էջ 26)

Պահպանվել է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 5, էջ 74 և տետր № 8, էջ 5։

Տպագրվում է № 5 տետրի ինքնագրից։

21. Ընկերներին (էջ 27)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 8, էջ 24։

22. «Վաղ առավոտյան...» (էջ 27)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 6։

23. «Ինձ ի՞նչ...» (էջ 28)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 20։

24. Երկրի երգերից (էջ 28)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 29։

25. Նվեր աղջկան (էջ 29)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 31։

26. Բանվորի երգը (էջ 30)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 23։

27. Դիշերը (էջ 31)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10. էջ 32։

28. «Կուզեի տեսնել...» (էջ 32)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10. էջ 33։

29. «Լուսին...» (էջ 33)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10., էջ 38։

30. Հավատ, հույս և սեր (էջ 33)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 10, էջ 41։

31. Շատերից մեկին (էջ 34)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 29։

32. Եվ դող ես երբամ (էջ 34)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 37։

«Հուշ չէ թե մեռնեմ» (Երկերի ժողովածու, 1947, էջ 209) բանաստեղծության տարբերակն է։

33. Ոչ սմ... (էջ 36)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 56։

34. «Թող նոա...» (էջ 36)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 65։

Առաջին անգամ հրատարակվել է՝ «Սովետական գրականություն», 1966, № 8։ Տպագրվում է № 4 տետրի ինքնագրից։

35. Սիրում եմ... (էջ 37)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 85։

36. Ինչո՞ւ... (էջ 38)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 91։

«Հակապատկեր» (Երկերի ժողովածու, 1947, էջ 211) բանաստեղծության տարբերակն է։

37. Իմ կյանքն ու խաչը (էջ 39)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 97։

38. Վաղ առավոտյան... (էջ 41)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 97։

39. Խի՛ր (էջ 42)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 107։

40. Սիրեցեք միմյանց (էջ 43)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 111։

41. Պետք էր անկասկած (էջ 44)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 122։

42. Դև կամ հրեշտակ (էջ 46)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 139։

43. Ես ձեզ խղճում եմ (էջ 47)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 142։

44. Մախվածը (էջ 48)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 4, էջ 144։

45. Ես և դու (էջ 49)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 2։

46. Գարնան նովիկ (էջ 50)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 3։

47. Գոնի վրա (էջ 50)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 4։

48. Մեր ձայնը (էջ 51)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 11։

49. «Ներզել ուզեցի...» (էջ 52)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 12։

50. Նահատակները (էջ 53)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 13։

Առաջին անգամ հրատարակվել է՝ Շ. Կուրղինյան, Բանաստեղծություններ, 1971, էջ 84։

Տպագրվում է ինքնագրից։

51. Հայ կնոջ երգը (էջ 53)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 17։

52. Իմ մռմունջներից (էջ 54)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 36։

53. Բացվեց զարուն (էջ 55)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 7, էջ 40։

54. Ես և սատված (էջ 56)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 25, էջ 3։

Առաջին անգամ տպագրվել է «Գեղարվեստ», 1908, № 2։ Տպագրվում է «Գեղարվեստից»։

55. Դուք նաց մուրացեք (էջ 56)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 16։

56. Երկու դիակ (էջ 57)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 30։ Տպագրվում է կրճատումներով։

57. Էտապ (էջ 58)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 37։

58. Ցղրան (էջ 59)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 58։
Առաջին անգամ հրապարակվել է՝ «Սովետական գրականություն», 1966, № 8։
Տպագրվում է ինքնագրից։

59. Արծվին (էջ 60)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 61։

60. Վագն էլ կմուրաք (էջ 60)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 25, էջ 69։

61. Մոլորվածներին (էջ 61)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 4։

62. Բլբուլին (էջ 61)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 8։

63. Սովերը (էջ 62)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 40։

64. Թե կուզեք ապրել (էջ 62)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 57։
«Մահն է դերադանց» (Երկերի ժողովածու, 1947, էջ 390) բանաստեղծության տարբերակն է։

65. Կանգնեք կողք-կողքի (էջ 63)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 63։

66. Ինչո լուսաբացին (էջ 63)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 68։

67. «Որպես մի մորիկ...» (էջ 64)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 74։

68. Մորին (էջ 65)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 77։

69. «Սնաչյա...» (էջ 65)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, տետր № 26, էջ 82։

70. Սիրելիս...» (էջ 66)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 26, էջ 83։

71. Դեռնակուտին (էջ 66)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 27, էջ 49։

72. «Մենք՝ որպես...» (էջ 67)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 23։

73. Միայն այդ տարբեր նմանների հետ (էջ 67)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 27, էջ 28։

74. Գիշեր (էջ 68)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 27, էջ 38։

75. Կայտառ աշնան պես (էջ 69)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 12։

76. Զկնորսուհին (էջ 69)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 15։

77. Սովորական սապանագիր (էջ 70)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 17։

78. Մանին (էջ 70)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 26։

79. Ուղիս (էջ 70)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 33։

80. «Թե ցավերիս...» (էջ 71)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 42։

81. «Ձոնաց իմ դեմ...» (էջ 71)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 44։

82. Գիշեր (էջ 72)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 63։

83. Պատկեր (էջ 72)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 90։

84. «Երգով...» (էջ 74)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, տետր № 28, էջ 107։

85. Գիշեր (էջ 74)
Ինքնագիրը չի պահպանվել։ Առաջին անգամ տպագրվել է՝ «Ոստան», 1912, էջ 24։ Արտատպվում է «Ոստանից»։

86. «Բախտս ու ես...» (էջ 75)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 32, էջ 19։

87. «Ցավս...» (էջ 76)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 32, էջ 24։

88. Լուսացիր (էջ 76)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 32, էջ 82։

89. «Դե՛հ, արի՛...» (էջ 77)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 32, էջ 109։

90. Երգ (էջ 77)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 23։

91. Հավերժական զրույցներ (էջ 78)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 38։

92. Ազատություն (էջ 79)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 44—47։

93. Գարնանամուտ (էջ 83)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 75—76։

94. Պրոլետարիատին բոլոր երկրների (էջ 84)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 78—90։

95. Լուսացավ (էջ 87)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 34, էջ 134։

96. «Խաղաղություն...» (էջ 88)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 35, էջ 7։

97. «Առավոտ էր...» (էջ 89)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 35, էջ 42։

98. Բանվորուհու երգը (էջ 89)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 35, էջ 45։

99. Մայիսի մեկը (էջ 90)
Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՖ, տետր № 35, էջ 69—70։
Առաջին անդամ կրճատ (51—83 տողերը) տպագրվել է՝ Շ. Կուրղինյան, Բանաստեղծություններ, 1971, էջ 177—178։
Ամբողջությամբ տպագրվում է առաջին անդամ։

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

Շ. Կուրղինյանը, անցյալ դարի 90-ական թվականներից սկսած, բանաստեղծություններին զուգընթաց գրել է նաև արձակ էջեր, սկզբում մանկական պատմվածքներ,

որոնցից մի քանիսը 900-ական թվականների սկզբին տպագրվել են «Աղբյուր» մանկական հանդեսում։

Բանաստեղծուհու արխիվում պահվում են նրա անտիպ արձակի ինքնագրերը, որոնցից առավել հաջողված նմուշներն են՝ «Շղթաները», «Անհաջող ենթադրություն», «Մարուսյան», «Տատ Արինան» և այլն, որոնց մեջ պատկերված են բանաստեղծուհու միջավայրը, նրա անձնական ապրումներն ու հույզերը։ «Տատ Արինան», որը գրել է 1910-ական թվականներին, կրում է Մ. Գորկու անմիջական ազդեցությունը։ Սակայն արձակի ասպարեզում Կուրղինյանը չի կարողացել զբաղվել իրեն այնպես, ինչպես չափածոյի ասպարեզում։ Այնուամենայնիվ նրա անտիպ արձակը առավել հաջողված նմուշները, որոնք առաջին անգամ տպագրվում են սույն հատորում, կարող են հետաքրքրել ընթերցողներին և գաղափար տալ բանաստեղծուհու արձակ ստեղծագործության վերաբերյալ ընդհանրապես։

Բանաստեղծուհու արխիվում պահվում է արձակի ութ տետր։

1. Թիրեռն ու Եզը (էջ 93)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բաժին II, տետր № 1, էջ 18։

Տետրի ընդհանուր խորագիրն է՝ «Զրույցներ», որ պետեղված է 37 զրույց՝ գրված 1898—1916 թվականների ընթացքում։

2. Փուշն ու նամփոքոը (էջ 93)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 19։

3. Գորտը (էջ 93)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 20։

4. Մայրենը (էջ 94)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 21—22։

5. Վարդերն ու պարտիզպանը (էջ 95)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 23։

6. Հենդուկը (էջ 96)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 29։

7. Սառն ու բամին (էջ 97)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 2, էջ 49։

8. Մանին (էջ 98)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 56։

9. Անհաջող ենթադրություն (էջ 99)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 2։

10. Հանդիպում (էջ 103)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 51։

11. Փողոցում (էջ 105)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, տետր № 1, էջ 63։

12. Դարեանամուտ (էջ 106)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 1, էջ 66։

13. Իմ հայրենիք (էջ 108)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 1, էջ 69։

14. Ուղիղ ուղին (էջ 109)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 1, էջ 99։

15. Շղթաները (էջ 112)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 1, էջ 132։

1. Կիսավերնահարկ։

2. Խոսքը Մ. Նալբանդյանի մասին է։

16. Կովից ետո (էջ 115)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 32, էջ 9։

17. Տատ Արքնան (էջ 117)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 2, էջ 1։

18. Ինքնակենսագրություն (էջ 130)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 37։

1. Հնչակյան կուսակցություն—Հայկական մանրբուրժուական կուսակցություն։ Ստեղծվել է 1887 թ.։

2. Հայաստան—Այստեղ բանաստեղծուհին նկատի ունի Արևմտյան Հայաստանը։

3. «Նոր կյանք»—Տե՛ս Ավետիք Իսահակյանին գրած նամակի (3) ծանոթագրությունը։

19. Ալ. Ռաբենին (էջ 133)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 31։

Ալ. Ռաբենի (Ծատուրյան)—Ծնվել է 1881 թ., Շուշիում։ Սովորել է Շուշիի ռեալական դպրոցում։ Դպրոցական ընկերների հետ հիմնադրել և խմբագրել է «Կոկոն» ձեռագիր թերթը։ Հակացարական ցույց կազմակերպելու համար հեռացվել է դպրոցից։ Հետագայում ծավալել է գրական-հրապարակախոսական գործունեություն, հանդես եկել հոդվածներով։ 1912 թվականից կոմունիստական կուսակցության անդամ է։ Սպանվել է 1920 թ. Շուշիում։

20. Առույրներ

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. II, տետր № 33։

Տպագրվում է առաջին անգամ։

Սույն տետրում, որի ընդհանուր խորագիրն է՝ «Ամեն օրից» կան հա մի շարք առույթներ։ Տպագրվում է դրանց մի մասը միայն։

ՊԻԵՍՆԵՐ

Շ. Կուրղինյանի արխիվում կան մի շարք պիեսների ձեռագրեր՝ գրված 1907—1920 թվականներին։ Դրանք են՝ «Մարոս» («Այրված սրտեր»), 1909 թ. Դոնի Ռոստով,

«Կարմիր խաչ» («Գարունն է գալիս»), 1909 թ. Դոնի Ռոստով, «Ջրաղացպան», 1913 թ., Ն. Նախիջևան, «Մենակ կինը», 1914 թ., Խարկով, «Ոսկե ձկնիկ», 1913 թ., Ն. Նախիջևան, «Մի էջ կյանքից», 1917 թ., Խարկով, «Հարսնաններ», 1920 թ., Խարկով։

Բանաստեղծ և դրամատուրգ Կուրղինյանի միջև, անշուշտ, մեծ տարբերություն կա։ Նրա՝ գեղարվեստական տեսակետից հարուստ, լեզվական ճոխ դարձվածքներով, գեղեցիկ պատկերներով, հուզականությամբ լի մարտական, ողնաշար բանաստեղծությունների համեմատությամբ այդ պիեսները թույլ են։ Սակայն դրանք նախասովետական շրջանի հայ պրոլետարական դրականության պատմության մեջ դրական-պատմական տեսակետից կարևոր տեղ կարող են գրավել որպես ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական հարաբերությունները մեկնաբանող գործեր։

Շ. Կուրղինյանի պիեսները թեև գեղարվեստական տեսակետից կատարյալ չեն, սակայն հեղինակը ձգտել է դրանցում արտահայտել հեղափոխական իր գաղափարները, արտացոլել ցարական Ռուսաստանի տնտեսական մղձավանջային դրությունը, աշխատավորական լայն զանգվածների տառապանքը, արտահայտել պրոլետարիատի անդուլ պայքարը տիրող կարգերի դեմ։

Պատկերելով կապիտալի աշխարհում մարդու տառապանքն ու թշվառությունը, Կուրղինյանը եզրակացնում է, որ այդ հասարակարգում երջանկություն դտնելն անհնարին է։ «Մարոս» պիեսում հեղինակը գրում է. «Ժամանակակից աղջիկը, կինը ապրում է տուժելով, սիրում է տուժելով, ատում է տուժելով—այսպես է կյանքը, պայմանները»։ Նույն պիեսում հերոսներից մեկն ասում է. «Անարդարությունն ու բռնությունը ճնշում է դրկվածներին, հարկավոր է փոխել օրենքները»։

Շ. Կուրղինյանի «Կարմիր խաչ» պիեսի նյութը 1905 թվականի հեղափոխական անցքերն են։ Պիեսի վերնագրի տակ փակագծերում բանաստեղծուհին գրել է. «Գարունն է գալիս»։ Այդ սիմվոլիկ արտահայտությամբ, իհարկե, բանաստեղծուհին ավելի առաջ է անցնում՝ նկատի ունենալով ռևակցիային հաջորդող հեղափոխական նոր վերելքը։ Իսկ պիեսը գրել է 1909 թվականին։ Այդ նշանակում է, որ Կուրղինյանը հեղափոխության պարտությունը ժամանակավոր է համարում։ «Կարմիր խաչ» պիեսի հերոսներից մեկն ասում է. «Շուտով կհասնի կենսունակ դարուն, կարմիր ու վառ արևի տակ կեռա արթնացող կյանքը հպարտ ու կայտառ, աշնան լքումից հետք չի մնա»։

Շ. Կուրղինյանի պիեսները թեև չեն տպագրվել և ոչ էլ բեմականացվել են (համենայն դեպս մեզ չհաջողվեց պարզել դրանց բեմադրված լինելը), սակայն նախասովետական շրջանում դրանք բեմադրելու փորձեր արվել են։ Այդ մասին վկայում է դերասան Հ. Ջարիֆյանի՝ 1914 թվականի հունիսին բանաստեղծուհուն գրած նամակը, որը մեջ է բերվում ամբողջությամբ։

«Հարգելի տիկին Շուշանիկ Կուրղինյան.

Նորերս պարոն Ռ. Իշխանյանը Թիֆլիսում հանձնեց ինձ մեր տաղանդավոր բանաստեղծուհու նոր պիեսը՝ «Այրված սրտերը» (պիեսի իսկական վերնագիրն է «Մարոս կամ «Այրված սրտեր»—Ջ. Մ.) վերնագրով և խնդրեց մտցնել ռեպերտուարի մեջ։

Հանձնաժողովի կարգացի պիեսը և հավանեցի։ Թերթերից անշուշտ Ձեզ հայտնի է, որ ես կազմում եմ մի խումբ շրջելու համար բոլոր հայաբնակ վայրերը և ներկայացնելու ենք միմիայն ինքնուրույն պիեսներ։

Խումբը կսկսի իր գործունեությունը առաջիկա սեպտեմբերի մեկից մեկ տարի ժամանակով։

Գնալու ենք հետևյալ քաղաքները՝ Թիֆլիս, Բաքու, Նախիջևան, Հաշտարխան, Երևան և գավառները։

Թուրքիա՝ Պոլիս, Իզմիր, Էրզրում, Վան և գավառները։

Եգիպտոս՝ Կահիրե և Ալեքսանդրիա։

Պարսկաստան՝ Թավրիզ, Թեհրան, Ռաշտ, Էնզելի և այլ վայրեր։

Ուստի խնդրում եմ թույլ տաք Ձեր նոր պիեսը ներկայացնելու հիշյալ քաղաքներում։

Պարոն իշխանյանը ինձ ասաց, որ Դուք ունեք էլի երկու պիես։ Եթե որոշել եք այս տարի բեմ հանել, խնդրում եմ ուղարկեցեք ինձ մի-մի օրինակ։ «Այրված սրտերը» և մյուս պիեսները եթե մինչև այժմ պաշտոնական թույլտվություն չէ ստացված ներկայացնելու համար, խնդրում եմ հայտնեցեք, որ ես շուտով ստանամ անհրաժեշտ թույլտվությունը ցենզուրայից։

Անհամբեր սպասում եմ պատասխանի, որ ես կարողանամ անհրաժեշտ պետքերդ պատրաստել այժմենից։

Մնամ խորին հարգանքով

Դերսասան Հ. Զարիֆյան։ :

Կարմիր խաչ (էջ 139)

Գրել է 1909 թ. Դանի Ռաստովում։ Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բաժին II, № 8։

Արխիվում կա այս պիեսին վերաբերող ևս երկու տետր՝

ա) «Կարմիր խաչ», 1907 թ. 80 էջ։ Այս պիեսը նախապես ունեցել է «Մենք» խորագիրը, տարբերակ, սևագրություն։ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, № 9։

բ) «Կարմիր խաչ», 1907—1908, Ն. Նախիջևան, ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, № 10։

Տպագրվում է առաջին անգամ № 8 ինքնագրից։

Մենակ կինը (էջ 194)

Գրել է 1914 թ. Խարկովում։ Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բ. II, № 17։

Տպագրվում է առաջին անգամ։

ՆԱՄԱԿՆԵՐ

Շ. Կուրղինյանի արխիվում պահվող նրա ստացած բազմաթիվ նամակներից պարզվում է, որ բանաստեղծուհին նամակագրական կապեր է ունեցել հայերեն մի շարք թերթերի, ամսագրերի («Գարուն», «Հասկեր», «Խարիսխ», «Վտակ», «Նոր կյանք», «Գեղարվեստ», «Երկրի ձայն» և այլն) խմբագիրների, ինչպես նաև գրողների, քաղաքական-հասարակական և մշակութային գործիչների (Ալ. Մյասնիկյան, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Թեոդիկ, Վրթ. Փափազյան, Դ. Լևոնյան, Ա. Արմենյան, Հ. Զարիֆյան և ուրիշներ) հետ։ Սակայն, ցավոք, իր գրած նամակներից վերոհիշյալների արխիվներում քիչ են պահպանվել։ Իր գրած մի շարք նամակները, որոնք գրված են վաղ շրջանում Արշակ Կուրղինյանին (իր ամուսինը) առանձին արժեք չեն ներկայացնում։

Այս հատորում զետեղված նամակները տպագրվում են առաջին անգամ։

1. Արշակ Կուրղինյանին (էջ 207)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՁ, բաժին III, № 1։

1. Արշակ Կուրղինյան (1875—1917)—Շ. Կուրղինյանի ամուսինը։

2. Փոփոլճյանց—Շ. Կուրղինյանի օրիորդական ազգանունը։

2. Հովհաննես Մալխասյանին (էջ 207)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Հովհ. Մալխասյանի ֆոնդ, № 400։

1. Հովհաննես Մալխասյան (1866—1931)—գյուղագիր։ 1907—1909 թթ. Ն. Նախիջևանում հրատարակել է «Մեր ձայնը» թերթը։

3. Ավետիք Իսահակյանին (էջ 208)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Գարեգին Լեոնյանի ֆոնդ, № 2731։

1. Գիրքս—Շ. Կուրղինյան, «Արշալույսի զողանջներ», Ն. Նախիջևան, 1907 թ.

2. «Նոր կյանք»—Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ, Ն. Նախիջևան, 1906—1907 թթ., խմբագիր Գր. Անուշյան, ապա Հ. Խարազյոզյան։ Այստեղ տպագրվել են Շ. Կուրղինյանի մի շարք բանաստեղծությունները։

4. Գարեգին Լեոնյանին (էջ 209)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Գարեգին Լեոնյանի ֆոնդ, № 1529։

1. Գ. Լեոնյան (1872—1947)—Արվեստագետ, արվեստի վաստակավոր գործիչ։ Հայ տպագրության պատմության մի շարք ուսումնասիրությունների հեղինակ, «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր և հրատարակիչ։

2. «Գեղարվեստ»—Արվեստագիտական, գրական-երաժշտական պատկերազարդ հանդես։ Ընդմիջումներով լույս է տեսել 1908—1921 թթ. Թիֆլիսում և Վենետիկում։

5. Ղազարոս Աղայանին (էջ 209)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Ղ. Աղայանի ֆոնդ, № 385։

1. Նախքան գրքի հրատարակվելը—նկատի ունի՝ «Հայ գրողներ», կազմեցին Ղ. Աղայան, Ա. Ահարոնյան, Հովհ. Թումանյան, Վ. Փափազյան, Թիֆլիս, 1909։ Սույն գրքում զետեղված են Շ. Կուրղինյանի լուսանկարը, կենսագրական համառոտ տեղեկություն և հետևյալ բանաստեղծությունները. «Բլբուլին», «Այնտեղ դնացեք», «Տրտունջ», «Արծվի սերը», «Գութանի երգը», «Գեղջկուհու մորմոքը», «Ես ու նա», «Մի լար, իմ սիրտ», «Աշուն», «Աշնան երգերից»։

6. Արշակ Կուրղինյանին (էջ 209)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. 111, № 32։

1. Արշամիկ (1910—1971)—Շ. Կուրղինյանի կրտսեր որդին։

7. Արշակ Կուրղինյանին (էջ 210)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, բ. 111, № 39։

Նամակը թերի է, վերջին մասը չի պահպանվել։ Տպագրվում է կրճատումներով։

8. Կարեն Միքայելյանին (էջ 211)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆոնդ, № 740։

1. «Գարուն»—Գրական-քննադատական ալմանախ, լույս է տեսել 1910—1912 թթ. Մոսկվայում։ Խմբագիրներ՝ Պ. Մակինցյան, Ց. Խանդաղյան, Վ. Տերյան։ «Գարունի» առաջին գրքում տպագրվել է Շ. Կուրղինյանի «Բանվորուհին» բանաստեղծությունը։

9. Աղասի Շահինյանին (էջ 211)

Ինքնագիրը՝ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 4029, գործ № 33։

1. Աղասի Շահինյան (1888—1919)—Շ. Կուրղինյանի հորաքրոջ որդին։ Մնվել է

Ալեքսանդրապոլում։ Աշակերտական տարիներին մասնակցել է բանվորական-հեղափոխական շարժումներին։ 1906 թ. ընդունվել է Շվեյցարիայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, ուր սովորել է երկու տարի և ապա վերադարձել հայրենիք։

1908 թ. Ա. Շահինյանը մի քանի բոլշևիկների հետ միասին կազմակերպում է բանվորական նոր խմբակներ և ընդհատակյա աշխատանք ծավալում բանվորների շրջանում։ 1909 թ. ուսումը շարունակելու համար գնում է Պետերբուրգ և մնում մինչև 1914 թվականը։ 1910—1911 թթ. Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական ցույցերին մասնակցելու համար ձերբակալվում է։

Դնդակահարվել է 1919 թ. փետրվարի 21-ին Վլադիկավկազում։

(մանրամասն տե՛ս Պ. Սիմոնյան, Ա. Շահինյան, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1956, № 2)։

2. Շավարշ (1893—1922)—Շ. Կուրղինյանի ավագ որդին։

3. Մելիք Ադամյան—Մոսկվայում ապրող հայ բժիշկ, որի մոտ բուժվել է Շ. Կուրղինյանը։

10. Աղասի Շահինյանին (էջ 212)

Ինքնագիրը՝ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 4029, գործ № 33։

1. Նկատի ունի Հ. Հակոբյանի «Քննադատության բննադատությունը» հոդվածը, որ «Credo» ստորագրությամբ տպագրվել է «Մշակում» 1909 թ. №№ 240—241։

11. Գարեգին Լևոնյանին (էջ 213)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆ., № 1532։

1. «Երգս ապված էր «Տարազում»—«Տարազ»—գրական, գեղարվեստական երգիծաբանական պատկերազարդ շաբաթաթերթ, լույս է տեսել 1890—1919 թթ. Թիֆլիսում։ Խմբագիր Տ. Նազարյան։ «Տարազի» 1899 թ. օգոստոսի 15-ի 30-րդ համարում տպագրվել է Շ. Կուրղինյանի «Վերջալույսի վառ շողքերով» սկզբնատողով բանաստեղծությունը։

2. Արշականուշ (ծնվ. 1900 թ.)—Շ. Կուրղինյանի դուստրը։

12. Հովհաննես Թումանյանին (էջ 214)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 759։

13. Մարգո և Ալիս Ասլանյաններին (էջ 213)

Ինքնագիրը՝ ԳԱԹ, ՇԿՑ, ր. 111, № 61։

1. Մարգո (ծնվ. 1922 թ.)—Գ. Կուրղինյանի թոռնիկը։

2. Ալիս (1923—1978)—Շ. Կուրղինյանի թոռնիկը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շուշանիկ Կուրղինյանի անտիպ երկերը . . . 5

Բանաստեղծություններ

1. «Խավարի գրկում ծնված իմ հոգին» . . . 12
2. Անդուն դիշերից . . . 12
3. «Ես տեսա նրան շատ օրեր անցած» . . . 13
4. Ցարի աչքերը . . . 13
5. «Ջասեր ափսոս, երբ ես մեռնեմ» . . . 14
6. Կայանավորներ . . . 14
7. Իմ երդը . . . 15
8. Անցած օրերը . . . 16
9. Գեղջուհու բախտավորություն . . . 17
10. Ջոռան . . . 18
11. «...Եվ մենք քսան դար...» . . . 18
12. «Հիվանդ օրերի թշվառ երգիչներ» . . . 20
13. «Լսո՞ւմ ես, ընկե՛ր...» . . . 21
14. «Կյանքի դիշերում, խավարի գրկում» . . . 22
15. Ղարիպ մշեցու նամակը . . . 22
16. Ընկճվածը . . . 23
17. «Դու դեռ քնա՞ծ ես» . . . 24
18. Աշնան երգերից . . . 24
19. «Օդում ձգված, շարան շարան» . . . 25
20. «Դեթ մի վայրկյան մրրիկ լինել կուզեի» . . . 26
21. Ընկերներիս . . . 27
22. «Վազ առավոտյան, երբ ես...» . . . 27
23. «Ինձ ի՞նչ պատիկ կարմիր-կանաչ» . . . 28
24. Երկրի երգերից . . . 28
25. Եվեր աղջկաս . . . 29
26. Բանվորի երդը . . . 30
27. Գիշերը . . . 31
28. «Կուզեի տեսնել երկինքն ամպամած» . . . 32
29. «Լուսին, ինչո՞ւ քո դեմքին» . . . 33
30. Հավատ, հույս և սեր . . . 33
31. Շատերից մեկին . . . 34
32. Եվ թող ես երթամ . . . 34

33. Ոչ որ... 36
34. «Թող եռա անխախտ ծովը զրկանքի» 36
35. Սիրում եմ 37
36. Ինչո՞ւ... 38
37. Իմ կյանքն ու խաչը 39
38. «Վաղ առավոտյան մշուշի միջից» 41
39. Լսի՛ր 42
40. Սիրեցեք միմյանց 43
41. Պետք էր անկասկած 44
42. Դև կամ հրեշտակ 46
43. Ես ձեզ խոստում եմ 47
44. Ծախվածը 48
45. Ես և դու 49
46. Դարնան հովիկ 50
47. Դոնի վրա 50
48. Մեր ձայնը 51
49. «Երգել ուզեցի՝ ասին չդիտես» 52
50. Նահատակները 53
51. Հայ կնոջ երդը 53
52. Իմ մրմունջներից 54
53. Բացվեց դարուն 55
54. Ես և աստված 56
55. Դուք հաց մուրացեք 56
56. Երկու դիակ 58
57. Էտապ 58
58. Շղթան 59
59. Արծվին 60
60. Վաղն էլ կը մուրա 60
61. Մոլորվածներին 61
62. Բլբուլին 61
63. Ստվերը 62
64. Թե կուզեք ապրել 62
65. Կանգնենք կողք-կողքի 63
66. Ճիշտ լուսարացին 63
67. «Որպես մի մրրիկ խոլ, ահեղամռունչ» 64
69. Մրրիկին 65
69. Սեաչյա, հրաչյա նայվածքով» 65
70. «Սիրելիս...» 66
71. Դերձակուհին 66
72. «Մենք՝ որպես երկու տարբեր մոլորակ» 67
73. Միայն այդ տարբեր նմանների հետ 67
74. Գիշեր 68
75. Կայտառ աշնան պես 69
76. Ջինորսուհին 69
77. Սովորական տապանագիր 70
78. Մահին 70
79. Ուզիս 70

80. «Թե ցավերիս ծնծկող քամին մեղմանար» 71
81. «Ճոճաց իմ դեմ երաղների կարավան» 71
82. Դիշեր 72
83. Պատկեր 72
84. «Երգով...» 74
85. Դիշեր 74
86. «Բախտս ու ես իրար հետ» 75
87. «Ցավս ես քեզ մոտ չեմ երգել...» 76
88. Լուսացիր 76
89. «Դե՛հ, արի...» 77
90. Երգ 77
91. Հավերժական զրույցներ 78
92. Ազատություն 79
93. Գարնանամուտ 83
74. Պրոլետարիատին բոլոր երկրների 84
95. Լուսացավ 87
96. «Խաղաղություն հյուղերիդ մութ» 88
97. «Առավոտ էր, լուսացավ» 89
98. Բանվորուհու երգը 89
99. Մայիսի մեկը 90

Արձակ էջեր

1. Թիթեռն ու եղը 93
2. Փուշն ու համփորդը 93
3. Դորտը 93
4. Մայրերը 94
5. Վարդերն ու պարտիզպանը 95
6. Ճնճղուկը 96
7. Ծառն ու քամին 97
8. Մահին 98
9. Անհաջող ենթադրություն 99
10. Հանդիպում 103
11. Փողոցում 105
12. Գարնանամուտ 106
13. Իմ հայրենիք 108
14. Ուղիղ ուղին 109
15. Շղթաները 112
16. Կովից հետո 115
17. Տատ Արինան 117
18. Ինքնակենսագրություն 130
19. Ալ. Ռուբենին 133
20. Ասույթներ 136

Պիեսներ

1. Կարմիր խաչ 139
2. Մենակ կինը 194

Նամակներ

1. Արշակին 207
2. Հովհաննես Մալխասյանին 207
3. Ավետիք Խաչատրյանին 208
4. Գարեգին Լևոնյանին 209
5. Ղազարոս Աղայանին 209
6. Արշակին 209
7. Արշակին 210
8. Կարեն Միքայելյանին 211
9. Աղասի Շահինյանին 211
10. Աղասի Շահինյանին 212
11. Գարեգին Լևոնյանին 213
12. Հովհաննես Թումանյանին 214
13. Մարգո և Ալիս Առլանյաններին 214

Մանրագրություններ

Բանաստեղծություններ 217
Արձակ էջեր 223
Ասույթներ 225
Պիեսներ 225
Նամակներ 227

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

15

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Բանաստեղծություններ, արձակ էջեր, պիեսներ, նամակներ

Հրատարակչական խմբագիր
Ժ. Բ. ԱՓԻՆՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ
Յու. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ИБ № 564

Հանձնված է շարվածքի 20. 03. 1981 թ.։ Ստորագրված է տպագրության 16. 10. 1981 թ.։ ՎՖ 10306։ Չափը 60×90 1/16, թուղթ № 1։ Տառատեսակ գրքի սովորական, բարձր տպագրություն։ Տպագր. 14,75 մամուլ։ Հրատ.—հաշվարկ 12,85 մամուլ։ Տպաքանակ 3000։ Պատվեր № 358։ Հրատ. № 5529, գինը 2 ռ. 20 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

A II 66182

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220066182